

# Հերթերի Ֆինանսական արկածները

հեղինակ՝ Մարկ Տվեճ

թարգմանիչ՝ Ս. Ալիմյան

## Բովանդակություն

- [1 Գլուխ առաջին](#)
- [2 Գլուխ երկրորդ](#)
- [3 Գլուխ երրորդ](#)
- [4 Գլուխ չորրորդ](#)
- [5 Գլուխ հինգերորդ](#)
- [6 Գլուխ վեցերորդ](#)
- [7 Գլուխ յոթերորդ](#)
- [8 Գլուխ ութերորդ](#)
- [9 Գլուխ իններորդ](#)
- [10 Գլուխ տասներորդ](#)
- [11 Գլուխ տասնմեկերորդ](#)
- [12 Գլուխ տասներկուերորդ](#)
- [13 Գլուխ տասներեքերորդ](#)
- [14 Գլուխ տասնչորսերորդ](#)
- [15 Գլուխ տասնինգերորդ](#)
- [16 Գլուխ տասնվեցերորդ](#)
- [17 Գլուխ տասնյոթերորդ](#)
- [18 Գլուխ տասնութերորդ](#)
- [19 Գլուխ տասնիներորդ](#)
- [20 Գլուխ բասներորդ](#)
- [21 Գլուխ բասնմեկերորդ](#)
- [22 Գլուխ բասներկուերորդ](#)
- [23 Գլուխ բասներեքերորդ](#)

- [24 Գլուխ բանչորսերորդ](#)
- [25 Գլուխ բանհինգերորդ](#)
- [26 Գլուխ բանվեցերորդ](#)
- [27 Գլուխ բանյոթերորդ](#)
- [28 Գլուխ բանութերորդ](#)
- [29 Գլուխ բանիններորդ](#)
- [30 Գլուխ երեսունմեկերորդ](#)
- [31 Գլուխ երեսունմեկերորդ](#)
- [32 Գլուխ երեսուներկուերորդ](#)

## Գլուխ առաջին

Դուք ինձ չեք ճանաչի, եթե չեք կարդացել «Թոմ Սոյերի արկածները»: Բայց դա կարևոր չէ: Գիրքը գրել է միստր Մարկ Տվենը և ընդհանրապես ասել է ճշմարտությունը: Փչոց է կա, բայց թե իրողությունն ավելի շատ է: Ոչինչ: Ես երբեմ չեմ տեսել մի մարդ, որն այս կամ այն դեպքում սուտ խոսած չինի, բացի մորաքույր Պոլիից և այրուց, մեկ է գուցե Մերիից: Մորաքույր Պոլիի՝ Թոմի մորաքույր, Մերիի, այրի Դուզլասի մասին ամեն ինչ ասված է այս գրքում, և մեծ մասամբ ճիշտ, միայն թե որոշ չափով փչոց կա, ինչպես ասացի վերևում:

Գիրքը վերջանում է այսպես: Թոմն ու ես գտանք այն դրամը, որ ավագակները պահել էին քարանձավում, և հարստացանք: Ամեն մեկիս բաժին ընկավ վեց հազար դրամ, զուտ ոսկի: Երբ դրամը կիտեցինք, ահազին բան ստացվեց: Դատավոր Թեզըրը վերցրեց ամբողջը, բանկում պահ տվեց, և դա կլոր տարին ամեն մեկիս բերում էր օրը մեկ դրամ եկամուտ, ավելին, բան մեզ պետք էր: Վյրի Դուզլասը որդեգրեց ինձ և խոստացավ դաստիարակել: Բայց տաժանելի էր ամրող ժամանակ տանը մնալ, մանավանդ, երբ տեսնում էի, թե այրին որքան խստաբար և ճշտապահ էր ամեն բանում: Վյդ պատճառով է ինչն որ զգացի՝ այլևս չեմ դիմանա, ծկեցի: Նորից նախկին ցնցոտիների մեջ էի, նորից սողոսկում էի շաբարի տակառի մեջ, ազատ էի ու զոհ: Բայց Թոմ Սոյերն ինձ գտավ, ասաց, որ ավագակախումք է կազմում, և որ կարող եմ միանալ այդ խմբին, եթե վերադառնամ այրու մոտ ու ինձ լավ պահեմ: Եվ ես ես եկա:

Վյրին հուզմունքից լաց եղավ: Ինձ անվանեց խեղճ, կորած գառնուկ և ուրիշ շատ անուններ տվեց, բայց առանց հիշաշարության: Նա ինձ դարձյալ նոր շորեր հազցրեց, և ես, քրտնելուց բացի, ուրիշ ոչինչ չէի կարող անել: Կարծես կադապարի մեջ լինեի: Նորից սկսվեց հին կյանքը: Վյրին տախս էր ընթրիքի զանզը: Ուշանալ չէր կարելի: Սեղանին մոտենալիս չէր թույլատրվում անմիջապես ուտել. պետք էր սպասել այրուն, որը կախում էր գլուխն ու մի փոքր մրգմրդում ուտելիքի վրա, թեև, իհարկե, ոչ մի պատճառ չկար: Վյսինքն՝ կերակուրը վատ չէր, միայն թե ամեն ինչ առանձին-առանձին էր եփած: Կերակրի մնացորդների ու տարօրինակ կտորտանքների տակառիկում դրությունը այլ է. այնտեղ ամեն ինչ խառնվում է իրար, հյութանման բաները միանում են, և լավ է ստացվում:

Ընթրիքից հետո նա վերցրեց գիրքը, սկսեց ինձ համար կարդալ Մովսեսի ու եղեգնուտի մասին, և ես, այդ բոլորը լսելով, հետաքրքրությունից քրտնեցի: Բայց շուտով նա անուշադրությամբ ասաց, որ Մովսեսը վաղուց, շատ վաղուց մեռել է: Ես այլևս չմտահոգվեցի նրանով, քանի որ մեռած մարդիկ ինձ չեն հետաքրքրում:

Շուտով ծխելու ցանկություն զգացի և այրուց թույլտվություն խնդրեցի: Բայց նա արգելեց: Ասաց, թե դա վատ է, կեղտու սովորություն է, և ես պետք է աշխատեմ նման բաններ այլևս չանել: Վյ թե ինչպիսի մարդիկ են լինում: Խառնվում են մի զործի, որից ոչինչ չեն հասկանում: Վհա այս այրին. մարդկանց ձանձրացնում է Մովսեսից խոսելով, երբ Մովսեսը<sup>11</sup> ազգակցական ոչ մի կապ չունի իր հետ և ոչ որի էլ պետք չէ, քանի որ այլևս չկա, ինչպես տեսնում եք: Ծխելն իմ կողմից հանցանք է համարում, չնայած դա ինձ դուր է գալիս: Վյսինչ ինքը քթախոտ է քաշում, և դա, իհարկե, միանգամայն ճիշտ է, որովհետև ինքն է քաշողը:

Նրա քույրը՝ միստ Ուութատնը, չոր ու ցամաք, ակնոցավոր մի լեղի, հենց այդ ժամանակ տեղափողիսվեց այրու մոտ՝ միասին ապրելու: Ինչոր այքբենարան ձեռքին՝ նա

անմիջապես մոտեցավ ինձ ու մի ամբողջ ժամ բաց քթողեց, մինչև, ի վերջո, այրին ասաց, թե պետք է հանգստանալ: Ես չեմ ել կարող ավելի երկար դիմանալ: Ապա մի ամբողջ ժամ տիրեց սպանիշ տաղտկություն, և ես սկսեցի անհանգիստ շարժումներ անել: Միսս Ուոթսոնը շարունակ ասում էր. «Ուորդ այդտեղ մի՛ դիր, <Երլրերի» կամ «Այդպես մի՛ ճռճացնի աթոռը, <Երլրերի, ուղիղ նստիր»: Կամ «Մի՛ հորանջիր և այդպես մի՛ ձզվիր», «<Երլրերի, ինչո՞ւ չես կարողանում քեզ կարգին պահել:

Նա ինձ պատմեց դժոխքի մասին, ես ել ասացի, թե երանի՛ այնտեղ լինեի: Այս խոսքի վրա նա կատաղեց, թեև ոչ մի վաս բան մտքովս չեր անցնում. միայն ուզում էի պրծնել այդտեղից, միայն թե փոփոխություն կատարվեր իմ կյանքում: Իսկ թե ուր կզնայի, միևնույն էր: Միսս Ուոթսոնն ասաց, որ անզգամություն է այդպես խոսելը, որ ինքն այդպիսի բան երբեք չեր ասի, եթե նույնիսկ ամբողջ աշխարհն իրեն տային: Իր ասելով՝ ինքն այնպիսի կյանք է վարելու, որ դրախտ գնա: Բայց ես մտածում էի, թե ի՞նչ նպատակ ունի գնալ այնտեղ, ուր նա է գնալու: Ուստի ինձուինձ որոշեցի հզուր չարչարվել: Բայց ոչինչ չասացի. ոչ մի լավ բան չեր կարելի սպասել, բացի անախորժությունից:

Հետո նա սկսեց իր իրատները, խոսեց, խոսեց, երկար-բարակ պատմեց դրախտի մասին, ասաց, որ այնտեղ ոչ մի անելիք չկա, մնում է, որ ամբողջ օրը անցկացնես զրոսնելով, տավիղ նվազելով ու երգելով, և այդպես հավիտյան: Ինձ այդ բաները շատ չեին մտահոգում, բայց ոչինչ չասացի: Միայն հարցրի, թե իր հաշվով թում Սոյերն էլ այնտեղ կզնա՞, և նա որոշակիորեն ասաց. «Ոչ, երբե՛ք»: Այդ պատասխանն ինձ շատ ուրախացրեց. ուզում էի, որ ես ու Թոմմը միասին լինենք:

Միսս Ուոթսոնը շարունակեց ինձ կտցահարել, և դա ավելի ու ավելի էր ձանձրացնում: Ինձ զգում էի մենակ ու տիխուր: Շուտով ներս կանչեցին նեգրերին և աղորեցին: Այնուհետև բոլորը գնացին քնելու: Ես, մի կտոր մոմ բռնած, գնացի իմ սենյակը, մոմը դրի սեղանին: Ապա նստեցի աթոռին, պատուհանի դիմաց և փորձեցի մտածել ուրախ բաների մասին, բայց հզուր: Ինձ այնպես մենակ ու տիխուր էի զգում, որ ուզում էի մեռնել: Աստղերը շողում էին, անտառում ողբաձայն սոսափում էին տերևները: Ես լսում էի հեռվից եկող բվի կոինչը. վայում էր ինչ-որ մեկի՝ գուցել արդեն մեռածի համար: Խոլոնուկ թռչունը ճշում էր, իսկ մի շուն ոռնում էր կյանքի վերջին ժամերն ապրող ինչ-որ մեկի համար: Քամին ականջիս ինչ-որ բան էր շշնչում. թե ինչ, ես չեմ կարող հասկանալ, բայց սառը դող էր անցնում մարմնովս: Ապա հեռվից, անտարի խորքից, լսեցի այնպիսի մի ձայն, որը ուրվականն է հանում, երբ ուզում է հայտնել իր մտադրությունը, բայց չի կարողանում խոսել: Այդ է պատճառը, որ չի կարողանում հանգիստ ննջել գերեզմանում և ամեն գիշեր այդպես դուրս է գալիս, թափառում ու ողբում: Այնպես հուսալքված էի ու ահարենկված, այնպես էի ուզում, որ մեկը մոտս լիներ, մի ընկեր ունենայի: Հանկարծ մի սարդ վազեց ուսիս վրայով: Ես մատներով քննեցի ու այրեցի մոմի բոցի վրա: Մինչև կարողացա ուշքի զալ, սարդն ամբողջությամբ կուչ եկավ, կնճռոտվեց: Առանց մեկ ուրիշի ասելու էլ գիտեի, որ դա սարսափելի վաս նշան է և զիսիս փորձանք կրերի: Այնպես զարիուրեցի, որ շորերս հանեցի ու դեն շարտեցի: Վեր կացա և երեք անգամ կրունկներիս վրա պտտվեցի, ամեն անգամ երեսս խաչակնքելով: Մազերից մի փունջ կապեցի թեկով՝ կախարդներին ինձնից հեռու պահելու համար, թեև դրան չեմ հավատում: Այդ կարելի է անել, երբ մեկը գտած պայտը դրան վրա ամրացնելու փոխարեն կորցնում է: Բայց երբեք չեմ լսել, թե սարդը սպանելը դժբախտությունից հեռու մնալու միջոց է:

Նորից նստեցի: Ամբողջ մարմնով զնօվում էի: Վերցրի ծխամորճա. տանը մեռելային լրություն էր տիրում, և այրին ոչինչ չէր իմանա: Անցավ երկար ժամանակ, ապա լսեցի հեռվում քաղաքային ժամացույցի զարկերը՝ բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ: Տասներկու անգամ: Նորից ամեն ինչ խաղաղվեց, ավելի քան երբեմ: Շուտով մթության միջից լսեցի ներքեւի ծառերից մեկի կոտրվող ճյուղի ձայնը: Լուր նստած ունկնդրում էի: Շուտով ականջիս հասավ հազիվ լսելի մի ձայն «մյառ մյառ»: Կարծես կատու էր մլավում: Լավ է, ասացի ու ինքս էլ կրկնեցի նոյն «մյառ, մյառն», որքան կարող էի մեղմ: Այնուհետև հանգցրի մոմք, պատուհանից սողոսկեցի մարագը, սահեցի դուրս և սողալով հաստ ծառերին: Անկասկած, դա Թու Սոյերն էր, որ ինձ էր սպասում:

## Գլուխ երկրորդ

Ծառերի միջով անցնող շավղով, ոտքներիս ծայրերին հենված՝ զնացինք այրու պարտեզի ծայրը: Ծարժվում էինք կռացած, որպեսզի ճյուղերը մեր գլուխները չճանկրեն: Խոհանոցի մոտով անցնելիս ոտքս դեմ առավ մի արմատի, և վայր ընկա: Թխկոց լսվեց: Կուշ եկանք ու լուր նստեցինք: Միսս Ուոթասոնի հաղթանամ նեզրը, որի անունը Ջիմ էր, նստած էր խոհանոցի դռանը. մենք նրան բավական պարզ տեսնում էինք, որովհետև դռան հետևում լույս կար: Նա վեր կացավ ու վիզը երկարացնելով՝ լարեց լսողությունը.

— Ո՞վ է:

Նա մի քիչ է ականջ դրեց, ապա ոտքերի մատներին հենված՝ մոտեցավ, կանգնեց ուղիղ մեր արանքում: Մենք գրեթե կարող էինք նրան շշափել: Այսպես երևի րոպեներ անցան, և ոչ մի ձայն չլսվեց, թեև իրար այնքան մոտ էինք կանգնած: Ոտքիս կոճի մոտ սկսեց քոր գալ, բայց ես չհամարձակվեցի քորել: Շուտով ականջս էլ քոր եկավ, թիկունքս էլ՝ ուսերիս մեջտեղը: Այնպիսի վիճակում էի, որ եթե չքորեի, կմեռնեի: Հետագայում էլ այդ բանը մի բանի անգամ նկատել եմ: Եթե դուք հարզարժան մարդկանց շրջապատում եք կամ հուղարկավորության եք զնացել, կամ փորձում եք քնել, երբ ձեր քունքը չի գալիս, մի խոսքով, եթե այնպիսի մի տեղում եք, որ քորել հնարավոր չէ, միանգամից հազար տեղ քոր կցա:

Շուտով Ջիմն ասաց.

— Ասացեք, ովքե՞ր եք: Որտե՞ղ եք: Անիծվեմ, եթե ձայն չեմ լսել: Լավ, ես գիտեմ, թե ինչ կանեմ, կնատեմ այստեղ, մինչև նորից լսեմ:

Եվ նա նստեց գետնին, իմ ու Թումի արանքում, մեջքը հենեց մի ծառի և ոտքերը պարզեց այնքան, որ մի ոտքը հասավ իմ ոտքին: Ջիթս էլ սկսեց քոր գալ՝ այնպես, որ աչքերս լցվեցին արտասուրով: Բայց չքորեցի: Հետո քթիս մեջ սկսեց քոր գալ, հետո էլ՝ քթիս տակը: Զգիտեի, թե ինչ անեմ, որ հանգիստ նստեմ: Այս դժբախտությունը շարունակվեց վեց-յոթ րոպե, բայց ինձ ավելի երկար թվաց: Այժմ քոր էր գալիս տասնմեկ տեղ: Թվում էր, թե այլս ոչ մի րոպե չեմ կարող դիմանալ: Ատամներս սեղմել էի իրար և փորձում էի զապել ինձ: Հենց այդ ժամանակ Ջիմի շնչառությունը ծանրացավ, նա խոճիաց, քորն էլ շուտով անցավ: Թումք հազիվ լսելի ձայնով ինձ նշան արեց, և մենք թաթերի ու ծնկների վրա սողալով՝ հեռացանք: Երբ արդեն տասը ոտնաշակ հեռացել էինք, Թումք շշնջաց ականջիս, թե կատակի համար Ջիմին ուզում է կապել ծառից: Բայց ես առարկեցի: Նա կարող էր

արթնանայ, աղմուկ բարձրացնել և կիմանային, որ ես ներսում չեմ: Հետո Թոմն ասաց, որ իր մոտ շատ մոմ չկա, ուզում է մտնել խոհանոց և մի քանի հատ վերցնել: Ես չի ուզում, որ նա այդպիսի փորձ կատարեր. ասացի, թե Զիմը կարող է արթնանալ և ներս գալ: Թոմը շուգեց այդ վտանգավոր քայլից հրաժարվել: Մտանք խոհանոց և վերցրինք երեք մոմ: Թոմը, որպես վճար, սեղանին դրեց հինգ ցենք: Դուրս եկանք: Ես անհամբեր ուզում էի հեռանալ, բայց ոչ մի կերպ հնարավոր չեղավ Թոմին ետ պահել իր կատակից: Նա ուզում էր թաթերի ու ծնկների վրա սողալով մոտենալ Զիմին և գլխին մի խաղ խաղալ: Սպասեցի, և դա ինձ շատ երկար թվաց: Ամեն ինչ խաղաղ էր, լուր ու տիսուր:

Հենց որ Թոմը վերադարձավ, մենք շարժվեցինք այզու ցանկապատի երկարությամբ անցնող շավիով և շուտով հասանք տան հետևի զատիթափ թրի զազաթը: Թոմն ասաց, որ ինքը Զիմի գլխարկը հանել է և կախել նրա գլխավերևի ոստից: Այդ ժամանակ Զիմը մի փոքր շարժվել է, բայց չի արթնացել:

Հաջորդ օրը Զիմը պատմում էր, թե վիուկներն իրեն կախարդել են, հեծած շրջել նահանգով մեկ և ապա նորից բերել ծառի տակ, գլխարկն էլ ոստից կախել, որպեսզի ցույց տան, թե ով է այդ արել: Մի այլ անգամ նա պատմեց, թե իրեն հեծած՝ քշել են Նոր Օղեան: Այնուհետև, ամեն անգամ նորից պատմելիս, հեռավորությունն ավելի ու ավելի մեծացնում էր, մինչև ասաց, թե իրեն հեծած՝ շրջել են ամրող աշխարհը և մեռցնելու չափ հոգնեցրել, իսկ մեջքը թամրից ամրողովին ծածկվել է բշտիկներով: Զիմն անչափ հապատանում էր դրանով և այնպիսի տրամադրության մեջ էր, որ հազիվ թե մյուս նեզրերին նկատեր: Նեզրերը մղոններ անցներով, զալիս էին մոտը, լսում այդ պատմությունը, և այժմ նրան ավելի էին հարգում, քան այդ կողմերում բնակվող որևէ այլ նեզրի: Անծանոթ նեզրերը բերանները բաց կանգնում ու վերից-վար նայում էին Զիմին, կարծես նա հրաշք լիներ: Նեզրերը միշտ խոհանոցի կրակի առջև նստած՝ մթության մեջ կախարդների մասին էին խոսում: Հենց որ մեկը խոսեր և անդրադառնար այս հարցերին, Զիմը պատահարար ներս կմտներ ու կասեր. «ՀՇ, դուք ի՞նչ գիտեք կախարդների մասին», և խոսող նեզրը սկզբում էր ու մի կողմ քաշվում: Զիմի վզից միշտ թերով կախած էր լինում այն հինգ սենտանոց դրամը, որ Թոմն էր թողել խոհանոցում: Նա ասում էր, թե դա թալիսման է. սատանան իրեն տվել է սեփական ձեռքով և ասել, որ ինքը՝ Զիմը, դրանով կարող է բուժել ամեն մեկին, ինչպես նաև այդ դրամին դիմելով՝ կարող է կախարդներին հավաքել իր շուրջը: Բայց երբեք չէր հայտնում, թե ինչ էր ասում թալիսմանին: Նեզրերն ամեն կողմից զալիս էին ու իրենց վերջին ունեցվածքը տալիս Զիմին, միայն թե տեսնեին այդ հինգ ցենտանոց դրամը, բայց նրանք դա շոշափելու իրավունք չունեին, որովհետև սատանայի ձեռք էր դիպել դրան: Զիմն այժմ որպես ծառա անպետքացել էր. շատ էր զոռոզացել, որ սատանա էր տեսել, և կախարդները հեծել էին իրեն ու քշել աշխարհով մեկ:

Այսպես, երբ Թոմն ու ես հասանք թրի զազաթը և նայեցինք ներքև՝ գյուղին, պատուհաններից կարողացանք միայն տեսնել երեք-չորս լույս: Հավանորեն այդ տներում հիվանդ կար: Մեր վերևում պայծառ շողում էին աստղերը: Գյուլի տակով անցնում էր գետը՝ մեկ մղոն լայնությամբ, հոյակապ և միաժամանակ երկյուղալի: Բլրից ցած իշանք և գտանք Չո Հարպըրին, Բեն Ռոջերսին ու երկու-երեք այլ տղաների, որ թաքնվել էին հին կաշեգործարանում: Մենք արձակեցինք մի նավակ, գետով երկու և կես մղոն իշանք ներքև, մինչև թրի ստորոտի գետեզրյա մեծ փլվածքն ու դուրս եկանք աի:

Շարժվեցինք դեպի թփուտները: Թոմը բոլորիս ստիպեց երդել, որ գաղտնապահ կլինենք, ապա ցույց տվեց թրի մեջ, թփուտների ամենախիտ մասում բացված մի անցք:

Վառեցինք մոմերը և թարթերի ու ծնկների վրա սողացինք ներս: Այսպես զնացինք երկու հարյուր յարդ:<sup>[21]</sup> Հետո քարանձավի անցքը լայնացավ: Թումն այդ անցքերում ինչ-որ բան էր որոնում և շուտով մտավ մի պատի տակ, որտեղ եղած անցքը ոչ ոք չէր նկատի: Մենք սողեսող շարժվեցինք նեղ անցքով և հասանք մի խուց՝ ամրողովին խոնավ, թաց ու ցուրտ: Այդտեղ էլ կանգ առանք: Թումն ասաց.

— Այժմ կիհմնենք մի ավագակախումք, որը կանվանենք «Թոմ Սոյերի հրոսախումք»: Ամեն ոք, եթե ուզում է միանալ մեզ, պետք է երդվի և իր անունը գրի արյունով:

Բոլորն էլ ուզում էին: Թոմը բերեց մի թերթիկ, որի վրա գրել էր երդումը, և կարդաց: Պահանջվում էր, որ յուրաքանչյուր տղա սերտորեն կապված լինի խմբի հետ և ոչ մի զաղտնիք ուրիշի չհայտնի: Եթե մեկը վնաս տա խմբի տղաներից մեկին, ապա այն տղան, որին կիանձնարավի սպանել այդ վնաս տվողին ու նրա ընտանիքի անդամներին, պետք է ո՞չ ուտի, ո՞չ քնի, քանի դեռ չի սպանել բոլորին և նրանց կոծքին խաչ չի քաշել իբրև խմբի նշան: Ոչ ոք իրավունք չուներ օգտագործելու այդ նշանը, եթե թոմի խմբին չէր պատկանում: Եթե մեկնումեկը համարձակվեր այդ բանն անել, նրան պետք է հետապնդեին, իսկ եթե կրկներ՝ սպանեին: Եթե խմբի անդամներից մեկնումեկը որևէ զաղտնիք հայտներ, նրա վիզը պետք է կտրեին, մարմինն այրեին ու մոխիրը շաղ տային, անունը արյունով ջնջեին ցուցակից և երբեք չիշեին նրան, անհծեին ու ընդմիշտ մոռանային:

Բոլորն ասացին, որ դա իսկական, զեղեցիկ երդում է, և Թոմին հարցրին, թե դա ի՞նքն է հորինել: Թոմը պատասխանեց, թե մի մասը իրենն է, մնացածը վերցրել է ծովահենների ու ավագակների մասին գրված գրքերից. չէ՛ որ կանոնավոր գործող ամեն խումբ ունի նման երդմնագիր:

Մի քանիսին թվում էր, թե լավ կլինի սպանել այն տղաների ընտանիքի անդամներին, որոնք զաղտնիքը կհայտնեն: Թոմն ասաց, որ դա վատ միտք չէ, մատիտը վերցրեց և դա էլ ավելացրեց:

Ապա Բեն Ռոջերսն ասաց.

— Բա որ Հեք Ֆիննը ընտանիք չունի՛, այս դեպքում ի՞նչ ենք անելու:

— Չէ՛ որ նա հայր ունի, — ասաց Թոմ Սոյերը:

— Այո, հայր ունի, բայց այս օրերին նրան երբեք չեք կարող գտնել: Նա սովորաբար հարբած թափալվում էր կաշեզործարանի բակում, խոզերի հետ, բայց մեկ տարուց ավելի է, ինչ այս կողմերում չի երևացել:

Նրանք քննարկեցին այս հարցը և պատրաստվում էին ջնջել իմ անունը, որովհետև ասում էին, թե ամեն մի տղա պետք է ծնող կամ որևէ մերձավոր ունենա, որին հարկ եղած դեպքում սպանեն, այլապես դա մյուսների նկատմամբ արդարացի չի լինի: Բայց նրանցից ոչ մեկը չէր կարողանում ասել, թե ինչ որոշեն: Բոլորն էլ կոճղերի պես լուռ ու մունջ կանգնած էին: Զիշ էր մնում լաց լինեի, բայց հանկարծ մի բան հիշեցի: Տվեցի միսս Ռութասոնի անունը. հարկ եղած դեպքում կարող էին նրան սպանել: Բոլորն ասացին.

— Օ՛, հարմար է: Շա՞տ հարմար է: Կարեի է Հեքին ընդունել:

Այնուհետև բոլորն ասեղով ծակեցին իրենց մատները, որպեսզի արյունով ստորագրեն երդմնագիրը: Ես էլ իմ նշանը դրի թղթի վրա:

- Այժմ, — ասաց Բեն Ռոջերսը, — ի՞նչ է լինելու այս խմբի անելիքը:
- Ոչինչ, միայն կողոպուտ և սպանություն, — պատասխանեց Թոմը:
- Բայց ո՞ւմ ենք կողոպտելու, տնե՞ր, թե՞ անասուններ ենք գողանալու, թե՞...

— Ի՞նչ դատարկ բան ես ասում. անասուն գողանալը ու նման բաները կողոպուտ չեն: Դրանք գողություններ են, — ասաց Թոմը, — իսկ մենք գողեր չենք: Մեր գործունեության մեջ այդ չէ: Մենք ավագակներ ենք: Մենք դիմակներ հազած կանգնեցնում ենք մեծ ճանապարհի փոխադրակառքերն ու ուղեկառքերը, սպանում մարդկանց և վերցնում նրանց ժամացույցներն ու դրամը:

— Միշտ պետք է մարդկանց սպանե՞լ:

— Այո, իհարկե, ամենալավն այդ է: Մի քանի հեղինակավոր մարդիկ այլ կերպ են մտածում, բայց մեծ մասամբ ամենից հարմարը սպանելն է, բացի այն սակավաթիվ դեպքերից, երբ նրանց կարելի է քարանձավ բերել և պահել այնքան, մինչև փրկագին կստանանք:

— Փրկագի՞ն, ի՞նչ բան է փրկագինը:

— Զգիտեմ, բայց այդպես են անում: Կարդացել եմ գրքերում, և մենք էլ, իհարկե, պետք է այդպես վարվենք:

— Բայց դա ինչպե՞ս կարող ենք անել, երբ չգիտենք, թե ինչ է:

— Է՛հ, գրողը տանի: Գիտենանք էլ, չգիտենանք էլ, անելու ենք: Զասացի՞, թե այդ մասին գրված է գրքերում: Մի՞թե ուզում ես այնպիսի բան անել, որը տարբերվի գրքում գրածից և ամեն ինչ խառնվի:

— Է՛հ, լավ է այդպես խոսելը, Թոմ Սոյեր, բայց ինչպե՞ս են փրկագնով ազատվելու, եթե մենք չգիտենք, թե դա ինչպես է արվում: Ես հենց այդ եմ ուզում իմանալ: Դու ի՞նչ ես կարծում, ի՞նչ բան է դա:

— Ծիշտն ասած, ես էլ չգիտեմ: Բայց, գուցե, պահել նրանց մինչև փրկագին ստանալը նշանակում է պահել մինչև նրանք մեռնեն:

— Այժմ ասած մի բանի նման է. մեր օգտին է: Բայց ինչո՞ւ սկզբից այդպես չէիր բացատրում: Դա նշանակում է, մենք նրանց պահելու ենք այնքան, մինչև փրկվեն մեռնելով: Ձեւ չէ նրանք մեզ նեղություն կտան, ամեն ինչ կուտեն և միշտ կաշխտեն փախչել:

— Ինչե՞ր ես ասում, Բեն Ռոջերս: Ինչպե՞ս կփախչեն, եթե հսկի պահակը: Կգնդակահարի, եթե նրանք համարձակվեն տեղից շարժվել:

— Պահա՞կ: Լա՞վ է: Ուրեմն՝ մեկը պետք է ամբողջ գիշերը նստի ու չքնի, որպեսզի նրանց հսկի: Իմ կարծիքով դա հիմարություն է: Ինչո՞ւ մեկնումեկը չի կարող մի լախտ վերցնել և փրկել նրանց, երբ նրանք կարողանան այստեղ հասնել:

— Որովհետև գրքերում այդպիսի կարգ չկա: Ահա թե ինչու: Այժմ, Բեն Ռոջերս, ուզո՞ւմ ես գործը կանոնավոր անել, թե՞ ոչ, հարցն այս է: Չե՞ս ընդունում, որ այդ գրքերը գրող մարդիկ գիտեն, թե ինչն է ճիշտ: Կարծում ես, թե դու կարո՞ղ ես նրանց որևէ բան

սովորեցնել: Շատ բան չես կարող: Ոչ, սրբ, մենք պետք է ճիշտ վարվենք և մարդկանց փրկենք ցույց տված օրինավոր ճանապարհով:

— Լավ, դա ինձ չի վերաբերում, միայն ասում եմ, թե դա հիմար ճանապարհ է: Ասա, եթե ես քո չափ անգիտակ լինեի, եկի ինձ թույլ չէի տա նման բան ասել: Կանանց սպանե՞լ: Ոչ: Դեռ ոչ ոք գրքերում նման բան չի ասել: Կանանց կրերես քարանձավ և միշտ հնարավորության չափ քաղաքավարի կվարվես նրանց հետ: Նրանք ել կարճ ժամանակում կսիրահարվեն քեզ և այլևս չեն ցանկանա տուն գնալ:

— Եթե այդպես է, համաձայն եմ, բայց ես դրանում լավ բան չեմ տեսնում: Շուտով քարանձավը այնպես կցվի կանանցով ու փրկության սպասող տղամարդկանցով, որ ավագակներին տեղ չի մնա: Բայց շարունակիր, ոչինչ չունեմ ասելու:

Փոքրիկ Թոմի Բարնսն այդ ժամանակ քնած էր, և երբ նրան արթնացրին, վախեցած ճաց ու ասաց, որ ուզում է գնալ տուն, մայրիկի մոտ, այլևս չի ուզում ավագակ դառնալ:

Բոլորն սկսեցին նրան ծաղրել և անվանեցին լալկան երեխա: Դրանից նա ավելի կատադեց ու ասաց, որ իսկույն կգնա և բոլոր զաղտնիքները կհայտնի: Թոմը նրան հինգ ցենտ տվեց, որպեսզի լոի և ասաց, որ շուտով բոլորս ենք տուն գնալու: Կհանդիպենք հաջորդ շաբաթ, կկողոպտենք մեկնումեկին ու մի քանիսին ել կսպանենք:

Բեն Ռոջերսն ասաց, որ ինքը չի կարող հաճախակի դուրս գալ, բայց կիրակի օրերից, և ուզում է հաջորդ կիրակի օրն սկսել: Բայց բոլոր տղաներն ասացին, թե կիրակի օրը ոճիր գործելը չար բան է: Դրանով ել հարցը լուծվեց: Նրանք համաձայնեցին հնարավորության չափ շուտ հավաքվել և նշանակել օրը: Թոմ Սոյերին ընտրեցին ավագակապետ, Զն Հարպերին՝ տեղակալ, ապա բոլորս գնացինք տուն:

Ես մագլցելով բարձրացա փայտանոցի տանիքը և իմ պատուհանից սողացի ներս: Արդեն լուսադեմ էր: Նոր շորերս ճարպոտվել ու փոշոտվել էին, իսկ ինքս շան պես հոգնել էի:

## Գլուխ երրորդ

Առավոտյան պառավ միսս Ուոթսոնը մի լավ դաս տվեց ինձ՝ շորերս կեղտոտելու համար: Այրին հանդիմանական ոչ մի խոր չասաց, միայն մաքրեց մոմի ճարպն ու կավը, բայց նա այնպես տիսուր էր, որ մտածեցի, այսուհետև ավելի լավ կվարվեն հետք, եթե կարողանամ: Միսս Ուոթսոնն ինձ տարավ մառան ու աղոթեց, բայց բանը դրանով չվերջացավ: Նա ինձ ասաց, որ ես եթե ամեն օր աղոթեմ, ապա ինչ ուզենամ կստանամ: Իհարկե, դա այդպես չէր: Փորձեցի: Մի անգամ ստացա ծուկ որսալու կարթի թեկ, բայց ծայրին կարթ չկար: Ինչի՞ն էր դա պետք: Երեք-չորս անգամ փորձեցի դրա համար ել աղոթել, բայց բան դուրս չեկավ: Շուտով խնդրեցի միսս Ուոթսոնին, որ ինձ համար աղոթի, բայց նա ասաց, որ ես հիմար եմ, նույնիսկ չասաց, թե ինչու, և այդպես ել ես ոչինչ շհասկացա:

Մի անգամ անտառում նստած՝ երկար մտածեցի այդ մասին: Ինքս ինձ ասում էի. եթե մարդ աղոթելով կարող է ստանալ ուզածդ բանը, ապա ինչո՞ւ սարկավագ Վինը չի կարողանում վերադարձնել այն դրամը, որ կորցրեց խոզի միսր վաճառելուց հետո: Ինչո՞ւ

այրին չի կարողանում ետ ստանալ քթախոտի արծաթե տուփը, որ գողացել էին: Ինչո՞ւ միսս Ուռջասոնը չի գիրանում: Ոչ, ասացի ինքնս ինձ, դրա մեջ ոչինչ չկա: Գնացի և այրուն պատմեցի այդ մասին, բայց նա ասաց, որ աղոթելով մարմինը ստանում է «հոգևոր բարիքներ»: Դա հասկանալի իմ կարողությունից վեր էր, բայց նա բացատրեց, թե ինչ է ուզում ասել: Ասաց, որ ես պետք է օգնեմ ուրիշներին, նրանց համար անեմ այն, ինչ կարող եմ, շարունակ հոգատար լինեմ նրանց նկատմամբ և երբեք իմ մասին չմտածեմ: Ինչպես հասկացա, այդ ուրիշների մեջ մտնում էր և միսս Ուռջասոնը: Գնացի անտառ և երկար ժամանակ մտքում շուռումուու տվի նրա ասածները, բայց չկարողացա հասկանալ, թե ուրիշներին օգտակար լինելուց ինձ ի՞նչ օգուտ: Ի վերջո, որոշեցի այլևս այդ աղթիվ շանհանգատանալ, հրաժարվել որանից: Երբեմն այրին ինձ մի կողմ էր տանում ու աստծոն նախախնամության մասին այնպես էր խոսում, որ բերանիս ջուրը վազում էր, բայց պատահում էր, որ հենց մյուս օրը միսս Ուռջասոնն ամբողջովին շուր էր տալիս իր ասածը: Նրա ասածներից եկա այն համոզման, որ երկու աստված կա: Մի խեղճ մեղավոր այրու աստծոն առջև թերևս մի կերպ կարողանար արդարանալ, բայց եթե միսս Ուռջասոնի աստծոն ճանկն ընկներ, այլևս չէր ազատվի: Երկար մտածեցի և վճռեցի, որ ավելի լավ է այրու աստծուն ապավինել, երբ նա իմ կարիքն զգա, թեև չէի հասկանում, թե ես նրա ինչի՞ն եմ պետք, և ինձնից ի՞նչ օգուտ, երբ ոչինչ զգիտեմ, այնքան լավ վարք չունեմ, ծագումս է հասարակ է:

Ավելի քան մեկ տարի հայրս քաղաքում չէր երևում, և դա ինձ համար լավ էր, քանի որ այլևս չէի ուզում նրան տեսնել: Նա սովորություն ուներ ինձ միշտ ծեծել, երբ զգաստ էր լինում, և երբ ես էլ ծեռքն էի ընկնում: Այդ պատճառով էլ փախչում էի անտառ, երբ նա մոտակայքում էր լինում: Վերջերս մարդիկ խոսում էին, թե նրան գտել են գետում խեղդված, քաղաքից տասներկու մղոն վերև: Ենթադրում էին, թե դա հայրս է: Ասում էին, որ խեղդվածը հասակով ճիշտ հորս չափ է, հազին՝ ցնցուիներ, անսովոր երկար մազեր ունի, հորս շատ է նման: Բայց դեմքից ոչինչ չէին կարողացել եզրակացնել. հորս այնքան ուշ էին ջրի տակից հանել, որ դեմքից գրեթե ոչինչ չէր մնացել: Մարդիկ նրան ջրից դուրս էին բերել և թաղել գետափին: Բայց իմ հանգիստ վիճակը երկար չտևեց. հարկ եղավ ինչ-որ քանի մասին մտածել: Ես շատ լավ զիտեի, որ խեղդված տղամարդը մեջքի վրա չի լողում, այլ բերանաքսիվայր: Ուստի եզրակացրի, որ դա հայրս լինել չի կարող. տղամարդու շոր հազար կին է եղել: Նորից անհանգիստ էի, թվում էր, թե ծերունին շուտով ուր որ է կհայտնվի, թեև չէի ուզում, որ աչքիս երևա:

Մոտ մեկ ամիս ավագակ-ավագակ էինք խաղում: Հետո ես հրաժարական տվի: Հրաժարվեցին և մյուս բոլոր տղաները: Մենք ոչ ոքի չկողոպտեցինք, ոչ մեկին շապանեցինք, միայն ձևացնում էինք: Սովորաբար դուրս էինք վազում անտառից և գրոհում խոզարածների, ինչպես և կանանց վրա, որոնք սայլերով քանջարեղեն էին տանում շուլքա: Բայց մենք նրանցից ոչ մեկին ծեռք չէինք տալիս: Թում Սոյերը խոզերն անվանում էր «ոսկու գնդեր», իսկ բողկերն ու մյուս բանջարեղեններ՝ «զոհարներ»: Մենք քարանձավ էինք գնում և աղմկում մեր արածների աղթիվ, թե քանի մարդ ենք սպանել և քանիսին վիրավորել: Բայց ես այդ գործի մեջ օգուտ չէի տեսնում:

Մի անգամ թումը տղաներից մեկին ուղարկեց քաղաք՝ վառվող փայտը ծեռքին, որը նա անվանում էր պայմանանշան (դրանով խմբի անդմներին իմաց էին տալիս, որ հավաքվեն), ապա ասաց, թե իր լրտեսները զաղտնի տեղեկություններ են բերել, որ հաջորդ օրը խսպանացի վաճառականների և հարուստ արաբների մի ամբողջ քարավան

աղամանդներով բեռնված երկու հարյուր փողերով, վեց հարյուր ուղտերով և ավելի քան հազար «բեռնատար» ջորիներով իշխանելու է քարանձավի մոտ: Նրանց պաշտպաններն ընդամենք չորս հարյուր գինվոր են, ուստի մենք պետք է դարան պատրաստենք, սպանենք բողոքին ու հափշտակենք հարստությունը: Թումն ասաց, որ մենք պետք է սրենք թրերը, մաքրենք հրացանները և պատրաստ լինենք: Նա երբեք չէր հարձակվում նույնիսկ բողկի սայի վրա, մինչև թրերն ու հրացանները սրած ու մաքրած չինեին, թեև մեր ունեցածը միայն տախտակի բարակ ձողեր էին և հատակ մաքրելու խոզանակի փայտեր: Դրանք ինչքան էլ մաքրես ու տանջվես, մազաշափ անգամ չեն փոխվի:

Ես չէի հավատում, թե մենք կկարողանանք ջարդել այդքան մեծաթիվ իսպանացիների ու արաքների, բայց ուզում էի ուղտեր ու փողեր տեսնել: Հաջորդ օրը, որը շաբաթ էր, ես դարանում էի: Հենց որ ազդանշան տրվեց, խառնիխուռն դուրս սուրացինք անտառից ու վազեցինք բուրն ի վար: Բայց այնտեղ ո՞չ իսպանացիներ կային, ո՞չ արաքներ, ո՞չ էլ ուղտ կամ փիդ: Ոչինչ չկար, բացի դպրոցականների կիրակնօրյա դաշտային ճաշկերույթից, որին մասնակցում էին միայն առաջին դասարանի աշակերտները: Մենք գրոհեցինք դրանց վրա և հալածեցինք ամբողջ հովտի երկայնքով: Բայց ոչ մի ավար ձեռք չքերեցինք, եթե նկատի չունենանք մի քանի մեղրաբիթ ու թիզ մուրաբա, թեև Բեն Ռոշերսի ձեռքն ընկավ նաև ցնցուտիներով մի տիկնիկ, իսկ Չո Հարավը զտավ եկեղեցական մի երգարան և մի կրոնաճառ: Ապա մեզ վրա հարձակվեց ուսուցչուիհն և ստիպեց զցել ամեն ինչ ու փախչել: Ես ոչ մի աղամանդ չտեսա և այդ մասին ասացի թում Սոյերին: Բայց նա պնդեց, թե այնուամենայնիվ, բեռներով աղամանդ կար, կային արաքներ, փողեր և շատ այլ բաներ:

— Իսկ ինչո՞ւ մենք դրանք չտեսանք, — հարցրի ես:

Նա պատասխանեց.

— Եթե դու այդքան անգիտակ չինեիր և կարդացած լինեիր մի գիրք, որը կոչվում է «Դոն-Ռիշոտ», այդ բանը կիմանայիր առանց հարցնելու: Վյու ամենը մարդ կարող է տեսնել կախարդանքի ուժով:

Այնուհետև ասաց, որ այնտեղ կային հարյուրավոր գինվորներ, փողեր, գանձեր և այլն, բայց մենք ունեիք թշնամիներ, որոնց անվանեց մողեր, և նրանք չարամտորեն ամեն ինչ կերպարանափոխեցին, դարձրին երեխաների կիրակնօրյա դպրոց:

Ես ասացի.

— Շատ լավ, այդ դեպքում մեզ մնում է հարձակվել այդ մողերի վրա:

Բայց թում Սոյերը պատասխանեց, որ ես ապուշ եմ:

— Ինչե՞ր ես խոսում, — ասաց նա, — չէ՞ որ մողը կարող է հազարավոր ողիներ կանչել, և նրանք քեզ մեկ ակնթարթում կհոշոտեն, ժամանակ չտալով, որ «մայրիկ» կանչես: Նրանք ծառի չափ բարձր հասակ ունեն և եկեղեցու չափ լայնք:

— Լավ, — ասացի ես, — ենթադրենք, թե մենք մի քանի ոգի կանչեցինք մեզ օգնելու, այդ դեպքում չե՞նք կարող դրանց ծեծել:

— Իսկ ինչպե՞ս կկանչես:

— Զգիտեմ: Իսկ նրան ինչպե՞ս են կանչում:

— Ինչպե՞ս: Թիթեղյա մի հին լապտեր կամ երկաթե մանյակ են շփում, և ոգիները կատաղի շարժումներով, որոտ, կայծակ, քուլա-քուլա ծուխ արձակելով, ամեն կողմից թափում են, անմիջապես կատարում, ինչ նրանց ասվի: Նրանց համար չնշին բան է միաձույլ աշտարակը հիմքից դուրս քաշել ու դրանով հարվածել կիրակնօրյա դպրոցի վարիչի կամ ուրիշի ճակատին:

— Իսկ ո՞վ է դրանց այդքան կատաղի շարժման մեջ դնում:

— Նա, որ շփում է լապտերը կամ մանյակը: Ոգիները պատկանում են այդ անձնավորությանը և պարտավոր են անել այն, ինչ նա հրամայի: Եթե ասի, որ պետք է աղամանդից քառասուն մղոն երկարությամբ պալատ կառուցել ու լիքը լցնել ծամոնով կամ ցանկացած որևէ այլ բանով, եթե ասի, որ Չինաստանի կայսեր դստերը բերեն կնության, ապա նրանք պարտավոր են անել և դա պետք է կատարեն մինչև հաջորդ արևածագը: Բացի այդ, նրանք պարտավոր են պալարը տեղափոխել աշխարհի բոլոր կողմերը, ուր ուզում ես: Հասկան՝ մ ես:

— Լավ, — ասացի ես, — կարծում եմ, որ դրանց կարելի է անվանել տափակ, ապուշ արարածների ոհմակ, եթե պալատը իրենց պահելու փոխարեն, այդքան հիմար դեր են կատարում: Դեռ ավելին: Եթե ես այդ ոգիներից մեկը լինեմ, ավելի շուտ կգնայի Երիքը,<sup>[3]</sup> բան թե բան ու գործ թողած՝ կգնայի ինչ-որ մեկի մոտ, որը թիթեղե մի հին լապտեր է շփել:

— Ինչե՞՞ր ես ասում, Հեք Ֆինն: Երբ նա լապտեր շփեր, դու ուզեիր, չուզեիր, պիտի ներկայանայիր:

— Ի՞նչ: Իսկ եթե ես լինեմ ծառի չափ բարձր և եկեղեցու չափ մեծ: Լավ, այդ դեպքում կգայի, բայց, հավատացնում եմ, որ դրան կստիպեի բարձրանալ այդ երկրի ամենաբարձր ծառի կատարը:

— Դատարկ բան ես ասում, Հեկ Ֆինն: Չարժե քեզ հետ խոսել: Դու ոչինչ չգիտես, կատարյալ տիսմար ես:

Երկու-երեք օր ես մտածում էի այս մասին: Վյուհետու որոշեցի տեսնել, թե իսկապես դրա մեջ որևէ բան կա՞: Վերցրի թիթեղե մի հին լապտեր, երկաթե մի մանյակ, զնացի անտառ և սկսեցի շփել ու շփել մինչև քրտնքի մեջ կորա, ինչպես հնդիկ: Մտադիր էի մի պալատ կառուցել տալ ու վաճառել: Բայց ապարդյուն. ոչ մի ոզի չհայտնվեց: Սկսեցի մտածել, որ դա Թում Սոյերի ստերից մեկն է: Ինձ թփում եր, թե նա հավատում է արաբների ու փղերի պատմությանը, բայց ինչ վերաբերում է ինձ, ես այլ կերպ էի մտածում: Իմ տեսածը բոլոր նշաններով դպրոց էր:

## Գլուխ չորրորդ

Այսպես անցավ երեք-չորս ամիս: Արդեն խոր ձմեռ էր: Ես ժամանակի մեծ մասն անցկացնում էի դպրոցում: Մի փոքր սովորել էի բառեր հեզեկ, կարդալ ու գրել, անզիր էի արել բազմապատկման աղյուսակը՝ մինչև վեց անգամ յոթը, որը հավասար է երեսունհինգի: Իմ կարծիքով դրանից ավելին չեի կարող իմանալ, եթե նույնիսկ հավիտյան ապրեի. մաթեմատիկան ոչ մի կերպ գլուխս չէր մտնում:

Սկզբում ատում էի դպրոցը, բայց շուտով այնքան վարժվեցի, որ կարող էի դիմանալ: Եթե շատ էի ձանձրանում, փախչում էի, իսկ հաջորդ օրվա ծեծն ու հանդիմանություններն ինձ համար օգտակար էին. զգաստացնում էին: Այսպիսով, որքան շատ գնացի դպրոց, այնքան դա հեշտացավ ինձ համար: Վարժվում էի նաև այրու կարգ ու կանոնին, և նրա վարվելակերպն ինձ համար անքան տաճախց չէր: Ընդհանրապես շատ էի նեղվում տանն ապրելուց ու մահճակալին քնելուց: Քանի դեռ ձմեռ չէր, երբեմն դուրս էի ծկում ու քնում տակառում: Դա բավականություն էր ինձ համար: Ինձ ավելի շատ դուրս էր գալիս իմ նախկին ապրելածեր, բայց նորին է սկսում էի վարժվել. որչափով դա նույնպես սրտովս էր: Այրին ասում էր, որ ես դանդաղ, բայց հաստատապես ուղղվում եմ, և զոհ էր իմ վարքից: Ասում էր, որ այլևս իմ պատճառով չի ամաչի:

Մի առավոտ նախաճաշին պատահմամբ շուր տվեցի աղամանը: Ես հնարավորին չափ արագ վերցրի մի քիչ աղ, որպեսզի ձախ ուսիս վրայով դեն զցեմ և դրանով ինձնից հեռացնեմ դժբախտությունը, բայց միսս Ուորթսոնն առաջ եկավ ու կանգնեցրեց ինձ: Նա ասաց. «Զեռքերդ հեռո՛ւ, Հե՛քլերի, ի՞նչ անշնորհք բաներ ես միշտ անում»: Այրին իմ օգտին խոսեց, բայց դրանով դժբախտությունը չէր հեռանա. Ես այդ լավ գիտեի:

Նախաճաշից հետո տնից դուրս եկա հոգնած ու անտրամադիր, ինքս ինձ հարցնելով, թե տեսնես ի՞նչ է զիմիս գալու, ի՞նչ է պատահելու: Կան միջոցներ, որոնց շնորհիվ որոշ աղետներ կանխվում են, բայց այս մեկը դրանցից չէր, և ես երբեք չփորձեցի որևէ բան անել. հոգեպես ընկճված քարշ էի գալիս, սպասելով դաժան ճակատագրի վճռին:

Ես շարժվեցի դեպի դիմացի պարտեզը և վեր մագլցեցի բարձր ցանկապատի այն մասով, որտեղ մուտքն էր. ճանապարհ դա էր: Գետինը ծածկված էր մեկ մատնաշափ ծյան շերտով, որի վրա տեսա ինչ-որ ոտնահետքեր: Մեկը եկել էր քարհանքից, մի պահ կանգ առել ցանկապատի այդ մասի մոտ և ապա պտտվել շուրջը: Չարմանալին այն էր, որ ցանկապատի մոտ այդքան մնալուց հետո ներս չէր մտել: Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչ էր նշանակում այդ: Այնուամենայնիվ շատ հետաքրքիր էր: Ուզում էի հետևել, բայց կանգ առա, որ դիտեմ հետքերը: Ակզբում ոչինչ չնշմարեցի, բայց հետո ուրիշ բան ընկապ աշքովս: Զախ ուրիշ կոչիկի կրնկի տակ մեխից պատրաստած խաչ կար, որի նպատակը շար ոգուն հեռու պահելն էր:

Մի վայրկյանում վեր կացա ու վագելով իջա բրից: Անընդհատ ուսիս վրայով ես էի նայում, բայց ոչ ոքի չտեսա: Արագ վագեցի դատավոր Թեշըրի մոտ:

— Ի՞նչ է պատահել, տղաս, շունչդ կտրվում է: Տոկոսներիդ համա՞ր ես եկել:

— Ոչ, սըր, — ասացի ես, — իսկ ինձ համար որևէ բան կա՞:

— Այո, երեկ երեկոյան կես տարվա համար ստացա ավելի քան հարյուր հիսուն դոլար: Դա թեզ համար կատարյալ հարստություն է: Լավ կլինի՝ թույլ տաս դա էլ վեց հազար դոլարի հետ բանկը դնեմ. եթե վերցնես, կծախսես:

— Ոչ, սըր, — ասացի ես, — չեմ ուզում ծախսել, բոլորովին չեմ ուզում վերցնել, ոչ ել վեց հազար դոլարն եմ ուզում: Ես ուզում եմ, որ դուք դրանք վերցնեք ձեզ, ուզում եմ ձեզ տալ... վեց հազար դոլարը, բոլորը:

Թեշըրը զարմացած նայեց ինձ: Թվում էր, թե չի հասկանում իմ ասածները:

— Ինչպե՞ս թե, տղաս, ի՞նչ ես ուզում դրանով ասել:

— Ինձ ոչինչ մի՛ հարցրեք, խնդրում եմ: Դուք կվերցնեք այդ դրամը, չէ՞:

Թեշըրն ասաց.

— Ինձ համար դա հանելուկ է: Բա՞ն է պատահել:

— Խնդրում եմ, վերցրեք, — ասացի ես, — և ինձ ոչինչ մի՛ հարցրեք. այդ դեպքում ես ստիպված չեմ լինի սուտ խոսել:

Մի պահ Թեշըրը խորասուզվեց մտքերի մեջ և ասաց.

— Օ՛, կարծում եմ, որ հասկացա: Ուզում ես ամբողջ ունեցվածքը ինձ ծախել և ոչ թե տալ: Այդ միանգամայն ճիշտ միտք է:

Ապա նա ինչ-որ բան գրեց թղթի վրա, կարդաց և ասաց.

— Ահա, տեսնո՞ւմ ես, այստեղ ասված է. «Ի նշան հարգանքի»: Այդ նշանակում է, որ ես դա գնել եմ և փոխարենը վճարել: Ահա քեզ մեկ դոլար: Այժմ ստորագրիր:

Ես ստորագրեցի և դուրս եկա:

Միսս Ուորթսոնի նեզը Զիմը բռունցքի մեծությամբ մազե գնդակ ուներ, որը դուրս էր բերել եզան ստամոքսից և դրանով կախարդություն էր անում: Նա ասում էր, թե նրա մեջ ողի կա, որն ամեն ինչ գիտե: Ուստի այդ երեկո գնացի նրա մոտ և ասացի, որ հայրս նորից այստեղ է. հետքը տեսել եմ ձյան վրա: Ուզում էի իմանալ, թե ինչ է անելու. մնալո՞ւ է այստեղ, թե՞ ոչ: Զիմը դուրս բերեց մազե գնդակը, ինչ-որ բան շշնչաց վրան, ապա բարձրացրեց վերև ու բաց թողեց: Գնդակը բավական հաստատուն ընկալ ցած և հազիվ մեկ մատնաշափ գլորվեց: Զիմը փորձեց երկրորդ անգամ, բայց արդյունքը նույնն էր: Զիմը ծունկ չորեց, ականջը դրեց գնդակի վրա, լսողությունը լարեց, բայց անօգուտ: Նա ասաց, որ գնդակը չի ուզում խոսել. երբեմն առանց դրամի չի խոսում: Ես ասացի, որ իին, մաշված, կեղծ քառորդ դոլարանոց ունեմ, որը ոչ մի բանի պես չէ. արծաթի տակից արույրը երևում է և ոչ մի տեղ չեն վերցնի, նույնիսկ եթե արույրը չերևա, որովհետև շատ մաշված է, կարծես ճարպոտած լինի և անմիջապես կերևա կեղծ լինելը: (Որոշեցի ոչինչ շասել դատավորից ստացած դոլարի մասին): Ես ասացի, որ վաս դրամ է, բայց գուցե մազե գնդակը վերցնի, գուցե շհասկանա լավն ու վատը: Զիմը նախ հոսուտեց դրամը, ապա կծեց և այնուհետև շոշափեց ու հայտնեց, թե ինքն այնպես կանի, որ մազե գնդակը դա իսկական դրամ կարծի. ասաց, որ մի կարտոֆիլ կճեղքի, դրամը կդնի երկու շերտերի միջև ու այդպես կպահի ամբողջ գիշերը: Հաջորդ առավոտյան արույրը այլևս չի երևա և ճարպոտությունը չի զգացվի, քաղաքում ամեն մարդ կվերցնի այն, ուր մնաց թե մազե գնդակը: Ես գիտեի, որ կարտոֆիլով կարելի է այդ անել, բայց մոռացել էի:

Զիմը քառորդ դոլարը մազե գնդակի մեջ դրեց, կռացավ ու նորից ականջ դրեց: Այս անգամ ասաց, որ ամեն ինչ կարգին է. մազե գնդակն իմ ամբողջ բախտը կգուշակի ու կասի, եթե ցանկանամ: Ես ասացի, որ ուզում եմ: Եվ մազե գնդակը խոսեց Զիմի հետ, Զիմն էլ ինձ պատմեց: Նա ասաց.

— Քո ծեր հայրը ինքն էլ դեռ չգիտե իր անելիքը: Երբեմն կարծում է, թե գնալու է, երբեմն էլ մնալու: Ամենալավն այն կլինի, որ դու հանգիստ լինես, իսկ ծերուկը թող ինքը որոշի իր ճանապարհը: Երկու հրեշտակ սավառնում են նրա շուրջը: Մեկը ամբողջովին սպիտակ է ու շողողուն, իսկ մյուսը՝ ամբողջովին սև: Սպիտակը նրան որոշ ժամանակ ճիշտ ճանապարհ է ցույց տալիս, բայց շուտով վրա է հասնում սևը և ամեն ինչ փշացնում: Դեռ ոչ

որ չի կարող ասել, թե ո՞ր մեկն ի վերջո կկարողանա հաղթանակ տանել: Բայց քո գործը լավ է: Դու կյանքում շատ նեղություններ կկրես, թեև ուրախությունն էլ չի պակասի: Երբեմն կվնասվես, երբեմն էլ կիհվանդանաս, բայց միշտ վերջը լավ կինի: Կյանքումդ երկու աղջկա կիանդիպես: Մեկը շիկահեր է, մյուսը՝ սևահեր: Մեկը հարուստ է, մյուսը՝ աղքատ: Նախ կամուսնանաս աղքատի հետ և ապա՝ հարուստի հետ: Դու պետք է հնարավորին չափ հեռու մնաս ջրից և ոչ մի վտանգավոր քայլի չդիմես. ճակատիդ գրված է, որ քեզ կախելու են»:

Երեկոյան, երբ մոմք վառեցի ու մտա իմ սենյակը, այնտեղ նստած էր ինքը՝ հայր:

## Գլուխ հինգերորդ

Դուռն արդեն փակել էի: Շուր եկա, և ահա հայրս: Ես նրանից միշտ վախենում էի. ինձ շատ էր ծեծում: Թվում էր, թե այժմ էլ վախենում եմ, բայց հետո հասկացա, որ սխալվում եմ: Առաջին ցնցումից հետո, ինչպես կասեիք դուք, երբ նրա անսպասելի հայտնվելուց շունչ կտրվեց, անմիջապես ուշրի եկա և զգացի, որ այնքան էլ չեմ վախենում ու դրա համար չարժե այդշափ նեղվել:

Նա կիներ մոտ հիսուն տարեկան: Դեմքից այդպես էլ երևում էր: Մազերը երկար էին, իսկամ ճանապահ, ճարպոտած ու կախված: Դրանց արանքից փայլում էին ացրերը. կարծես նա թվերի հետևում լիներ: Նրա մազերը սև էին, ոչ մի սպիտակ մազ չլուներ: Սև էր նաև երկար, խառնիճաղանջ կիսամորուքը: Դեմքը, որքան հնարավոր էր դա նշմարել, դժգույն էր, ամբողջովին սպիտակ: Դա, իհարկե, մարդկային դեմքի սովորական սպիտակություն չէր, այլ այնապիսին, որ նայելիս մարդ սարսափում է ու փշաքաղվում: Դա ծառադրդոշի և ձկան փորի սպիտակություն էր: Ինչ վերաբերում է հազուստներին, դրանք միայն ցնցոտիներ էին, ուրիշ ոչինչ: Նա մի ոտքը դրել էր մյուսի ծնկի վրա: Այդ ոտքի կոշիկը պատռվել էր, մատներից երկուսը դուրս էին ցցվել, և նա դրանք երթեմն-երթեմն շարժում էր: Գիշարկն ընկած էր հատակին՝ հին, սև, տծև, գագաթը ներս ընկած. կարծես ամանի կափարիչ լիներ:

Ես կանգնած նայում էի: Նա էլ նստած ինձ էր նայում, աթօռը մի փոքր եւ թեքած: Մոմն ամրացրի հատակին: Նկատեցի, որ պատուհանը բաց է: Այդ նշանակում էր, որ նա արդեն բարձրացել է փայտանոցը և ապա ներս մտել: Նայեց ինձ ոտքից-գլուխ և ասաց.

— Սքանչելի՛ շորեր, հիանալի՛ է: Երևի կարծում ես, թե նախշուն բգեզ ես դարձել, չ՞:

— Գուցե դարձել եմ, գուցե՝ ոչ, — ասացի ես:

— Լեզու չդարձնե՛ս ինձ, — զոռաց հայրս, — իմ հեռանալուց հետո դու շատ հիմարություններով ես լցրել գլուխտ: Ես քեզ ցույց կտամ, քո այդ զոռոզությունը կկոտրեմ: Կրթված ես, ասում են. կարող ես կարդալ, գրել: Կարծում ես, թե այժմ հորիցդ լավն ես, որպիետև նա գրագետ չէ, հա՛: Ես այդ միտքը կհանեմ գլխիցդ: Ո՞վ ասաց, թե դու քեզ պիտի տաս նման հիմարությունների, հը՛, ո՞վ ասաց:

— Այրին:

— Այրի՞ն: Այ թե ինչ: Իսկ ո՞վ ասաց նրան, թե կարող է քիթը խորթել այնպիսի գործի մեջ, որն իրեն չի վերաբերում:

— Ոչ ոք:

— Լավ, ես դրանց ցույց կտամ, թե ինչ է նշանակում տղային սովորեցնել սեփական հոր դեմ ընդվզել և մեծամտանալ: Դեհ, թող մեկ էլ քեզ տեսնեմ այդ դպրոցի շուրջը խեղկատակություն անելիս: Չո մայրը մինչև կյանքի վերջը ոչ կարդալ գիտեր, ոչ էլ գրել: Չո բոլոր հարազատները գրել-կարդալ չեն իմացել և այդպես էլ մեռել են: Ես էլ չզիտեմ, իսկ դու ահա պճնամո՞լ ես դարձել: Ես այդ բանը տանել չեմ կարող, լսո՞ւմ ես: Դե՛, կարդա՛ լսեմ:

Ես վերցրի ինչ-որ գեներալ Վաշինգտոնի և պատերազմների մասին գրված մի գիրը ու սկսեցի կարդալ: Կես րոպե էլ չեմ կարդացել, երբ նա վրա պրծավ, իսկոց գիրքն ու շպրտեց սենյակի մյուս ծայրը, ասելով.

— Ճիշտ է, կարող ես կարդալ: Ես կասկածում էի, երբ դու այդ մասին ասացիր: Այժմ ինձ նայիր, վե՛րջ տուր այդ ցուցամոլությանդ տանել չեմ կարող: Ես կհետևեմ քեզ, իմ պճնամոյ տղա, և եթե քեզ բռնեմ այդ դպրոցի դուանը, կաշիդ կըերթեմ: Զարդ կտամ, խելքդ գլուխող կզա: Լա՛վ որդի ես, խոսք չունեմ:

Հայրս վերցրեց կապույտ-դեղնավուն մի նկար, որտեղ կային մի քանի կով և մի տղա.

— Սա ի՞նչ է:

— Դա ինձ տվել են դասերս լավ սովորելու համար:

Նա պատռեց նկարը և ասաց.

— Ես քեզ ավելի լավ բան կտամ. մի լավ մտրակ:

Նա այդպես մի րոպե նստեց, քրթմնջալով ու մոմռալով, ապա ասաց.

— Այ թե ինչ. փափկասուն դենդի ես դառել, չէ՛. մահճակալ, սավան, հայելի, հատակին կապերտը փուած... Իսկ քո հայրը ստիպված է քնել խոզերի հետ՝ կաշեգործարանի բակում: Ես քեզ նման որդի չեմ տեսել: Ես այդ պճնամոլությանդ վերջ կտամ նախքան քեզ հետ հաշիվս փակելը: Չո այդ խրոխտանալուն վերջ չկա. ասում են, որ հարուստ ես, հա՛: Ինչպե՞ս պատահեց:

— Բոլորը ստում են, այ թե ինչպես:

— Այս կողմը նայիր: Այդ ինչպե՞ս ես խոսում ինձ հետ: Ես ինչքան համբերել եմ, բավական է, ել չեմ դիմանում, այնպես որ ինձ լեզու մի՛ դարձնի: Երկու օր է քաղաքում եմ և ոչինչ չեմ լսել, բացի քո հարստանալուց: Այդ մասին լսեցի նաև գետով իջնելիս: Ահա թե ինչու եմ եկել: Վաղն այդ փողերը կրերես. ինձ պետք են:

— Ես փող չունեմ:

— Սուտ ես ասում: Դատավոր Թեզըրի մոտ է: Բե՛ր: Պետք է:

— Փող չունեմ, ասում եմ: Հարցրեք դատավոր Թեզըրին: Նույնը կասի և նա:

— Լավ, կհարցնեմ: Ես նրան կստիպեմ ճիշտն ասել: Այժմ ասա, գրպանումդ ինչքա՞ն կա: Տուր ինձ:

— Ընդամենը մեկ դոլար, և ինձ պետք է:

— Ի՞նչ նշանակություն ունի ինձ համար, թե քեզ պետք է: Հանիր, ուրիշ ոչինչ:

Նա վերցրեց դոլարը և կծեց, որպեսզի ստուգի, իսկակա՞ն է, թե ոչ: Ասա ասաց, թե զնում է քաղաք մի քիչ վիսկի գնելու. ամբողջ օրը չի խմել: Երբ բարձրացավ փայտանոցի տանիքը, նորից գուշակը ներս մտցրեց ու սկսեց նախատել ինձ պճնամոլության համար, նախատեց, որ ես փորձում եմ իրենից լավ լինել: Երբ կարծում էի, թե նա արդեն զնացել է, հանկարծ վերադարձավ ու ասաց, որ դպրոցի մասին իր ասածները չմոռանամ, և եթե շեղողնեմ դպրոցը, ինձ կիետապնդի, կրոնի ու կշարդի:

Հաջորդ օրը նա զնացել էր դատավոր Թեշըրի մոտ ու հոխորտալով փորձել էր ստիպել, որ սա իրեն զիջի դրամը, բայց Թեշըրը այդ անել չէր կարող: Հայրս սպառնացել էր, թե օրենքով կստիպի նրան դրամը հանձնել իրեն:

Դատավոր Թեշըրը և այրին զնացին դատարան խնդրելու, որ ինձ հորից բաժանեն և իրենցից մեկնումնեկին թույլ տան դառնալ իմ խնամակալը: Բայց դատավորը նոր մարդ էր և չէր ճանաչում ծերուկին: Ասել էր, թե դատարանը առանց հատուկ անհրաժեշտության չի կարող ընտանեկան գործերի միջամտել և ծնողներին բաժանել երեխաներից. և հետո չի ուզենա երեխային հորից բաժանել: Թեշըրն ու այրին ստիպված՝ ձեռ քաշեցին այդ մտադրությունից:

Ծերուկին այնքան էր դուր եկել այդ պատասխանը, որ չէր կարողանում հանգստանալ: Նա ասաց, թե այնքան կմտրակի ինձ, որ ամբողջ մարմինս սևանա ու կապտի, եթե ես իր համար փող չճարեմ: Ես դատավոր Թեշըրից երեք դոլար փոխ առա, և ծերուկը վերցրեց այն, հարբեց և երերալով սկսեց չափչիել քաղաքի փողոցները, թիթեռյա մի փոքրիկ տապակ ծեծելով զռոալ, հայինել մինչև կեսզիշեր, այնքան, մինչև նրան բանտարկեցին: Հաջորդ օրը հորս կանգնեցրին դատարանի առաջ ու նորից բանտարկեցին մեկ շաբաթով: Բայց նա ասաց, թե ինքը շատ գոհ է, որ իր որդու խնամական է և ցույց կտա, թե ինչն ինչոց է:

Դրանից հետո, երբ նա դուրս եկավ բանտից, նոր դատավորն ասաց, թե ինքն ուզում է նրան մարդ դարձնել: Ծերուկին տարավ իր տունը և մարուր, գեղեցիկ շորեր հազցրեց: Հայրս նախաճաշը, ճաշը և ընթրիքը ուտում էր ընտանիքի հետ նույն սեղանից, կարծես ընտանիքի հարազատներից մեկը լիներ: Ընթրիքից հետո նա ծերուկի հետ խոսում էր չափավոր խմելու և նման բաների մասին, մինչև հայրս լաց եղավ և խոստովանեց, որ ինքը հիմար է եղել ու իր կյանքը հիմարաբար է անցկացրել, բայց այժմ ուզում է բացել կյանքի մի նոր էջ, այնպիսի մարդ դառնալ, որ ոչ ոք չամաչի իրեն ծանոթ լինելուց, և հույս ունի, թե դատավորը կօգնի իրեն ու վերևսից չի նայի: Դատավորն ասաց, որ ինքը պատրաստ է նրան իր կրծքին սեղմել այդ խոսքերի համար: Դատավորը նույնակա արտասպեց, ինչպես և նրա կինը: Հայրս ասաց, որ մինչև հիմա ոչ ոք չի հասկացել, թե ինքն ինչ մարդ է: Դատավորը պատասխանեց, թե ինքը հավատում է նրա ասածներին: Ծերուկը ասաց, որ ընկած մարդը կարիք ունի կարեկցության, և դատավորը կրկնեց, որ այդ միանգամայն ճիշտ է: Նրանք նորից լաց եղան: Երբ քննելու ժամանակը եկավ, ծերուկը վեր կացավ, պարզեց ձեռքն ու ասաց.

— Նայեցեք սրան, ջենտլմեններ և լեղիներ: Բոնեցեք այս ձեռքը և սեղմեցեք: Ահա մի ձեռք, որ խոզի թաթ էր, բայց այլս այն չի լինի, ինչ եղել է. դա ձեռքն է մի մարդու, որը նոր կյանք է սկսել, և այդ մարդն ավելի շուտ կմեռնի, քան թե կվերադառնա ինին: Լավ լսեք

ասածներս, չմոռանաք, որ այդ բառերը ես եմ ասել: Այժմ սա մաքուր ձեռք է. սեղմեցեք, մի՛ վախեցեք:

Բոլորը հերթով սեղմեցին նրա ձեռքը և լաց եղան: Դատավորի կինը նույնիսկ համբուրեց հորս ձեռքը: Ապա ծերունին ուխտ արեց շխմել և ստորագրեց, թղթին սեղմելով բութ մատը: Դատավորն ասաց, թե դա իր կյանքի ամենասրբազան պահն է կամ նման մի բան: Այնուհետև նրանք ծերունուն տարան մի գեղեցիկ սենյակ, որ առանձնացված էր հյուրերի համար:

Գիշերը հայրս խմելու սարսափելի ցանկություն զգաց: Նա դուրս սողաց, բարձրացավ զավթի տանիքը, արտաքին սանդուղքով ցած սահեց և իր նոր բաճկոնը փոխանակեց մի շիշ քառասուն տոկոսանոց խմիչքի հետ, նորից ետ մազլցեց ու կրկնեց իր նախորդ քեֆը: Լուսադեմին նորից հարբած՝ զավթի տանիքից խեցգետնի պես սողալով իջավ և վայր ընկնելով, ձախ թևով երկու տեղից ջարդեց: Նա մեռնելու աստիճան սառել էր, երբ ինչ-որ մեկը, արևածագին, գտավ նրան փողոցում: Երբ առավոտյան եկան հյուրասենյակ, բանը բանից անցել էր. հատակին ծով էր գոյացել:

Դատավորը անշափ վշտացած էր: Նա ասաց, որ այդ ծերունուն կարելի է ուղղել գուցե միայն հրացանով. այլ ճանապարհ չէր տեսնում:

## Գլուխ վեցերորդ

Շատ չանցած, ծերուկը ոտքի կանգնեց և սկսեց նորից դեսուդեն ընկնել: Դիմեց դատարան, պահանջելով, որ դատավոր մթչերը զիջի դրամը: Այնուհետև սկսեց հետապնդել և ինձ՝ դպրոցից չիրաժարվելու համար: Մեկ-երկու անգամ բռնեց ինձ ու մի կավ ծեծեց, բայց, միևնույն է, ես շարունակեցի դպրոց հաճախել: Մեծ մասամբ խոյս էի տալիս կամ այնպես փախչում, որ չէր կարողանում բռնել: Առաջ այնքան է չի ուզում դպրոց գնալ, բայց այժմ մտածում էի, որ, ի հեճուկս նրա, պետք է գնամ: Դատը շարունակ հետաձգվում էր. կարծես չին էլ ուզում սկսել, և ես երեսն ստիպված էի լինում երկու-երեք դոլար վերցնել մեւըրից, տալ հորս, որ ազատվեի մտրակի հարվածներից: Ամեն անգամ, ստանալով դրամը, նա հարբում էր, ամեն հարբեկիս քաղաքի փողոցներում ահավոր աղմուկ բարձրացնում և ամեն անգամ աղմուկ բարձրացնելու համար բանտ ընկնում: Այդ կյանքը միանգամայն համապատասխանում էր հորս էությանը. նա դրանից դժգոհ չէր:

Նա շատ էր պտտվում այրու տան շուրջը, մինչև այրին ի վերջո սպառնաց, որ եթե վերջ չտա տունը հոտոտելուն, ինքը ստիպված կլինի խելքի բերել նրան: Մի՞թե հայրս չէր խելազարվել: Նա ասաց, որ ինքը ցույց կտա, թե ով է Հեք Ֆիննի խնամակալը: Գարնան մի օր ճանապարհս պահելով բռնեց ինձ, մակույկով մոտ երեք մղոն տարավ գետի հոսանքն ի վեր և դուրս եկավ Իլինոյսի առափնյա անտառոտ մի վայր: Այստեղ ոչ մի տուն չկար, եթե նկատի շունենանք փայտաշեն մի խրճիթ, որի շուրջն անտառը չափազանց իփս էր և տեղին անծանոթ մարդը հազիվ թե կարողանար գտնել այն:

Հայրս ինձ ոչ մի րոպե մենակ չէր թողնում, և ես հնարավորություն չունեի փախչելու: Մենք ապրում էինք այդ հին խրճիթում: Գիշերը քնելուց առաջ հայրս փակում էր դուռը և բանալին դնում զիսի տակ: Նա մի հրացան ուներ, որը, իմ կարծիքով, գողացել էր: Զբաղվում էինք ձուկ բռնելով ու որսորդությամբ. դրանով էլ ապրում էինք: Հաճախ նա

փակում էր ինձ սենյակում ու գնում խանութ կամ գետանավ, ծուկն ու որսը փոխանակում վիսկիով, բերում տուն, հարքում, լավ ժամանակ անցկացնում ու ինձ ծեծում: Շուտով այրին իմացավ իմ տեղը և մարդ ուղարկեց ինձ տանելու, բայց հայրս նրան հրացանով ետ դարձրեց: Կարճ ժամանակից հետո ես ընտելացա այդ նոր վայրին, որն ինձ դուր էր զայիս. ամեն ինչ լավ էր, բացի մտրակից:

Ապրում էի մի տեսակ ծույլ, անհոգ կյանքով, ամբողջ օրը հանգիստ փոված. ուզում ես ծիմիր, ուզում ես ծուկ բռնիր, ո՞չ գիրք, ո՞չ դաս: Այդպես անցավ ավելի քան երկու ամիս: Շորեւ ամբողջօվին պատառուտվեցին ու կենտուտվեցին, և ես չի հասկանում, թե ինչպես կարող եմ երբեւ սիրել այրու մոտ անցկացրած իմ կյանքը, որտեղ ստիպված էի լվացվել, ճաշ ուտել ամանով, սանրվել և պանկել քնելու, առավոտյան, իրեւ կանոն, վեր կենալ նոյն ժամին, շարունակ ձեռքը առնել ձանձրախ մի գիրք, տեսնել, թե ինչպես է պառակ միսս Ուղթան անընդհատ կոցահարում քեզ: Այլևս չի ուզում վերադառնալ նախկին տեղս: Եվ վերջ էի տվել հայինելուն, որովհետև այրին չէր հանդուրժում: Իսկ այժմ նորից սկսեցի հայինել. հայրս դրան դեմ չէր: Այստեղ, անտառում, առհասարակ լավ կյանք էինք քաշում:

Հայրս շուտով սկսեց չափից ավելի դիմել գավազանին, և ես չի կարողանում դրան դիմանալ: Ամբողջ մարմնիս վրա երևում էին հարվածների հետքեր: Նա հաճախ էր դուրս գնում և ինձ փակում ներսում: Մի անգամ դուրս կողակեց ինձ վրա և երեք օր չվերադառնավ: Սարսափելի մենակություն էի զգում: Կարծում էի, թե իւղղվել է, և ես այլևս դուրս չեմ գա այդ տնակից: Ահարեկված սպասում էի: Մտքումս որոշեցի հեռանալու միջոց գտնել: Շատ անգամ էի փորձել հեռանալ, բայց ելք չի գտնում: Պատուհանն այնպիսին էր, որ շունն է չը կարողանա դուրս գալ: Ծխնելույզով բարձրանալն է հնարավոր չէր. շատ նեղ էր: Դուռը հաստ էր, կաղնու ամուր փայտից պատրաստած: Հայրս շատ զգույշ էր. դուրս գնալիս ոչ մի դանակ կամ նման բան չէր թողնում խրճիթում: Երևի մի հարյուր անգամ խուզարկած կլինեի խրճիթը: Գրեթե ամբողջ գործս այդ էր, ժամանակն անցկացնելու միակ միջոցը: Բայց այս անգամ, վերջապես, մի բան գտա: Գտա ժանգոտած, առանց բռնակի մի սրոց, որը խրված էր տանիքի գերանի ու տախտակների արանքը: Ցուղեցի սղոցը և գործի անցա: Խրճիթի հեռավոր ծայրին, սեղանից փոքր-ինչ այն կողմ, պատին մեխել էին ծիու մի հին ծածկոց, որպեսզի քամին ճեղքերից չփչեր և շանգցներ մոմերը: Մտա սեղանի տակ, բարձրացրի ծածկոցն ու սկսեցի սղոցել ներքևի մեծ կրճի մի մասը, այնպես, որ հնարավոր լիներ դուս սղոսկել: Դա բավական երկար աշխատանք էր պահանջում, բայց ես արդեն վերջացնելու վրա էի, երբ անտառից լսեցի հորս հրացանի կրակոցը: Քողարկեցի աշխատանքին հետքերը, ցած իշեցրի ծածկոցը և թաքցրի սղոցը: Շուտով ներս մտավ հայրս:

Հորս տրամադրությունը սովորականի նման լավ չէր: Ասաց, որ եղել է քաղաքում, և հայտնի չէ, թե գործն ինչով կվերջանա: Փաստաբանը ասել էր, թե իր կարծիքով հայրս պետք է շահեր դատը և տիրանար փողին, եթե երբեւ դատավարություն սկսեր, բայց պատճառներ կային, որոնք երկար ժամանակ կարող էին հետաձգել դատը, իսկ դատավոր թեշրոը գիտեր, թե ինչպես պետք է դասավորել այդ գործը: Ասաց նաև, որ լուրեր են պտտվում, թե մի նոր դատ է լսվելու, որպեսզի հորից ինձ բաժանեն և հանձնեն այրուն որպես խնամակախ, և կարծում են, թե այս անգամ իրենք կշահեն դատը: Այդ լուրն ինձ բավականին ցնցեց, որովհետև ես չի ուզում վերադառնալ այրու մոտ և կաղապարի մեջ մտնել ու քաղաքակրթվել, ինչպես նրանք իրենց դաստիարակությունն էին անվանում: Ծերուկն այնուհետև սկսեց հայինել: Հայինում էր ամեն ինչ և ամենքին, ով միտքն էր

զախս: Քիչ հետո նորից սկսեց բոլորին հայիոյել, որպեսզի վստահ լիներ, թե ոչ ոքի չի մոռացել: Դրանից հետո ամեն ինչ հարդարեց ընդհանուր մի հայիոյանքով, որը վերաբերում էր և այնպիսի մարդկանց, որոնց անունները չգիտեր. ստիպված՝ այսինչ, այնինչ ասելով էր բավարարվում: Ապա հայիոյելով շարունակեց ետ ու առաջ քայլել:

Նա ասաց, որ դեռ կտեսնի, թե այրին ինձ ինչպես կիլի: Ասաց, որ ինքը կհետևի, իսկ եթե նրանք փորձեն իր գլխին այդպիսի խաղ խաղալ, ապա ինքը մի տեղ գիտե վեց-յոթ մղոն հեռու, ու և ինձ կթաքցնի: Ինչքան էլ որոնեն, չեն գտնի: Այդ բանը նորից անհանգստացրեց ինձ: Մտածեցի, որ չպետք է այնքան սպասել, մինչև նա այդ միջոցին դիմի:

Ծերուկն ինձ ստիպեց մակույկով փոխադրել իր բերած մթերքներն ու իրերը: Այնտեղ կար իխուն ֆունտանոց պարկով եզիպտացորենի այլուր, մի մեծ կտոր ապխտած միս, վառող, մանրագնդակ, չորս գալլոնանոց մի շիշ վիսկի, մի հին գիրք և երկու լրագիր՝ հրացանը խցելու համար, ինչպես և մակույկը քաշելու պարան: Ես այդ բեռը փոխադրեցի ափ, վերադարձա մակույկ ու նստեցի ետնամասին՝ հանգստանալու: Ծանրութեթևն արի բոլոր հարցերը և որոշեցի, որ հեռանալիս հետո կվերցնեմ հրացանը, ձկնորսական կարթեր ու կփախչեմ անտառներով: Ենթադրում էի, թե նույն տեղում չեմ մնա, այլ կթափառեմ ամբողջ երկրով մեկ, մեծ մասամբ գիշերները: Գոյությունս պահպանելու համար կզբաղվեմ որսորդությամբ և այնքան կհեռանամ, որ ինձ այլևս չեն կարողանա գտնել ո՛չ ծերուկը, ո՞չ էլ այրին: Որոշեցի սղոցել կրճար և հեռանալ հենց այդ գիշեր, եթե հայրս լավ հարբած լինի, իսկ նա անպայման կհարրի: Եվ այնպես էի տարվել այդ մտքերով, որ չեի զգացել, թե որքան ժամանակ եմ նստած եղել այնտեղ, մինչև ծերուկը կանչեց ինձ, հարցնելով՝ քնն' եմ, թե ինեղովել:

Ես ամեն ինչ փոխադրեցի խրճիթ: Երբ վերջացրի, գրեթե մուլթ էր: Մինչ ընթրիքն էի պատրաստում, ծերուկը մեկ-երկու անգամ շշից խմեց, տաքացավ և նորից սկսեց կատաղել: Քաղաքում հարթել էր, ամբողջ գիշերն ընկած էր եղել առվի մեջ, և հետաքրքիր էր նրան նայել: Տեսնողը կկարծեր, թե Աղամն է, ցեխի մեջ կորած: Հենց որ խմիչքը ներգրիծում էր, նա սկսում էր հայիոյել կառավարությանը: Այս անգամ էլ.

— Եվ սա կառավարությո՞ւն է: Նայեցեք և տեսեք, թե ինչի՞ է նման: Ահա թեզ օրենք պատրաստ սպասում է, որ մարդուց խի սեփական որդուն, սեփական որդուն, որին մեծացնելու համար ինչպիսի նեղություններ ու հոգսեր են քաշում, ինչպիսի՝ ծախսեր են անում: Այո, և հենց որ մարդ վերջապես որդուն մեծացնում է, ուզում է գործի տալ, որ հոր նման մի բան անի, միխթարի նրան, օրենքը դեմ է կանգնում: Եվ մարդիկ դա անվանում են կառավարություն: Դա բոլորովին էլ կառավարություն չէ: Օրենքը կանգնած է այդ ծերուկ դատավոր թեշրի մեջքին և օգնում է նրան, որպեսզի ինձ գրկի իմ սեփականությունից: Ահա թե ինչ է ասում օրենքը: Օրենքը վերցնում է վեց հազար դոլարից ավելի կարողության տեր մարդու ու խցկում մի հին ծուլակի մեջ, ինչպիսին այս խրճիթն է, և ստիպում դուրս գալ մարդամեջ այնպիսի շորով, որը չի սագի նույնիսկ խոզին: Եվ դա անվանում են կառավարություն: Նման կառավարության օրոք ոչ ոք չի կարող իր իրավունքների տերը լինել: Երբեմն սքանչելի մի միտք թեկադրում է ինձ ընդմիշտ հեռանալ այս երկրից: Այո, այդպես է ասացի նրանց. ծերուկ թեշրի երեսին ասացի: Ասում եմ, հանուն երկու ցենսի կթողնեի այս անիծված երկիրը և այլս ետ չեի զա: Ահա իմ խոսքերը: Ասում եմ. «Նայեցեք իմ գլխարկին, եթե դուք սա գլխարկ կհամարեք: Գագաթը վեր է բարձրացել, մնացած մասը իջել է ներքը մինչև ծնոտս և վերջին հաշվով դա իսկի է գլխարկ չէ. ոնց որ գլուխ վառարանի խողովակի մեջ մտցրած լինեմ: Նայեցեք, ասում եմ, թե ինչ գլխարկ եմ դնում

այն ժամանակ, երբ այս քաղաքի ամենահարուստ մարդկանցից եմ, եթե իրավունքներիս տերը լինեմ»: Այո, զարմանալի կառավարություն է, զարմանալի: Հապա այս կողմը նայիր: Այնտեղ կար Օհայոյից եկած մի ազատ նեգր, մի խառնածին, գրեթե նույնքան սպիտակ, որքան սպիտակամորթը: Նա հագել էր այնպիսի մի սպիտակ վերնաշապիկ, որի նմանը հազիվ թե տեսած լինես, գլխարկը՝ չափազանց շողշողուն: Քաղաքում չկա մեկը, որ այդքան գեղեցիկ հազնված լինի: Ժամացույցը՝ ոսկի, շղթան՝ ոսկի, զավագանի գլուխը արծաթապատ, մի խոսքով նահանգի ալեհատն մագերով ամենասարսափելի ծեր նարորը:<sup>[4]</sup> Եվ ի՞նչ ես կարծում: Ասում էին, թե նա ինչ-որ քողեջում պրոֆեսոր է, կարող է խոսել ամեն լեզվով, գիտե ամեն ինչ: Եվ դա դեռ բոլորը չեն: Ասում էին, որ նա կարող է քվեարկել, եթե հայունիքում է: Էհ, դա արդեն ինձ համբերությունից հանեց: Ես մտածում եմ, թե ո՞ւր է գնում մեր երկիրը: Ընտրության օր էր, և ես կգնայի քվեարկության, եթե շատ հարբած չինեի ու կարողանայի տեղ հասնել, բայց երբ ինձ ասացին, թե այս երկրում կա մի նահանգ, որտեղ նեզրին թույլ են տալիս քվեարկել, ես ես քաշվեցի:

Ես ասացի, որ այլս չեմ քվեարկի: Ահա իմ խոսքերը: Բոլորն ինձ լսեցին: Եթե ամբողջ երկիրն է քանդվի, ես մինչև կյանքիս վերջը այլս չեմ քվեարկի: Մի տեսնեի՛ր, այդ նեզրի սառը վերաբերմունքը: Նա ինձ ճանապարհ էլ չէր տա, եթե ես նրան մի կողմ չհրեի: Մարդկանց ասում եմ. ուզում եմ իմանալ, թե ինչո՞ւ այս նեզրին աճուրդի չեն հանում ու վաճառում: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ պատասխանեցին: Ասացին, թե նրան չի կարելի վաճառել, քանի դեռ նա այս նահանգում վեց ամիս չի ապրել, իսկ վեցը ամիսը չի լրացել: Ահա քեզ օրինակ: Եվ սա կոչվում է կառավարություն, որը չի կարող մի ազատ նեզրի վաճառել, եթե նա վեց ամիս չի ապրել նահանգում: Ահա քեզ մի կառավարություն, որն իրեն կառավարություն է անվանում և իրեն ներկայացնում է որպես կառավարություն և կարծում է, թե կառավարություն է, միաժամանակ ստիպված է կոճղի նման ամբողջ վեց ամիս հանգիստ սպասել մինչև կարողանալ ձեռք տալ թափառաշրջիկ մի ավագակի, դիվային, սպիտակ վերնաշապիկով ազատ մի նեզրի և...

Հայրս այնքան շատախոսեց, որ բոլորովին զգաց, թե իրեն ուր են տանում փայտացած ուոքերը: Դեմ առնելով խոզի աղած մասի տակառիկին, գլխիվայր ընկավ վրան, և երկու սրունքներն էլ քերծվեցին: Նրա վերջին խոսքերը ամենարորբորված մարդու բառերի մի տեղատարափ էր, ուղղված աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի, հատկապես նեզրին ու կառավարությանը, թեև տակառիկին էլ որոշ բաժին հասավ: Նա քավական ոստոստեց իրճիթում, նախ մեկ սրունքի վրա, ապա մյուս և հանկարծ ձախ ոտքը բարձրացրեց, ուժեղ հարվածեց տակառիկին: Բայց անտեղի, քանի որ այդ ոտքի կոշիկի ծայրից դուրս էին ցցվել նրա երկու մատները: Նա ցավից այնպես գոռաց, որ լսողի մազերը բիզ-բիզ կկանգնեին: Այնուհետև ոտքի մատները բռնած՝ ընկավ հատակին ու սկսեց թափալվել փոշու մեջ, իսկ հայինյանքները գերազանցեցին նախորդ բոլոր հայինյանքներին: Վերջում դա ինքը էլ էր դա ասում: Նա Սոուբերի Հեղանի հայինյանքները լսել էր իր լավ օրերին և պնդում էր, թե ինքը նրան էլ է գերազանցել, բայց, իմ կարծիքով, դա գուցե, չափազանցություն էր:

Ընթրիքից հետո հայրս վերցրեց շիշը և ասաց, թե ինքը այնքան վիսկի ունի, որ կարող է երկու անգամ խմել ու զառանցելու չափ հարթել: Նրա ասածը միշտ այդ էր: Ինձ թվում էր, թե նա մոտավորապես մեկ ժամ հետո այնպես կհարրի, որ աշքերը կփակվեն, և ես այն ժամանակ կգողանամ քանալին կամ սղոցելով անցը կրացեմ ու դուրս կգամ: Կամ մեկը կանեմ, կամ մյուսը:

Նա խմեց, խմեց և շուտով գլորվեց իր բարակ վերմակի վրա: Սակայն բախսու չէր թերում. նա խորը քնեց, անհանգիստ էր: Երկար ժամանակ նա հեծում ու տնրում էր: Վերջապես այնպես քունս տարավ, որ չէի կարող աշքերս բաց պահել: Դեռ չէի վճռել անելիքս, երբ խորը քնեցի, մոմն էլ թռղեցի վառած:

Չգիտեմ որքան էի քնել, երբ հանկարծ սարսափելի մի ճշոց լսեցի ու վեր թռա: Հայրս վայրազ կերպարանքով դես ու դեն էր թռչկոտում, գոռզոռում օձերի մասին: Ասում էր, թե օձերը սողում են սրունքներն ի վեր, ապա ցատկոտում էր ու ճշում, թե մեկը կծել է իր այտը: Բայց ես ոչ մի օձ չէի տեսնում: Նա վեր թռավ և այս ու այն կողմ վազվեց, բղավելով. «Հեռացրե՛ք դրան, հեռացրե՛ք դրան, կծո՛ւմ է վիզու»: Ես դեռ չէի տեսել այդքան վայրազ աշքեր: Շուտով նա ուժասպառ հևալով ընկավ հատակին: Այստեղ էլ սկսեց արագ թափավել, ոտքի հարվածներով իրերը զցել դեսուդեն և բռունցըներով հարվածել օդը, ճշալով, թե իրեն սատանա է հեծնել: Շուտով նա սպառեց իր վերջին ուժերը և մի պահ հանդարտվեց՝ տնրալով: Հետո բոլորովին խաղաղվեց, ոչ մի ձայն չէր հանում: Ես խում էի բվերի կոհինչն ու գայլերի ոռնոցը, որ գալիս էր հեռավոր անտառից և ավելի սոսկալի դարձնում գիշերը:

Հայրս ընկած էր անկյունում: Շուտով փոքր-ինչ բարձրացավ արմունկի վրա, գլուխը մի կողմ թերած՝ լարեց լսողությունը և հազիվ լսելի ձայնով ասաց.

— Թը՛փ, թը՛փ, թը՛փ... Մեռածի ոտնաձայն է... Թը՛փ, թը՛փ, թը՛փ... Իմ հետևից են զալիս, բայց չեմ գնա: Ա՞հ, արդեն այստեղ են: Ինձ չմոտենա՛ք, չմոտենա՛ք. ձեռքներդ հեռո՛ւ, սառն են, գնացե՛ք: Ինձ՝ ողորմելի թշվառիս, հանգիստ թողեք:

Նա չորեքթաթ առաջ սողաց, աղերսելով, որ իրեն հանգիստ թողնեն, փաթաթվեց վերմակի մեջ ու սկսեց թափավել սոնեփայտից պատրաստած սեղանի տակ, շարունակելով աղերսել ու լաց լինել: Վերմակի տակից լսվում էր նրա հեկեկանքը:

Կարճ ժամանակից հետո հայրս դուրս սողաց ու վեր ցատկեց, կանգնեց, վայրազ հայացրով նայեց շուրջը: Ինձ նկատելով, վրա պրծավ: Նա, դանակը ձեռքին, իմ հետևից վազում էր անկյունից անկյուն, ինձ անվանելով հողեառ իրեշտակ և ասելով, որ կսպանի ինձ, և ես այլևս չեմ կարողանա իրեն հետապնդել: Ես խնդրեցի նրան, ասացի, որ այդ ես եմ Հեքը: Բայց նա ճիշ հիշեցնող քրիզ արձակեց, գոռզոռաց, հայհոյանքներ չխնայելով և շարունակեց հալածել: Մի անգամ շուր եկա, որ խույս տամ: Նա բռնեց բաճկոնակիս ուսերից: Մի պահ թվաց, թե վերջու եկավ: Բայց կայծակի արազությամբ դուրս սահեցի, բաճկոնակը թռողնելով նրա ձեռքին: Դրանով փրկեցի կյանքս: Շուտով ծերուկը բոլորովին հոգնեց և վայր ընկավ, մեջքով հենվեց դրանք, սպառնալով, որ մի փոքր հանգստանալուց հետո կսպանի ինձ: Դանակը դրեց տակը: Ասաց, որ քիչ կրնի, ուժ կառնի և ապա ինձ ցույց կտա:

Շուտով նա մրափեց: Անմիջապես վերցրի հին աթոռը, որի նստատեղը ջարդված էր, կարողացածիս չափ հանգիստ բարձրացա վրան, անաղմուկ իշեցրի հրացանը: Մխաճողը ցած քաշեցի, որպեսզի սառուգեի, լիցքավորվա՛ծ է, թե՛ ոչ, և ապա այն դրեցի բողի տակառի հետևու, ծայրն ուղղեցի հորս կողմը, ինքու էլ տեղափորվեցի այդտեղ, սպասելով նրա շարժվելուն: Որքա՛ն դանդաղ ու լուր էր անցնում ժամանակը:

## Գլուխ յոթերորդ

— Վե՛ր կաց: Ի՞նչ բանի ես:

Ես բաց արեցի աչքերս և նայեցի շուրջս, ջանալով հասկանալ թե որտեղ եմ: Արևն արդեն ծագել էր, իսկ ես դեռ խոր քնած էի: Հայրս կանգնել էր զիսավերևս դեմքի թթված, հիվանդագին արտահայտությամբ:

— Ի՞նչ էիր մտադիր անել այս հրացանով:

Ենթադրելով, որ նա չի հիշում գիշերվա իր արածից, ասացի.

— Ինչոր մեկը փորձում էր ներս մտնել. դարան մտա, որ դիմադրեմ:

— Իսկ ինչո՞ւ ինձ չարթնացրիր:

— Փորձեցի, բայց բան դուրս չեկավ, չկարողացա ձեզ տեղից շարժել:

— Դե լավ: Այդտեղ մի՛ կանգնիր ու ամբողջ օրը վիճիր: Գնա, աչք տուր կարթին, տես՝ նախաճաշի համար ձուկ ընկե՛լ է: Մի րոպեից կզամ:

Նա բաց արեց դուռը, և ես վագեցի գետափ: Նկատեցի ճյուղեր ու նման բաներ, որ հնուանքն ի վայր լողում էին ջրի երեսին, ինչպես և ծառի կեղևի կտորներ: Ասել կուզի՝ գետը սկսել է վարարել: Մտքովս անցավ, որ եթե այժմ քաղաքում լինեի, կապրեի ուզածիս պես: Հունիսյան վարարումները սովորաբար բարերախտություն էին ինձ համար, որովհետև հենց որ ջուրը բարձրանում է, իր հետ բերում է համաշավի, կապկապած գերաններ ու լաստափայտեր, երբեմն մեկ դյուժին գերան՝ իրար կապած: Այնպես որ մնում է բռնել դրանք և վաճառել փայտի պահեստներին կամ սղոցարաններին:

Գետափով քայլում էի՛ մի աչք ուղղած հորս, իսկ մյուսը՝ գետի կողմը, որ տեսնեի, թե այս վարարումն ի՞նչ կրերի իր հետ: Ահա, հանկարծ զալիս է մի մակույկ, պքանչելի մի բան, տասներեք-տասնչորս ոտնաշափ երկարությամբ, որը ջրի երեսին լողում է, ինչպես բաղ: Ես շորերով զիսիկայր նետվեցի շուրը, ինչպես գորտ, և լողացի դեպի նավակը: Կարծում էի, թե մեկնումեկը պառկած է այնտեղ, քանի որ մարդիկ կատակի համար հաճախ այդպիսի բաներ են անում, և երբ մեկը լողալով մոտենում է, վեր են կենում, վրան ծիծառում: Այդ անգամ այդպես չեր: Դա, անկասկած, ջրի թշած-քերած մակույկ էր: Բարձրացա, նստեցի ու թիավարեցի դեպի գետափ: Կարծում էի, թե ծերուկը կուրախանա, երբ տեսնի նավակը, որը տասը դոլար կարժենար: Բայց երբ հասա ափ, հայրս դեռ չեր երևում: Մինչ ես մակույկն ուղղում էի դեպի հեղեղատ հիշեցնող և չորս կողմից վագերով ու ուղենիներով ծածկված մի փոքրիկ խորշ, զիխումս մի այլ միտք ծագեց: Մտածեցի, թե պետք է մակույկը լավ թաքցնեմ մի տեղ և անտառ փախչելու փոխարեն գետով իջնեմ ներքև, մոտ հիսուն մղոն, այնուհետև դուրս գամ ու ազատվեմ ոտքով ճամփորդելու դժվարությունից:

Այդտեղից շատ մոտ էր մեր հյուղակը, և ամբողջ ժամանակ ինձ թվում էր, թե լսում եմ իմ կողմը եկող ծերուկի ոտնաձայնը: Բայց ես կարողացա թաքցնել նավակը, դուրս եկա և ուղենու թփուտների հետևից նայեցի շուրջս: Ծերուկը շավողով իջել էր գետափ և հրացանով նշան էր բռնել մի թշունի: Այդ նշանակում էր, որ նա ոչինչ չի տեսել:

Երբ մոտեցավ, ես եռանդով դուրս քաշեցի կարթաթելը: Նա ինձ մի փոքր նախատեց այդքան դանդաղելու համար, բայց ես ասացի, որ գետն եմ ընկել և ուշանալու պատճառն

այդ է: Գիտեի, որ նա կտեսնի իմ թաց շորերը և կհարցնի, թե ինչ է պատահել: Մենք կարթերի վրայից հավաքեցինք հինգ լոր և գնացինք տուն:

Նախաճաշից հետո, երբ երկուսս էլ հոգնած՝ պառկեցինք քնելու, ես սկսեցի մտածել, թե ինչ հնար գտնեմ, որ հայրս ու այրին ինձ հետևելու փորձ այլևս չանեն: Դա ավելի ճիշտ կիներ, քան հավատալ բախտին, թե մինչև նրանք իմ բացակայությունը նկատեն, ես շատ հեռացած կինեմ: Ո՞վ գիտե. ամեն ինչ է հնարավոր է: Էհ, առայժմ ոչ մի ելք չեմ գտնում: Շուտով հայրս վեր կացավ ջուր խմելու և ասաց.

— Եթե որևէ մեկը զա թափառի տան շուրջը, կարթնացես ինձ, լսո՞ւմ ես:

Ապա փորձեց ու նորից քնեց: Իմ ուզածն է հենց դա էր: Գիսի ընկա, թե ինչ անեմ: Գործն այնպես գործի կրերեմ, որ ոչ չմտածի ինձ հետևելու մասին:

Ժամը մոտավորապես տասներկուսին մենք վեր կացանք ու գնացինք գետափ: Գետը բավական արագ էր հոսում և վարարելիս շատ փայտ էր բերում իր հետ: Շուտով երևաց լաստի մի մասը՝ իրար կապած հինգ լաստափայտ: Մենք մակույկով մոտեցանք և փայտը քաշեցինք դեպի գետափ: Վյուհետու եկանք տուն ճաշելու: Հորիցս բացի, ով էլ լիներ, ամբողջ օրը կսպասեր այնտեղ՝ ավելի շատ փայտ հավաքելու համար, բայց դա նրա աշխատանքի ոճը չէր: Մեկ անգամվա համար ինը գերան բավական էր: Նա պետք է գնար քաղաք և վաճառեր դրանք: Ինձ փակեց հյուղակում, վերցրեց մակույկը, ժամը երեքն անց կեսին լաստը քշեց դեպի քաղաք: Ինձ թվում էր, թե նա այդ գիշեր չի վերադառնա: Սպասեցի մինչև իմ հաշվով բավականաչափ հեռանար, ապա վերցրի սղոցն ու նորից սկսեցի աշխատել նոյն կրնդի վրա:

Հայրս դեռ գետի մյուս կողմը չէր հասել, երբ ես իմ բացած ճեղքից դուրս եկա: Նա և իր լաստը հեռվում ջրի երեսին երևում էին որպես մի փոքրիկ կետ:

Շալակեցի եզիփատացորենի այսուրով լցված պարկը, տարա այնտեղ, ուր թաքցրել էի մակույկը և, մի կողմ քաշելով վագերն ու ճյուղերը, բեռս ցած դրեցի: Նոյն ձևով այնտեղ տարա ապուխտն ու վիսկիի սրվակը: Ինձ հետ վերցրի ամբողջ սուրճը, շաքարը, վառողն ու գնդակները: Վերցրի հրացանի խծուծը, դույն ու ջրդումը, վերցրի մի շերեփ, թիթեղյա մի բաժակ, հին սղոց, երկու վերմակ, փոքրիկ կաթսան ու սրճամնանը: Վերցրի նաև ձկան կարթաթեր, լուցկի և այլ բաներ, մի խոսքով՝ ամեն ինչ, որը թեկուզ մեկ ցենտ կարժենար: Կատարելապես սրբեցի հյուղակը: Ինձ պետք էր կացին, բայց չունեինք: Միակ կացինը փայտի դեզի վրա էր, և ես գիտեի, թե ինչու պետք է դա այնտեղ թողնել: Վերցրի նաև հրացանը: Այժմ ամեն ինչ պատրաստ էր:

Այդքան ներս սողոսկելուց և իրերը տեղափոխելուց հյուղակի պատը բավական քանդվեց: Կարողացածիս չափ դրսի կողմից քանդվածը կարգի բերեցի. վրան հող լցրի, ծածկեցի սղոցած տեղն ու փայտի թեփը: Ապա կտրած կոճղը նորից իր տեղը զցեցի, տակը դրեցի երկու քար և մի քար էր՝ կողքին, որպեսզի վայր չընկնի. գերանի այդ մասը ծովել էր և հենարանին չէր հասնում: Եթե չորս կամ իինգ ոտնաչափ հեռու կանգնեիք և նախապես իմացած չինեիք, թե գերանը սղոցված է, ոչինչ չէիք նկատի: Բացի այդ, դա հյուղակի հետևում էր, և հազիվ թե որևէ մեկը զար այն կողմն ու տեսներ:

Դեպի նավակը գնալիս քայլում էի կանաչ խոտի վրայով և գետնին ոչ մի հետք չեմ մնում: Դիտեցի շուրջս, կանգնեցի ու նայեցի գետին: Ամեն ինչ խաղաղ էր: Հրացանը վերցրի և մի փոքր գնացի անտառի խորքը: Ուզում էի թռչուն որսալ, երբ աչքովս ընկավ վայրենացած

մի խոզուկ: Այդ հարթավայրերի ազարակներից փախած խոզերը շատ շուտ վայրենանում են: Սպանեցի և տարա հյուղակի մոտ:

Կացինը վերցրի և խորտակեցի դուռը, որը և բավականին ջարդուտվեց: Ապա ներս քերեցի խոզուկը, մոտեցրի սեղանին, կացնով վիզը կտրեցի և զցեցի գետին, որ արյունը հնսի: Գետին եմ ասում, որովհետև հյուղակի հատակը հող էր, առանց տախտակի: Այնուհետև վերցրի մի հին տոպրակ, մեջը լցրի մեծ քարեր, որքան կարող էի տանել և սպանված խոզուկի մոտով քաշեցի դուրս, անտարի միջով տարա գետափ ու զցեցի ջուրը: Ծանրությունից տոպրակն իսկույն սուզվեց, անհայտացավ: Դժվար չէր նկատել, որ գետնի վրայով բան է քարշ տված: Երանի՛ Թոմ Սոյերն այստեղ լիներ. գիտեմ, որ կիետաքրքրվեր նման բաներով և երևակայությամբ մի զարմանալի բան կհնարի: Ոչ որ այնպես հնարագետ չէ, ինչպես Թոմ Սոյերը:

Վերջում գլխից մի քանի մազ քաշեցի, կացինը լավ արնոտեցի, մազերը կպցրի վրան և շպրտեցի անկյունը: Ապա վերցրի խոզուկը, փաթաթեցի բաճկոնակիս մեջ, որպեսզի արյուն չկաթեր, զրկած տարա գետափ ու զցեցի ջուրը: Մի ուրիշ բան էլ մտածեցի: Գնացի, մակույկից վերցրի եգիպտացորենի ալրով լցված պարկն ու իմ հին սղոցը, քերեցի տուն: Պարկը դրեցի այնտեղ, ուր սովորաբար դրված էր լինում, և տակը մի փոքր պատռեցի սղոցով, որովհետև դանակ կամ պատառաքաղ չունեինք: Հայրս որևէ բան պատրաստելիս կամ եփելիս ամեն ինչ անում էր գրապանի դանակով: Տան արևելյան կողմի խոտերի և ուռենու թփուտների միջով պարկը տարա մոտ հարյուր յարդ, մինչև ծանծաղ մի լիճ: Դա ուներ մոտ հինգ մղոն լայնություն: Զրում ամենուրեք առատորեն աճում էր եղեգը: Այդ սեղոնին շրջակայրում շատ առաս էին նաև բարերը: Լճից դուրս էր գալիս ճահճոտ չգիտեմ գետակ ասեմ, թե առու, որը մղոններով հոսում էր դեպի հեռուները, հայտնի չէ, թե ուր: Միայն գիտեի, որ գետի մեջ չէր թափվում: Այսուր շաղ էր գալիս, ամբողջ ճանապարհին հետք թողնելով մինչև լիճը: Հորս հեսանն էլ զցեցի այնտեղ. թող թվար, թե պատահաբար է ընկել: Ապա թերով կապեցի պարկի տակի անցքը, որ այլևս այսուր շթափվի, և սղոցի հետ նորից տարա նավակը:

Այժմ գրեթե մթնել էր: Նավակը տարա, կանգնեցրի գետի վրա թեքված ուռենիների տակ և սպասեցի մինչև լուսինը ծագի: Ապա մի քանի դրեցի թերանս, պառկեցի մակույկի մեջ ծխամորճ ծխելու և ծրագիր կազմելու: Ինձ ու ինձ միտք էի անում. քարով լցրած տոպրակի հետքով կզան, կհասնեն գետափ, հետո էլ դիակս կսկսեն որոնել գետում: Պարկից թափված ալրի հետքով կզան մինչև լիճը և կշարունակեն որոնումները լճից սկիզբ առնող առվում, նպատակ ունենալով գտնել ավագակներին, որոնք ինձ սպանել էին ու կողոպտել տունը: Նրանք գետում, իմ անշնչացած մարմնից բացի, ոչինչ չեն որոնի: Շուտով կհոգնեն և այլևս չեն անհանգստանա: Իմ ուզածն է հենց այդ է: Չեքսոնի կղզին ինձ համար բավական հարմար է. այդ կղզուն լավ ծանոթ եմ: Ոչ ոք երբեւ այնտեղ չի գալիս: Գիշերները մակույկով այնտեղից կարող եմ իջնել քաղաք, աննկատ շրջել և վերցնել անհրաժեշտ բաներ: Չեքսոնի կղզին լավ տեղ է:

Բավական հոգնել էի և դեռ ոչինչ չարած՝ ընկա և քնեցի: Երբ արթնացա, մի պահ չգիտեի, թե որտեղ եմ: Նստեցի ու մի փոքր վախեցած սկսեցի դիտել շուրջս: Ապա հիշեցի: Թվում էր, թե գետի լայնությունը մղոնների է հասնում: Լուսինն այնքան պայծառ էր, որ կարող էի հաշվել սև և զրեթե անշարժ լաստագերանները, որ մեղմորեն սահելով անցնում էին ափից հարյուրավոր յարդ հեռու: Ամենուրեք տիրում էր մեռելային լուրջուն: Դուք պետք է հասկանաք, թե ինչ եմ ուզում ասել... Զգիտեմ՝ ինչպես արտահայտեմ բառերով:

Մի լավ հորանջեցի, ձգվեցի և պատրաստ էի արձակել մակույկն ու առաջ շարժվել, երբ հեռվում գետի վրայից մի ձայն լսեցի: Ականջ դրի: Չիշ հետո իմացա, թե ինչն ինչոց է: Դա խուլ, կանոնավոր ձայն էր, որ առաջանում է մակույկի թիակալներում թիակների պոչերը պտտելիս և լավ լսվում է խաղաղ զիշերին: Ուռենիների ճյուղերի արանքից զաղտազոցի նայեցի: Նկատեցի մի մակույկ, որ շարժվում էր հեռվում, գետի մյուս ափի երկայնքով: Չեր երևում, թե քանի հոգի կա մեջը: Մակույկը շարունակում էր մոտենալ և երբ հավասարվեց ինձ, տեսա, որ միայն մի մարդ կա մեջը: Մտածեցի, թե գուցե հայրս է, թեև չի սպսում: Ինձնից մի քիչ ներքև նա դադարեց շարժվել հոսանքի ուղղությամբ և խաղաղ ջրում թիավարելով մոտեցավ ափին: Նա այնքան մոտ էր ինձ, որ եթե հրացանը պարզեի, ծայրը նրան կհասներ: Այո, դա հայրս էր, այլևս կասկած չէր մնում, այն էլ զգաստ. դա երևում էր նրա թիավարելու ձևից:

Այլևս ժամանակ չկորցրի: Հաջորդ րոպեին արդեն գետափի ստվերով սահում էի հոսանքն ի վար՝ առանց ճողփյունի, քայլ արագ: Անցա երկու և կես մղոն, քառորդ մղոնի շափ կամ փոքր-ինչ ավելի հեռացա ափից, որովհետև շուտով կհասնեի գետանավերի կայանի, և մարդիկ կնկատեին ու ձայն կտային: Նակար կանգնեցրի լողացող գերանների արանքում, պառկեցի հատակին ու թողեցի, որ ինքն իրեն լողա հոսանքի հետ: Լավ հանգստացա, ծիսամորճ ծխեցի, դիտեցի հեռուները: Երկնքում ոչ մի ամպ չկար: Երբ լուսնյակ զիշերով մեջքիդ պառկած՝ նայում ես վեր, երկինքն անսահմանորեն խորն է թվում: Մինչ այդ ես դա երբեք չի նկատել: Եվ այսպիսի զիշերներին հեռվից որքա՞ն պարզ են լսվում ձայները: Ես լսում էի մարդկանց խոսակցությունը գետանավերի կայաններից, լսում էի նրանց յուրաքանչյուր բառը: Մեկն ասաց, թե օրերն արդեն սկսում են երկարել, իսկ զիշերները՝ կարճանալ: Մյուսն ասաց, թե այս զիշերը կարճերից չէ, և բոլորը ծիծաղեցին: Նա կրկնեց նույն բառերը, և նորից ծիծաղեցին: Վյուհետև արթնացրին մի այլ ընկերոց, նույն բանն ասացին նրան ու ծիծաղեցին: Բայց վերջինս չծիծաղեց. զայրացած բղավեց և ասաց, որ իրեն հանգստ թողնեն: Վռաջին մարդն ասաց, որ ինքը դա անպայման կհաղորդի իր պառավ կնոջը: Ըստ երևույթին, դա նրան դուր կգա: Ապա ավելացրեց, որ դա ոչինչ է անցյալում արած իր մի կատակի համեմատությամբ: Ես լսեցի, թե ինչպես մեկն ասաց, որ ժամը մոտավորապես երեքն է, քայլ հույս ունի, որ լուսաբացը մեկ շաբաթից ավելի չի ուշանա: Վյուհետև խոսակցությունն ավելի ու ավելի հեռացավ, և ես այլևս չի կարողանում բառերը ջռկել, թեև լսվում էր մոմոց, ծիծաղ, բայց թվում էր, թե նրանք արդեն բավական հեռու են ինձնից:

Այժմ հեռու էի գետանավերի կայանից: Վեր կացա: Եվ ահա երևաց Զեքսոնի կղզին, մոտ երկու և կես մղոն ամբողջովին ծածկված անտառով: Կղզին ցցված էր գետի մեջտեղում, մեծ, մոռայլ ու հաստատն, ինչպես շոգենավ առանց լույսերի: Ավազոտ եղրագիծը չէր երևում: Տարվա այդ շրջանում դա ջրի տակ էր:

Շատ չանցած հասա կղզու ափերին: Ճեղքելով հոսանքը, հասա վերին մասը (այնպես ուժեղ էր ջրի հոսանքը), մտա կանգնած ջրի շերտը և ափ դուրս եկա Խինոյսի կողմի վրա: Մակույկը մղեցի ինձ ծանոթ խոր խորչի մեջ. այնտեղ մտնելու համար ստիպված եղա ուռենու ճյուղերը բաժանել իրարից, և երբ նակար ամրացրել էի իր տեղում, ոչ ոք դրսից չէր կարող նկատել, թե այնտեղ բան կա:

Քարձրացա կղզին, նստեցի մի կոճի, նայեցի մեծ գետին, ու ու խիտ անտառին, ապա հայացք ուղղեցի դեպի քաղաք, երեք մղոն հեռու, որտեղ շողում էին երեք-չորս լույս: Գետի հոսանքով, մեկ մղոն վերևից, շարժվում էր ահուկի մեծությամբ ինչ-որ լաստ:

Կենտրոնում վառվում էր մի լապտեր: Ես դիտում էի, թե ինչպես է լաստը սողալով իջնում ցած: Երբ այն մոտեցավ կղզուն և արդեն իմ դիմաց էր, լսեցի ինչ-որ մեկի խոսքերը. «Հեյ, նավախելի վրա, ա'ջ ընդունեք»: Ես այդ բառերն այնքան պարզ լսեցի, կարծես ասողը կողքիս լիներ:

Երկնքում երևացին արշալույսի նշանները, և ես մտա անտառ ու նախաճաշից առաջ պառկեցի քննելու:

## Գլուխ ութերորդ

Երբ արթնացա, արեգակն այնքան էր բարձրացել, որ կարծեցի, թե ժամը ութն անց է: Պառկեցի զով ստվերում, կանաչ խոտերին, մտածելով ամեն ինչի մասին, ինձ զգալով հանգիստ ու զոհ: Ջյուղերի արանքում եղած մեկ-երկու անցքից կարողանում էի տեսնել արևը, բայց ամենուրեք վեր էին ձգվում հսկա ծառեր, և ներքևում, իմ շրջապատում, ամեն ինչ մռայլ էր: Տերևների արանքից թափանցած ու գետնին հասած ճառագայթները պեպեններ էին գոյացնում գետնի երեսին, և այդ պեպենոտ տեղերի թրթռումը ցույց էր տահս, որ վերևում թեթև գեփյուռ կա: Երկու սկյուռ, նստած ծառի ճյուղին, շատ բարեկամաբար խոտում էին ինձ հետ անհասկանալի լեզվով:

Ես կատարելապես ծուլացել էի. ինձ շատ լավ էի զգում, բայց չի ուզում վեր կենալ, նախաճաշ պատրաստել: Նորից էի մրափել, երբ ինձ թվաց, թե գետի վրայից լառմ եմ ինչ-որ խուլ մի «բո՛ւմ»: Վեր կացա և, արմունկներիս հենված՝ ականջ դրի: Շուտով նորից լսեցի լույն ձայնը: Իսկոյն վեր թռա, տերևների միջից նայեցի այն կողմը և գետի վրա, բավական հեռու, մոտավորապես գետանավերի կայանի դիմաց, տեսա ծիփի մի սև քուլա: Գետով իշնում էր մարդկանցով լի մի գետանավ: Այժմ հասկացա, թե ինչն ինչոց է: «Բո՛ւմ»: Ես տեսա սպիտակ ծուխը, որ ժայթքելով տարածվեց գետանավի կողքին: Այդ նրանք էին կրակում ջրի երեսին, հասկանո՞ւմ եք, որպեսզի իմ դիակը բարձրանար վեր:

Ես շատ էի սոված, բայց չի կարող կրակ վառել, որովհետև ծուխը կնկատեին: Նստած դիտում էի թնդանոթի ծուխն ու ականջ դնում կրակոցներին: Այդ մասում գետի լայնությունը կլիներ մեկ մղոն: Ամառային առավոտները միշտ էլ հաճելի է նայել գետին: Ինձ համար հետաքրքիր ժամանց կլիներ նայել, թե ինչպես են որոնում իմ մարմինը, եթե միայն ուտելու բան ունենայի: Հանկարծ հիշեցի, որ միշտ սնդիկը դնում են հացի կտորի մեջ և զցում ջուրը: Նման դեպքերում հացն ուղիղ շարժվում է դեպի խեղդվածի մարմինը և կանգ առնում: Մտածեցի, որ պետք է հետևել, և եթե հացի կտորը լողալով իմ կողմը գա, ես դրանց ցույց կտամ: Տեղափոխվեցի կղզու այն մասը, որտեղ իիինոյսն է: Ուզում էի իմանալ, թե ինչ է կատարվելու: Եվ չիուսախարվեցի: Հացի մի մեծ կտոր եկավ իմ կողմը, և քիչ մնաց, որ բռնեի երկար ձողով, բայց ուրս սահեց, հացը շարունակեց իր ճանապարհը: Իհարկե, ես սպասում էի այնտեղ, ուր հոսանքն ավելի էր ափին մոտենում: Դա լավ էի հասկանում: Շուտով հացի մի այլ կտոր եկավ, և այս անգամ շահեցի: Դուրս քաշեցի խցանը, դեն զցեցի սնդիկի փոքրիկ զնդիկը և ատամներս խրեցի հացի մեջ: Դա ընտիր հաց էր, բարձր որակի, և ոչ թե եզիապտացորենի անհամ բրոյն:

Ընտրեցի մի հարմար տեղ, խիստ տերևների մեջ, հացը լիաբերան ծամելով նստեցի մի կոճղի, և միանգամայն զոհ սկսեցի դիտել գետանավը: Հանկարծ գիտումս մի միտք ծագեց:

Ինք ինձ ասացի, թե այժմ հավանորեն այրին կամ քահանան, գուցեև մի այլ անձնավորություն աղոթում են, որ այս հացն ինձ գտնի, և ահա նրանց աղոթքը իր նպատակին հասավ: Կասկած չէր մնում, որ մի բան կար այդ աղոթքի մեջ, երբ այրու կամ քահանայի նման մեկն է աղոթում, բայց իմ աղոթքը ոչինչ չի անի, ճիշտ նպատակին չի հասնի: Հավանորեն միայն արդար մարդկանց աղոթքն է տեղ հասնում:

Վառեցի ծխամորճս, երկար ծխեցի և շարունակեցի դիտել: Գետանավը լողում էր հոսանքի ուղղությամբ: Մտածեցի, որ երբ շատ մոտենա, ես հնարավորություն կունենամ տեսնելու, թե ով կա այնտեղ, քանի որ այն շարժվելու էր հացի ուղղությամբ: Երբ նավը քավական իջավ իմ կողմը, դատարկեցի ծխամորճը, զնացի այնտեղ, որտեղ որսացել էի հացը և պառկեցի փոքրիկ բացառում, գետափին ընկած մի կոճոյի ետևում: Կոճոյի վրայից կարողանում էի տեսնել մարդկանց:

Շուտով գետանավն այնքան մոտեցավ ինձ, որ նրանք կարող էին կամրջակ դնել և գալ ափ: Գրեթե բոլոր ծանոթներս նավի վրա էին՝ հայրս, դատավոր Թեշրը, Բերի Թեշրը, Չո Հարպըրը, Թում Սոյերը, սրա պառավ հորաքույր Պոլին, Սիդն ու Մերին և շատ ուրիշներ: Բոլորը խոսում էին սպանության մասին: Նավապետը ընդհատեց նրանց ու ասաց.

— Այժմ լավ նայեք. այստեղ հոսանքն ամենից շատ է մոտենում ափին: Գուցե այստեղ նրան ջուրը դուրս է նետել և խճճել առափնյա թփուտների մեջ: Հույս ունեմ, որ դա այդպես է:

Ես, իհարկե, այդպիսի հույս չունեի: Նրանք բոլորը հավաքվեցին և հենվեցին վանդակաձողերին, գրեթե իմ դիմաց, և կրացած՝ լուր նայում էին ափին: Ես նրանց շատ լավ էի տեսնում, բայց ինձ տեսնել չէին կարող: Ապա նավապետը հրամայեց. «Հեռո՛ կանգնեցեք», և թնդանոթն այնպես որոտաց հենց իմ դիմաց, որ ձայնից խլացա ու քիչ մնաց՝ ծիսից կուրանայի: Մի պահ թվաց, թե հաշիվս փակվեց: Եթե լիցքի մեջ գնդակներ լինեին, ապա մարդիկ կգտնեին այն դիակը, որ որոնում էին: Ինչ որ է, զգացի, որ ինձ ոչինչ չի պատահել, փա՛ռ աստծո: Նավը շարունակեց իր ճանապարհը և շուտով, մեկ ժամ հետո ես այլևս ոչինչ չսեցի:

Կղզին ուներ երեք մղոն երկարություն: Ենթադրեցի, թե նրանք հասել են կղզու ծայրը և ձեռ քաշել որոնումից: Բայց, ինչպես պարզվեց, դա շարունակեցին որոշ ժամանակ: Նրանք կղզու ծայրին շուր եկան և զնացին հոսանքն ի վեր, Միսսուրիի կողմը: Նավը շարժվում էր շոգիով, ճանապարհին երբեմն-երբեմն թնդանոթ կրակում: Ես է անցա կղզու այդ կողմը և շարունակեցի դիտել նրանց: Երբ հասան կղզու ծայրը, դադարեցին կրակը, ուղղվեցին դեպի Միսսուրիի ափը և վերադարձան քաղաքը:

Այժմ ինձ համար պարզ էր, որ վախենալու բան չկա: Այլևս ոչ ոք չէր հետապնդի ինձ: Մակոյլի միջից դուրս բերեցի իրերս և խիստ անտառում ինձ համար մի գեղեցիկ ճամբար կառուցեցի: Վերմակներից պատրաստեցի մի տեսակ վրան իրերս պահելու համար, որպեսզի անձրևի տակ շմանայի: Որսացի մի փոքրիկ լոքը, սղոցվս կտրատեցի, մաքրեցի, իրիկնադեմին խարույկ վառեցի և ընթրեցի: Ապա նորից մի կարթ զցեցի ջուրը, որ նախաճաշի համար ձուկ որսամ:

Երբ միշնեց, նստեցի խարույկի առաջ ու սկսեցի ծխել՝ միանգամայն զոհ իմ վիճակից: Բայց շուտով մի տեսակ տիբրություն համակեց ինձ, և ես զնացի, նստեցի գետափին, ունկնդրելով ափերին փարվող ալիքների ձայնը, հաշվեցի աստղերն ու այն գերանները, որ ջուրը բերում էր հոսքով, ապա պառկեցի քնելու: Ժամանակն արագ անցկացնելու ավելի

յավ միջոց չկա, քան քնելը. Երբ մարդ տխրում է, երկար մնայ մենակ հնարավոր չէ: Զնելով շատ շուտ ազատվում ես այդ նեղությունից:

Այդպես անցավ երեք օր ու երեք գիշեր: Ոչ մի փոփոխություն: Միևնույն վիճակը: Չորրորդ օրը հետազոտեցի ամբողջ կղզին: Ես կղզու տերն էի. կարելի էր ասել, որ դա ամբողջովին ինձ էր պատկանում, և ուզում էի ամեն ինչ իմանալ: Բայց ամենազիշավորն այն էր, որ ուզում էի ժամանակ սպանել: Գտա առատ քանակությամբ հասած ելակ, ինչպես և խակ խաղող: Կանաչ մորին նոր էր սկսել երևալ: Դրանք բոլորը շուտով պիտանի կլինեին ուտելու, մտածեցի ես:

Ինչևէ: Աննպատակ զնացի անտառի խորքը, մինչև իմ կարծիքով, հասա կղզու ստորին վերջվորության մոտերքը: Ինձ հետ հրացան էի վերցրել, բայց ոչինչ չխփեցի, քանի որ դա ինքնապաշտպանության համար էի բերել: Մտադիր էի որս ճարել տանս մոտակայքում: Հենց այդ ժամանակ քիչ էր մնում մի մեծ օձ տրորեի: Օձը սողալով անցնում էր կանաչ խոտի ու ծաղիկների միջով: Փորձեցի կրակել վրան: Արագ վագեցի հետևից և հանկարծ ուրս դրի խարույկի մոխրի վրա, որը դեռ ծխում էր:

Միրտս թարտում էր կրծքի տակ: Այլս կանգ չառա, իջեցրի հրացանի հրահանը, շուռ եկա և թաքնվելով ու մատներիս ծայրերի վրա կարողացածիս չափ արագ վագելով, վերադարձա տեղս: Հաճախ մի ակնթարթ կանգ էի առնում խիտ տերևների մեջ և ականջս ձայնի պահում, բայց այնպես ծանր էի շնչում, որ ուրիշ ոչինչ լսել չէի կարողանում: Մի քիչ էլ առաջ նետվեցի և նորից լարեցի լսողությունս, հետո նորից ու նորից: Դիմացս ցցված կոճղերը աչքիս մարդիկ էին երևում: Երբ ոտքերիս տակ մի չոր ճյուղ էր կոտրվում, ինձ թվում էր, թե մեկը շունչս երկու մասի է բաժանել և ինձ թողել է կեսը, այն էլ փոքր մասը:

Երբ հասա իմ ճամբարը, ինձ այնքան յավ չէի զգում, ուղղակի լեղապատառ էի եղել: Այժմ ժամանակը չէր հիմարությունների հետևից ընկնելու: Վերցրի բոլոր իրերս և տարա մակույկ. թռող աչքից հեռու լինեն: Այնուհետև հանգցրի կրակը, ցրիկ տվեցի մոխրը, որ ոչ չմտածեր, թե նոր է վառած, և մոխրը մեկ տարուց ավելի հին թվար: Այդ բոլորից հետո մազլցեցի ծառն ի վեր:

Իմ հաշվով ծառի վրա մնացի երկու ժամ, բայց ոչինչ չտեսա, ոչինչ չլսեցի: Ինձ միայն թվում էր, թե հազարավոր բաներ եմ տեսնում ու լսում: Ինչևէ, չէի կարող հավիտյան մնալ ծառի վրա. վերջապես ցած իջա, բայց ամբողջ ժամանակ թաքնված մնացի խիտ անտառում և միշտ պահակություն էի անում: Ուտելիքի պաշարը ունեցածս հատապտուղներն էին և այն, ինչ մնացել էր նախաճաշից:

Երբ մութն ընկավ, սոսկալի քաղցած էի, իսկ երբ խավարը թանձրացավ, նախքան լրւանի ծագելը դուրս եկա գետափ և մակույկս թիավարեցի դեպի լիինոյսի ափը, կղզուց քառորդ մղոն հեռու: Մտա անտառ և ընթրիք պատրաստեցի: Ուզում էի ամբողջ գիշերը մնալ այնտեղ, երբ լսեցի տը՝ տը՝ տը՝, տը՝ տը՝ և ինքս ինձ ասացի. «Զիեր են զալիս»: Այնուհետև լսեցի մարդկանց ձայներ: Ես հնարավորին չափ արագ ամեն ինչ բերեցի մակույկ և սողալով մտա անտառ տեսնելու, թե ի՞նչ կարելի է իմանալ: Դեռ շատ չէի հեռացել, երբ լսեցի ինչ-որ մեկի խոսքերը.

— Ավելի յավ է այստեղ իջնենք, եթե մի յավ տեղ գտնենք, ձիերը բոլորովին ուժասպառ են եղել: Մի նայենք մեր շուրջը:

Ես այլևս չսպասեցի: Մակույկը մղեցի դեպի ջուրը և հանգիստ թիավարելով հեռացա: Պարանը կապեցի նախկին տեղում և որոշեցի գիշերել մակույկիս մեջ:

Շատ քննեցի: Չի կարող քնել. անընդհատ մտածում էի: Եվ ամեն անգամ արթնանալիս ինձ թվում էր, թե մեկը բռնել է կոկորդս: Այնպես որ բռնն ինձ ոչ մի լավ բան չէր խոստանում: Վերջապես ասացի ինքս ինձ. «Այս ձևով ապրել չեմ կարող. պետք է իմանալ, թե ով է այն մարդը, որ ինձ հետ ապրում է կղզու վրա: Դետք է իմանալ, թե չէ կպայթեմ»: Դրանից հետո ինձ ավելի թեթևացած զգացի:

Վերցրի թիակս, մեկ-երկու քայլ ափից հեռացա ու մակույկը տարա ներքև, միշտ շարժվելով ստվերի միջով: Լուսինը շողում էր, և ստվերից դուրս այնպես լույս էր, ինչպես ցերեկը: Հաջող թիավարեցի մոտ մեկ ժամ: Ամեն ինչ խաղաղ էր և ժայռի պես խորը քնած: Ես արդեն հասել էի կղզու ծայրը: Ակսեց փշել մեղմ, ծփծփուն, զով զեփյուռը, և դա լավ էր նրանով, որ ցոյց էր տախս, թե զիշերը վերջանալու վրա է: Ես թիակով թեքեցի մակույկը, քիչն ուղղեցի դեպի ափ, վերցրի հրացանս և դուրս եկա անտառի եզրը: Նստեցի մի կոճղի, տերևների արանքից դիտեցի շուրջս: Նայում էի, թե ինչպես է լուսինը հեռանում, ավարտելով իր պահակությունը, և մոլցն սկսում է պատել զետք: Ծուտով ծառերի գագաթին նկատեցի լույսի դադուկ մի երիզ: Հասկացա, որ օրը բացվում է: Վերցրի հրացանս, շարժվեցի դեպի այն վայրը, ուր խարույկ էի տեսել: Յուրաքանչյուր երկու-երեք րոպեն կանգ էի առնում, ականջ ձայնի պահում: Բայց բախս չունեի. չի կարողանում տեղը գտնել: Ծուտով ծառերի արանքից կրակ նշմարեցի: Շարժվեցի այն կողմը՝ զգուշորեն ու դանդաղ: Արդեն այնքան էի մոտեցել, որ հնարավոր էր ամեն ինչ տեսնել: Գետնին մի մարդ էր պառկած: Այդ բանն ինձ անշափ մնտահոգեց: Նա իր գլուխը փաթաթել էր բարակ վերմակով, իսկ գլուխը գրեթե հասնում էր կրակին: Նստեցի թփուտների հետևը, մոտ վեց ոտնաչափ հեռու և աչքերս հառեցի նրան: Լույսը գրեթե բացվել էր: Ծուտով այդ մարդը հորանցեց, ձգվեց ու դեն գցեց վերմակը: Դա միսս Ուոյթսոնի Զիմն էր: Շատ ուրախացա, երբ ճանաչեցի: Զայն տվի:

— Բարև՝, Զիմ, — իմ թաքստոցից դուրս թռա:

Նա վեր ցատկեց ու վայրագորեն նայեց ինձ: Ապա ծունկի եկավ, ձեռքերը միացրեց ու ասաց.

— Ինձ մի վնասիր, մի՛ վնասիր: Ես երբեք ոչ մի ուրվականի վնաս չեմ տվել: Միշտ սիրել եմ մեռած մարդկանց և նրանց համար արել, ինչ կարողացել եմ: Նորից զնա զետք, որտեղից եկար, և ծեր Զիմին ոչինչ մի՛ արա. նա միշտ քո բարեկամն է եղել:

Երկար ժամանակ պետք չէր, որ համոզեի, թե մեռած չեմ: Անշափ ուրախ էի, որ տեսնում եմ նրան: Այժմ այլևս մենակ չի: Ասացի, որ չեմ վախենում, թե նա մարդկանց կհայտնի իմ տեղը: Ես խոսում էի, իսկ նա նստած՝ նայում էր ինձ ու ոչ մի բառ չէր արտասանում: Այնուհետևս ասացի:

— Այժմ բոլորովին լուսացել է, պետք է նախաճաշել: Մի լավ խարույկ վառիր:

— Ի՞նչ միտք ունի խարույկ վառելը. ելակ կամ նման բա՞ն պիտի եփենք: Բայց դու հրացան ունես, չ՞: Այդ դեպքում ելակից ավելի լավ բան կարող ենք բերել:

— Ելակ կամ նման բան, հա՞, — ասացի ես, — մի՞թե դու միայն դրանցով ես ապրում:

— Ուրիշ ոչինչ չի կարողանում ճարել, — պատասխանեց նա:

- Ինչո՞ւ, որքա՞ն ժամանակ է, ինչ կղզում ես, Զիմ:
- Ես այստեղ եկա քո սպանվելուց հետո, երեկոյան:
- Եվ այդ ամբողջ ժամանակ այստե՞ղ ես:
- Այո:
- Եվ դու ոչինչ չե՞ս ունեցել ուտելու, բացի այդ անպետք բաներից:
- Ոչ, սըր, ուրիշ ոչինչ:
- Դու այդպես սովամահ կարող էիր լինել, չէ՞:
- Զի կուտեի: Կարծում եմ, կարող էի ուտել: Իսկ դու որքա՞ն ժամանակ է, որ կղզում ես:
- Իմ սպանելու երեկոյից:
- Չե՞ս, ինչպե՞ս, իսկ ինչո՞վ ես ապրել: Բայց դու հրացան ունես: Օ՛, հրացան ունես: Դա լավ է: Այժմ դու մի բան խփիր, ես եւ կրակ կվառեմ:

Գնացինք մակույկի մոտ, և մինչև նա ծառերի արանքում ընկած կանաչ, բաց տեղում խարոյել էր պատրաստում, ես բերեցի այսուր, ապուխտ ու սուրճ, ինչպես և սրճաման, տապակ, շաքար, թիթեղյա բամակներ: Նեզրն ապշեց զարմանքից: Կարծում էր, թե այս ամենը կատարվեց կախարդությամբ: Ես բավական մի մեծ լոքո էի բռնեցի: Զիմը մաքրեց դանակով ու տապակեց:

Երբ նախաճաշը պատրաստ էր, մենք ծուլորեն պառկեցինք խոտերին և կրակի վրայից վերցնելով՝ տաք-տաք կերանք: Զիմն ուտում էր ամբողջ թափով, որովհետև նա գրեթե սովամահ էր եղել: Լավ լցնելով ստամոքսներս, փռվեցինք կանաչներին:

Շուտով Զիմն ասա.

- Լսիր, Հեք, ո՞ւմ էին սպանել այն հյուղակում, եթե դա դու չէիր:
- Ես պատմեցի ամեն ինչ, և նա ասաց, որ շատ խելացի է մտածված: Ասաց, որ Թոմ Սոյերն ավելի լավ չէր ծրագրի:

Այնուհետև ես հարցրի.

- Ինչպե՞ս պատահեց, որ այստեղ ընկար, Զիմ, և ինչպե՞ս եկար:
- Նա, ինչպես երևում էր, անհանգստացավ հարցից և մի պահ ոչինչ չասաց, ապա պատախանեց.
- Գուցե ավելի լավ է ոչինչ չասեմ:
- Ինչո՞ւ, Զիմ:
- Դե, պատճառներ կան: Բայց իմ մասին ոչինչ չե՞ս հայտնի, եթե պատմեմ, Հեք:
- Անիծվեմ, եթե հայտնեմ, Զիմ:
- Լավ, հավատում եմ քեզ, Հեք: Ես... ես փախա:
- Զիմ:
- Բայց լսիր. խոսք տվիր, որ չասես: Գիտե՞ս, խոսք տվիր, որ չասես, Հեք:

— Այո, խոստացա, չեմ հայտնի: Հնդկացու ազնիվ խոսք, չեմ հայտնի: Թող մարդիկ ինձ ստոր աբողիցիոնիստ<sup>[5]</sup> անվանեն և արհամարհեն լուր մնալու համար, դա ոչ մի նշանակություն չունի: Ես ոչ ոքի չեմ ասի, ոչ ել կվերադառնամ նրանց մոտ: Այնպես որ կարող ես ամեն ինչ պատմե:

— Լավ, ասեմ, թե ինչպես եղավ: Պառավ տիրուիին, այսինքն՝ միսս Ուոթսոնը, միշտ կտցահարում էր ինձ: Ինձ հետ շատ կոպիտ էր վարվում, թեև միշտ ասում էր, թե ինձ չի վաճառի Օղեանում: Բայց ես նկատում էի, որ մի նեզրավաճառ վերջին ժամանակներն անընդհատ պտույտ էր գալիս տան շուրջը: Ակսեցի անհանգստանալ: Մի անգամ ուշ երեկոյան թարուն մոտեցա դռանը: Դուռը լրիվ փակված չէր, և լսեցի, թե ինչպես պառավ տիրուիին ասում է այրուն, որ ուզում է ինձ Օղեանում վաճառել: Ինքը այդ բանը չի ուզում, բայց իմ դիմաց կարող է ստանալ ութ հարյուր դրար, և դա այնքան մեծ գումար է, որ ինքը չի կարող դիմադրել ինձ վաճառելու ցանկությանը: Այրին սկսեց նրան համոզել, որ ինձ չվաճառի, բայց ես այնքան չմնացի, որ լսեի նրա բոլոր ասածները, արագ դուրս թռա ու ծկեցի:

Բլրից ցած իջա, մտածելով, թե գետափին, քաղաքի վերևում, մի նավակ կգողանամ, բայց այնտեղ դեռևս անցորդներ կային: Թաքնվեցի գետափին, տակառագործի խարխուց արհեստանոցում և սպասեցի մինչև բոլորը գնան: Գիշերը մնացի այնտեղ: Ամբողջ ժամանակ ինչոր մեկը պտտվում էր շրջակայրում: Առավույյան մոտ ժամը վեցին սկսեց մակույկների շարժումը. գալիս-անցնում էին իմ կողքով: Ժամը մոտ ութին-իննին նավակներում մարդիկ խոսում էին, թե ինչպես հայրդ եկել է քաղաք և պատմել, որ քեզ սպանել են: Այս վերջին նավակները լցված էին պարոններով ու տիկիններով, որոնք գնում էին տեսնելու այդ վայրը: Երբեմն նրանք նավակները քշում էին ափ՝ հանգստանալու, նախքան գետի մյուս կողմն անցնելը, և ես նրանց գրուցից իմացա սպանության մակրամասնությունները: Ինձ շատ էր տիրեցրել քո սպանությունը, Հեք, բայց իհնա է չեմ տիրի:

Ամբողջ օրը քաղցած պառկեցի տաշելների մեջ, արհեստանոցում: Չեի վախենում. զիտեի, որ պառավ տիրուիին և այրին նախաճաշից հետո անմիջապես գնում են ժողովարան և ամբողջ օրն անցկացնում այնտեղ: Բացի այդ, նրանք զիտեն, որ լույսը բացվելուն պես ես կովերը տանում եմ արոտ: Նրանց մտքով երբեք չի անցնի, թե ցերեկը ինձ տանը կգտնեն: Մինչև երեկո, քանի դեռ չի մթնել, չեն զգա իմ բացակայությունը: Մյուս ծառաներն էլ չեն զգա. հենց որ պառավները տնից դուրս են գալիս, նրանք ծկում են, գնում գրուանքի:

Ինչ որ է: Երբ մթնեց, դուրս եկա թաքստոցից և երկու մղոն կամ ավելի քայլեցի գետափին ի վեր, որտեղ ոչ մի տուն չկար: Մտքումս որոշեցի, թե ինչ եմ անելու: Հասկանալի էր. եթե փորձեի ոստրով ավելի հեռու գնալ, միևնույն է, շները հետք կգտնեին: Եթե մի մակույկ գողանայի և անցնեի գետը, կիմանային, թե որտեղ եմ ցամաք դուրս եկել, և կգտնեին իմ հետքերը: Ուստի մտածեցի, որ ինձ համար ամենահարմարը լաստն է. հետք չի թողնի:

Տեսա ինչոր լույս, որը շարժվում է գետի ոլորաններից, նետվեցի ջուրը, առջևիցս մղելով մի գերան, և լողացի մինչև գետի մեջտեղը, թաքնվեցի ջրի բերած գերանների միջև, գլուխս ցած պահելով և լողալով հոսանքին հակառակ, մինչև լաստը հասներ ինձ: Լողացի մինչև լաստի ետնամասը և բռնեցի: Երկինքն ամպոտ էր, և որոշ ժամանակ կատարյալ մութ էր: Բարձրացա, պառկեցի հաստ տախտակներին: Բոլոր մարդիկ ինձնից հեռու էին, լաստի

մեջտեղում, որտեղ լապտերն էր կախված: Գետը բարձրանում էր, և հոսանքն ուժեղ էր: Իմ հաշվով, մինչև առավոտյան ժամը չորսը, կանցնեի քանի հինգինգ մղոն, կծկեի նախքան լուսանալը, լողալով դուրս կգայի ափ ու կթաքնվեի հինոյսի կողմի անտառներում:

Բայց բախտ չերեց: Երբ մոտեցա կղզուն, մի մարդ, լապտերը ձեռքին, եկավ լաստի ետնամարը: Ես տեսա, որ սպասելու ժամանակը չէ, և նետվեցի ջուրն ու լողացի դեպի կղզին: Ուզում էի մի հարմար տեղ դուրս գալ ափ, բայց չի կարողանում. գետափը չափից ավելի գահավեծ էր: Ստիպված լողացի մինչև կղզու ծայրը և մի լավ տեղ գտա: Մտա անտառ, մտածելով, որ այլևս լաստի հետ խաղ անել չի կարելի, քանի դեռ մարդիկ լապտերներ առած՝ կարող են ետ ու առաջ քայլել: Գիշարկիս մեջ պահել էի ծխամորճս, մի քիչ ծխախտ և լուցկի: Դրանք չին թռչվել. այնպես որ ամեն ինչ կարգին էր:

— Եվ այդ ամբողջ ժամանակ ո՞չ միս ունեիր, ո՞չ հաց, այնպես չէ՞: Իսկ ինչո՞ւ ջրային կրիա չիր բռնում:

— Ինչպե՞ս կարող ես բռնել: Դրանց չես կարող ո՞չ բռնել, ո՞չ քարով խփել: Ո՞վ կարող է գիշերով դրանց ճարել, իսկ ցերեկը կարո՞ղ էի գետափին երևալ:

— Այո, ճիշտ ես ասում: Դու, իհարկե, պետք է ամբողջ ժամանակ թաքնվեիր անտառում: Լսեցի՞ր թնդանոթի ձայնը, երբ կրակում էին գետանավից:

— Այո: Գիտեի, որ քեզ են որոնում: Տեսա, թե ինչպես անցան այստեղով. թփուտների միջից նայում էի:

Այդ ժամանակ մեր մոտով մի քանի փոքրիկ թռչուն թռան: Մեկ-երկու յարդ թռչում էին ու իջնում: Զիմն ասաց, թե դա անձրև գալու նշան է: Ասաց, որ երբ դրանք այդպես են թռչում, նշանակում է անձրև է գալու, և իր կարծիքով նույնը կարելի է ասել, երբ թռչունների ճտերն են այդպես թռչում: Ուզում էի մի քանիսը բռնել, բայց Զիմը թույլ չտվեց: Ասաց, որ դա մահվան պատճառ կդառնա: Պատմեց, որ իր հայրը մի անգամ սաստիկ հիվանդացել է. այդ ժամանակ երեխաներից մեկը թռչուն է բռնել, և մեծ մայրը ասել է, թե հայրը կմեռնի: Եվ իսկապես մեռել է:

Այնուհետև Զիմն ասաց, թե եփելիս ուտելիքը չպետք է հաշվել. դրանից դժբախտություն է գալիս: Դժբախտություն է բերում նաև մայրամուտից հետո սեղանի սփոռոց թափ տալը: Նա ասաց նաև, որ եթե մեկը մեղվի փերակ ունի և մեռնում է, պետք է մեղուներին այդ մասին հայտնել հաջորդ առավոտը արևածագից առաջ, այլապես մեղուները կթռվանան, կթռողնեն աշխատանքն ու կսատկեն: Զիմի կարծիքով, մեղուները հիմարներին չեն խայթում, բայց ես չեմ հավատում, որովհետև շատ անգամ եմ փորձել, և նրանք ինձ չեն խայթել:

Մինչ այդ նման քաներ լսել էի, բայց ամեն ինչի տեղյակ չէի, իսկ Զիմը բոլոր նշանները գիտեր: Նա ասում էր, թե ինքը գրեթե ամեն ինչ գիտե: Այնպես էր դուրս գալիս, որ բոլոր նշանները դժբախտության հետ են կապված: Ես հարցրի, թե չկա՞ն բարի նշաններ: Նա պատասխանեց.

— Շատ քիչ, և դրանք ել մարդուն ոչ մի օգուտ չեն տալիս: Ի՞նչ կարիք կա, որ մարդ իմանա, թե երբ է հաջողություն գալու: Պետք է հեռու մնալ նման քաններից:

Նա ասաց նաև..

— Եթե թևերդ ու կուրծքդ մազոտ են, դա հարստանալու նշան է: Այդ նշանի մեջ դեռ օգուտ կա, որովհետև մի օր դա կկատարվի: Հասկանո՞ւմ ես: Միզուցե սկզբում երկար ժամանակ աղքատ լինես, եթե այդ նշանից չիմանաս, որ հետագայում հարստանալու ես:

— Իսկ քո թևերն ու կուրծքն մազո՞ւն են: Չիմ:

— Ի՞նչ միտք ունի այդպիսի հարց տալ: Չե՞ս տեսնում, որ մազոտ են:

— Լավ, իսկ դու հարո՞ւստ ես:

— Ոչ, բայց մի ժամանակ հարուստ էի և նորից կհարստանամ: Մի անգամ տասնչորս դոլար ունեի, բայց սկսեցի առևտուր անել և սնանկացա:

— Ինչի՞ առևտուր էիր անում, Չիմ:

— Շարժական ապրանքի:

— Ի՞նչ տեսակի շարժական ապրանք էր:

— Դե, անասուն, կով, հասկանո՞ւմ ես: Տասը դոլարով մի կով առա: Այլևս փող չեմ ծախսի անասունների վրա: Կովն առա թե չէ, սատկեց:

— Ուրեմն՝ կորցրիր տասը դոլար:

— Ո՛չ, ո՛չ ամբողջովին: Կորցրի միայն մոտ ինը դոլար, վաճառեցի մորթին ու ճարպը մեկ դոլար տասը ցենտով:

— Ուրեմն քեզ մոտ մնաց հինգ դոլար և տասը ցենտ: Վյուհետև շարունակեցի՞ր փողդ շրջանառության մեջ դնել:

— Այս: Դու ճանաչում ես ծեր միստը Բրեդիշին պատկանող միոտանի նեզրին: Այդ նեզրը մի բանկ հիմնեց և ասաց, որ եթե որևէ մարդ մեկ դոլար դնի իր բանկը, տարվա վերջին կատանա չորս դոլարի եկամուտ: Բոլոր նեզրերը դրեցին իրենց ավանդը, բայց նրանք շատ փող չունեին: Ես միակն էի, որ շատ ունեի: Չորս դոլար ավելի էի ստանալու և ասացի, որ եթե նա ինձ այդքան չտա, ես ինքու բանկ հիմնեմ: Դեհ, այդ նեզրը, իհարկե, ուզում էր ինձ գործից հեռու պահել. ասաց, որ երկու բանկի համար գործ չկա: Առաջարկեց իմ հինգ դոլարն էլ բանկը դնել, տարվա վերջին ինձ երեսունինգ դոլար վճարելու պայմանով:

Վյապես էլ արեցի: Կարծում էի, թե այդ երեսունինգ դոլարն անմիջապես շրջանառության մեջ կդնեմ և գործ առաջ կգնա: Բոր անունով մի նեզր կար: Գետում բռնել էր հարթ հատակով մի նավակ, և նրա տերն այդ մասին ոչինչ չգիտեր: Ես գնեցի դա և ասացի, որ տարվա վերջին կտամ երեսունինգ դոլար: Բայց նույն գիշերը ինչ-որ մեկը գողացավ նավակը, իսկ հաջորդ օրը միոտանի նեզրը հայտարարեց, որ բանկը պայթել է: Վյապես որ մեզնից ոչ մեկը ոչ մի ցենտ չստացավ:

— Իսկ ի՞նչ արեցիր տասը ցենտը, Չիմ:

— Դե, ուզում էի ծախսել, բայց երազ տեսա, և ինչ-որ ձայն ինձ ասաց, թե դրամը պետք է տամ Բալում անունով մի նեզրի, որի մականունը Բալումի էշ էր: Պետք է ասել, որ նա իսկապես հիմար է: Բայց ասում են, թե բախտավոր է, իսկ ես բախտ չունեմ: Երազումս ասացին, թե Բալումը պետք է տասը ցենտը շրջանառության մեջ դնի, իսկ եկամուտը տա ինձ: Բալումը վերցրեց փողը և եկեղեցում քարոզչից լսեց, որ ով աղքատին մի բան է

բաշխում, աստծուն է տայիս և դիմացը կստանա հարյուր անգամ ավելի: Ուստի Բալումը տասը ցենտն էլ տվեց աղքատին, սպասելով, թե ինչ դուրս կգա դրանից:

— Լավ, ի՞նչ դուրս եկավ, Զիմ:

— Ոչինչ դուրս չեկավ: Ո՛չ ես կարողացա փողը ետ ստանալ, ո՛չ էլ Բալումը: Սրանից հետո առանց գրավականի ոչ որի փող պարտը չեմ տա: Քարոզիչն ասում էր, թե Բալումը փողու կվերադարձնի հարյուրապատիկ չափով: Եթե ես կարողանայի ետ ստանալ իմ տասը ցենտը, շատ ուրախ կլինեի. այդ էլ բավական էր:

— Համենայն դեպս շատ լավ կլինի, Զիմ, եթե հետազոյում մի օր նորից հարստանաս:

— Այո, այժմ էլ հարուստ եմ, եթե լավ մտածեմ: Չէ՞ որ ես ինձ եմ պատկանում, և իմ անձը գնահատված է ութ հարյուր դոլար: Եթե այդ գումարն ունենամ, ավելին չեմ ցանկանա:

## Գլուխ իններորդ

Ուզում էի գնալ կղզու կենտրոնը, տեսնել այն վայրը, որ հայտնաբերել էի կղզին հետազոտելիս: Ճանապարհ ընկանք և շուտով տեղ հասանք: Կղզին ընդամենը երեք մղոն երկարություն ուներ, քառորդ մղոն լայնություն:

Դա բավական երկար, զաղիթափ կողերով բլուր կամ լեռնագագաթ էր՝ մոտ քառասուն ոտնաշափ բարձրությամբ: Մինչև հասանք գագաթը, բավական տանջվեցինք: Լանջերը չափազանց թեր էին, մացառներ՝ շատ խիտ: Վեր մագլցելով և այս ու այն կողմ թափառելով, շուտով գտանք մի լավ, մեծ քարանձավ, որը գրեթե գագաթի վրա էր և իլինոյսի կողմը: Քարանձավը կլիներ երկու-երեք սենյակի չափ, և Զիմը կարող էր ուղիղ դիրքով կանգնել: Ներսում զով էր: Զիմն ուզում էր, որ մեր իրերն անմիջապես փոխադրենք այնտեղ, բայց ես ասացի, որ կարիք չկա միշտ մագլցել վեր ու վար:

Զիմն ասում էր, որ եթե մենք մեր մակույկը մի լավ տեղ թաքցնեինք և մեր իրերն էլ բերեինք քարանձավ, կարող էինք փախչել, թաքնվել այնտեղ: Եթե մեկնումեկը գար կղզի, մեզ չեր գտնի առանց շների: Բացի այդ, նա պնդեց, թե փոքրիկ թռչուններն իրեն ասել են, որ շուտով անձրև է գալու, իսկ կուգենայի՛, որ մեր իրերը թրցվեն:

Վերադարձանք, վերցրինք մակույկն ու թիավարեցինք դեպի քարանձավը: Իրերը ներս տարանք: Մոտակայքում որոնեցինք մի տեղ, որ ուտենու խիտ թփերի մեջ թաքցնենք մակույկը: Կարթերից դուրս քաշեցինք մի քանի ձուկ, նորից կարթերը զցեցինք ջուրը և սկսեցինք ճաշ եփել:

Քարանձավի դուռն այնքան մեծ էր, որ կարելի էր գինու տակառը գլորելով ներս տանել: Մուտքի մոտ հատակը մի փոքր վեր էր բարձրացած և հարթ էր ու հարմար՝ օջախի համար: Հենց այդտեղ էլ կրակ արեցինք ու ճաշ եփեցինք:

Ներսում կապերտի փոխարեն փոեցինք մեր վերմակները և ճաշեցինք: Մյուս բոլոր իրերը տեղավորեցինք քարանձավի խորքում: Շուտով մթնեց: Ակսվեց ամպրոպը: Ուրեմն՝ թռչուններն իրավացի էին: Վրա տվեց անձրև, որը թափվում էր, ինչպես հեղեղ: Ես երբեք չի տեսել, որ քամին այդպես փշեր: Դա ամառային իսկական փոթորիկ էր: Այնպես մթնեց,

որ դրսում ամեն ինչ կապտասև գույն ստացավ, և դա գեղեցիկ էր: Անձրևն այնպես էր տեղում, որ մոտակա ծառերը հազիվ էին երևում. կարծես ծածկված էին սարդոստայնով: Քամին սաստկացավ. կորացնում էր ծառերի կատարները և տերևները շուր տալիս: Ծառերի ճյուղերն այնպես էին այս ու այն կողմ նետվում, որ կարծես խելազարվել էին: Այնուհետև, երբ ամենուրեք սև խավարն ավելի թանձրացավ, հանկարծ ամեն ինչ լուսավորվեց. շրջակայքն այժմ պայծառ էր, ինչպես ցերեկը. հարյուրավոր յարդերի վրա կարելի էր տեսնել ծառերի ընկղմվող ու բարձրացող գագաթները, որ քիչ առաջ բոլորովին չէին երևում: Մի վայրկյան հետո նորից մթնեց, ինչպես վիհր: Լսվում էր որոտի ձայնը՝ ահավոր շառաչ, ապա մոնչուն, դղորյուն: Երկինքը գահավիժում էր ցած, դեպի երկրի խորքը: Կարծես երկար սանդղաշարով դատարկ տակառներ էին գլորվում ներքև, թռչելով վեր ու վար:

— Լավ է, չ՛, Զիմ, — ասացի ես, — այստեղից ուրիշ ոչ մի տեղ չեմ ուզում գնալ: Ինձ էի մի կտոր ծուկ տուր և եզիպտացորենի մեկ-երկու բլիթ:

— Դե, իմացիր, եթե Զեկը չիներ, դու այստեղ չէիր լինի: Կիխնեիր ներքևի անտառում, առանց ճաշի, լավ է կթրջվեիր մինչև ոսկորներդ, քաղցրիկս: Վառեկները գիտեն, թե երբ է անձրև գալու, ինչպես մյուս բոլոր թռչունները:

Տար-տասներկու օր գետն անընդհատ բարձրանում էր, մինչև վերջապես դուրս եկավ ափերից: Կղզու ցածրադիր մասերը երեք-չորս ոտնաչափ խորությամբ ծածկված էին ջրով: Նոյն ծևով ծածկվել էր և հիխոյսի ափը: Այդ կողմերում դեպի լայնությունը այժմ մի քանի մղոն էր, բայց Միստուրիի կողմի վրա նոյնն էր մնացել՝ կես մղոն, որովհետև Միստուրիի մոտ ափը բարձր է և զարիթափ, ինչպես պատ:

Ցերեկները մենք մակույկով պտտվում էինք կղզու շուրջը: Անտառի խորքը շատ զով և ստվերու էր նոյնիսկ այն ժամերին, երբ երկնքից կրակ էր թափվում: Մենք ոլորապտույտ թափառում էինք ծառերի արանքում: Երբեմն վազերն այնպես խիստ էին կախված լինում, որ ստիպված ետ էինք դառնում և այլ ճանապարհով գնում: Յուրաքանչյուր տապալված մեծ ծառի վրա կարելի էր տեսնել ճագարներ, օձեր և այլ կենդանիներ: Կողին հեղեղվելուց մեկ-երկու օր հետո այդ կենդանիները սպածությունից այնքան հեզ էին դարձել, որ նավակով ուղղակի կարելի էր մոտենալ և ձեռքով բռնել: Բայց ո՞չ օձերին ու կրիաներին: Դրանք սողանով մտնում էին ջուրը: Այն բլիթ վրա, որտեղ մեր քարանձավն էր, վիստում էին այդ կենդանիները: Կարող էինք մեր ուզածի չափ բռնել ու բերել:

Մի երեկո բռնեցինք տախտակներից պատրաստած լաստի մի մաս՝ սոճու գեղեցիկ, հաստ տախտակներ: Դա ուներ տասներկու ոտնաչափ լայնություն և ջրից դուրս էր մնում վեց-յոթ մատնաչափ: Դա հաստատուն, հարթ տախտակամած էր: Երբեմն ցերեկը տեսնում էինք սղոցած գերաններ, բայց չինք բռնում. ցերեկները դուրս չինք գալիս:

Մի անգամ գիշերը, լուսադեմին, երբ կղզու վերին ծայրում էինք, տեսանք փայտաշեն մի տուն, որ ջրի հետ գալիս էր արևմտյան կողմից: Տունը երկիարկանի էր և զգալիորեն թեքված: Նավակով մոտեցանք և պատուհանից մտանք երկրորդ հարկը: Բայց շատ մութ էր և ոչինչ չէր երևում: Մակույկն ամուր կապեցինք տնից ու նստեցինք մեջը, սպասելով լուսանալուն:

Դեռ կղզու ստորին մասը չինք հասել, երբ լույսը բացվեց: Պատուհանից ներս նայեցինք: Տեսանք մի մահճակալ, մի սեղան, երկու հին աթոռ և նման բազմաթիվ այլ իրեր, որ

թափված էին հատակին: Պատից կախված էին հագուստներ: Ինչոր մի քան հեռավոր անկյունում ընկած էր հատակին և նման էր մարդու: Զիմք բացականչեց.

— Եյ, ո՞վ ես:

Բայց մարդը տեղից շարժվեց: Ես է ձայն տվի: Զիմն ասաց.

— Այս մարդը քնած չէ, մեռած է: Դու հանգիստ սպասիր, ես մտնեմ ներս, տեսնեմ:

Նա պատուհանից ներս մտավ, թերվեց պառկած մարդու վրա և ասաց.

— Մեռք է, այո, և մերկ է: Խսկած է թիկունքից. իմ կարծիքով, երկու-երեք օրվա սպանված է: Ներս արի, Հեք, բայց դեմքին մի՛ նայիր, շա՛տ սարսափելի է:

Ես բոլորովին չնայեցի: Զիմք մի քանի հին շորով ծածկեց նրան, բայց դրա կարիքը չկար: Առանց այն էլ ես չէի ուզում նայել: Հատակին ցրված էին ճարպոտ խաղաթղթեր, վիսկիի հին շերե, սև կտորից պատրաստած երկու դիմակ, իսկ պատերին ամենուրեք գրված էին չափազանց գոեհիկ բառեր ու փայտածիով նկարներ էին արված: Պատից կախված էին երկու կեղսոտ, հին, չթե զգեստ, ծղոտե մի գիշարկ, կանացի ներքնազգեստներ, ինչպես և տղամարդու շորեր: Մենք շատ բաներ իջեցրինք մակույկի մեջ. կարող էին պետք գալ: Հատակին ընկած էր տղայի մի հին, ծղոտե գիշարկ: Ես դա էլ վերցրի: Կար և մի շիշ, որի մեջ կաթ էր լցված եղել. թերանք խցել էին շորով, որպեսզի երեխան կարողանար ծծել: Մենք այդ շիշը կվերցնեինք, բայց կոտրված էր: Կար մի հին, փոշոտված արկդ և կաշվե մաշված մի ճամպրուկ՝ ճարմանդները կոտրած: Երկուսն էլ բաց էին, բայց դրանց մեջ ուշադրության արժանի ոչ մի քան չկար: Նկատի ունենալով, որ իրերը թափված են ցանուցիր, եզրակացրինք, որ տերերը շտապ հեռացել են տնից և չեն կարողացել տանել իրենց ունեցվածքի մեծ մասը:

Մենք վերցրինք նաև թիթեղյա մի հին լապտեր, մսագործի ամկոթ մի դանակ, «Քարլո» ֆիրմայի արտադրած գրպանի մի նոր դանակ, որը խանութում կես դոլարից էժան չէին վաճառի, մեծ քանակությամբ ճարպամում, թիթեղյա մի մոմակալ, մի ջրդում, թիթեղյա մի բաժակ, բամբակե մաշված վերմակներ, կանացի մի ձեռնարսակ՝ մեջը ասեղներ, գնդասեղներ, մեղրամում, թեկ և նման այլ բաներ: Վերցրինք մի կացին, մեխեր, ձկնորսական մի կարթաթեկ, որն իմ ճկույթի հաստությունն ուներ և որի վրա կար ահուելի մեծության մի քանի կարթ, այծամի մորթու մի փաթեթ, շան կաշվե վզկապ, ձիու պայտ և մանր շշերով մի քանի դեղորայք, որոնց վրա պիտակ չկար: Երբ պատրաստվում էինք դուրս գալ, ես գտա բավական լավ մի թերոց՝ ձիերի համար, իսկ Զիմք գտավ ջութակի մի հին աղեղ և փայտե մի ոտք: Փոկերը կտրել էին, բայց ընդհանրապես լավ ոտք էր, թեև ինձ համար շատ երկար էր, իսկ Զիմի համար՝ կարճ: Մյուս ոտքը չգտանք, չնայած շատ նայեցինք այս ու այն կողմ:

Եվ այսպես, մեր որսը վաս չէր: Երբ պատրաստ էինք հեռանալու, կղզուց քառորդ մղոն ներքև էինք, և օրը լավ լուսացել էր: Զիմին պառկեցրի մակույկի մեջ և ծածկեցի վերմակով: Եթե նստեր, տեսնողները կիմանային, որ նա փախատական նեզք է: Թիավարեցի դեպի իլինոյսի ափը, և ջրի հոսանքը մեզ կես մղոն տարավ ներքև: Կանգ առանք ափի մոտ, անշարժ ջրում, առանց պատահարի և որևէ մեկին տեսնելու: Ապահով տեղ հասանք:

## Գլուխ տասներորդ

Նախաճաշից հետո ուզում էի խոսել մեռած մարդու մասին և գուշակություն անել, թե ինչպես է սպանվել, բայց Զիմը խուսափում էր: Նա ասաց, որ դա դժբախտություն կրերի: Բացի այդ ասաց, որ մեռածը կարող է շրջել և այցելել մեզ. շթաղված մարդը ավելի շատ է շրջում, քան նա, ով հանգիստ մնում է իր գերեզմանում: Դա ինձ շատ հավանական թվաց, և ես այլևս ոչինչ չասացի, բայց շրադարեցի այդ մասին մտածել. ուզում էի իմանալ, թե ով է սպանել նրան և ինչու:

Տնտղեցինք մեր բերած շորերը և մի հին վերարկուի աստաղի մեջ գտանք արծաթե ութ դոլար: Զիմն ասաց, որ իր կարծիքով վերարկուն այդ տան բնակիչները զողացել են, որովհետև եթե իմանային փողի մասին, այնտեղ չէին թողնի: Ես ավելացրի, որ հավանորեն հենց նրանք են սպանել այդ մարդուն, բայց Զիմը չէր ուզում այդ մասին խոսել: Ես ասացի:

— Այժմ քեզ թվում է, թե դա դժբախտություն կրերի, բայց ի՞նչ ասացիր, երբ ես ցույց տվի օձի մաշկը, որ գտել էի երեկ չէ մյուս օրը բլրի գագաթին: Դու ասացիր, որ օձի մաշկին ձեռք տալը ամենասուկալի աղետի նշանն է: Ահա քո աղետը: Մենք այսքան բան ձեռք բերինք, դրան ավելացրած ութ դոլար: Ես կցանկանայի, որ ամեն օր այսպիսի դժբախտություն գար մեր գլխին, Զիմ:

— Դա ոչինչ չի նշանակում, քաղցրիկա, ոչինչ չի նշանակում: Շատ մի՛ ոզենրվիր: Փորձանք դեռ կզա, հիշիր ասածս, դեռ կզա:

Եվ, իսկապես եկավ: Այդ մասին խոսում էինք երեքշաբթի օրը: Ուրբաթ օրը պառկած էինք կանաչ խոտերին, բլրի վերին ծայրում: Մեր ծխախոտը վերջացավ: Գնացի քարանձավ ծխախոտ բերելու և այնտեղ տեսա մի բոժոժավոր օձ: Սպանեցի և գալարելով դրեցի Զիմի վերմակի ծայրին, իբրև կենդանի օձ, կարծելով թե լավ կատակ կլինի, երբ Զիմը տեսնի: Երեկոյան բոլորովին մոռացել էի օձի մասին և, մինչ վառում էի լույսը, Զիմը փովեց վերմակի վրա: Օճն այնտեղ էր և խայթեց նրան:

Զիմը գոռալով վեր թռավ: Առաջին բանը, որ տեսա լույսը վառելիս, այն էր, որ այդ գարշելի սողունը գալարվելով բարձրացավ և պատրաստվում էր նորից ցատկել Զիմի վրա: Մի վայրկյանում փայտի հարվածով փակեցի օձի հաշիվը: Զիմն իսկույն վերցրեց հորս վիսկիի սրվակը և դատարկեց:

Նա բորիկ էր, և օձը կծել էր հենց կրունկը: Այդ բոլորի պատճառն այն էր, որ ես հիմարաբար մոռացել էի մի բան. որտեղ սատկած օձ թռողնես, ընկերը միշտ կզա և կփաթաթվի շուրջը: Զիմն ինձ ասաց, որ կտրեմ օձի գլուխը, դեն զցեմ, ապա մաշկեմ ու մարմնից մի կտոր խորովեմ: Ես կատարեցի այդ պատվերը: Նա կերավ խորովածը, ասելով, թե դա կօգնի իր բուժմանը: Նա ինդրեց նաև բոժոժները պոկել ու կապել իր բազուկին. ասաց, թե դա էլ կօգնի: Ապա ես լուռ դուրս եկա քարանձավից և օձերը շարտեցի թփուտների մեջ. չէի ուզում Զիմն իմանար, որ դա ամբողջապես իմ հանցանքն է:

Զիմն անընդհատ ծծում էր սրվակից, երբեմն կորցնում իրեն, վեր նետվում ու գոռում, բայց ամեն անգամ, երբ խելքը գլուխն էր զալիս, նորից սկսում էր սրվակից ծծել: Նրա ոտքը բավական ուռեց, ուռուցքը բարձրացավ վեր, դեպի սրունքը: Շուտով խմիքը ցույց տվեց իր զորությունը, և ես զգում էի, որ նա իրավացի էր, չնայած մտածում էի, թե ավելի լավ էր՝ օճն ինձ խայթեր, քան հորս վիսկին նա այդպես խմեր:

Զիմը չորս օր պառկեց: Այնուհետև ուռուցքն իջավ, և նա իրեն նորից լավ զգաց: Մտքումս որոշեցի այլևս ձեռք չտալ օդի մաշկի, մանավանդ երբ տեսա, թե դրանից ինչեր են դուրս գալիս: Զիմն ասաց, թե իր կարծիքով այսուհետև պետք է հավատամ իր խոսքերին: Օդի մաշկին ձեռք տալը, ասաց նա, այնպիսի ահավոր փորձանք կրերի, որ զուցել չարիքի վերջը միայն խայթելը չէ: Նրա կարծիքով հազար անգամ ավելի լավ է ձախ ուսի վրայից նայել նորալուսնին, քան ձեռք տալ օդի մաշկին: Դե, ինքս էլ սկսեցի այդպես մտածել, չնայած միշտ կարծում էի, թե ձախ ուսի վրայից նորալուսնին նայելը ամենահիմար բանն է: Ծերուկ Հենք Բանքերը մի անգամ այդպես ամբարտավանացել էր և դեռ երկու տարի էլ չանցած հարբել ու վայր էր ընկել մանրագնդակ ձուլող գործարանի աշտարակից: Այնաւես էր ջարդվել, որ մակույկ էր դարձել: Նրան դրել էին ոչ թե դազանի մեջ, այլ մարագի երկու դռան արանքը և այդպես թաղել: Դա, իհարկե, լսել էի, չէի տեսել: Հայրս էր պատմել: Այնուամենայնիվ, այդ ամենը եղել էր լուսնին հիմարաբար նայելուց:

Օրերն անցնում էին: Գետը նորից քաշվեց իր ափերի մեջ: Մեր առաջին գործն այն եղավ, որ մեծ կարժերից մեկին որպես խայծ կացրինք մաշկած մի ճագար և զցեցինք զուրը: Բռնեցինք մի մեծ լոքո՞ մարդու չափ, վեց ոտնաշափ երկու մատնաշափ երկարությամբ: Կշռում էր մոտ երկու հարյուր ֆունտ: Մենք, իհարկե, չենք կարող ջրից հանել. նա մեզ կրաշեր Իլինոյսի մեջ: Նստեցինք և նայեցինք, թե ինչպես է ձուկը թպրտում ու պատառոտում ինքն իրեն մինչև սատկելը:

Լորոյի ստամոքսում գտանք արույրե մի կրնակ, մի կլոր գնդակ և շատ ուրիշ զիզի-բիզի բաներ: Կացնով պատռեցինք գնդակը և մեջը գտանք թելի մի կոճ: Զիմն ասաց, թե կոճը երկար ժամանակ պետք է այնտեղ եղած լինի, քանի որ այդպես ծածկվել է այլ նյութերով, գնդակ դարձել: Այնքան մեծ էր ձուկը, որ դժվար թե դրա նմանը Միսսիսիպիում երբեւ բռնած լինեին: Զիմն ասաց, թե դրանից մեծ ձուկ կյանքում դեռ չի տեսել: Դա զյուղում պետք է որ մեծ արժեք ունենար: Այդ ձուկը կտրատում և շուկայում վաճառում են ֆունտերով: Բոլորն էլ մի քիչ գնում են: Այդ ձկան միսր ձյան պես սպիտակ է և շատ լավ է տապակվում:

Հաջորդ առավոտյան ես ասացի, թե մեր կյանքն այստեղ ծանք ու տաղտկալի է դառնում, և ուզում եմ տեղափոխվել: Ասացի, թե մտադիր եմ անցնել գետի մյուս ափը և իմանալ, թե ինչ կա, ինչ չկա: Զիմին դուր եկավ այդ միտքը, բայց ասաց, թե պետք է զիշերը գնալ և շրջահայաց, զգույշ լինել: Նա նորից ծանք ու թեթև արեց այս հարցը և ասաց, թե արդյոք հնարավոր չէ՝ կանացի հին շորեր հազնել: Դա նույնպես լավ առաջարկություն էր: Կարճացրինք չեն զգեստներից մեկը, շալվարիս ծայրերը ծալեցի մինչև ծնկներս, մտա զգեստի մեջ: Զիմը ետևից կարթերով ամրացրեց: Շատ լավ ստացվեց: Գլխիս դրեցի ծղոտե գլխարկը, թելով կապեցի ծնոտիս տակ, որից հետո իմ դեմքին նայելը հավասար էր վառարանի խողովակի մեջ նայելուն: Զիմն ասաց, որ հազիվ թե ինձ ճանաչեն, նույնիսկ ցերեկով:

Ամբողջ օրը վարժություններ էի կատարում, որ ընտելանամ կանացի զգեստներին: Ծուտով սովորեցի բավական հաջող շարժվել դրանց մեջ: Միայն Զիմն ասաց, թե աղջկա նման չեմ քայլում: Ասաց, որ վերջ տամ զգեստս քաշելու և ձեռքերս շալվարիս զրպանները դնելու սովորությանը: Ես հաշվի առա նրա դիտողությունը, և զործն ավելի հաջող գնաց:

Մութն ընկնելուն պես մակույկով շարժվեցի դեպի Իլինոյսի ափը:

Գետն անցա քաղաքի ուղղությամբ և դիմացի ափը հասա գետանավերի կայանից մի քիչ ներքև: Հոսանքն ինձ քշեց քաղաքի ծայրամասը: Կապեցի մակույկը և բարձրացա գետափն ի վեր: Մի փոքրիկ հյուղակում, որտեղ երկար ժամանակ ոչ ոք չէր ապրում, լույս էր վառվում: Հարցրի ինքս ինձ, թե ով կարող է լինել: Մոտեցա և պատուհանից զաղտագողի նայեցի: Ներսում կար մի կին, մոտ քառասուն տարեկան: Եղևնափայտե սեղանին դրված մոմի լուսի տակ ինչ-որ բան էր հյուսում: Դեմքն ինձ ծանոթ չէր: Նա աետք է ուրիշ տեղից եկած լիներ, որովհետև քաղաքում չկար մի մարդ, որն ինձ անծանոթ լիներ: Բախտս բերեց, թե չէ սկսում էի տատանվել, վախենում էի զալուս համար: Մարդիկ կարող էին ձայնից ճանաչել, հայտնաբերել ինձ: Բայց եթե այս կինը նման փոքրիկ քաղաքում արդեն երկու օր ապրել է, ապա կարող է պատմել այն ամենը, ինչ ուզում եմ իմանալ: Բախեցի դուռը, նորից մտրումս կրկնելով, թե չպետք է մոռանամ, որ ներկայանում եմ որպես աղջիկ:

## Գլուխ տասնմեկերորդ

- Ներս եկեք, — ասաց կինը, և ես մտա սենյակ: — Նստիր, — ասաց նա:  
Նստեցի: Նա վերից-վար նայեց ինձ իր մանրիկ, շողշողուն աչքերով ու հարցրեց.
  - Ի՞նչ է անունդ:
  - Սառա Ուիլյմս:
  - Որտե՞ղ ես ապրում, այստեղ մոտակայքո՞ւմ:
  - Ոչ, տիկին, Հուքքրվիլում, յոթ մղոն ներքև: Ամբողջ ճանապարհը ուրով եմ անցել և շատ հոգնած եմ:
  - Ինչպես և քաղցած ես, կարծում եմ: Հիմա ուտելու մի բան կրերեմ քեզ համար:
  - Ոչ, տիկին, քաղցած չեմ: Այնքան քաղցած էի, որ ստիպված եղա կանգ առնել մոտակա ազարակում, երկու մղոն ներքև. այլևս քաղցած չեմ: Ուշանալու պատճառը սա է: Մայրս հիվանդ պառկած է, դրամ չունի, ոչինչ չունի, և եկել եմ այդ մասին հայտնելու հորեղբայր Աբներ Մուրին: Մայրս ասում է, որ նա ապրում է քաղաքի վերին մասում: Ես երբեք նրա մոտ չեմ եղել: Դուք ճանաչո՞ւմ եք հորեղբորս:
  - Ոչ, ես ոչ որի չեմ ճանաչում: Երկու շաբաթ ել չկա, որ այստեղ եմ: Քաղաքի վերին ծայրը այստեղից քավական հեռու է: Ավելի լավ է՝ գիշերը մնաս մեր տանը: Հանիր զիհարկո:
  - Ոչ, — պատասխանեցի ես, — մի քիչ կիանզստանամ ու կշարունակեմ ճանապարհ. խավարից չեմ վախենում:

Նա ասաց, որ չի թողնի մենակ զնամ: Շուտով ամուսինը տուն կգա, երևի մեկուկես ժամ հետո, և նա ինձ կուղեկցի: Այնուհետև սկսեց խոսել իր ամուսնու, ազգականների մասին, որոնք ապրում են գետի վերին հոսանքի մոտ, ինչպես և այն ազգականների մասին, որ ապրում են ներքևում: Պատմեց, թե ինչպես առաջ ինքն ու ամուսինը լավ են ապրել և ինչպես չեն իմացել, որ սխալվում են մեր քաղաքը տեղափոխվելով. թող երկուսով լինեին:

Եվ այլն և այլն: Ես արդեն սկսեցի մտածել, թե արդյոք չե՞մ սխալվել, որ այստեղ եմ եկել քաղաքի անցուղարձը իմանալու: Բայց նա շուտով անցավ հորս և իմ սպանվելու հարցին: Ես արդեն հաճույքով թռղեցի, որ այդ մասին նա երկար խոսի: Պատմեց իմ ու մոռ Սոյերի գոտած տասներկու հազար դոլարի մասին (միայն թե նրա ասած թիվը քանի հազար դոլար էր), ամեն ինչ պատմեց հորս մասին, հայտնելով, թե նա ինչ դառը ճակատագիր է ունեցել, ինչպես և ես: Վերջապես հասավ այնտեղ, թե ինչպես են սպանել ինձ: Ես ասացի.

— Ո՞վ է արել այդ: Հուքքը վիլում շատ բան եմ լսել այդ դեպքի մասին, միայն չգիտենք, թե ով է այն մարդը, որ սպանել է Հեք Ֆիննին:

— Դե, կարծում եմ այստեղ էլ շատ մարդիկ կան, որոնք կուզենային իմանալ, թե ով է սպանել: Որոշ մարդիկ կարծում են, թե ծերուկ Ֆիննը ինքն է արել:

— Ո՛չ, մի՞թե:

— Սկզբում մեծամասնությունը այդ կարծիքին էր: Ծերուկ Ֆիննը երեք չի իմանա, թե ինքը որքան մոտեցել էր Լինչի դատաստանին: Բայց դեռ գիշերը չանցած կարծիքը փոխվեց. սկսեցին մտածել, թե այդ բանը կատարել է փախած մի նեզք, անունը՝ Զիմ:

— Բայց նա...

— Ես կանգ առա: Մտածեցի, թե ավելի լավ է լոեմ: Նա շարունակեց և չնկատեց, թե ես ինչ-որ բան ասացի:

— Նեզքը փախել է հենց այն երեկո, երբ սպանվել է Ֆիննը: Գտնողին խոստացել են երեք հարյուր դոլարի պարզեւությունը: Երկու հարյուր դոլար է խոստացել են ծերուկ Ֆիննին գտնելու համար: Սա, գիտե՞ք, սպանությունից հետո առավոտյան եկել է քաղաք, հայտնել դեպքի մասին, եղել է գետանավով մարմինը որոնող խմբի հետ և դրանից անմիջապես հետո փախել: Իրիկնադեմին ուզել են նրան Լինչի դատաստանի ենթարկել, բայց արդեն փախած է եղել: Հաջորդ առավոտյան փախած է լինում և նեզքը: Սպանության երեկոյան ժամը տապից հետո ոչ որ նրան չի տեսել: Ոճրազործությունը վերագրում են նրան: Հաջորդ առավոտյան, երբ ամենուրեք այդ մասին էին խոտում, հանկարծ վերադառնում է ծերուկ Ֆիննը, գնում դատավոր թըշերի մոտ և աղմկում, պահանջում փողը, որպեսզի ինքը հիմնյուն գնա որոնի նեզրին: Դատավորը որոշ գումար տալիս է, և նույն երեկո ծերուկը հարբում է, սարսափելի դեմքով երկու անձանոթ մարդկանց հետ թափառում փողոցներում, ապա նրանց հետ անհետանում: Ահա, մինչև այժմ նա չի վերադարձել, և այստեղ մտածում են, թե նա չի վերադառնա մինչև հարցը որոշ չափով խաղաղվի: Այժմ մարդիկ կարծում են, թե նա է իր որդուն սպանել և այնպես սարքել, որ ժողովուրդը մտածի, թե ավազակներն են արել: Այնուհետև նա Հեքի փողը կստանա առանց դատական երկար ու բարակ գիշացավանքի: Մարդիկ ասում են, թե նա ընդունակ չէ այդպիսի գործի, բայց իմ կարծիքով նա, օ՛, ինչ խորամանկ է: Եթե մեկ տարի չվերադառնա, այլևս ոչ մի վատ բան չի լինի նրա համար, և ոչ մի բան հնարավոր չի լինի հաստատել. ամեն ինչ խաղաղված կլինի, և ծերուկը վրա կտա Հեքի փողերին, առանց որևէ դժվարության:

— Այո, տիկին, ես է եմ այդպես կարծում: Ես ոչ մի արգելք չեմ տեսնում նրա ճանապարհին: Ոչ որ արդեն չի մտածում, թե նեզքն է արել: Բայց շուտով այդ նեզրին կրօնեն և նրանից ճշմարտությունը կիմանան:

— Ոչ, ո՛չ բոլորը: Շատ մարդիկ կան, որ կարծում են, թե նեզքն է արել: Բայց շուտով այդ նեզրին կրօնեն և նրանից ճշմարտությունը կիմանան:

— Ինչպե՞ս, մի՞թե այժմ էլ հետևում են նրան:

— Ե՛, շա՛տ միամիտն ես: Երեք հարյուր դոլարը ին փողոցում ընկած չէ՝, որ մարդիկ վերցնեն: Ոմանք կարծում են, թե նեզքը այստեղից շատ հեռու չե՞ն: Ես էլ դրանցից մեկն եմ, թեև այդ մասին ոչինչ չեմ ասում: Մի քանի օր առաջ խոսում էի մի ծերունու ու նրա կնոջ հետ, որոնք ապրում են մեր կողքի փայտաշեն խրճիթում: Ի միջի այլոց հայտնեցին, որ հազիվ թե որևէ մեկը գնացած լինի դիմացի կղզին՝ Զեքսոնի կղզին: Ես հարցրի, թե այնտեղ ոչ ոք չի՝ ապրում: Ոչ, ոչ ոք, — պատասխանեցին նրանք: Ես այլևս ոչինչ չասացի, բայց սկսեցի այդ մասին մտածել: Դրանից երկու-երեք օր առաջ ես որոշակիորեն ծուխ նկատեցի, որ բարձրանում էր կղզու վերին ծայրից, և ինք ինձ ասացի, թե արդյոք դա այնտեղ թաքնված նեզքը չէ: Այնուամենայնիվ, մտածեցի, արժե նեղություն կրել և հետախուզել այդ վայրը: Դրանից հետո էլ ծուխ չեմ նկատել. կարծում եմ, որ այնտեղից գնացած կլինի, եթե իսկապես դա նա էր: Բայց ամուսինս մեկի հետ գնալու է այնտեղ: Նա գետով բարձրացել էր վեր, այսօր է վերադարձել: Երկու ժամ առաջ, երբ եկավ, ես ամեն ինչ պատմեցի:

Ես այնքան էի հուզվել, որ հանգիստ նստել չեի կարողանում: Որոշեցի ձեռքերս մի բանով գրադարձնել: Սեղանից վերցրի ասեղը, սկսեցի թել անցկացնել, բայց ձեռքերս դողում էին, ոչինչ չեր ստացվում: Երբ կինը դադարեց խոսելուց, ես վեր նայեցի: Նա բավական ուշադիր նայեց ինձ ու մի փոքր ժամաց: Ասեղն ու թելը ցած դրեցի, իբր թե շատ էի հետաքրքրվում նրա խոսքերով (և իսկապես հետաքրքրվում էի), ապա ասացի.

— Երեք հարյուր դոլար. մեծ փող է: Ի՞նչ լավ կլիներ, եթե այդ գումարը մորս ձեռքն ընկներ: Զեր ամուսինը այս գիշե՞ր է գնալու:

— Այո, իհարկե: Նա գետով վեր է բարձրացել այն մարդու հետ, որի մասին խոսեցի, որպեսզի մակույկ ձեռք բերի և տեսնի, թե հնարավոր չէ փոխարինաբար հրացան վերցնել: Նրանք կղզին կգնան, երբ կեսզիշերն անցնի:

— Ավելի լավ չէի՞ն տեսնի, եթե սպասեին մինչև լուսաբաց:

— Այո, բայց չէ՝ որ այդ դեպքում նեզքն էլ լավ կտեսնի: Կեսզիշերից հետո հավանորեն քնած կլինի, և նրանք կարող են անտարի միջով գաղտազողի մոտենալ, մթության մեջ ավելի լավ նկատել կրակը, եթե նեզքը իսպույկ վառած լինի:

— Ես այդ մասին չեի մտածել:

Կինը շարունակեց հետաքրքրությամբ նայել ինձ, և ես շատ անհանգիստ էի զգում: Շուտով նա ասաց.

— Ասացիր, ինչպես էր անո՞ւնդ, հոգյակ:

— Մ... Մերի Ուիլյամս:

— Ինձ թվաց, թե սկզբում «Մերի» չեի ասել, ուստի գլուխս չբարձրացրի: Թվում էր, թե «Սառա» էի ասել: Ինձ պատին դեմ արածի պես էի զգում: Վախենում էի, թե այդ բանը կերևս իմ աչքերից: Ուզում էի, որ այդ կինը ուրիշ բաներից խոսեր: Որքան նա լուս էր, այնքան ավելի էի անհանգստանում: Վերջապես նա ասաց.

— Հոգյակս, կարծես ասացիր «Սառա», երբ նոր եկար:

— Օ՛, այո, տիկին, այդպես ասացի. Սառա-Մերի Ուխյամս, իմ անունը Սառա է: Ոմանք Սառա են ասում, ոմանք էլ Մերի:

— Ա՛, ուրեմն այդպես:

— Այո, տիկին:

Այժմ ինձ ավելի լավ էի զգում, բայց ուզում էի այդտեղից դուրս պրծնել: Վերև նայել դեռևս չեմ կարող:

Այնուհետև կինն սկսեց խոսել իրենց մասին, թե որքան ժամանակը ծանր է անցնում և որքան աղքատ են ապրում, թե ինչպես առնետներն իրենց ազատ են զգում. կարծես տան տերերը նրանք լինեն: Եվ այն, և այլն: Այնպես որ ես ինձ նորից հանգիստ էի զգում: Առնետների մասին նրա ասածը ճիշտ էր: Անկյունում հաճախ երևում էին առնետները, քըները բներից դուրս ցցած: Կինն ասում էր, թե ինքը մենակ ժամանակ իր մոտ պատրաստ քարեր, ձողեր է պահում, որպեսզի շարտի նրանց վրա, այլապես դրանք իրեն հանգիստ չեն թողնի: Նա ինձ ցույց տվեց կապարի մի ձող, որ ոլորել, հանգույց էր դարձրել, և ասաց, որ ինքը դրանով լավ նշան է բռնում, բայց մի երկու ժամ առաջ ձեռքը ոլորվել է և չգիտե՝ ելի կարո՞ն է ճիշտ նշան բռնել: Սպասում էր առիթի: Շուտով այդ ձողը շարտեց առնետի վրա, բայց նպատակին չհասավ և բացականչեց «ա՛խ»: Թևը ցավեց: Ապա ասաց, որ հաջորդ անգամ ես փորձեմ: Ուզում էի հեռանալ, նախքան ամուսնու գալը, բայց, իհարկե, իմ անհանգստությունը արտարուստ ցույց չեմ տալիս: Ես վերցրի կապարը, շարտեցի առաջին առնետի վրա, որը ցույց տվեց իր քիթը: Եթե առնետը իր տեղում մնար, լավ հարված կստանար: Կինն ասաց, թե հրաշալի նետեցի և երևի հաջորդ անգամ անպայման կիսիեմ նպատակին: Նա գնաց կապար քերեց և մի կծիկ էլ թել: Ուզում էր, որ իրեն օգնեմ: Ես պարզեցի ձեռքերս, նա կծիկը տվեց իմ ձեռքը, շարունակեց խոսել իր ամուսնու և գործերի մասին: Բայց շուտով ընդհատեց խոսակցությունն ու ասաց.

— Աչք առնետների վրա պահիր: Ավելի լավ է կապարը գոզդ դնես, որ պատրաստ լինի:

Եվ նա կապարը անմիջապես զցեց գոզ: Ես այն բռնեցի ծնկներովս: Կինը շարունակեց խոսել, բայց րոպե էլ չեր անցել, երբ թելը վերցրեց ձեռքից, ուղիղ նայեց իմ դեմքին և սիրալիր ասաց.

— Դե, այժմ քո խսկական անունն ի՞նչ է:

— Ի-ի՞նչ տիկին:

— Խսկական անունդ ի՞նչ է: Բի՞ է, թո՞ մ, թե՞ բոր, վերջապես ի՞նչ է:

Խոստովանում եմ, որ տերևի պես դողում էի, մոռացել էի անելիքս, բայց ասացի.

— Խնդրում եմ, ես խեղճ աղջիկ եմ և ինձ հետ կատակ մի՛արեք, տիկին: Եթե ես խանգարում եմ, կարող եմ...

— Ոչ, չես խանգրում: Նստիր և մնա տեղումդ: Ես չեմ պատրաստվում ո՛չ քեզ վնասել, ո՛չ է քո մասին որևէ տեղ հայտնել: Դու միայն ասա քո գաղտնիքը և վստահ եղիր ինձ վրա: Ես քո գաղտնիքը չեմ հայտնի: Դեռ ավելին. կօգնեմ քեզ, նույնը և իմ ամուսինը, եթե օգնության կարիք լինի: Տեսնում եմ, որ վարպետի աշակերտ ես և փախել ես, ուրիշ ոչինչ: Քեզ հետ վատ են վարվել, դու որոշել ես փախչել: Աստված քեզ հետ, որդիս, ես քո մասին ոչինչ չեմ ասի: Այժմ ամեն ինչ պատմիր ինձ, դու լավ տղա ես:

Ասացի, որ կեղծելն այլևս իմաստ չունի, և բաց սրտով ամեն ինչ կպատմեմ, միայն թե նա է իր խոստումը չպետք է դրժի: Պատմեցի, որ իմ հայրն ու մայրը մեռել են, որից հետո ինձ օրինական կերպով հանձնել են մի ազարակատիրոջ, գետից երեսուն մղոն այն կողմ: Ազարակատերն այնքան վատ է վարվել ինձ հետ, որ այլևս չեմ կարողացել դիմանալ: Իմ տերը երկու օրով տեղ է զնացել, և ես, օգտվելով առիթից, գողացել եմ նրա աղջկա հին շորերի մի մասն ու փախել: Երեսուն մղոնն անցել եմ երեք գիշեր: Ճանապարհորդել եմ զիշերով, թաքնվել ու ամրող ցերեկը քնել: Օգտագործել եմ տնից վերցրած մի տոպրակ հացն ու միսը, և դա լի ու լի ինձ բավարարել է ամրող ճանապարհին: Ասացի, ահա թե ինչու եկա այստեղ՝ Գոշեն:

— Գոշե՞ն, որդիս: Սա Գոշեն չէ: Սա Սանկտ-Պետերբուրգն է: Գոշենը գետից դեպի վեր տասը մղոն այն կողմն է: Ո՞վ ասաց, թե սա Գոշենն է:

— Լուսաբացին մի մարդ հանդիպեցի: Նա այդպես ասաց, երբ ես պատրաստվում էի մտնել անտառ՝ սովորականի նման քնելու: Նա ասաց, թե որտեղ ճանապարհորդ հատվում են, ես պետք է աջ թերվեմ և հինգ մղոն անցնելուց հետո կիասնեմ Գոշեն:

— Հավանաբար հարբած է եղել: Նա բոլորովին սխալ է ասել:

— Դե, վարվել է հարբածի պես, բայց այդ մասին խոսելն այժմ միտք չունի: Պետք է շարունակեմ ճանապարհս: Մինչև լուսաբացը պետք է հասնեմ Գոշեն:

— Մի բոլե սպասիր, քիչ ուտելու բան տամ: Գուցե դրա կարիքն ունենաս:

Նա մի քիչ ուտելիք տվեց ու ասաց.

— Ասա ինձ, երբ կովերը նստած են լինում, ինչպե՞ս են վեր կենում. նախ ետևի ոտքերի վրա՞ են բարձրանում, թե՞ առջևի:

— Ետևի, տիկին:

— Իսկ ձիե՞րը:

— Առջևի, տիկին:

Ծառերի ո՞ր կողմի վրա է մամուռն աճում:

— Հյուսիսային:

— Եթե բլրի կողքին տասնինակ կով են արածում, դրանցից քանի՞սն են արածում գլուխները միևնույն ուղղությամբ պահած:

— Բոլորն է նույն ուղղությամբ են պահում, տիկին:

— Հիմա հավատում եմ, որ գյուղական վայրում ես ապրել: Կարծում էի, թե գուցե նորից ես փորձում ինձ խարել, ի՞նչ է խսկական անունդ:

— Զորջ Պիտերս, տիկին:

— Լավ, աշխատիր մտքումդ պահել այդ անունը, Զորջ: Քանի այստեղ ես, չասես, թե անունդ Ալեքսանդր է: Բոնվելիս է չասես, թե Զորջ Ալեքսանդրն ես: Չթե այդ հին զգեստով կանանց աշքին չերևաս: Բավական անհաջող ես աղջկա դեր կատարում, բայց գուցե տղամարդկանց կարողանաս խարել: Աստված թեզ հետ, որդիս: Երբ ուզում ես ասեղի մեջ թել անցկացնել, թելը անշարժ մի՛ բռնիր ու ասեղը մի՛ մոտեցրու թելին. ասեղն անշարժ

պահիր ու թելը մտցրու անցքով: Կանայք մեծ մասամբ այդպես են անում, բայց տղամարդիկ՝ հակառակը: Երբ առնետի կամ որևէ բանի վրա իր ես զցում, մի քիչ ձգվիր, կանգնիր ոտքերիդ մատներին, ձեռքդ դիր գլխիդ, հնարավորին չափ անճարակ ձևով, և այնպես արա, որ վեց-յոթ ոտնաչափ հարվածդ վրիպի, առնետից հեռու դիպի: Նետիր թևդ ամբողջ երկարությամբ պարզած, այնպես որ կարծես առանցք կա, որի շուրջը դառնում է ամբողջ թևը: Աղջկներն այդպես են զցում և ոչ թե դաստակի ու արմունկի շարժումով, ինչպես տղաները: Հիշիր, որ երբ մի աղջիկ փորձում է բան պահել իր գոգում, ծնկները հեռացնում է իրարից, չի խփում իրար, ինչպես դու արեցիր, երբ կապարի կտորը բռնեցիր: Ես քո տղա լինելը նկատեցի դեռ ավելի առաջ, երբ ասելի մեջ թել էիր անցկացնում, իսկ մյուս բաները դիտմամբ անել տվեցի, որպեսզի լիկ համոզվեմ: Վյժմ վազիր քո հորեղբոր մոտ, Սառա Մերի Ուիլյամս Չորջ Ալեքսանդր Պիտերս: Իսկ եթե նեղության մեջ ընկնես, տեղյակ պահիր միսիս Չուլթիդ Լոֆթասին, այսինքն՝ ինձ, և ես կանեմ այն ամենը, ինչ կարող եմ, քեզ նեղությունից դուրս բերելու համար: Մինչև Գոշեն երբեք գետափինյա ճանապարհից դուրս չգաս և եթե երբեւ փախչես, քեզ հետ կոշիկ ու գուլպա վեցրու: Ճանապարհը քարքարում է, և ես կարծում եմ, որ ոտքերիդ բանը բուրդ կինի, մինչև հասնես Գոշեն:

Սուս հիսուն յարդ ես քայլեցի գետափին ի վեր, ապա ետ դարձա, կրկնապատկելով իմ ոտնահետքերը և վազեցի այն վայրը, ուր պահել էի մակույկս, այդ տնից բավական հեռու, ներքեւում: Ցատկեցի մակույկիս մեջ և շտապ հեռացա: Թիավարեցի հոսանքին հակառակ ուղղությամբ այնքան, մինչև հասա կղզու վերին ծայրը և սկսեցի կտրել-անցնել գետը: Հանեցի գլխարկս. այլս չեմ ուզում աչքերս քողարկել: Երբ հասա գետի մեջտեղը, լսեցի ժամացույցի զարկերի ծայնը: Կանգ առա ականջ դնելու: Զայնը ջրի վրա թույլ էր, բայց պարզ էր լսվում. ժամը տասնմեկն էր: Երբ հասա կղզու վերին ծայրը, կանգ չառա հանգստանալու, թեև ուժասպաս էի եղել: Վազեցի անտառ, որտեղ իմ նախկին ապաստարանն էր, և բարձր, չոր տեղում մի լավ խարույկ վառեցի: Ապա ցատկեցի մակույկի մեջ և ամբողջ ուժով շտապեցի դեպի մեր նոր ապաստարնաը, որը մեկնեկես մղոն ներքու էր: Դուրս եկա գետափ, անտառով քարձրացա թուրը, հասա մեր քարանձավը: Զիմն այնտեղ, գետնին պառկած՝ խորը քնել էր: Արթնացրի ու ասացի:

— Վեր կաց գնանք, Զիմ: Ոչ մի րոպե չպետք է կորցնել: Մեզ որոնում են:

Զիմը ոչ մի հարց չտվեց, ոչ մի բառ չարտասանեց, բայց հաջորդ կես ժամվա աշխատանքի եղանակը ցույց էր տալիս, թե որքան է վախեցել: Շուտով մեր ամբողջ ունեցվածն արդեն լաստի վրա էր, և մենք պատրաստ էինք դուրս գալ թաքստոցից՝ ուռենիներով ծածկված խորչիկից: Ամենից առաջ հանգցրինք քարանձավի կրակը, որից հետո նույնիսկ մոմ չվառեցինք:

Ես մակույկով ափից քիչ հեռացա դիտումներ կատարելու: Եթե գետի վրա այլ նավակ լիներ, միևնույն է, չեմ կարող տեսնել, որպեսի այդ խավար ժամին միայն աստղերի լույսով լավ տեսնել հնարավոր չեմ: Դուրս բերինք լաստը, ափի ստվերով սահեցինք և մեռելային մեջ, առանց մի բառ ասելու, անցանք կղզու ներքին ծայրը:

## Գլուխ տասներկուերորդ

Պետք է գիշերվա ժամը մեկը լիներ, երբ վերջապես կղզին թողեցինք հյուսիսում մեր ետևում, բայց թվում էր, թե լաստը շատ դանդաղ է գնում: Եթե նավակ պատահեր, կնստեհնք մեր մակույկը և կթիավարեհնք դեպի Իլինոյսի ափը: Բայց լավ էր, որ նավակ շանդիպեցինք, թե չէ մենք մոռացել էինք մակույկի մեջ դնել հրացան, ձկորսական կարթ կամ ուտելիք: Մենք առանց այն է շատ էինք քրտնել և չէինք կարող ամեն ինչի մասին մտածել: Իհարկե, խելոք չէինք վարվել, որ ամեն ինչ լաստի վրա էինք դրել:

Եթե մարդիկ գնային կղզի՝ Ջիմին որոնելու, հավանորեն կգտնեին իմ պատրաստած խարույկը և ամբողջ գիշերը կապասեին, որ Ջիմը զա այնտեղ: Այդ ձևով նրանք մեզնից հեռու կլինեին, իսկ եթե իմ սարրած խարույկը չխարեր նրանց, ապա դրա համար ես հանցավոր չեմ. նրանց մողորեցնելու համար այդ խաղը կարողացածիս չափ լավ էի խաղացել:

Երբ լուսանալու առաջին նշույները երևացին, մենք Իլինոյսի ափին, գետի մեծ ոլորանում, լաստը կապեցինք մի ցամաքալեզվից, կացնով կտրեցինք կաղամախու ճյուղերը և դրանցով ծածկեցինք լաստը, որն այնպես էր երևում, կարծես ափին ծածկված խոռոչ լիներ: Ցամաքալեզուն ավազաթումք էր, որտեղ աճում էր կաղամախի անտառ՝ խիտ, ինչպես ցարանի ատամները:

Միսուրիի ափին բարձրանում էին լեռներ, իսկ Իլինոյսի կողմը ծածկված էր խիտ անտառով, և նեղուցն այստեղ Միսուրիի ափից ցած էր: Այնպես որ մենք չէինք վախենում, թե որևէ մեկը մեզ կհանդիպի: Ամբողջ օրը մնացինք այնտեղ և դիտում էինք լաստեր ու շոգենավեր, որ Միսուրիի ափերի մոտ իջնում էին ջրի հոսանքն ի վար: Նայում էինք, թե ինչպես են հոսանքի դեմ պայքարում գետն ի վեր շարժվող այդ մեծ շոգենավերը: Ես Ջիմին հաղորդեցի այն ամբողջ զրույցը, որ ժամերով ունեցա անծանոթ կող հետ: Ջիմն ասաց, որ դա պետք է խելքը գլխին կին եղած լինի, և եթե անձամբ հետևեր մեզ, ապա չէր նստի ու նայի ճամբարային խարույկին: «Ոչ, սըր, շուն կրերի իր հետ»: — «Լավ, — ասացի ես, — ինչո՞ւ չէր կարող ամուսնուն ասել, որ շուն բերի իր հետ»:

Ջիմն ասաց, թե ինքը գրագ կգա, որ կինն այդ մասին մտածած կլիներ, երբ մարդիկ պատրաստ լինեին ճանապարհ ընկնելու, և իր կարծիքով նրանք քաղաք են գնացել շուն ճարելու, ժամանակ են կորցրել, այլապես մենք չէինք լինի այստեղ, այս ցամաքալեզվի վրա, քաղաքից տասնվեց-տասնյոթ մրոն ներքև: Ոչ, անկասկած, նորից կրնկնեհնք այդ հին քաղաքը: Իսկ ես ասացի. «Կարևոր չէ, թե ինչ պատճառներով նրանք չկարողացան մեզ բռնել. կարևորն այն է, որ չեն բռնել»:

Երբ սկսեց մթնել, գուխներս դուրս հանեցինք թփուտների տակից ու նայեցինք վեր, վար, մեր առջև և ոչինչ չտեսանք: Ջիմը լաստի վրայից մի քանի տախտակ վերցրեց, մի փոքրիկ հաճելի հյուղակ պատրաստեց, որպեսզի կիզիչ արևի, ինչպես և անձրևի ժամանակ պատսպարվեհնք, մեր իրերն ել չթրջվեն: Ջիմը տախտակե հատակ ել շինեց՝ լաստից մեկ ոտնաչափ բարձր, այնպես որ այժմ մեր վերմակներին և մյուս իրերին այլևս չէին հասնի շոգենավերի առաջացրած ալիքները: Հյուղակի մեջտեղը հինգ-վեց ոտնաչափ խորությամբ պատրաստեցինք կավաշերտ, շրջանակի մեջ առանք, որպեսզի նավը իր տեղում մնա: Դա նրա համար էր, որ վատ և ցուրտ եղանակին կրակ անեհնք: Հյուղակից կրակը չէր երևում: Մենք պատրաստեցինք նաև ավելորդ թիակ, որովհետև եղածներից մեկնումեկը թիավարելիս կարող էր մի բանի դեմ առնել կամ այլ պատճառով ջարդվել: Պատրաստեցինք և կեռանման մի ձող, որ դրանից կախեհնք հին լապտերը: Այդպես է

կարգը. պետք է լապտերը վառել, եթե գետի հոսանքն ի վար շոգենավ է անցնում: Թե չէ տակով կան: Բայց գետով բարձրացող նավերի համար լապտեր վառել պետք չէր, բացի այն դեպքերից, եթե նկատեինք, որ դրանք կարող են մեզ դիպչել. գետի մակարդակը դեռ բավական բարձր էր, ափի շատ ցածրադիր մասերը դեռ ջրի տակ էին, այնպես որ դեպի վեր շարժվող նավերը միշտ չէ, որ նավուղիով էին գնում. ընտրում էին ավելի խոր տեղեր:

Այս երկրորդ գիշերը մենք նավարկեցինք յոթ-ութ ժամ, եթե հոսանքի արագությունը ժամում չորս մղոնից ավելի էր: Մենք ծովականում ու խոսում, երբեմն էլ լողանում էինք՝ մեր քունք փախցնելու համար: Ի՞նչ փառահետ բան է նավարկել խաղաղ գետում՝ պառկած մեջքի վրա և հայացքը հառած աստղերին: Չէինք ուզում նույնիսկ բարձր խոսել, ոչ էլ հաճախ էինք ծիծաղում, միայն երբեմն, այն էլ ցածրաձայն: Ընդհանրապես եղանակը բավական լավն էր, և մեզ ոչինչ չպատահեց այդ գիշեր, ոչ էլ երկրորդ կամ հաջորդ գիշեր:

Ամեն գիշեր մենք անցնում էինք քաղաքների մոտով, որոնցից մի քանիսը փոփած էին հեռվում բլուրների լանջերին: Ոչինչ չէինք կարող տեսնել, բացի լույսերի շողջողուն ածուներից: Հինգերորդ գիշերն անցանք Մեն-Լուիի առջևունք: Դա կարծես մի ամբողջ լուսավորված աշխարհ էր: Սանկտ-Պետերբուրգում ասում էին, որ Մեն-Լուիսում քանակական հազար մարդ է ապրում, բայց ես չէի հավատում, մինչև այդ խաղաղ գիշերը չտեսա լույսերի զարմանալի տարածությունը: Ոչ մի ձայն չէր լսվում, բոլոր մարդիկ քնած էին:

Այժմ ամեն գիշեր մոտավորապես ժամը տասին ես ափ էի դուրս զալիս, մտնում փոքրիկ մի գյուղ, տասը-տասնինգ ցենտով գնում այուր, ապուխտ կամ որևէ այլ ուտելիք: Երբեմն թոցնում էի մի հավ, որը հանգիստ չէր թառում, և տանում էի հետո: Հայրս միշտ ասում էր. «Երբ առիթ լինի, վերցրու հավը, որովհետև եթե քեզ պետք չէ այն, հեշտությամբ կարող ես գտնել մեկին, որին պետք կլինի, և բարի գործը երբեք չի մոռացվի»: Ես երբեք չտեսա, որ հայրս ինքը հավ չուզենար, բայց և այնպես սովորաբար այդպես էր ասում:

Առավոտները, լուսադեմին մտնում էի բանջարանոցները և «փոխարինաբար» վերցնում ձմերուկ, սեխ, դդում, կիսահաս եզրապտացրեն կամ նման մի բան: Հայրս միշտ ասում էր, թե վատ չէ փոխարինաբար բան վերցնելը, եթե մտադիր ես հետազայում վերադարձնել: Բայց այրին ասում էր, որ դա ոչ այլ ինչ է, բան գողության մեղմ ձևը և ոչ մի օրինավոր մարդ այդախի բան չի անի: Ըստ Զիմի, այրին էլ մասամբ իրավացի էր, հայրս էլ: Ուստի մեզ համար ամենալավն այն կլիներ, որ ցուցակից հանեինք փոխարինաբար վերցվող բաներից երկու-երեքը և դրանք այլևս չերենինք, իսկ մյուս բաներ բերելը նրա կարծիքով վնասակար չէր: Եվ մենք մի ամբողջ գիշեր, գետն ի վար նավարկելով, խոսեցինք այդ մասին, աշխատելով որոշել, թե ինչը դուրս թողնեինք՝ ձմերո՞ւկը, սե՞խը, կանտալո՞ւպը, որոշեցինք և որոշեցինք դուրս թողնել վայրի ինձորն ու փյունիկյան սալորը: Մինչև այս եզրակացության գալը այնքան լավ չէինք զգում մեզ, բայց այժմ շատ ավելի թեթևացած էինք: Ես էլ ուրախ էի խնդրի այդպես լուծման համար, որովհետև վայրի խնձորներն այնքան էլ լավ չեն, իսկ փյունիկյան սալորը հազիկ երկու-երեք ամսում հասներ:

Երբեմն սպանում էինք ծովային որևէ թռչուն, որն առավոտյան շատ կանուխ էր արթնանում կամ երեկոյան շուտ էր թառում: Ընդհանրապես մենք բավական լավ էինք ապրում:

Սեն-Լուիից ներքև հինգերորդ գիշերը ուժեղ փոթորիկ բարձրացավ: Որոտ էր, կայծակ: Անձրևը թափվում էր հեղեղի պես: Մենք մտանք լաստի վրա սարքած հյուղակը, թողնելով, որ լաստն ինքը տնօրինի իր ընթացքը: Երբ կայծակը փայլատակեց, մեր առջև բացեց լայնահուն, ուղիղ գետը, որի երկու կողմերից բարձրանում էին զահավեժ ժայռեր: Հանկարծ ես բացականչեցի.

— Հեյ, Զիմ, այն կո՞ղմը նայիր:

Երևաց մի շոգենավ, որ զարնվել էր ժայռերին: Հոսանքը մեզ տանում էր այն կողմը: Կայծակի փայլատակումից ավելի պարզ էր երևում: Նավը կողքի էր թերվել, և վերին տախտակամածի մի մասը ջրից բարձր էր: Երբ կայծակը կրկնվում էր, պարզ տեսնում էինք ծիսներույգների ամեն մի փոքրիկ ուղղալար, ինչպես և մեծ զանգի կողքին դրված մի աթոռ և այս աթոռի թիկունքից կախած մի հին, անճոռնի գլխարկ:

Գիշերը փոթորկալից էր, ամեն ինչ այնքան խորհրդավոր, և ես զգում էի այն, ինչ կզգար որևէ այլ տղա, տեսնելով խորտակված, գետի մեջտեղում այդպես ողբալի տեսքով ընկած ու լրված մի նավ: Ուզում էի բարձրանալ և մի փոքր հետախուզել, տեսնել, թե ինչ կա այնտեղ:

— Բարձրանանք նավը, Զիմ, — ասացի ես:

Զիմն սկզբում դեմ էր: Նա առարկեց.

— Ես չեմ ուզում խորտակված նավի վրա հիմարություններ անել. այստեղ էլ մեզ համար վատ չէ: Ավելի լավ է հեռու մնանք, ինչպես ասում է լավ գիրքը. թող դա իր տեղը մնա: Գուցեն վրան պահակ կա:

— Տատիդ է պահակը, — ասացի ես: — Այնտեղ պահպանելու բան չկա, բացի նավաստիների սենյակից ու լոցմանի խցիկից: Կարծում ես, որևէ մեկը վտանգի կենթարկի իր կյանքը այդ սենյակի ու խցիկի համար, երբ ամեն րոպե դրանք կարող են ջարդվել ու ջրի հետ գնալ:

Զիմը դրան ոչինչ չէր կարող ասել, նույնիսկ չփորձեց:

— Բացի այդ, — ասացի ես, — մենք կարող ենք նավապետի սենյակից փոխարինաբար վերցնել որոշ բան, որ արժե ունենալ: Միզար անպայման կինի՝ հատը հինգ ցենտ արժեն, կանիսիկ: Նավապետները միշտ հարուստ են լինում, ամիսը վաթսուն դոլար են ստանում, և իմացիր, որ նրանք բոլորովին կանգ չեն առնում զնի առջև, բավական է որ մի բան նրանց դուր գա: Գրպանդ մոմ դիր, Զիմ, մինչև նավը չխուզարկեն, չեմ հանգստանա: Ի՞նչ ես կարծում, մոռն Սոյերը երբեմն ձեռքից բաց կթողնե՞ր այսպիսի մի առիթ: Երբեք բաց չէր թողնի: Նա այդ կանվաներ արկած, ահա թե ինչ, և կրածրանար խորտակված նավը, թեկուզ դա նրա վերջին գործունեությունը լիներ: Եվ մի՛թե նա դրա մեջ չէր մտցնի իր նորածնությունները, ինչպես նա կզարզացներ այդ արշավանքը: Ոչ ավել, ոչ պակաս, Զրիստոփոր Կոլումբոսը հայտնաբերում է երկնային թագավորությունը: Ի՞նչ լավ կիներ, եթե մոռն Սոյերն այստեղ լիներ:

Զիմը մի քիչ քրթմնջաց, բայց վերջիվերջո տեղի տվեց: Նա ասաց, որ մենք պետք է հնարավորության չափ չխոսենք, խոսելիս կ՝ շատ ցածր: Կայծակը ճիշտ ժամանակին նորից ցույց տվեց մեզ խորտակված նավը, մենք մոտեցանք տախտակամածի աջակողմյան բեռնաբարձին ու լաստը կապեցինք դրանից:

Այստեղ նավի տախտակամածը բարձր էր: Մենք մթության մեջ դրա կողքով մի կերպ սողալով անցանք դեպի ծախ եզրը, նավաստիների սենյակը: Մեր ճանապարհը գգուշորեն շոշափում էինք ոտքերով և ձեռքներս տարածում դուրս, պաշտպանվելով ճախարակներից, որովհետև այնքան մութ էր, որ ոչինչ չէր երևում: Շուտով գտանք լուսամուտը և բարձրացանք: Հաջորդ քայլը մեզ հսկուեց նավապետի դռանը, որը բաց էր և ահա նավաստիների սրահի միջով հեռվում նկատեցինք լույս և միևնույն վայրկյանին թվաց, թե լուս ենք խուլ ձայներ:

Զիմը շշուկով ասաց, թե իրեն շատ վատ է զգում, և ավելի լավ է հեռանանք այստեղից: Ես ասացի. «զավ», և պատրաստվում էինք վերադառնալ լաստը, բայց հենց այդ պահին լսեցի ինչ-որ ձայն. մենքը ողբածայն աղերսում էր.

— Այս, տղե՛րք, մի՛ արեք այդ բանը, երդվում եմ, ոչ ոքի չեմ ասի:

Մի այլ ձայն բավական բարձրածայն պատասխանեց:

— Ստում ես, Զիմ Թըրներ: Դու շատ անգամ ես այդպես վարվել: Միշտ ուզում ես, որ քո բաժինն ավելի լինի, և միշտ ստացել ես, որովհետև երդվել ես, որ եթե չստանաս, կհայտնես: Այլևս բավական է: Դու ամենաստոր, ամենադավաճան շունն ես այս երկրում:

Այդ ժամանակ Զիմն արդեն վերադարձել էր լաստ: Ես հետաքրքրությունից ճարում էի և ինքս ինձ ասացի, որ եթե այժմ իմ տեղը թում Սոյերը լիներ, չէր նահանջի: Ես կ չպիտի նահանջեմ, պետք է տեսնեմ, թե ինչ է կատարվելու այստեղ: Փոքրիկ, մութ միջանցքով շորեթաթաթ սողացի առաջ: Իմ և նավաստիների սրահի միջև մնաց միայն մի նավասենյակ: Ես տեսա մի մարդ հատակին փոված, ձեռքերն ու ոտքերը կապած: Նրա մոտ կանգնած էին երկու մարդ, որոնցից մեկի ձեռքին կար լապտեր, իսկ մյուսի ձեռքին՝ ատրճանակ: Վերջինս ատրճանակն ուղղել էր հատակին ընկած մարդու ճակատին և ասում էր.

— Ուզում եմ և պետք է վերջացնեմ քո հաշիվը, ստո՞ր արարած:

Հատակին ընկած մարդը կուչ եկած խնդրում էր.

— Այս, Բիլ, այդպիսի բան մի՛ արա: Ես երբեք ոչ ոքչ չեմ հայտնի...

Ամեն անգամ, երբ նա արտասանում էր այդ բառերը, լապտերը բռնած մարդը ծիծառում էր ու պատասխանում.

— Ճիշտ է, չես հայտնի. կյանքումդ ավելի ճիշտ բան երբեք չես արել, կարելի է երաշխավորել, — և ապա ասաց, — յսո՞ւմ ես, թե ինչպես է աղերսում, իսկ եթե մենք սրան այս օրը չգցեինք, չկապուտեինք, սա երկուսիս էլ կսպաներ: Եվ հանուն ինչի՞: Ոչ մի բանի: Միայն նրա համար, որ մենք մեր իրավունքներն ենք պաշտպանում: Բայց հիմա արդեն ենթադրում եմ, որ դու այլևս ոչ ոքի չես սպաննա, Զիմ Թըրներ: Մի կողմ դիր ատրճանակդ, Բիլ:

Բիլն ասաց.

— Ոչ, Զեյք Փաքարդ, ես կողմնակից եմ սրան սպանելուն. մի՛թե դրան արժանի չէ, մի՛թե սա նույն ձևով չսպանեց ձերուկ Հեթֆիլդին:

— Բայց չեմ ուզում, որ սպանված լինի, դրա համար ես պատճառներ ունեմ:

— Օրինյա՛լ լինի քո սիրտը այդ բարի բառերի համար, Զե՛յր Փաքարդ: Երբեք չեմ մոռանա քեզ, բանի դեռ կենդանի եմ, — ասաց հատակին ընկած մարդը մի տեսակ լացակումած:

Փաքարդն ուշադրություն չդարձրեց նրա ասածին. լապտերը կախեց մեխից, մթության մեջ շարժվեց այն կողմը, ուր ես էի գտնվում, և նշան արեց Բիլին, որ զա իր մոտ: Ես խեցգետնի նման կարողացածիս չափ արագ, կողքանց շարժվեցի մոտ երկու յարդ, բայց նավն այնպես էր թերվել, որ չկարողացա ժամանակին մի կողմ քաշվել: Որպեսզի նրանք ինձ շղիպչեն, և ես չքոնվեի, սողոսկեցի վերին նավախուցը: Մարդը մթության մեջ խարիսխելով շարժվեց առաջ, և երբ Փաքարդը հասավ այդ նավախուցը, ասաց.

— Այստե՛ղ, այստե՛ղ արի:

Եվ նա մտավ ներս: Նրա հետևից եկավ և Բիլը: Բայց մինչև նրանց գալը ես վերին մահճակալի վրա էի, սեղմած անկյունում, և շատ էի զդում գալուս համար: Նրանք կանգնեցին այնտեղ, ձեռքերը մահճակալի եզրին դրած, և սկսեցին խոսել: Ես նրանց չեի կարողանում տեսնել, բայց կարող էի ասել, թե որտեղ են կանգնած, որովհետև վիսկի էին խմում, և նրանցից սպիրտի հոտ էր փշում: Ուրախ էի, որ վիսկի չեի խմել, բայց դա շատ նշանակություն չուներ. այդ պահին ես գրեթե չեի շնչում, և նրանք հոտ չեին առնի: Ես անշափ վախեցած էի: Բացի այդ, ոչ ոք չի կարող այդպիսի մի խոսակցություն լսելուց հետո շնչել: Նրանք խոսում էին ցածրաձայն ու լուրջ: Բիլն ուզում էր սպանել Թըրներին.

— Սա ասում էր, թե կիայտնի, և կիայտնի: Եթե այժմ մենք երկուսս էլ մեր բաժինները տանք, նշանակություն չունի աղմուկից ու այն վերաբերմունքից հետո, որ մենք ցույց տվեցինք: Սա կդառնա պետության գործակալը: Դու ինձ լսիր: Ես գտնում եմ, որ մենք պետք է վերջ տանք նրա տանջանքներին:

— Ես էլ, — ասաց Փաքարդը շատ հանգիստ եղանակով:

— Չգիտեմ ինձ կմեղադրես թե չէ, բայց ես կարծում էի, որ չես ուզում: Լավ, ուրեմն, շատ լավ: Գնանք վերջացնենք դրա հաշիվը:

— Սպասիր մի բովե, ես իմ խոսքը դեռ չեմ ասել: Ինձ լսիր: Գնդակահարելը լավ է, բայց ավելի հանգիստ միջոցներ կան, եթե այդ պետք է անել: Ասած այն է, որ իմաստ չունի վազել կախաղանի օղակի ետևից, երբ կարելի է որոշումդ ի կատար ածել այլ ձևով, որը նույնքան լավ է և միաժամանակ քեզ վտանգի չի ենթարկի: Ճիշտ չէ:

— Անպայման: Բայց ինչպե՞ս:

— Դե, իմ մտածածն այս է: Կիսուզարկենք մեր շուրջը, կիավարենք խցիկներում մնացած իրերը, կզնանք ափ և կթաքցնենք այդ ապրանքը: Ապա կսպասենք: Կարծում եմ, որ երկու ժամից ավելի չի անցնի, երբ այս խորտակվող նավը մասերի կրածանվի և կտորները ջրի ընթացքով կզնան ներքև: Հասկան՝ մ ես: Զիմն է կիսեղդվի: ոչ ոքի չեն մեղադրի դրա համար, բացի իրենից: Իմ կարծիքով դա շատ ավելի լավ է, քան սպանելը: Ես կողմնակից չեմ մարդ սպանելուն, երբ կարելի է գործը այլ ձևով կատարել: Սպանելը լավ բան չէ, ոչ էլ բարոյական տեսակետից է ճիշտ: Իրավացի չե՞մ:

— Այո, ընդունում եմ, որ իրավացի ես: Բայց ենթադրենք, թե նավը մասերի չքածանվեց, ու ջուրը այն չտարավ: Այդ դեպքում ի՞նչ ենք անելու:

— Լավ, կարող ենք երկու ժամ սպասել ու տեսնել, չե՞նք կարող:

— Ծատ լավ, ուրեմն գնանք:

Նրանք գնացին, ես էի սառը քրտնքի մեջ կորած դուրս թռա և խարիսափելով շարժվեցի առաջ: Ամենուրեք խավար էր, խավար, ինչպես սև ձյուլքը: Ես մի տեսակ խռպոտ շշուկով կանչեցի՝ «Զի՞մ», և նա, անմիջապես կանգնելով կողքիս, արձագանքեց մի տեսակ հեծեծանքով: Ես ասացի նրան.

— Ծո՛ւտ, Զի՞մ, հիմարության կամ ախուվախի ժամանակ չէ. մարդասպանների խումբ կա նավակում: Եթե մենք չգտնենք նրանց մակույկը և բաց չթողնենք, որ գետը տանի, այնպես, որ այս մարդիկ չկարողանան նավից դուրս գալ, նրանցից մեկը կորած է: Իսկ եթե գտնենք նավակը, բոլորի բանն է բուրդ կլինի, որովհետև շերիֆը նրանց կրոնի: Ծո՛ւտ, շտապի՞ր: Ես նավակը կորոնեմ ձախ կողմում, իսկ դո՞ւ աշ: Ակսիր լաստի կողքից և...

— Ախ, աստված իմ, աստված իմ: Լա՞ստը: Այլս լաստ չկա: Կապը կտրվել է, և գնացել է: Իսկ մենք մնացինք այստեղ:

## Գլուխ տասներեքերորդ

Այդ որ լսեցի, շունչս կտրվեց: Քիչ մնաց ուշաթափի լինեի: Փակվել խորտակվող նավում, այդ մարդասպան խմբի կողքին: Հուզվելու ժամանակ չկար: Պետք է գտնեինք նրանց մակույկը, ձեռք բերեինք հենց մեզ համար: Լողալով ու դողդողալով զաղտագողի անցանք նավի աջ կողմը: Ծատ դանդաղ էինք շարժվում: Մինչև հասանք նաևի հետնամասը, մեզ թվաց, թե մի շաբաթ է անցել: Մակույկի ոչ մի հետք: Զիմն ասաց, թե այլս չի կարող առաջ շարժվել. այնքան է վախեցել, որ հազիվ թե ուժ մնացած լինի: Բայց ես ասացի. «Արի, եթե մնանք այստեղ, մեր վիճակը վաս կլինի»: Ծարունակեցինք թաքուն շարժվել առաջ: Սկսեցինք որոնել նավաստիների սենյակի հետնամասը և գտանք, ապա պատից կառչելով, կախված շարժվելով փեղկից փեղկ, գնացինք դեպի լուսամուտը: Ուրիշ ելք չկար. լուսամուտի ներքին եզրը ջրի տակ էր: Երբ բավական մոտեցանք դռանը, երևաց մակույկը: Մթության մեջ հազիվ նկատեցի: Ինչքան ուրախացա: Եվս մի վայրկյան, և ես կլինեի այնտեղ, բայց հենց այդ պահին դուռը բացվեց: Մարդկանցից մեկը դուրս ցցեց գլուխը, ինձնից ընդամենը երկու ոտնաշափ հեռու: Թվաց, թե հաշիվս վերջացել է, բայց նորից ներս քաշվեց ու ասաց.

— Այդ անիծված լապտերը հեռու տար, Բիլ, այնպես, որ չերևա:

Սա ինչ-որ բաներով լցված մի պարկ օցեց մակույկի մեջ և ապա ինքն էլ իջավ ու նստեց: Դա Փաքարդն էր: Ապա դուրս եկավ Բիլն ու նույնպես նստեց նավակի մեջ: Փակարդը ցածրաձայն ասաց.

— Ամեն ինչ պատրաստ է, շարժվենք:

Ես այնքան էի թուլացել, որ հազիվ էի ինձ պահում փեղկից կախված: Բայց այդ պահին Բիլն ասաց.

— Սպասիր, խուզարկեցի՞ր նրան:

— Ոչ, իսկ դո՞ւ:

— Ոչ: Ուրեմն՝ նրա բաժինը դեռ իր մոտ է:

— Լավ, գնանք ներս. ի՞նչ միտք ունի այս հին շորերը վերցնել, իսկ փողը նրա մոտ թողնել:

— Ասա, նա չի՝ կասկածի, թե ինչ մտադրություն ունենք:

— Գուցես կասկածի: Բայց ինչ է լինի, պետք է վերցնենք փողը: Արի:

Նրանք դուրս եկան մակույկից ու մտան ներս:

Դուռը ուժգին փակվեց, քանի որ նավը թերքած էր մի կողքի, և կես վայրկյան չանցած արդեն մակույկում էի: Իմ ետևից նավակի մեջ ընկավ և Զիմը: Ես հանեցի դանակս, կտրեցի պարանը, և մենք շարժվեցինք:

Մենք ոչ մի թիակի ձեռք չտվեցինք, ոչ էլ խոսում կամ շշնջում էինք իրար հետ: Վախիենում էինք նույնիսկ ազատ շնչել: Մեռելային լոռության մեջ արագ սահելով ջրի երեսին, հեռանում էինք: Անցանք նավի քթամասից ու հետնամասից: Քիչ հետո արդեն հարյուր յարդ իջել էինք խորտակված նավից ներքև: Այն ամբողջովին թաղվեց մթության մեջ: Ոչ մի բան այլևս չէր երևում: Մենք փրկված էինք, ես գիտեի:

Երբ երեք-չորս հարյուր յարդ իջել էինք, մի վայրկյան նավաստիների սենյակի դռան առջև նկատեցինք լապտերը, ինչպես փորդիկ մի կայծ: Դրանից հասկացանք, որ այդ սրիկաները, կորցրած լինելով իրենց մակույկը, սկսում էին հասկանալ, որ այժմ իրենց տագնապը Զիմ Շըրների տագնապից պակաս չէ:

Այնուհետև Զիմը գործի դրեց թիերք, և շտապեցինք հասնել մեր լաստին: Այժմ առաջին անգամ ինձ սկսեց անհանգստացնել այդ մարդկանց վիճակը: Մինչև այդ, երևի ժամանակ չկար դրա համար: Մտածեցի, թե որքան սարսափելի է, նույնիսկ մարդասպանների համար, ընկնել այդ վիճակի մեջ: Ինքս ինձ ասացի, իսկ եթե մի օր ինքս մարդասպան դառնամ, այդ դեպքում նման վիճակը որքա՞ն դուր կգա ինձ: Զիմին ասացի.

Հենց որ առաջին լույսը տեսնենք, ափ դուրս կգանք դրանից հարյուր յարդ վեր կամ վար, այնպիսի տեղում, որ հարմար լինի քեզ և մակույկը թաքցնելու համար: Իսկ ես կգնամ, մի միջոց կգտնեմ, մի մարդ կճարեմ, որ գնա և ազատի նրանց իրենց անտանելի վիճակից, այնպես որ հետո հարկ եղած դեպքում հնարավոր լինի կախել:

Բայց մտադրությունս անհաջողության մատնվեց. շուտով փոթորիկը վերսկսվեց և այս անգամ ավելի ուժգին, քան առաջ: Անձրևը թափում էր, ոչ մի լույս չէր երևում. ըստ երևույթին, բոլորը քնած էին: Մենք լրիվ արագությամբ պանում էինք գետն ի վար, միշտ հետևելով, թե լույս չի՝ երևում, ինչպես և որոնում էինք մեր լաստը: Անձրևը երկար ժամանակ տեղադրուց հետո դադարեց, բայց ամպերը չէին ցրվում: Իսկ կայծակը դեռևս փայլատակում էր, ճայթում էր որոտը: Շուտով, երբ փայլակը նորից շողաց, մեր առջևում երևաց ծփացող սև մի բան: Շտապեցինք հասնել:

Դա մեր լաստն էր: Որքան ուրախացանք, երբ նորից բարձրացանք այստեղ: Այժմ մենք հեռվում, ներքեւում, ափի աջ կողմի վրա նկատեցինք մի լույս: Ես ասացի, որ անմիջապես գնալու եմ այնտեղ: Մակույկը կիսով չափ լցված էր ավարով, որ գողերի այդ խումբը հավաքել էր խորտակված նավից: Մենք այդ իրերը տեղափոխեցինք լաստի վրա, կիտեցինք, և ես Զիմին ասացի, որ մի քիչ էլ իշնենք և երբ իր հաշվով արդեն երկու մղոն անցնենք, վառի լապտերը և վառած պահի մինչև իմ գալը: Ես թիավարելով լողացի լույսի

կողմը: Մինչ թիավարում էի ներքև, դեպի լույսը, բլրի վրա երևացին ևս երեք կամ չորս լույս: Դա զյուղ էր: Դադարեցի թիավարելը իմ նշանակետից քիչ վերև: Ինձ առաջ էր տանում հոսանքը: Անցնելով լույսի մոտով, նկատեցի, որ դա մի լապտեր է գետանավի վրա: Վրագ թիավարելով պտտվեցի նավի շուրջը, որոնելով պահակին, մտածելով, թե որտեղ քնած կլինի: Շուտով նրան գտա խարսխագերանին թառած, գլուխը ծնկներին կախած: Չեռքս երկու-երեք անգամ թեթևակի հպեցի նրա ուսին ու սկսեցի լաց լինել:

Նա մի տեսակ ցնցվելով շարժվեց տեղից, բայց երբ տեսավ, որ այնտեղ միայն ես եմ, լավ հորանջեց ու ձգվեց.

— Հը, ի՞նչ կա: Լաց մի՛ լինիր, տղա: Ի՞նչ է պատահել:

Ես ասացի.

— Հայրս, մայրս, քույրս և...

Նորից սկսեցի հենկեկալ: Նա թե.

— Է՛հ, հանգստացիր, այդպես ողբալու կարիք չկա. ո՞ւմ զլիսին փորձանք չի գալիս: Ամեն ինչ լավ կվերջանա: Ի՞նչ է պատահել:

— Նրանք... նրանք... դուք այս նավի պահա՞կն եք:

— Այո, — ասաց նա բավական ինքնազոհ եղանակով, — ես նավապետն եմ, ինչպես և տերը, նավապետի օգնականը, ուղեցույց նավատարը, պահակը, ավագ նավաստին և երեսմն է ուղևորն ու նավաբեռը: Ես այնպես հարուստ չեմ, ինչպես Զիմ Հորնբեքը, և չեմ կարող սրա-նրա համար այնպես առատաձեռն լինել, ինչպես նա, և աջ ու ձախ շաղ տալ դրամը, ինչպես նա: Բայց ես շատ անգամ եմ ասել, որ իմ տեղը չէի փոխի նրա հետ, որովհետև ասում եմ՝ նավաստու կյանքը ինձ համար է ստեղծված, իսկ ապրել քաղաքից երկու մղոն հեռու, որտեղ ոչ մի հետաքրքրություն չկա, և ոչ ոքի հետ չես կարող խոսել, բոլորովին իմաստ չունի նույնիսկ ի սեր նրա ամբողջ ունեցվածքի: Ասում եմ...

Ես ընդիատեցի նրան.

— Նրանք ահավոր վիճակում են և...

— Ովքե՞ր:

— Հայրս, մայրս, քույրս, միսս Հուքերը, և եթե դուք վերցնեք ձեր գետանավն ու բարձրանաք այնտեղ...

— Բարձրանամ ո՞ւր: Որտե՞ղ են նրանք:

— Խորտակված նավի վրա:

— Ի՞նչ խորտակված նավ:

— Մի խորտակված նավ կա:

— Ի՞նչ, խոսքը «Վալթեր Սրոթի» մասի՞ն է:

— Այո:

— Աստված իմ, ի՞նչ են անում այնտեղ:

— Նրանք դիտմամբ չեն գնացել այնտեղ:

— Իհարկե, դիտմամբ գնացած չէին լինի: Աստված իմ, նրանց փրկություն չկա, եթե հնարավորին չափ շուտ այնտեղից դուրս չըերվեն: Բայց նրանք ինչպե՞ս ընկան այդ կացության մեջ:

— Շատ հասարակ: Միսս Հուրերը զալիս էր քաղաք այցելության...

— Այո, Բուլթս-Լենդինգ, շարունակիր:

— Նա այցելության է զալիս Բուլթս-Լենդինգ և իրիկնարեմին ձիաքարշ լաստանավով ճանապարհ ընկնում նեզք սպասուին հետ, նպատակ ունենալով ամբողջ գիշերն անցկացնել միսս... (ինչ էր անունը, չեմ կարողանում հիշել) իր քարեկամուին տանը: Նրանք կորցնում են դեկի թիակը և օրորվելով ու պտտվելով, գետի հոսանքով մոտ երկու մղոն իջնում են դեպի խորտակված նավը: Լաստանավը, նեգրուիին և ձիերը բոլորը կորչում են, բայց միսս Հուրերը կառչում է մի բանի ու բարձրանում խորտակված նավը:

Մայրամուտից մեկ ժամ հետո մենք մեր լաստանավով իջնում էինք գետով: Այնպես մուլթն էր, որ խորտակված նավը չնկատեցինք մինչև դեմ չառանք: Բոլորս ազատվեցինք բացի Բիլ Վիփլից: Ի՞նչ սքանչելի տղա էր Բիլ Վիփլը: Երանի նրա փոխարեն ես խեղղվեի ազնիվ խոսք:

— Աստված իմ, կյանքումս ավելի վատ բան չի լսել:

— Հետո ի՞նչ արեցիք:

— Դե, զոռացինք, զոռացինք, բայց գետն այնտեղ այնքան լայն է, որ ոչ որ չսեց մեր ձայնը: Հայրս ասաց, որ մեզնից մեկը մի կերպ ափ պետք է դուրս զա և օգնություն խնդրի: Ես միակն էի, որ կարող էր լողալ: Նետվեցի ջուրը և լողացի դեպի ափ: Միսս Հուրերն ասաց, որ եթե չկարողանամ շուտ օգնություն հասցնել, զամ այստեղ և որոնեմ իմ հորեղբորը. նա ամեն ինչ կանի: Ես ցամաք դուրս եկա մոտ մեկ մղոն ներքս և մինչև հիմա թափառում եմ, փորձում գտնել մեկին, որ մի բան անի, բայց բոլորն ասում են. «Ինչպե՞ս գիշերով և այսքան ուժեղ հոսանքի ժամանակ»: Իմաստ շունի, զնա մի շոգենավ գտիր: Այժմ եթե զնաս և...»

— Աստված վկա, ես կզնայի, և, իհարկե, պետք է զնալ, բայց, չմեղադրեք. չգիտեմ, թե ով կվճարի դրա համար: Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ է հայրդ...

— Դրա համար մի՛ անհանգստացեք: Միսս Հուրերը հատկապես ասաց, որ իր հորեղբայր Հորնբերը...

— Ա՛յ քեզ բան, մի՛ դա նրա հորեղբայրն է: Այժմ լսիր, վազիր դեպի այն լույսը, ապա դարձիր դեպի արևմուտը և մեկ քառորդ մղոն չանցած՝ կիասնես մի գինետուն: Այնտեղ կասես, որ քեզ շտապ հասցնեն Զիմ Հորնբերի մոտ, ինչքան որ պետք է, նա կվճարի: Դե, դես-դեն չթափառես. նա կուզենա այդ լուրը մանրամասնորեն իմանալ: Ասա, որ ինքը դեռ քաղաք չհասած ես նրա եղբոր աղջկան կազատեմ: Դե, հավաքիր ուժերդ, իսկ ես զնամ այս անկյունը, արթնացնեմ իմ մեխանիկին:

Ես վազեցի դեպի լույսը, բայց հենց որ նա շուտ եկավ անկյունը, վերադարձա ու նստեցի իմ մակույկը, խաղաղ ջրերով մոտ վեց հարյուր յարդ թիավարեցի գետն ի վեր և թաքնվեցի լաստանավերի միջև, որովհետև չէի կարող ինձ հանգիստ զգալ, մինչև չտեսնեի գետանավի ճանապարհվելը: Բայց թե ինձ սփոփկված էի զգում այդ ավազակների փրկության, իմ կրած նեղությունների համար. չէ՞ որ թիս մարդիկ այդպես կվարվեին:

Ուզում էի, որ այրին իմանար այդ մասին: Կարծում էի, թե նա կհպարտանար ինձանով, որ օգնել եմ այս սրիկաներին: Դե, այրին և բարի մարդիկ ամենից շատ հետաքրքրվում են այդպիսի սրիկա ու խարդախ անձնավորությունների օգնելով:

Ինչ որ է, շուտով նկատեցի խորտակվող նավը, որը մթամած ու թափածու գետի հոսանքով ցած էր իջնում: Մի տեսակ սառը դող անցավ մարմնովս, և ես սկսեցի թիավարել դեպի շոգենավը: Նավը շատ խոր էր իջել ջրի մեջ, և ես խկույն հասկացա, որ հազիվ թե այնտեղ կենդանի մարդ լինի: “Պոտովեցի շոգենավի շուրջը, մի քանի անգամ բղավեցի, բայց ոչ մի պատասխան: Ամենուրեք տիրում էր մեռելային լուլթյուն: Ինձ տիրեցրեց մարդասպանների նման վախճանը, բայց ոչ շատ, որովհետև նրանք ոչ որի չեն կարեկցում, ես էլ կարող էի այդ մարդկանց չկարեկցել:

Ահա և գետանավը: Ես շեղակի շարժվեցի դեպի վար, գետի մեջտեղը, և երբ, իմ կարծիքով, հեռու էի շոգենավի տեսադաշտից, դադարեցի թիավարելուց և նայեցի ես: Տեսա, թե ինչպես գետանավը պտտվում է խորտակված նավի շուրջը, որոնելով միսս Հուրերի մարմինը. չէ՞ որ նավապետը գիտեր, որ նրա հորեղբայր Հոյնրերը կպահանջեր այն: Շուտով գետանավը դադարեց որոնելուց ու շարժվեց գետափ, և ես էլ անցա իմ գործին. գետի ընթացքով արագ ցած սուրացի:

Կարծում եմ, որ երկար ժամանակ անցավ, մինչև երևաց Զիմի լույսը, իսկ երևալիս էլ թվաց, թե հազարավոր մղոններով հեռու է: Երբ տեղ հասա, արևելքում երկինքն սկսեց մի փոքր շառագունել: Շարժվեցինք դեպի մի կղզի, թաքցրինք լաստը, ջրասույզ արինք մակույկը, ապա շուրջ եկանք ու մեռելային քուն մտանք:

## Գլուխ տասնչորսերորդ

Շուտով, երբ արթնացանք, աչքի անցկացրինք այն իրերը, որ նավից կողոպտել էին ավագակները: Վյուտեղ գտանք կոշիկներ, վերմակներ, հազուստեղեն, զանազան այլ բաներ, շատ գրքեր, մի հեռադիտակ, երեք արկղիկ սիգար: Մենք մեր լյանքում երբեք այսքան հարուստ չենք եղել: Սիզարները բարձրորակ էին: Կեսօրից հետո ամբողջ ժամանակ անտառում պառկած՝ խոսում էինք: Ես գրքեր էի կարդում: Մի խոսքով, լավ ժամանակ անցկացրինք: Զիմին պատմեցի այն ամենը, ինչ տեղի էր ունեցել խորտակված նավի ներսում, գետանավի վրա և ասացի, թե հենց դրանք էլ կոչվում են արկածներ: Բայց նա ասաց, որ այլևս արկածներ չի ուզում: Ասաց, որ երբ ես բարձրացել եմ նավաստիների հարկարամինը, իսկ ինքը սողալով ես է գնացել, տեսել է, որ լաստն այլևս չկա: Քիչ է մնացել՝ վախից մեռնի: Վյու պահին մտածել է, որ իր հաշիվը փակված է, քանի որ ամեն դեպքում էլ կորած է: Մտածել է այսպես. եթե իրեն չփրկեն, կիսեղդիվ, իսկ եթե որևէ մեկը փրկի, կուղարկի տուն, որպեսզի ստանա իր վարձատրությունը: Վյուիհետև միսս Ուտոթսոնը, անկասկած, նրան կվաճառեր հարավում: Եվ Զիմն իրավացի էր: Նա գրեթե միշտ էլ իրավացի էր: Նրա նեզրական գլուխը շատ լավ էր գործում:

Զիմի համար երկար-երկար կարդում էի թագավորների, դուքսերի, կոմսերի մասին, թե որքան շրեղ են հազնված նրանք, ինչպիսի նորածն ու գեղեցիկ զգեստներ ունեն և մեկը մյուսին կոչում են «ձերդ գերազանցություն», «ձերդ ողորմություն» և այլն, փոխանակ

ասելու «միստր»: Զիմն աչքերը չում լսում էր. նրան հետաքրքրում էր այդ բոլորը: Ի վերջո ասաց.

— Ես չգիտեի, որ դրանք այնքան շատ են, հազիվ թե ես դրանցից որևէ մեկի մասին լսած լինեմ, բացի Սողոմոն թագավորից:<sup>[16]</sup> Այս, թագավորներ տեսել եմ նաև խաղաթղթերի վրա: Որքա՞ն է ստանում թագավորը:

— Ստանո՞ւմ, — ասացի ես, — եթե ուզենա, ամիսը հազար դոլար կստանա: Թագավորները կարող են իրենց ուզածի չափ վերցնել: Ամեն ինչի տերն ու տնօրերնը նրանք են:

— Լավ է, չէ՞ իսկ ի՞նչ են անում դրանք, Հեր:

— Ի՞նչ տարօրինակ բան ես հարցնում: Ոչինչ չեն անում: Նստում են զահին և ուրիշ ոչինչ:

— Չէ հա, իսկապե՞ս այդպես է:

— Այս, իհարկե: Նրանք միայն նստում են զահին, բացի այն դեպքերից, երբ պատերազմ է ծագում: Նման դեպքերում գնում են կովկելու: Մնացած ժամանակը ծուլորեն բազմում են զահին կամ որսի գնում, կամ... սը՞ն ես աղմուկը:

Մենք դուրս թռանք և նայեցինք մեր շուրջը, բայց ոչինչ չկար, բացի շոգենավի անվի ձայնից, որ գալիս էր հեռվից, հրվանդանի կողմից: Վերադարձանք մեր տեղը:

— Այս, — ասացի ես, — իսկ այլ դեպքերում, երբ ծանձրանում են, սկսում են պատլամենտում աղմկել, իսկ եթե անդամներն այնպես չեն գործում, ինչպես թագավորներն են ցանկանում, բոլորի վիզը թոցնում են: Բայց մեծ մասամբ ժամանակն անցկացնում են հարեմում:

— Որտեղ են անցկացնո՞ւմ:

— Հարեմում:

— Ի՞նչ բան է հարեմը:

— Այն տունը, որտեղ թագավորը պահում է իր կանանց: Զգիտե՞ս հարեմների մասին: Սողոմոնն էլ հարեմ է ունեցել, մոտ մեկ միլիոն կին:

— Այս, զիտեմ: Մոռացել էի: Հարեմը, կարծում եմ, զիշերօթիկի նման մի բան է: Այնտեղ երևի միշտ աղմուկ աղաղակ կլսես, ինչպես մանկական սենյակներում: Պետք է ենթադրել, որ այդ կանայք շատ էլ կրվում են, և դա մեծացնում է աղմուկը: Եվ դեռ ասում են, թե Սողոմոնը երբսէ ապրած ամենահմաստուն մարդն է եղել: Ես դրան բոլորովին չեմ հավատում: Ահա թե ինչո՞ւ: Կարո՞՞ն է իմաստուն մարդը ցանկանալ միշտ ապրել այդպիսի խառնաշփոթության մեջ: Ոչ, իսկապես չի կարող: Իմաստուն մարդը կկառուցի կաթսայի գործարան և երբ ցանկանա հանգստանալ, կարող է փակել այն:

— Բայց ինչ էլ լինի, նա ամենախմաստուն մարդն է եղել: Այդ բանն ինձ այրին ինքն է ասել:

— Ինձ համար մեկ է, թե ինչ է ասել այրին: Սողոմոնն իմաստուն մարդ չի եղել: Նա երբեմն շատ հիմարաբար է վարվել: Գիտե՞ս այն երեխայի մասին, որին ուզել է երկու կես անել, — ասաց Զիմը:

— Այո, այրին այդ մասին ամեն ինչ պատմել է:

— Լավ, ուրեմն, մի՞թե դա աշխարհի ամենատիմար առաջարկը չէ: Մի բոպե մտածիր այդ առաջարկության մասին: Ասենք, թե դու կանանցից մեկն ես, այս կոճղը՝ մյուս կինը, ես է՝ Սողոմոն իմաստունը, իսկ այս դոլարն է՝ երեխան: Զեզնից յուրաքանչյուրն ասում է, թե դա իրենն է: Ի՞նչ անեմ: Չպե՞տք է հարցնեմ հարևաններին, թե ումն է, և ամբողջությամբ տամ իսկական տիրոջը: Խելոք մարդն այդպես կանի: Բայց այստեղ այնպես չէ: Վերցնում եմ դոլարը և երկու կես անում, կեսը տալիս քեզ, կեսը՝ կոճղին: Սողոմոնն այդպես էր ուզում վարվել երեխայի հետ: Այժմ ուզում եմ հարցնել քեզ. ի՞նչ արժեք ունի այդ դոլարի կտրած կեսը, դրանով ոչինչ առնել չես կարող: Եվ ի՞նչ օգուտ կես երեխայից: Ես միլիոն հատ կեսի էլ ոչինչ չեմ տա:

— Բայց թող այդ, Զիմ, դու բոլորովին հեռացար նյութից, աստված վկա, հազար մղոնով հեռացար:

— Ո՞վ, ե՞ս: Գործիդ գնա: Ինձ քո պատմածը չի հետաքրքրում: Երբ ես մի բան եմ տեսնում, զիտեմ. այնտեղ իմաստ կա՛, թե՛ ոչ, իսկ քո պատմածի մեջ իմաստ չկա: Նրանց վեճը կես երեխայի մասին չի եղել, այլ ամբողջ երեխայի, իսկ եթե մեկը մտածում է, թե ինքը կարող է մեկ երեխայի համար ծագած վեճը հանդարտեցնել կես երեխայով, ապա նա բոլորովին զուրկ է ուղեղից: Այլևս ինձ մոտ չխոսես քո Սողոմոնի մասին, Հեք, ես նրան առանց քեզ էլ ճանաչում եմ:

— Բայց ես ասում եմ, որ դու չես հասկանում հարցի էությունը:

— Կորչի հարցը: Ես զիտեմ այն, ինչ զիտեմ: Իմ կարծիքով իսկական հարցն այդ չէ. այն ավելի հեռու է և ավելի խոր: Հարցն այն է, թե ինչ սովորություններ է ունեցել Սողոմոնը: Օրինակի համար վերցրու մի մարդու, որն ընդամենն ունի մեկ կամ երկու երեխա: Մի՞թե այդպիսի մարդն իր երեխային կզցի: Ոչ, իհարկե: Նա այդպիսի բան թույլ չի տա: Նա զիտե իր զավակների արթեքը: Բայց վերցրու մի մարդու, որն ունի հինգ միլիոն երեխա, որոնք վազում են տան շորսրովորը. իհարկե, այդ դեպքում դրությունն այլ է: Նա նույնպիսի պատրաստակամությամբ երկու կես կանի մի երեխայի, ինչպես կվիսեր մի կատու: Երեխաները շատ են: Մեկ-երկուսով ավելի կամ պակաս լինելը Սողոմոնի համար նշանակություն չուներ:

Ես այսպիսի նեզր տեսած չկայի: Եթե մի զաղափար մի անգամ նրա գլուխը մտներ, այլևս հնարավոր չէր դուրս քերել: Իմ երբսէ տեսած նեզրերից ոչ մեկը Սողոմոնին այդպես վաստ չէր վերաբերվել: Ուստի ես խոսակցությունը շուրջ տվեցի այլ թագավորների վրա և մի կողմ թողի Սողոմոնին: Պատմեցի Լյուդովիկոս Տասնվեցերորդի<sup>17</sup> մասին, որի գլուխը վաղուց կտրել էին Ֆրանսիայում, ինչպես և նրա փոքրիկ որդու՝ Դոֆֆինի<sup>18</sup> մասին, որը թագավոր էր դառնալու, բայց նրան էլ էին բանտարկել: Ասում էին, թե նա այնտեղ էլ մերել է:

— Խեղճ փոքրիկ տղա:

— Բայց մի քանիսն ասում են, թե դուրս է եկել այնտեղից ու փախել իբր թե Ամերիկա:

— Այդ լավ է: Բայց նրա համար շատ տիտուր կլինի. այստեղ թագավորներ չկան, այնպես չէ՛, Հեք:

— Ոչ, չկան:

- Ուրեմն՝ նրա համար պաշտոն էլ չկա: Ի՞նչ է անելու:
- Զգիտեմ: Դրանցից մի քանիսը ոստիկանատանն են ծառայում, ոմանք էլ ֆրանսերեն խոսել են սովորեցնում:
- Ինչպե՞ս թե, Հեք, մի՞շեն ֆրանսիացիները մեզ պես չեն խոսում:
- Ոչ, Զիմ: Նրանց ասածից ոչ մի բառ չեն հասկանա, ոչ մի բառ:
- Այ թե ինչ: «Պատճա՞ռը»:
- Զգիտեմ, բայց այդպես է: Ես նրանց լիոտոցի մասին կարդացել եմ մի գրքում: Ասենք թե մեկը մոտենում է քեզ ու ասում. «Պառլե՛ վու ֆրանսե՛»: Ի՞նչ կհասկանաս դրանից:
- Ոչինչ չեմ հասկանա: Կվերցնեմ այդ բառերը և կտամ նրա գլխին: Այդպես կանեմ, եթե նա սպիտակամորթ չինի: Ոչ մի նեգրի թույլ չէի տա, որ ինձ այդպիսի բան ասեր:
- Դու էլ բան ասացիր. ին քեզ չե՞ն հայինյի: Դա միայն նշանակում է. «Ֆրանսերեն խոս՞ւմ ես»:
- Այդ դեպքում ինչո՞ւ մարդավարի չի հարցնում:
- Ինչո՞ւ, շատ մարդավարի է հարցնում. ֆրանսիացիք այդպես են ասում:
- Դա խոսելու ծիծաղելի ձև է, և ես այլևս չեմ ուզում այդ մասին լսել: Դրա մեջ իմաստ չկա:
- Լսիր, Զիմ, կատուն մեզ նման խոսո՞ւմ է:
- Ոչ, չի էլ կարող:
- Կովը խոսո՞ւմ է:
- Ոչ էլ կովը:
- Կատուն կարո՞ղ է կովի նման խոսել, կամ կովը կատվի նման:
- Ոչ:
- Բնական է և ճիշտ, որ նրանք տարբեր ձևով խոսեն, այնպես չէ:
- Իհարկե:
- Իսկ բնական չէ՝ և ճիշտ, որ կատուն ու կովը մեզ նման չխոսեն:
- Շատ բնական:
- Լավ: Ուրեմն՝ ինչո՞ւ բնական և ճիշտ չէ, որ ֆրանսիացին իր խոսակցությամբ մեզնից տարբերվի: «Պատասխանիր»:
- Կատուն մա՞րդ է, Հեք:
- Ոչ:
- Ուրեմն՝ կատուն կովի կամ մարդու նման խոսելու հետ գործ չունի: Իսկ ֆրանսիացին մա՞րդ է:
- Այո:
- Լավ, ուրեմն, էլ ինչո՞ւ մարդու նման չի խոսում:

Ես տեսա, որ անօգուտ է բառերը շոայլելը. հնարավոր չէ նեզրին համոզել: Ուստի վերջ տվի այդ խոսակցությանը:

## Գլուխ տասնինգերորդ

Մեր հաշվով երեք գիշեր էլ պիտի գնայինք Կեյրո հասնելու համար, որը Իլինոյսի նահանգի սահմանագլխին էր, ուր Օհայո գետը թափվում է Միսսուրիի մեջ: Մեր նպատակն էլ հենց դա էր: Այստեղ կվաճառենք լաստը, կնատեինք մի նաև, Օհայո գետով կրաքարանայինք ազատ նահանգները և այլևս վախենալու բան չէինք ունենա:

Հաջորդ գիշերը մեզ վրա մառախուղ իջավ, և մենք որոշեցինք շարժվել դեպի թփուտներով ծածկված մի կղզի: Մառախուղի մեջ լողալ հարմար չէր: Բայց երբ ես, պարանը բռնած, մակույկը թիավարեցի առաջ՝ լաստը մի բանի ամրացնելու, տեսա, որ փոքրիկ ծառերից բացի, ոչինչ չկա: Պարանը փաթաթեցի գետափնյա մի ծառի, բայց ջրի հոսանքն այդտեղ այնքան ուժեղ էր, որ լաստը թափով եկավ, ծառն արմատահան արեց ու շարունակեց իր ընթացքը: Ես նկատեցի, որ մառախուղն ավելի ու ավելի է թանձրանում, և դա այնպես ընկճեց ու վախեցրեց ինձ, որ կես րոպէ չկարողացա տեղիցս շարժվել, իսկ լաստն այդ միջոցին արդեն անհետացել էր իմ տեսողությունից: Հնարավոր չէր տեսնել քսան յարդ հեռու: Ես ցատկեցի մակույկի մեջ, վազեցի հետնակողմը, վերցրի թիակը և սկսեցի առաջ մղել մակույկը, բայց սա տեղից չշարժվեց: Այնքան էի շտապել, որ պարանը չէի արձակել: Վեր կացա, փոքրեցի արձակել, բայց շատ էի հուզված, և ձեռքերս է այնպես էին դողում, որ հազիվ թե կարողանայի մի բան անել:

Հենց որ մակույկը շարժվեց, տաքացած ու բուրն եռանդով շտապեցի հասնել լաստին, թիավարելով կղզյակի երկարությամբ: Սկզբում ամեն ինչ լավ էր ընթանում: Կղզյակը հազիվ վաթսուն յարդ երկարություն ունենար, և երբ հասա նրա ծայրին, ընկա սպիտակ, թանձր մառախուղի մեջ: Ես իմ որտեղ լինելը նույնքան էի պատկերացնում, որբան մեռած մարդը:

Մտածեցի, որ թիավարելը իմաստ չունի. գիտեի, որ կամ ափի ծանծաղուտը կընկնեմ, կամ կղզի, կամ նման մի տեղ: Ուստի որոշեցի հանգիստ նատել. թող հոսանքը տանի ինձ ուր ուզում է: Բայց շատ դժվար է նման պահերին ձեռքերը ծալել ու նստել: Ես ձայն էի տալիս և ապա ականջ դնում: Հեռվից, ներքևից, զալիս էր հազիվ լսելի մի ձայն, և դա ինձ սիրտ էր տալիս: Նետի նման պացա այդ կողմը, ականջներս սրած սպասեցի, որ նորից լսեմ այն ձայնը: Նորից լսեցի մի կանչ, և պարզվեց, որ բոլորովին էլ այն կողմը չեմ գնում, այլ դեպի աջ եմ շարժվում: Ուղղություն վերցրի դեպի ձախ: Նորից ոչ մի արդյունքի չհասա, որովհետև մեկ այս, մեկ այն կողմ էի անընդհատ պտույտ գործում, իսկ ձայնն ամբողջ ժամանակ ուղիղ շարժվում էր առաջ:

Ուզում էի, որ այդ հիմարը գիսի ընկներ, թիթեղի կտորի շարունակ հարվածեր, բայց նա, իհարկե, այդպես չարեց, և ինձ շփոթեցնում էին այդ կանչերի միջև ընկած լուռ պահերը: Այնուամենայնիվ, անընդհատ շարժվում էի առաջ և հանկարծ հեռվից լսեցի մի կանչ: Արդեն բոլորովին շփոթվեցի: Դա կամ մի ուրիշ ձայն էր, կամ է ես էի շուր եկել:

Թիակը թողեցի: Նորից լսեցի այդ կանչը, որը դեռ իմ թիկունքում էր, միայն թե տարբեր տեղերից էր հնչում: Ես շարունակում էի պատասխանել: Շուտով այդ ձայնը նորից իմ

առջևում էր: Մտածեցի, որ հոսանքից մակույկի քիթը շուր է եկել դեպի ցած: Ուրեմն, ամեն ինչ կարգին է, եթե միայն այդ գոռացողը Զիմն է և ոչ մի ուրիշ լաստավար: Մառախուղում ոչինչ չէի կարող ասել ձայնի մասին, որովհետև ոչ մի բան իր բնական տեսքով չի երևում, ոչ ել ձայնն է բնական հնչում: Կանչերը շարունակվում էին, և մեկ րոպե հետո ես հասա զահավեժ մի ափ, որտեղ վեր էին ձգվում մեծ-մեծ ծառերի մառախլապատ ուրվականներ: Հոսանքն ինձ քշեց դեպի ձախ, տարավ նավարկությունը դժվարացնող, զրի միջից ցցված բազմաթիվ ծառերի արանքը, որոնք, բախվելով սրբնաց հոսանքին, շառաչում էին:

Մեկ-երկու վայրկյան հետո նորից ընկա սպիտակ մառախուղի մեջ: Նորից նույն խոր լուրջունը: Ես կատարելապես անշարժ նստել էի, ունկնդրելով իմ սրտի բարախյունին և, թվում էր, թե մի անգամ շունչ առնելիս սիրտս հարյուր անգամ բարախում էր:

Ես անմիջապես հասկացա, թե բանը ինչ է և ձեռ քաշեցի այդ ափից: Այդ զարիթափը կղզու մի կողմն էր, իսկ Զիմը գնացած կիհներ մյուս ափից: Դա սովորական փոքրիկ կղզակ չէր, որ հնարավոր լիներ տասը րոպեում թիավարելով հասնել ծայրը: Այստեղ աճում էին իսկական կղզու մեծ-մեծ ծառեր: Հավանորեն դա կունենար հինգ կամ վեց մղոն երկարություն և ավելի քան կես մղոն լայնություն:

Մոտ տասնհինգ րոպե հանգիստ սպասեցի՝ ականջներս սրած: Հոսանքը, իհարկե, ժամում չորս-հինգ մղոն ինձ տանում էր առաջ, բայց դա սովորաբար չես նկատում, ընդհակառակը, այնպես է թվում, թե մակույկն անշարժ կանգնած է ջրում: Եվ երբ ծառի մի փոքրիկ բուն սահում անցնում է աչքի առջևից, չես պատկերացնում, թե ինչպիս արագությամբ ես գնում, բայց պահում ես շունչը և մտածում, թե ինչպես է սլանում ջուրը: Եթե ձեր կարծիքով դա այնքան էլ տիսուր ու սարսափելի չէ, գոնե մեկ անգամ փորձեք և կտեսնեք:

Այնուհետև մոտ կես ժամ մերթընդմերթ գոռում էի: Վերջապես լսեցի հեռվից եկող մի պատասխան ձայն և փորձեցի հետևել դրան, բայց չկարողացա և անմիջապես մտածեցի, որ ընկել եմ կղզակների մի բնի մեջ, որովհետև իմ երկու կողմում էլ աղոտ կերպով նշմարում էի ինչ-որ կղզակներ: Երբեմն ինձ դրանցից բաժանողը մի բարակ ներուց էր լինում: Մի քանիսն էլ, որ չէի նկատել, իրենց գոյությունն օգացնել էին տալիս. լսում էի, թե հոսանքն ինչպես է բախվում ափերին կիտված չոր մացառներին ու աղբին: Ինչ որ է, շուտով այդ կղզակների արանքում շփոթվելով, այլևս կանչեր չէի լսում: Ակգրում փորձեցի որևէ կերպ հետևել ձայներին, բայց դա ավելի անօգուտ էր, քան շարժվող լույսին հետևելը: Ես դեռ չեմ տեսել, որ ձայնն այդպես հանկարծ խորտակվի և այդքան արագ ու հաճախ փոխի իր տեղը:

Չորս-հինգ անգամ ստիպված եղա շուռումուո գալ՝ ափից հեռու մնալու համար, որպեսզի քախվեի կղզիներին: Մտածում էի, թե լաստը պետք է որ հաճախ բախված լինի ափին, այլապես շատ հեռացած կլիներ և լսողության սահմանից դուրս. այն ավելի արագ էր լողում, քան մակույկը:

Ինչ որ է, շուտով ինձ թվաց, թե նորից բաց գետի վրա եմ, բայց ոչ մի տեղից ձայն չէի լսում: Ենթադրում էի, թե Զիմը գուցե բախվել է ջրասույզ ծառերի և իր հաշիվը փակել: Շատ էի հոգնած: Պառկեցի մակույկի մեջ, մտածելով, թե այլևս միտք չունի շարչարվել: Իհարկե, քնել չէի ուզում, բայց աչքերս այնպես էին փակվում, որ դիմադրել չէի կարող: Վճռեցի, որ պետք է կատվի պես մի քիչ քնել:

Բայց իմ հաշվով դա կատվի քուն չէր. երբ արթնացա, մառախուղը ցրվել էր, աստղերը պայծառ շողում էին, և գետի մի մեծ ոլորան պտտեցնում էր մակույկը, առաջ զցելով հետնամասը: Ամենից առաջ զփտեի, թե որտեղ եմ: Ինձ թվաց, թե դա երազ է, իսկ երբ սկսեցի որոշ բաներ վերիիշել, ամեն ինչ այնպես աղոտ էի պատկերացնում, որ դրանք կարծես անցյալ շաբաթ էին կատարվել:

Վյատեղ գետը սարսափելի լայն էր: Ափերը երկու կողմից ծածկված էին բարձր ու խիտ անտառով, որն ինչքան կարելի էր նշմարել աստղերի լույսի տակ, գոյացրել էր հաստատուն մի պատ: Նայեցի հեռուն, գետի հոսանքն ի վար և ջրի մակերեսին նկատեցի մի սև կետ: Հետևեցի այդ կետին և, երբ հասա, տեսա, որ դա երկու գերան էր՝ իրար միացրած: Ապա նկատեցի մի այլ կետ, հետևեցի, ապա մի երրորդը, և այս անգամ չսխալվեցի. դա մեր լաստն էր:

Երբ հասա լաստին, Զիմը նստած էր այնտեղ, գլուխը կախած երկու ծնկների արանքը: Նս քնած էր, աջ թևը հենած դեկաթիակին: Մյուս թիակը ճզմվել, ջարդվել էր, և լաստը ծածկված էր տերևներով, ճյուղերով և ցեխով: Հասկանալի էր, որ դա նույնպես խորդուքորդ ճանապարհ էր անցել:

Կապեցի մակույկը, պառկեցի լաստի վրա, Զիմի քթի տակ, սկսեցի հորանջել, ապա բոունցըներս դեմ արեցի Զիմին, ասելով.

— Հեյ, Զիմ, մի՞թե ես մինչև հիմա քնած եմ եղել: Ինչո՞ւ չես արթնացրել:

— Աստված իմ, այդ դո՞ւ ես, Հեք: Եվ դու չե՞ս մեռել... չե՞ս խեղդվել... վերադարձե՞լ ես: Չեմ հավատում աչքերիս, քաղցրիկս, չեմ հավատում: Թող մի լավ նայեմ քեզ, որդիս, նայեմ քեզ: Ոչ, չես մեռել, վերադարձել ես, ողջ և առողջ, ճիշտ նույն Հեքը, նախկին Հեքը, փա՛ռը աստծո:

— Ի՞նչ է պատահել քեզ, Զիմ: Հարբա՞ծ ես:

— Հարբա՞ծ: Մի՞թե հարբած եմ: Մի՞թե ժամանակ էի զտել հարբելու:

— Հապա ի՞նչն է ստիպում քեզ այդպես խելացնոր բաներ ասել:

— Ի՞նչ խելացնոր բան:

— Ի՞նչ: Զասացի՞ր իմ վերադարձի մասին և նման դատարկ բաներ, կարծես թե ես ուրիշ տեղ եմ եղել:

— Հե՛ք, Հե՛ք Ֆինն, նայիր աչքերիս, նայիր աչքերիս: Մի՞թե ուրիշ տեղ չես գնացել:

— Ուրիշ տե՞ղ: Ի՞նչ ես ուզում ասել: Ես ոչ մի տեղ չեմ գնացել: Որտե՞ղ պիտի գնացած լինեի:

— Լսիր, Հեք, այստեղ ինչո՞ր սխալ բան կա: Մի՞թե սա ես եմ, կամ ո՞վ եմ ես, ես այստե՞ղ եմ, կամ որտե՞ղ եմ: Այդ եմ ուզում իմանալ:

— Լավ, կարծում եմ, որ այստեղ ես. դա պարզ է ու հասկանալի, բայց մտածում եմ, որ դու ցնդած, հիմար ծերուկ ես, Զիմ:

— Հիմա՞ր եմ, հիմա՞ր եմ: Լավ, դու իմ այս հարցին պատասխանիր. դու մակույկով շմուեցա՞ր կղզյակին՝ պարանը բռնած, որպեսզի լաստը ծառին կապեիր:

— Ոչ, չեմ կապել: Ի՞նչ կղզյակ: Ես ոչ մի կղզյակ չեմ տեսել:

— Կղզակ չե՞ս տեսել: Ինչպե՞ս թե չես տեսել. մի՞թե պարանը չարձակվեց և լաստը չգնաց ջրի հետ, թեզ թողնելով մակույկի մեջ, մառախուղում:

— Ի՞նչ մառախուղ:

— Մառախուղ, այն մառախուղը, որ ամբողջ գիշերը պատել էր չորս կողմը: Եվ դու չի՞ր գոռում, և մենք շփոթվեցինք կղզակների միջև, մեզնից մեկը կորավ, մյուսին էլ նույնչափ կարելի էր կորած համարել, որովհետև չփառեր, թե ինքը որտեղ է: Եվ ես խճճվեցի այդ բազմաթիվ կղզակների մեջ, սարսափելի ժամեր անցկացրի: Չիշ էր մնում խեղդվեի: Ասա, այդպես չէ՞՛, Հեք, այդպես չէ՞՛: Պատասխանիր:

— Զափազանց անհասկանալի բաներ ես ասում, Ջիմ: Ես ոչ մի մառախուղ չեմ տեսել, ոչ կղզիներ, ոչ էլ նեղություն կամ նման բաներ: Ես նստած եմ եղել այստեղ, խոսել եմ թեզ հետ ամբողջ գիշերը, մինչև դու մի տասը րոպե առաջ քննեցիր, ես էլ, երևի քնել եմ: Դու այդքան շատ չէիր կարող հարբել, ասել կուզի՝ երազ ես տեսել:

— Բայց ինչպե՞ս կարող էի այդ բոլորը տասը րոպեում տեսնել:

— Լավ, թողնենք դա. երազումն ես տեսել, որովհետև այդ ասածներիցդ ոչ մեկը չի պատահել:

— Բայց, Հեք, այդ բոլորն ինձ համար նույնքան պարզ է, որքան...

— Նշանակություն չունի, թե որքան պարզ է, դրանում ոչինչ չկա: Ես լավ գիտեմ, որովհետև ամբողջ ժամանակ թեզ հետ եմ եղել:

Սուս հինգ րոպե Ջիմը ոչինչ չասաց. նա նստած խորհրդածում էր այդ մասին: Ապա ասաց.

— Լավ, այդ դեպքում ընդունում եմ, որ քնել եմ, Հեք, բայց մեռնեմ, եթե դա երբևէ տեսած երազներից ամենածանրը չի եղել: Եվ ես մինչ այդ երբեք այնպիսի երազ չեմ տեսել, որն ինձ այդքան հոգնեցներ:

— Դե, ի՞նչ կա որ. երբեմն ոչ մի բան մարդուն այնպես չի հոգնեցնում, ինչպես երազը: Բայց այս մեկը իմաստուն երազ է: Մեկնաբանինը այդ երազը, Ջիմ:

Ջիմը գործի անցավ և ինձ պատմեց ամբողջը՝ սկզբից մինչև վերջ, ճիշտ այնպես, ինչպես պատահել էր, միայն թե շատ գունազարդեց: Ապա ասաց, որ այժմ պետք է մեկնաբանել, քանի որ այդ երազը ուղարկվել է մեզ որպես նախազգուշացում: Նրա ասելով, առաջին կղզակն այն մարդն է, որը կաշխատի մեզ համար լավ բան անել, բայց հոսանքը մի այլ մարդ է, որը մեզ հետացնում է առաջինից: Գոռողները նախազգուշացումներ են, որ միշտ կգան, իսկ եթե մենք չուզենք նեղություն կրել և հասկանալ դրանք, ապա ձայները մեր գլխին փորձանք կրերեն, փոխանակ մեզ հեռու պահենու: Կղզակների բազմությունը նշանակում է նեղություն: Դա կզա, եթե գործ բռնենք վաս ու ամեն տեսակի ստոր մարդկանց հետ: Բայց եթե մենք մեր գործին հետևենք և ուրիշներին խոսք չդարձնենք ու շրարկացնենք, կշարժվենք առաջ, դուրս կգանք մառախուղից դեպի մեծ, վճիռ գետը, ասել կուզի՝ ազատ նահանգները և այլևս ձախորդության չենք պատահի:

Լաստը բարձրանալուց հետո ամպերը մթնեցրին շրջակայքը, բայց շուտով երկինքը նորից պարզվեց:

— Դե, Զիմ, այդ բոլորը բավական լավ մեկնաբանեցիր, — ասացի ես, — բայց սրա՞նք ինչ են:

Խոսքը վերաբերում էր լաստի վրա թափված տերևներին ու ցեխին, ինչպես և կոտրված թիակին: Այժմ դրանք լավ երևում էին:

Զիմը նայեց այդ թափթափուկներին, նայեց ինձ և ապա՝ նորից թափթափուկներին: Երազի մասին մեր խոսակցությունը այնպես ուժեղ էր տպալորվել նրա գլխում, թվում էր, թե նա անզոր է այն վանել և անմիջապես դրանք փոխարինել փաստերով: Բայց երբ ամեն ինչ հասկացավ, անթարթ, անժպիտ նայեց ինձ ու ասաց:

— Դրանք ի՞նչ բաներ են: Հիմա կասեմ: Երբ ես հոգնեցի թիավարելուց ու կանչելուց և վայր ընկա քնելու, սիրտս այնպես էր կոտրված քեզ կորցնելու համար: Ես չեմ մտածում, թե ինչ կպատճի ինձ կամ լաստին: Եվ երբ արթնացա ու նորից գտա քեզ ողջ-առողջ, այնքան ուրախացա, որ աչքերս լցվեցին արցունքներով, ուզեցի ծնկաշոք համբուրել ուոքերդ: Իսկ դու ուզում ես միայն ստել ու զժվեցնել ծեր Զիմին: Վյդ ամբողջն աղը է, անպեսք բան. անպեսք են այն մարդիկ, որոնք իրենց ընկերների գլխին աղը են շպրտում և ամաչեցնում նրանց:

Նա կամաց վեր կացավ, քայլեց դեպի վիզվամը, ներս մտավ և այլս ոչինչ չասաց: Բայց դա բավական էր: Վյդ խոսքերից ես ինձ այնպես նվաստացած էի զգում, որ պատրաստ էի գրեթե համբուրելու նրա ոտքերը, միայն թե նա իր ասածը ետ վերցներ:

Մոտ տասնինգ րոպե անցավ, մինչև ես կարողացա կոտրել ինձ, գնալ խոնարհվելու մի նեզքի առջև: Բայց ես դա արեցի և հետազայում երբեք չափսոսացի դրա համար: Վյես ոչ մի ստոր խաղ չխաղացի նրա գլխին, և այդ կատակն է չեմ անի, թե իմանայի, որ նա կվշտանա:

## Գլուխ տասնվեցերորդ

Մենք գրեթե ամբողջ օրը քնեցինք և ճանապարհ ընկանք գիշերը: Մեր առջևից լողում էր երկար մի լաստ, որը աննկատ շարժվում էր, ինչպես թափոր: Լաստի յուրաքանչյուր ծայրին կար չորս երկար, մեծ թի: Պետք է որ այնտեղ լինենին երեսուն մարդուց ոչ պակաս: Լաստի վրա, իրարից բավական հեռու, պատրաստել էին ինչ մեծ վիզվամ, դրանց արանքում վառել բացօթյա խարոյեկ, իսկ լաստի ամեն ծայրին տնկել դրոշակի մի երկար ձող: Դա հզրության ու նորաձևության նշան էր: Արժեր լաստավար լինել այդպիսի մի լաստի վրա:

Հոսանքի հետ գնալով, հասանք մի մեծ ոլորանի: Գիշերն ամպամած էր, տոթ: Գետը շատ լայն էր, և երկու ափերին պատի նման բարձրանում էր խիտ անտառը: Հազիվ թե բացատ լիներ կամ ծառերի միջից լույսի նշույլ երևար: Մենք խոսում էինք Կեյլոյի մասին և հարցնում իրար, թե հասնելիս կիմանա՞նք, որ Կեյլոն դա է: Ես ասում էի, որ այնտեղ ընդամենք տասը տուն կա: Եթե այնպես պատահեր, որ լույսերը վառած չլինեին, ինչպես իմանայինք, թե անցնում ենք ավանի առջևով: Զիմն ասում էր, որ եթե այնտեղ երկու մեծ գետ միանում են իրար, ապա դրանից կիմացվի տեղը: Բայց ես ասացի, գուցե մեզ թվա, թե անցնում ենք կղզու մոտով և նորից գանք հին գետը: Դա անհանգստացրեց Զիմին, ինչպես

և ինձ անենք: Ես ասացի, որ լույս երևալուն պես մակույկով կթիավարեմ ափ, կհայտնեմ, որ հետևից առևտրական լաստանավով զայիս է հայրս և այս գործի մեջ փորձ չունի. ուզում է իմանալ, թե դեռ որքան ճանապարհ է մնում մինչև Կեյրո: Զիմք գտնում եր, որ դա լավ միտք է: Ծխեցինք ու սպասեցինք:

Այժմ ոչինչ չէր մնում անելու, բացի ուշի-ուշով շրջապատը դիտելուց: Պետք է հետևեինք, թե երբ կերևա ավանը, այլապես կանցնեինք մոտով առանց նկատելու: Զիմն ասում էր, թե ինքը միանգամայն վստահ է, որ բաց չենք թողնի ավանը և ինքը կդառնա ազատ մարդ: Իսկ եթե վրիպենք, նորից կընկնի ստրկատիրական նահանգ, և արդեն հավերժ հրաժեշտ ազատությանը: Ամեն բոլոր նա վեր էր ցատկում ու ասում.

— Ահա Կեյրոն:

Բայց սիսապվում էր: Նրա տեսած լույսերը շարժվող կրակներ էին լինում կամ լուսատիտիկներ: Նորից նատում էր տեղը և հսկում, ինչպես առաջ: Զիմն ասաց, որ ինքը հուզվում, տենդային վիճակի մեջ է ընկնում, երբ զգում է, թե որքան մոտ է ազատությունը: Բայց ես ել պակաս չէի հուզվում ու դողում, երբ լսում էի, որովհետև միայն այժմ սկսեցի մտքովս անցկացնել, որ նա իսկապես շուտով ազատ կլինի: Բայց այդ բանում ո՞վ էր մեղավորը: Իհարկե, ես: Զգիտեի, թե ինչպես կամ ինչ ճանապարհով իհինս ազատեմ դրանից: Այդ բանն այնպես է ինձ նեղում, որ դադար չունեի, չէի կարողանում հանգիստ մնալ մի տեղում: Մինչ այդ երբեք ինձ հարց չէի տվել, թե ինչ է իմ արածը: Բայց այդ միտքն ինձնից չէր հեռանում ու ավելի էր այրում հոգիս: Փորձեցի ինքս ինձ համոզել, թե ես մեղավոր չեմ, քանի որ Զիմին ես չեմ փախցրել իր օրինական տիրոջից: Բայց ապարդյուն իհինս ամեն անզամ ըմբռատանում էր իմ դեմ ու ասում. «Դու գիտեիր, որ նա փախցում է հանուն ազատության, կարող էիր թիավարել դեպի ափ և այդ մասին մեկին հայտնել: Եվ դա ճիշտ կլիներ: Դրա համար ել ոչ մի կերպ չէի կարողանում ազատվել այդ մտքերից: Ահա թե որն էր դժվարությունը: Խիդն ասում էր. «Քեզ ի՞նչ էր արել խեղճ միսս Ուոթսոնը, որ դու կարողացար հանգիստ նայել, երբ նրա նեղոր աշքիդ առաջ փախչում էր ու ոչ մի բառ չասացիր: Ի՞նչ էր արել քեզ այդ խեղճ պարավը, որ դու կարողացար այդպես ստորաբար վարվել նրա հետ: Չէ՛ որ նա ամեն կերպ աշխատում էր քո դասը սովորեցնել, բացարում էր, թե ինչպես պետք է վարվել մարդկանց հետ, աշխատում էր ամեն կերպ բարի լինել քո նկատմամբ: Ոչ մի վատ բան չէր արել քեզ»:

Ինձ այնպես նվաստացած ու ողորմելի էի զգում, որ ուզում էի մեռնել: Լաստի վրա անհանգիստ ետ ու առաջ էի քայլում, նախատում ինքս ինձ: Զիմը նույնպես անհանգիստ էր: Մեզնից ոչ մեկը չէր կարողանում հանգիստ նատել: Ամեն անզամ նա պարելով շուր էր զայիս ու ասում. «Ահա Կեյրոն», և այդ բառերը սրտիս միջով անցնում էին ինչպես գնդակ, և ես մտածում էի, եթե դա Կեյրոնն է, ես կմեռնեմ ամոթից:

Մինչ ես ինքս ինձ խորհրդածում էի, Զիմը ինքնիրեն ամբողջ ժամանակ բարձրածայն խոսում էր: Նա ասում էր, թե ինչպես որևէ ազատ նահանգ հասնելիս, իր առաջին գործը կլինի փող ինայել, ոչ մի ցենս չծախսել և երբ բավական փող հավաքի, փրկազնով կազատի կնոջը, որը ստրկուի էր մի ազարակում, ոչ հեռու միսս Ուոթսոնի բնակավայրից: Այնուհետև երկուսով կաշխատեն և ետ կգնեն իրենց երկու երեխաներին: Իսկ եթե տերը չվաճարի նրանց, ապա իրենք կդիմեն մի արդիշիոնիստի, որը և նրանց կզողանա:

Այս խոսակցությունը լսելիս սառչում էի: Նա իր կյանքում երբեք չէր համարձակվել նման բան խոսել: Ահա տեսեք, թե ինչպիսի փոփոխություն էր առաջանում նրա մեջ, երբ

մտածում էր, թե մոտ է իր ազատությանը: Դա նման էր մի հին ասացվածքի. «Նեզրին մեկ մաս տուր, և նա ամբողջ թևը կվերցնի»: Ես մտածում էի, թե ահա ինչ է դուրս գալիս իմ թերեւամտությունից: Աշխա առաջ էր այս նեզրը, որին ես շատ թե թիւ օգնել էի փախչելու: Սա արիանալով ասում էր, թե գողանալու է իր երեխաներին, երեխաներ, որ պատկանում էին մի ուրիշ մարդու, իսկ այդ մարդուն ես նույնիսկ չեմ ճանաչում և նա երբեք ինձ ոչ մի վնաս չեմ տվել:

Ինձ համար ցավախ էր Զիմից նման քան լսել. նրա կողմից դա ստորություն էր: Խիղճա զայրութից ինձ ավելի ուժեղ էր ցնցում, քան երբեմ, մինչև ի վերջը ասացի խղճիս. «Ինձ հանգիստ թող, դեռ ուշ չէ. ինց որ առաջին լույսը նկատեմ, կթիավարեմ ափ ու կհայտնեմ»: Անմիջապես հանգստացա, ինձ զզացի ուրախ ու փետուրի պես թերթ: Իմ ամբողջ տագնապն անհետացավ: Ակսեցի ուշադիր հետևել, թե լույս չի՝ երևում, և ինչ-որ քան էի երգում: Շուտով երևաց մի լույս, և Զիմը գոչեց.

— Մենք փրկվա՞ծ ենք, Հեք, մենք փրկվա՞ծ ենք: Վե՛ր կաց և կրնկի պարիր: Ահա, վերջապես, հին, քարի Կեյրոն: Ես յավ գիտեմ:

Ես ասացի.

— Զիմ, վերցնեմ մակույկը, զնամ տեսնեմ: Գուցե դա չէ:

Նա վեր թռավ տեղից ու պատրաստեց մակույկը, իր հին բաճկոնը փորեց հատակին, որ նստեմ ու թիավար տվեց ինձ: Եվ երբ ես արդեն թիավարելով հեռանում էի, ասաց.

— Շուտով ես ուրախությունից կզռամ և կասեմ, որ այդ բոլորը կատարվեց Հեքի շնորհիվ: Ես ազատ մարդ եմ, և երբեք չեմ ազատվի, եթե Հեքը չիներ: Դա Հեքն է արել: Զիմը քեզ չի մոռանա, Հեք: Զիմի բարեկամներից ամենալավը դու ես, իսկ այժմ միակ բարեկամը:

Ես քրտնաթոր հեռանում էի դեպի ափ, որպեսզի հայտնեի նրա մասին, բայց երբ նա ասաց այդ բառերը, թվաց, թե ամբողջովին զինաթափ եղա: Այժմ դանդաղեցրի ընթացք և որոշակի չգիտեի. լավ էր, որ այդ քայլին էի դիմում, թե՛ ոչ: Երբ հիսուն յարդ հեռացել էի, Զիմն ասաց.

— Ահա, զնում ես, իմ վաղեմի՛ բարեկամ, հավատարիմ Հեք, միակ սպիտակամորթ շենտղմենը, որը հարգում է ծերուկ Զիմին տված խոստումը:

Նրա այդ խոսքերը թուլացրին ինձ: Կարծես հիվանդ լինեի: Բայց ինքս ինձ ասացի. «Պետք է անեմ, չեմ կարող չանել»: Հենց այդ ժամանակ իմ կողմը եկավ մի մակույկ, մեջը՝ հրացանավոր երկու մարդ: Նրանք կանգ առան. ես էլ կանգ առա: Նրանցից մեկն ասաց.

— Այդ ի՞նչ է այնտեղ:

— Լաստ, — ասացի ես:

— Դո՞ւ ել այդ լաստից ես:

— Այո, սըր:

— Այնտեղ մարդիկ կա՞ն:

— Միայն մեկը, սըր:

— Լավ, այս գիշեր այնտեղ վերևում, ոլորանի գլխին հինգ նեզը են փախել: Չո ասած մարդը սև՝ է, թե՛ սպիտակ:

Ես անմիջապես չպատասխանեցի: Փորձեցի որևէ բան ասել, բայց բառերը բերանից դուրս չէին գալիս: Մեկ-երկու վայրկյան ջանացի հավաքել ինքս ինձ և ամեն ինչ ասել, բայց հարկ եղած արիությունը չունեցա: Մի ճագարի լեղի էլ չունեի: Զգում էի, որ ուժասպառ եմ լինում, ուստի հրաժարվեցի զուր շանքերի գործադրումից և ասացի:

— Սպիտակ է:

— Կարծում եմ, պետք է անձամբ գնանք ստուգենք:

— Ես է եմ ուզում, որ գնանք, — ասացի ես, — այնտեղ հայրս է, և զուցե դուք օգնեք ինձ լաստը քաշելու ափ, որտեղ լույսն է: Նա հիվանդ է, ինչպես և մայրս ու Մերի Աննան:

— Այս, սատանան տանի, մենք շտապում ենք, տղա: Բայց կածում եմ, պետք է օգնել: Արի, թիակովդ կառչիր մեր նավակից, և գնանք:

— Ես կառչեցի թիակով, և նրանք էլ կուցան իրենց թիակների վրա: Մեկ-երկու հարվածից հետո ես ասացի.

— Հայրս շատ շնորհակալ կլինի: Ում խնդրեցի, որ մեզ օգնեն, լաստը ափ քաշեն, ուշադրություն չդարձրին և թողին-հետացան, իսկ ինքս մենակ անել չեմ կարող:

— Դժոխային ստորություն է և տարօրինակ: Ասա՛, տղա՛, ի՞նչ է պատահել հորդ:

— Նա... նա... մի առանձին բան չկա:

Նրանք վերջ տվին թիավարելուն: Մինչև լաստը քիչ էր մնացել, երբ նրանցից մեկն ասաց.

— Տղա՛, դու սուտ ես խոսում: Ի՞նչ է պատահել հորդ: Ճիշտ ասա, քեզ համար ավելի լավ է ճիշտն ասես:

— Կասեմ, սըր, կասեմ, ազնիվ խոսք, միայն թե մեզ մի՛ լրեք, խնդրում եմ: Նա... նա... չէ՛ որ դուք կարիք չունեք լաստին մոտենալու, դուք միայն ծայրից քաշեցեք, իսկ պարանը ես կզցեմ ձեզ: Խնդրում եմ, օգնեցեք մեզ:

— Զոն, ե՛տ դարձրու, ե՛տ դարձրու, — ասաց մեկը:

Նրանք ետ դարձան:

— Հեռո՛ւ կաց, տղա՛, քամու ուղղությամբ կանգնիր: Սատանան տանի, վախենում եմ, թե քամին վարակը քշի մեզ վրա: Չո հայրը ծաղկով հիվանդացած կլինի, և դու այդ լավ գիտես: Ինչո՞ւ հենց սկզբից չասացիր: Չլինի՛ թե ուզում ես, որ հիվանդությունը տարածվի:

— Ի՞նչ անեմ, — ասացի ես հեկեկալով, — ձեզնից առաջ ում ասացի, մեզ թողեցին, հեռացան:

— Խե՛նձ տղա: Բայց մեր ասածը ճիշտ է, չէ՞: Մենք ուղղակի ցավում ենք, բայց մենք... լավ, թողնենք այդ, մենք չենք ուզում ծաղկով հիվանդանալ, հասկանո՞ւմ ես: Լսիր, ասեմ, թե ինչ անես: Չփորձես ինքնագույն ափ դուրս գալ. ափին զարնվելով շարդ ու փշուր կլինես: Օրի հոսանքով իջիր մոտ քան մղոն և գետի ձախ կողմում կտեսնես մի ավան: Մինչև տեղ հասնես, լույսը վաղուց բացված կլինի, և երբ օգնություն խնդրես, ասա, որ ձերոնք բոլորը մրսել են ու տենդով հիվանդացել: Նորից չիմարանաս, որպեսզի մարդիկ

կասկածեն, թե քանն ինչ է: Այժմ մենք ուզում ենք քեզ լավություն անել: Դրա համար դու մեզնից հեռացիր մի քան մղոն, լա՞վ, տղա: Այնտեղ, լուսի մոտ ափ դուրս գալը ոչ մի օգուտ չի քերի քեզ. դա անտառանյութերի քակ է, ուրիշ ոչինչ: Չո հայրը հավանորեն թշվառ, դժբախտ մարդ է: Ահա, այս տախտակի վրա կղնեմ քան դոլար ուկեղրամ, և երբ տախտակը լողալով հասնի քեզ, կվերցնես: Ես ինձ նվաստացած եմ զգում, որ ձեզ թողնում եմ, բայց աստված իմ, ծաղկի հետ կատակ անել չի կարելի, դու այդ հասկանո՞ւմ ես:

— Սպասիր, Փարքեր, — ասաց մյուս մարդը, — ահա քան դոլար է իմ կողմից: Ցտեսություն, տղա. արա, ինչպես միստր Փարկերն է ասում, և այդ դեպքում ամեն ինչ լավ կլինի:

— Այդպես է, տղաս, ցտեսություն, ցտեսություն: Եթե որևէ փախած նեզը տեսնես, օգնություն կանչիր և բռնել տուր: Քեզ դրա համար փող կտան:

— Ցտեսություն, սըր, — ասացի ես, — ես ոչ մի փախած նեզքի բաց չեմ թողնի, եթե կարողանամ:

Նրանք հեռացան, և ես բարձրացա մեր լաստը, ինքս ինձ վատ ու նվաստացած զգալով, շատ լավ զիտեի, որ իմ արածը ճիշտ չէ: Միաժամանակ հասկանում էի, որ իմ կողմից զուր եր ճիշտ գործելու փորձեր անելը: Մեկը, որ մանկուց է շեղփում ճշմարիտ ճանապարհից, հետազայում երբեք չես կարող ստիպել. նա չի կարող ուղղվել: Նեղն ընկնելիս հենարան չունի, որ ապավինի իր աշխատանքին: Նա պարտվում է: Այնուհետև մի րոպե մտածելուց հետո ինքս ինձ ասացի. սպասիր, ենթադրենք, թե ճիշտ ես վարվել և Զիմին հանձնել ես նրանց: Արյո՞ք դրանց քեզ ավելի լավ կզգայիր, քան իմաս: Ոչ, պատասխանեցի ինքս ինձ, վատ կզգայի, նույնքան վատ, որքան այժմ: Լավ, ուրեմն, ասացի ես, և ի՞նչ օգուտ ճիշտ գործելուց, երբ ճիշտ գործելը ձանձրայի է այն ժամանակ, երբ սխալը նեղություն չի պատճառում, իսկ հատուցումը նույնն է: Ես կանգնել էի փակուդու առջև, և պատասխան չկար: Մտածեցի, որ դրա համար այլևս չեմ անհանգստանա և այսուհետև միշտ կանեմ այն, ինչ այդ պահին ամենից օգտակարն է:

Մտա մեր վիզվամը: Զիմն այնտեղ չէր: Նայեցի շուրջս և ոչ մի տեղ նրան չգտա: Կանչեցի.

— Զիմ:

— Այստեղ եմ, Հեր: Նրանք արդեն այնքան հեռո՞ւ են, որ մեզ չտեսնեն. կամաց խոսիր:

— Զիմը մտել էր ջուրը, լաստի հետնամասի թիակի տակ: Զրից դուրս միայն քիթն էր երևում: Ասացի, որ նրանք այլևս չեն երևում: Զիմը բարձրացավ լաստի վրա: Նա ասաց.

— Ես լսեցի ձեր ամբողջ խոսակցությունը, սուզվեցի գետի մեջ և պատրաստվում էի լողալով ափ դուրս գալ, եթե նրանք գային մեր լաստը: Երբ գնային, նորից կվերադառնայի: Բայց ինչպես խարեցիր նրանց, Հեր: Ամենասրամիտ ձևով գլուխներս ազատեցիր: Պետք է ասեմ, տղաս, որ դրանով փրկեցիր ծեր Զիմին: Ծեր Զիմը դա չի մոռանա, քաղցրի՞կս:

Ապա խոսեցինք փողից: Բավական լավ եկամուտ էր՝ ամեն մեկիս քան դոլար: Զիմն ասաց, թե այժմ կարող ենք տախտակամածի տոմսեր գնել ու ճանապարհորդել շոգենավով: Փողն այնքան է, որ մեզ կրավականացնի մինչև ազատ նահանգները: Նա ասաց, որ քան մղոնն այնքան հեռու տարածություն չէ լաստի համար, բայց ինքն ուզում էր, որ մենք այժմ արդեն հասած լինեինք այնտեղ:

Լուսադեմին մոտեցանք ափին և կապեցինք լաստը: Զիմն ամեն կերպ աշխատեց այն լավ քողարկել: Ամբողջ օրն զբաղվեց իրերը կարգի բերելով ու կապկալով, որ լաստին հրաժեշտ տանք:

Այդ գիշեր ժամը տասին մենք հեռվում, ոլորանի ձախ կողմում, նկատեցինք ինչ-որ քաղաքի լույսեր:

Ես մակույկով գնացի իմանալու, թե ինչ տեղ է այդ: Շուտով գետի վրա, նավակում գտա մի մարդու, որը փորձում էր կարթով ծուկ բռնել: Մոտեցա ու հարցրի.

— Միստր, դա Կեյրո քաղաքն է:

— Կեյրո՞ն: Ոչ: Խելքդ հո չե՞ս թոցրել:

— Հապա ի՞նչ քաղաք է դա, միստր:

— Թե ուզում ես իմանալ, զնա և իմացիր: Եթե մնաս այստեղ և ինձ ձանձրացնես թեկուզ կես րոպե, ապա կստանաս այն, ինչ ցանկալի չէ քեզ համար:

Վերադարձա լաստը: Զիմը սարսափելի հիասթափվեց, բայց ես ասացի, որ շատ շմտահոգվի: Իմ կարծիքով դրանից հետո Կեյրոն է:

Դեռ լույսը չբացված հասանք մի այլ քաղաք: Ես նորից դուրս եկա, բայց ափին այստեղ քարձը էր և շարունակեցի ճանապարհ: Զիմն ասում էր, որ Կեյրոյի շրջապատում բարձրադիր տեղեր չկան: Ես մոռացել էի: Ցերեկն անցկացնելու համար կանգ առանք մի կղզակի մոտ, որը բավական մոտ էր ափին: Ինչ-որ կասկած անցավ մտքովս: Կասկածում էր և Զիմը: Ես ասացի.

— Գուցե մենք Կեյրոյի առջևով անցել ենք այն գիշերը, երբ մառախուղ էր:

Նա ասաց.

— Այդ մասին չխոսենք, Հեք: Խեղճ նեզոր չի կարող բախտ ունենալ: Ես միշտ մտածել եմ, որ այն բոժոժավոր օձի մաշկը դեռ իր գործը չի տեսել:

— Լավ կլիներ, որ ես օձի մաշկ երբեք տեսած չլինեի, Զիմ, լավ կլիներ, որ դա աչքովս չընկներ:

— Դա քո մեղքը չէ, Հեք. դու չգիտեիր: Դրա համար դու քեզ մի՛ մեղադրիր:

Երբ լուսացավ, ափի մոտ միանգամայն որոշակի երևաց Օհայո գետի վճիռ ջուրը, իսկ դրանից այն կողմ, մեջտեղով հոսում էր Միսսիսիպիի նույն սովորական պղտոր ջուրը: Կեյրոյի հարցը սպառված էր:

Նորից ծանրութեթև արեցինք այդ հարցը: Ափ դուրս գալը ցանկալի չէր, իսկ հոսանքին հակառակ լաստը վարել չէինք կարող: Մնում էր միայն սպասել մինչև մթներ և վերադարձանական մակույկն ու սպասել հարմար առիթների: Ամբողջ ցերեկը քննցինք կաղամախու թփուտների մեջ, որպեսզի ուժ հավաքենք, իսկ երբ մութն ընկնելուց հետո վերադարձանք և լաստ բարձրացանք, մայույկը չկար:

Բավական ժամանակ մենք չխոսեցինք. ոչինչ չկար ասելու: Երկուսս էլ լավ գիտեինք, որ դա բոժոժավոր օձի մաշկի հերթական գործն է: Էլ ի՞նչ միտք ուներ այդ մասին խոսելը: Դա միայն կնշանակեր նոր հանցանք ավելացնել, որը նոր դժբախտություն կբերեր մեզ և կշարունակվեր, մինչև հասկանայինք, թե հարկավոր է լոել:

Շուտով սկսեցինք խոսել, թե ինչ անենք, որ լավ լինի, և գտանք, որ մեզ մնում է միայն լաստով շարունակել ճանապարհը, մինչև կարողանանք մի մակույկ գնել և վերադառնալ։ Մենք մտադիր չենք մակույկը փոխարինաբար վերցնել, եթե մեր շրջապատում ոչ ոք չիներ (հայրս այդպես էր անում նման դեպքերում)։ Դա առիթ կլիներ, որ մարդիկ ընկնեն մեր հետևից։

Երբ մթնեց, լաստով շարժվեցինք գետն ի վար։

Եթե մի մարդ կա, որ դեռևս չի հավատում, թե օդի մաշկին ձեռք տալը ինչ հիմարություն է, իմանալով այն բոլորը, ինչ այդ մաշկը բերեց մեր զիսին, անպայման կիավատա, մանավանդ, եթե կարդա հետազայում պատահածը։

Նավակները սովորաբար գնում են ափին մոտ կանգնած լաստերի մոտերքից։ Բայց մենք կանգնած լաստերի չհանդիպեցինք։ Շարունակեցինք մեր ճանապարհը երեք ժամ, եթե ոչ ավելի։ Գետը պարուրված էր գիշերային գորշ, թանձր խավարով, որը մառախուղից հետո ամենավատ բանն է։ Հնարավոր չէր տեսնել ոչ գետի ափերը, ոչ է հեռուն։ Պետք է որ ուշ գիշեր լիներ։ Օդը խաղաղ էր։ Այդ ժամին անսպասելիորեն գետն ի վեր բարձրացավ մի շոգենավ։

Մենք վառեցինք լապտերը, մտածելով, թե մարդիկ կնկատեն։ Ընդհանրապես հոսանքին հակառակ շարժվող նավերը մեզ շատ չէին մոտենում։ Դրանք խոյս են տալիս ծանծաղուտներից և հոսանքի դեմ պայքարելու համար գերադասում են խոր տեղերը՝ բարձր ափերի տակ։ Բայց նման գիշերներին ուղիղ շարժվում են հոսանքին հակառակ, գետի մեջտեղով։

Մենք կարողանում էինք լսել նավի փնչոցը, բայց մինչև մեզ մոտենալը չենք տեսնում։ Նավը ուղղակի զայս էր մեզ վրա։ Հաճախ են այդպիսի բաներ անում. ուզում են տեսնել, թե որքան կարող են մոտենալ լաստին՝ առանց դիաչելու։ Երբեմն անիվը դիաչում է մակույկի թիակին, և նավատարը ցցում է գլուխն ու ծիծաղում, կարծելով, թե ինքը շատ ճարպիկ է։ Այդպես է մենք ենթադրում էինք. կզա, կշոշափի մեզ ու կիեռանա։ Բայց թվում էր, թե սա այդ կատակներից չէ։ Դա մի մեծ նավ էր և շտապում էր, ինչպես սև ամպ, շրջապատված լուսատուիկներով։ Նավն իր մեծ, ահարկու զանգվածով հանկարծ խուժեց մեզ վրա։ Հնոցի լայն բաց արած դրները շողում էին, ինչպես շիկացած ատամներ, իսկ հրեշային նավաքիթն ու պատյանները կախված էին ուղիղ մեզ վրա։ Նավից գոռզորացին, զանգ տվին, որ կանգնեցնեն մոտորները, լսեց հայինյանք, շոգու ֆշոց։ Եվ մինչ Զիմը լաստի եզրից ջուրը կթռչեր, ես է՛ մյուս եզրից, լաստը ճգմելով անցավ նավը։

Ես սուզվեցի ջրի տակ, ջանալով հասնել գետի հատակին, քանի որ երեսուն-քառասուն ոտնաշափ անիվը վրայովս էր անցնելու։ Այդ խորությունը անհրաժեշտ էր, որպեսզի ինձ չփառագիր լինի լուսատուիկներով։ Նավն իր մեծ, ահարկու զանգվածով հանկարծ խուժեց մեզ վրա։ Հնոցի լայն բաց արած դրները շողում էին, ինչպես շիկացած ատամներ, իսկ հրեշային նավաքիթն ու պատյանները կախված էին ուղիղ մեզ վրա։ Նավից գոռզորացին, զանգ տվին, որ կանգնեցնեն մոտորները, լսեց հայինյանք, շոգու ֆշոց։ Եվ մինչ Զիմը լաստի եզրից ջուրը կթռչեր, ես է՛ մյուս եզրից, լաստը ճգմելով անցավ նավը։

Մի տասն անգամ ես Զիմին կանչեցի, բայց ոչ մի պատասխան չստացա: Ստիպված կառչեցի մի հաստ տախտակից, որ դիպջում էր ինձ, երբ ես թարտում էի ջրում: Տախտակը պահելով առջևում, լողացի դեպի ափը: Բայց շուտով նկատեցի, որ հոսանքն ուղղված է դեպի ձախ ափը, և դա նշանակում էր, որ ես ընկել էի ծանծաղուտ: Փոխեցի ուղղությունս և շարժվեցի այդ կողմը:

Այս ծանծաղուտը թեք էր և երկար, երկու մղոնից ոչ պակաս: Բավական ժամանակ անցավ, մինչև ազատվեցի: Ապահով հասա ափ և մազլցեցի դարատափն ի վեր: Ծատ հեռուն տեսնել չէի կարող, բայց կարճ ճանապարհով քառորդ մղոն, կամ գուցե ավելին, քայլեցի խորդուրորդ տեղերով և դեմ առա մի մեծ, հնատճ, փայտաշեն տան, որը չէի նկատել: Ուզեցի հեռանալ այդտեղից, բայց շները ոհմակով դուրս թռան, սկսեցին կաղկանձել ու հաչել ինձ վրա: Գիտեի, որ այդպիսի դեպքերում ավելի լավ է տեղի չշարժվել:

## Գլուխ տասնյոթերորդ

Հազիվ մեկ րոպե էր անցել, երբ մեկը առանց գլուխը պատուհանից դուրս հանելու, բղավեց.

— Մի պահ լոե՛ք, տղե՛քր... Ո՞վ է:

Ես պատասխանեցի.

— Ես եմ:

— Ո՞վ է այդ «ես»-ը:

— Չորջ Զերսոնը, սըր:

— Ի՞նչ ես ուզում:

— Ոչինչ չեմ ուզում, սըր: Ուզում եմ ճանապարհ շարունակել, բայց շները չեն թողնում:

— Ինչո՞ւ ես թափառում գիշերվա այս ժամին, ի՞ր:

— Չեմ թափառում, սըր. շոգենավի տախտակամածից վայր ընկա:

— Ընկե՞լ ես, հա՞: Մեկնումեկդ լույսը վառեք, տղերը: Ի՞նչ է քո անունը:

— Չորջ Զերսոն, սըր. ես փոքր տղա եմ:

— Լսիր, եթե ճիշտ ես ասում, վախենալու կարիք չունես. ոչ ոք քեզ ծեռք չի տա: Բայց չփորձես տեղիցդ շարժվել. կանգնիր և մնա: Թող մեկն արթնացնի Բորին ու Թոմին և բերեք հրացաները: Չորջ Զերսոն, քեզ հետ ուրիշ մարդ կա՞:

— Ոչ, սըր, ոչ ոք:

Ես լսեցի, թե ինչպես տանը մարդիկ էին շարժվում այս ու այն կողմը, և մի լույս նկատեցի: Ինձ հետ խոսող մարդը կանչեց.

— Այդ լույսը հեռու տար, Բեցի, ծեր հիմար, խելք չունե՞ս: Դիր հատակին, առջևսի դռան հետևը: Բոր, եթե դու և Թոմը պատրաստ եք, գրավեցեք ձեր տեղերը:

— Բոլորս էլ պատրաստ ենք:

— Այժմ, Զորջ Զերսոն, ասա. Շեփերդսոններին ճանաչո՞ւմ ես:

— Ոչ, սըր, նրանց մասին չեմ լսել:

— Լավ, գուցե այդպես է, գուցե ոչ: Այժմ ամեն ինչ պատրաստ է: Առաջ եկ, Զորջ Զերսոն: Չշտապես, դանդաղ արի: Եթե քեզ հետ ուրիշ մարդ էլ կա, թող ետ մնա. Եթե երևա, կգնդակահարվի: Դե, մոտեցիր, դանդաղ արի, դուռն այնքան բաց արա, որ կարողանաս սեղմվելով ներս մտնել, լսո՞ւմ ես:

Ես չեի շտապում, չեի էլ կարող շտապել, եթե նույնիսկ ուզենայի: Դանդաղ, բայլ առ քայլ մոտեցա դրանք: Ոչ մի ձայն չկար: Ինձ թվում էր, թե լսում եմ սրտիս բարախյունը: Շները լուռ էին, ինչպես իրենց տերերը, բայց մի փոքր հեռվից հետևում էին ինձ: Երբ հասա փայտե երեք աստիճաններով սանդուղքին, լսեցի, թե ինչպես են բացում փականք, քաշում նիզը և սողնակը: Զեօքս դրեցի դրան վրա, քաշեցի, ապա քիչ էլ, մինչև մեկն ասաց.

— Է՞հ, բավակա՞ն է, գույխադ նե՞րս մտցրու:

Այդպես էլ արեցի, բայց մտածում էի, թե իիմա վիզու կկտրեն: Մոմն ամրացված էր հատակին, և բոլորը, կանգնած իմ առաջ, ինձ էին նայում, ես էլ՝ նրանց: Այդպես անցավ մոտ քառորդ դրանք: Երեք աժդահա տղամարդ հրացաններն ուղղել էին ինձ վրա: Վախից կուչ էի եկել: Դրանցից ամենաավազը մոտ վաթսուն տարեկան ալեհեր մարդ էր, մյուս երկուսը՝ երեսուն տարեկան, գուցե ավելի: Նրանք բոլորն էլ սքանչելի, գեղեցիկ տղամարդիկ էին: Այնտեղ էր և ալեխան մազերով չափազանց համակրելի մի լեղի: Նրա հետևում կանգնած էին երկու երիտասարդ կանայք, որոնց լավ չեի տեսնում: Շերունին ասաց.

— Է՞հ, կարծում եմ, այժմ ամեն ինչ կարգին է: Նե՞րս արի:

Հենց որ ներս մտա, ծեր զենտրմենք փակեց դուռը, վրա բերեց սողնակը և երիտասարդ զենտրմեններին կարգադրեց հրացաններով մտնել սենյակը: Բոլորն անցան մի մեծ հյուրասենյակ, որի հատակին փոփած էր մի նոր կարպետ: Հավաքվեցին անկյունում, որպեսզի դիմացի պատուհաններից իրենց չտեսնեն, իսկ կողքի պատը պատուհան չուներ: Նրանք բարձրացրին մոմը, մի լավ նայեցին վերից-վար և բոլորն ասացին. «Ոչ, նա Շեփերդսոններից չէ, շեփերդսոնական ոչինչ չունի»:

Ապա ծերունին ասաց, որ հույս ունի, թե ես չեմ նեղանա ինձ խուզարկելու համար. ուզում են համոզվել, որ զենք չունեմ: Ասաց, որ դրանով ինքը ոչ մի վնաս տալ չի ուզում: Նա իմ գրապանները չտնտղեց, միայն դրսից ձեռքով շոշափեց և ասաց, որ ոչինչ չկա: Նա ասաց, որ ես ինձ հանգիստ զգամ, ինչպես իմ սեփական տանը, և իմ մասին լրիվ տեղեկացնեմ իրենց, բայց ծեր լեղին ասաց.

— Ա՞խ, Սա՛ով, այս խեղճ արարածը մինչև ոսկորները թրջվել է և ի՞նչ ես կարծում, քաղցած չի՞ լինի:

— Ծիշտ ես ասում, Ռեշել, մոռացել էի:

Ապա ծեր կինն ասաց.

— Բե՛ցի (Բեցին նեզրուիի էր), շո՛ւտ, թողիր և ուտելու բան բեր այս խեղճ տղայի համար, իսկ ձեզնից մեկը, աղջիկներ, թող արթնացնի Բաքին և ասի, որ... Օ՛, Բաքն արդեն այստեղ

Է: Բաք, այս փոքրիկ օտարականին տար, հանիր թաց շորերը և քո չոր շորերից մեկ-երկուսը հազգրու:

Բաքը մոտավորապես իմ տարիքի տղա էր՝ տասներեք-տասնչորս տարեկան, թեև հասակով ինձնից փոքր-ինչ բարձր էր: Հազին կար միայն շապիկ: Երևում էր, որ շատ թափթափած տղա է: Նա քայլեց հորանջելով: Մի ձեռքով աչքն էր տրորում, մյուս ձեռքով իր հետևից քարշ էր տալիս հրացանը:

— Ուրեմն՝ Շեփերդսոնները չե՞ն:

Պատասխանեցին, որ նրանք չեն, և տագնապը կեղծ էր:

— Լավ, — ասաց Բաքը, — եթե նրանցից լինեին, մեկի հաշիվը կփակեի:

Բոլորը ծիծաղեցին: Բոքն ասաց.

— Ինչպե՞ս կարող էին մեզ բոլորիս մաշկել մինչև քո գալը, Բաք. այնքա՞ն ուշ եկար:

— Է՛հ, ի՞նչ անեմ. ոչ ոք ինձ իմաց չի տվել: Դա սիսալ էր: Միշտ ինձ ճնշում էր. չեմ կարողանում ինձ ցույց տալ:

— Ոչինչ, Բաք, տղաս, — ասաց ծերունին, — քեզ ցույց տալու առիթ կունենաս. ամեն ինչ՝ իր ժամանակին: Դրա համար մի՛ վշտանա: Վյժմ զնա և կատարիր մորդ ասածը:

Երբ բարձրացանք վերնահարկը՝ Բաքի սենյակը, նա ինձ իր շորերից տվեց մի կոշտ շապիկ, մի բաճկոն և մի շալվար: Ես հագա դրանք: Մինչ հագնում էի, նա անունս հարցրեց, քայլ նախքան իմ պատասխանելը, սկսեց պատմել մի կապույտ ճայի ու փոքրիկ ճագարի մասին, որ երկու օր առաջ բռնել էր անտառում: Հետաքրքրվեց նաև, թե որտեղ էր Մովսեսը, երբ մոմք մարեց: Ես ասացի, որ չգիտեմ այդ մասին, ոչինչ չեմ լսել:

— Դեհ, գուշակիր, — ասաց նա:

— Ինչպե՞ս գուշակեմ, երբ այդ մասին ոչինչ չեմ լսել, — ասացի ես:

— Բայց կարող ես, մի՛թե չես կարող: Շա՛տ հեշտ բան է:

— Ո՞ր մոմք, — ասացի ես:

— Որևէ մոմք, — ասաց նա:

— Չգիտեմ որտեղ էր Մովսեսը. դո՛ւք ասացեք՝ որտե՞ղ էր, — պատասխանեցի ես:

— Մթության մեջ: Ահա թե որտեղ էր:

— Լավ, եթե գիտեիր որտեղ էր, Էլ ինչո՞ւ էիր ինձ հարցնում:

— Դե, դա հանելով է, չե՞ս հասկանում: Ասա, որքան ժամանակ ես մնալու այստեղ: Միշտ Էլ մեզ մոտ մնա: Մենք միասին ուրախ ժամանակ կանցկացնենք. հիմա դասեր չկան: Շուն ունե՞ս. ես մի հատ ունեմ: Իմ շունը կվազի, կմտնի գետը և դուրս կրերի զցածդ տաշեղը: Դու սիրո՞ւմ ես կիրակի օրերը սանրվել և նման այլ հիմարություններ: Ես չեմ սիրում, քայլ մայրս ստիպում է: Կորչի այդ ինձ շալվարը: Ես Էլ գիտեմ, որ ավելի լավ է հագնեմ, քայլ չեմ ուզում, շոգ է: Վյժմ լրիվ պատրաստ ես: Շատ լավ: Գնանք, պառա՞վ ձի:

Եզիստացորենի սառը բլիթ, աղած սառը միս՝ Եզիստացորենով, կարագ, անսեր կաթ — ահա թե նրանք ինձ ինչ տվեցին ուտելու: Ավելի համեղ բան կերած չկայի: Բաքը, իր մայրը և բոլորը ծիսում էին կարճ ծխամորներ, քացի երկու երիտասարդ կանանցից ու

նեզուիուց, որն արդեն գնացել էր: Բոլորը թե՛ ծխելիս էին խոսում, թե՛ ուտելիս: Երիտասարդ կանայք փաթաթվել էին վերմակների մեջ, իսկ նրանց մազերը կախվել էին մեջքներից: Նրանք բոլորն ինձ հարցեր էին տալիս: Պատմեցի, թե ինչպես հայրս, ես և մեր ամրող ընտանիքը ապրում էինք մի փոքրիկ ազարակում, Արքանսյի մոտ, թե ինչպես իմ փոքր բույրը՝ Մերի Էննը, փախավ տնից ու ամուսնացավ, և այլևս ոչինչ չիմացանք նրա մասին, ինչպես Բիլը գնաց նրանց որոնելու, և նրա մասին է ոչինչ չիմացանք, ինչպես Թուն ու Մորթը մեռան և ոչ որ չիմացավ, բացի մորից ու ինձնից, իսկ հայրս է նեղությունից ու վշտից գլուխը կորցրեց: Երբ մայրս է մեռավ, ես վերցրի մեր ունեցած-չունեցածը և, քանի որ ազարակը մերը չէր, միացա նավի տախտակամածի ուղևորներին: Գետով բարձրանախ ընկա գետը: Ահա թե ինչպես հասա այստեղ: Իմ այս պատմությունից հետո նրանք ասացին, որ ես կարող եմ մնալ իրենց մոտ, որքան ցանկանամ: Արդեն սկսել էր լուսանալ, և բոլորը անկողին մտան: Ես է պառկեցի Բարի հետ: Առավոտյան երբ արթնացա (ի՞նչ անհարմար բան) մոռացել էի անուն: Մոտ մի ժամ փորձում էի մտարերել: Երբ Բարն արթնացավ, ասացի:

— Կարող ես հեզել, Բար:

— Այո, — պատասխանեց նա:

— Գրագ կգամ, որ չես կարող իմ անունը հեզել, — առարկեցի ես:

— Ես է գրագ կգամ, որ ինչ ասեն կհեզեմ, — ասաց նա:

— Լավ, — ուրախացա, — հեզիր:

— Զ-ն-ր-ջ Զ-ե-ք-ս-ն-ն, ահա, — ասաց նա:

— Ճիշտ է, կարող ես, — ասացի ես, — բայց չէի կարծում, թե կարող ես: Դա այնպիսի անուն չէ, որ մարդիկ կարողանան առանց նախապես սովորելու ճիշտ հեզել:

Իմ այդ անվան ուղղագրությունը ծածուկ գրեցի. գուցե մեկն այնուհետև ցանկանար, որ հեզել: Ուզում էի պատրաստ լինել, որպեսզի արագ հեզեմ, իբր թե վաղուց վարժված եմ դրան:

Սքանչելի ընտանիք էր, ինչպես և սքանչելի տուն: Ես դեռ գյուղական վայրում չէի տեսել այդպիսի տուն այդքան գեղեցիկ, նորածն: Դրսի դռան վրա ո՞չ երկաթե սողնակ կար, ո՞չ է փայտե՝ մորթե փոկով: Կար միայն արույրե բռնակ՝ դուռը բացելու համար. ճիշտ այնպիս, ինչպես քաղաքային տներում: Հյուրասենյակում մահճակալ չկար, ոչ է մահճակալի նման բան էր երևում, թեև քաղաքներում քազմաթիվ հյուրասենյակներում դրված են լինում մահճակալներ: Կար աղյուսե հատակով մի մեծ օջախ: Աղյուսները մաքուր պահելու համար դրանց վրա ջուր էին լցնում և աղյուսով քերում, երբեմն է քսում կարմիր շրաներկ, որն անվանում էին «խսպաական դարչնագույն»: Նոյն ձևով մարքում էին և քաղաքում: Նրանք ունեին արույրե մեծ եռոտանիներ, որոնք գերանների ծանրությանն էի կղիմանային: Բուխարու վերևում, ապակու տակ, կար մի մեծ ժամացույց: Այդ ապակու ներքևի կեսի վրա նկարված էր մի քաղաք, իսկ դրա մեջտեղում կար մի կլոր բացվածք՝ արևի համար: Կարելի էր տեսնել ետ ու առաջ ճոճվող ճոճանակը: Հաճելի էր լսել այդ ժամացույցի զարկերը: Երբեմն, եթե այնտեղ էր զալիս շրջիկ ժամագործը, մաքրում էր ժամացույցը, կարգի բերում, այդ ժամանակ ժամացույցն սկսում էր աշխատել հարյուր հիսուն զարկով: Տերերը ոչ մի գնով չէին ցանկանում բաժանվել ժամացույցից:

Ժամացույցի աջ և ձախ կողքերին դրված էին մեկական արտառոց թութակ, որ պատրաստել էին կավճանման ինչ-որ բանից և ներկել խայտարդես գույներով: Թութակներից մեկի կողքին կավե մի կատու կար, մյուսի կողքին դրված էր կավե մի շուն: Զեղքով սեղմելիս դրանք ծվում էին՝ առանց բերանները բացելու, անտարբեր: Ծվոցը զալիս էր տակից: Այս բոլորի հետևում կար վայրի հնդկահավի թևերից պատրաստած երկու մեծ հովհար: Սեղանի վրա, սենյակի մեջտեղում, կար կավե գեղեցիկ մի զամբյուղ՝ լցված խմնորով, նարնջով, դեղնով ու խոռորով, որոնք ավելի կարմիր, դեղին ու սիրուն էին, քան իսկական մրգերը: Դրանք բնական չէին, որովհետև բերձված տեղերից երևում էր կավիճը կամ այն նյութը, ինչից պատրաստած էին:

Այս սեղանն ուներ մոմիաթե գեղեցիկ մի սփոռոց, որի վրա կարմիր ու կապույտ գույներով նկարված էր թևատարած մի արձիվ և եզրագիծ: Ինձ ասացին, թե սփոռոցը բերել են Ֆիլադելֆիայից: Սեղանի չորս անկյունում համաշափ քանակով գրքեր էին շարված: Դրանցից մեկը ընտանեկան նկարազարդ Աստվածաշունչ էր, մյուսը՝ «Ուխտազնացի թափառումներ» գիրքը: Սա մի մարդու մասին էր, որը լրել էր իր ընտանիքը, բայց թե ինչու, այնտեղ ասված չէր: Ես շատ անգամ դա ձեռքս առա: Հետաքրքիր էր գրված, բայց ոչ այնքան հասկանալի: Մի գիրք էլ կար՝ «Քարեկամության շնորհները»: Մեջը հետաքրքրաշարժ պատմություններ ու ոտանավորներ կային, բայց թե ես ոտանավորներ չեմ կարդում: Կային նաև Հենրի Քլեյի «Ճառերը» և դոկտոր Գաննի «Տնային բժիշկները»: Այստեղից կարելի էր իմանալ, թե ինչ պետք է անել, եթե մեկնումեկը հիվանդանում է կամ մեռնում: Չանազան գրքերի հետ կար մի աղոթազիրք: Սենյակում դրված էին հյուսկեն աթոռներ: Շատ ամուր էին և ոչ թե մեջտեղը տոպարակի նման կախ ընկած ու ծակծկված, ինչպես հնացած զամբյուղներ:

Պատերից կախված էին նկարներ, գլխավորապես Վաշինգտոնի և Լաֆայետի<sup>19</sup> տարբեր նկարներ, ճակատամարտերի տեսարաններ և շոտլանդական թագուհի Մարի Սայուարդի պատկերը: Նկարներից մեկը կոչվում էր «Անկախության դեկլարացիայի ստորագրումը»: Մի քանիսը մատիտով նկարել էր նրանց հանգույցալ դուստրերից մեկը տասնինգ տարեկան հասակում: Դրանք տարբերվում էին երրուէ տեսածու նկարներից: Մեծ մասամբ ավելի սև էին, քան սովորաբար լինում են: Մեկը ներկայացնում էր նեղ, սև զգեստ հագած մի կին: Դիրկ գոտին անցնում էր թևերի տակով, թևերի մեջտեղն ուռած էր ինչպես կաղամբ, զիկին դրված էր սև բողոք մի մեծ, գոզավոր թիականման գլխարկ: Նրա սպիտակ, նուրբ ոտքերին կային սև, նեղ ժապավենով չափազանց փոքր, սև կոշիկներ, որ նման էին դուրի: Կինն աջ արմունկով խոհուն հենվել էր լացող ուռենու տակ ընկած շիրմաքարի, իսկ ձախ ձեռքը կախված էր մյուս կողմի վրա՝ բռնած մի թաշկինակ և ցանցապարկ: Նկարի տակ գրված էր. «Ապա՛, մի՛թե ես այսևս չեմ տեսնի թեզ»: Մի այլ նկար ներկայացնում էր ինչ-որ երիտասարդ աղջիկ, մազերն ոմբողջովին սանրած վեր՝ զիկին վրա և հանգույցած ու սանրին դեմ արած, ինչպես աթոռի հենակը: Աղջիկը լաց էր լինում, թաշկինակը դեմքին բռնած, մյուս ձեռքին մի մեռած թռչուն՝ մեջքին պառկած, ճանկերը վեր ցցած: Նկարի տակ գրված էր. «Ես էլ երբեք չեմ լսի քո քաղցրիկ դայլայլը, ավա՛»: Մի այլ նկարում ինչ-որ ջահել աղջիկ, կանգնած պատուհանի առաջ, նայում էր լուսնին, և արցունքները գլորվում էին նրա այտերից: Զեօքին բաց նամակ կար, որի ծայրին երևում էր սև կնքամոմը: Նա բերանին սեղմել էր շղթայով մի մեղալիոն: Նկարի տակ գրված էր. «Մի՛թե դու այլևս չկաս: Այո, ավա՛, չկաս»: Դրանք բոլորը գեղեցիկ նկարներ էին, ընդունում եմ, բայց ես այնքան էլ հրապուրված չեմ դրանցով, որովհետև եթե երրուէ մի փոքր տիրում էի, այդ նկարները սաստկացնում էին իմ թափախծը: Բոլորն էլ շատ

շավում էին այդ աղջկա մահվան համար. նա մտադիր էր նման շատ նկարներ ստեղծել: Ամենուրեք կարող էի տեսնել, թե ինչ էր արել հանգուցյալը, և ինչ էին կորցրել նրա հարազատները: Բայց ինձ թվում էր, թե նա իր խառնվածքով իրեն շատ ավելի ուրախ կզգար գերեզմանում: Նա, ինչպես ասում էին, աշխատելիս է եղել իր ամենամեծ նկարի վրա, երբ հիվանդացել է, և ամեն օր, ամեն գիշեր աղոթել է, որ իրեն թույլ տրվի ապրել այնքան, մինչև ավարտի այն: Բայց այդ բախտը նրան չի վիճակվել: Նկարից նայում էր դեռատի մի կին՝ սպիտակ զգեստ հազար, կամրջի եզրին կանգնած: Նա պատրաստ էր թռչելու, մազերը թափված էին մեջքին, և նայում էր լուսնին: Արցունքները գլորվում էին այտերից. երկու ձեռք կրծքին ծալած, երկու ձեռք առաջ պարզած, երկուսն էլ վեր բարձրացրած՝ հասնում էին լուսնին: Դրա նպատակն էր տեսնել, թե ո՞ր գոյգն ավելի տպավորիչ է, որպեսզի մյուս ձեռքերը ջնջի, բայց, ինչպես ասացի, աղջիկը մեռել էր նախքան որևէ որոշման հանգելը: Այժմ այդ նկարը կախված էր նրա սենյակում, մահճակալի գլխի կողմի պատին: Հանգուցյալի ծննդյան յուրաքանչյուր տարեղարձի նկարը զարդարում էին ծաղիկներով: Մնացած ժամանակ ծածկում էին մի փոքրիկ վարագույրով: Նկարում այդ ջահել կինն ուներ մի տեսակ անուշիկ, սիրուն դեմք, թևերն այնքան շատ էին, որ նման էր սարդի:

Այս երիտասարդ աղջիկը կենդանության ժամանակ ունեցել է հուշատետր, ուր հավաքել էր «Փրեսբիթերյան օրսերվեր» թերթերից պոկված մահագդեր, պատահարներ, համբերատար տառապանքների մասին գրված հոդվածներ և ապա դրանց շուրջը գրել սեփական ոտանավորներ: Ահա մի ոտանավոր, գրված Սթիվեն Դաուլինգ Բոթս անունով մի տղայի մասին, որը ընկել էր ջրհորն ու խեղդվել:

|  |                                     |   |   |
|--|-------------------------------------|---|---|
| Ներբող<br>Բորսի                                | Ստիվեն<br>մահվան                    | Դառլինգ<br>առթիվ                          |   |
| Ստիվենը<br>Մեռա՞վ<br>Հեկեկացի՞ն<br>Հարազատներ, | արդյոք<br>նրա                       | հիվանդացա՞վ,<br>մեր,<br>վրա<br>մտերիմներ: |   |
| Ոչ,<br>Վախճանն<br>Տիտոր<br>Բայց                | պատաճի<br>այլ<br>սրտեր<br>չմեռավ    | Դառլինգ<br>այս<br>նա                      | Բոթսի<br>աշխարհում.<br>հեկեկացին,<br>անկողնում: |
| Նա<br>Չոհ<br>Ոչ,<br>Կործանեցին                 | չմեռավ<br>չգնաց<br>դրանք<br>Դառլինգ | կապույտ<br>չէ,<br>որ                      | կարմրուկից,<br>հազին,<br>անխնա<br>Բոթսին:       |
| Այդ<br>Չիշավ<br>Փորացավից<br>Դառլինգ           | պատաճու<br>մերժված<br>Բոթսը՝        | գանգուր<br>սիրո<br>ի<br>այնքան            | գլխին<br>հարված,<br>չմեռավ<br>սիրված:           |

|                         |         |          |         |           |
|-------------------------|---------|----------|---------|-----------|
| Լսեք՝                   | մի      | պահ      | դադար   | տալով     |
| Արտասվայի               |         | ձեր      |         | մորմորին. |
| Ընկավ                   | ջրհորը, | և        | սառն    | երկրից    |
| Երկինք                  | թռավ    |          | նրա     | հոգին:    |
| Դուրս                   |         | բերեցին, | սակայն, | ավա՛ղ,    |
| Ուշ                     | էր.     | զնաց     | նա      | հավիտյան, |
| Նրա                     |         | հոգին    | գիրկը   | սուրաց    |
| Միրո, բարու արքայութան: |         |          |         |           |

Եթե Էմմելին Գրենջերֆորդը կարող էր նման ոտանավոր գրել, երբ դեռ տասնչորս տարեկան է չկար, ապա ինչպիսի՞ բանաստեղծուիի կդառնար ապագայում: Բարն ասում էր, թե բանաստեղծություններ հորինելը նրա համար խաղ ու պար էր: Երկար-բարակ չէր մտածում: Եղբայրն ասում էր, որ երբեմն հորինում էր մի տող և եթե չիներ դրա հետ հանգավորվող մի այլ տող, շնչում էր, նոր տող հորինում ու շարունակում: Նա բծախնդիր չէր նյութի ընտրության հարցում, կարող էր գրել ուզածդ հարցի շուրջը, միայն թե թախծալի լիներ: Ամեն անգամ, երբ մեկը մեռնում էր, տղամարդ, կին թե երեխա, նա արդեն այնտեղ էր լինում, դեռևս դիակը չառած: Նա այդ ոտանավորներն անվանում էր «Պարտք հանգուցյալին»: Հարևաններն ասում էին, թե առաջինը ներկայանում էր բժիշկը, ապա զալիս էր Էմմելինը և հետո՝ դագաղագործը:

Դագաղագործը միայն մեկ անգամ էր նրան կանխել: Նա ուշացել էր, որովհետև դժվարացել էր հանգուցյալի անվանը համապատասխան հանգ գտնել. Վերջինիս անունը Ուիաթեր էր: Դրանից հետո նա մեկից փոխվել էր: Երբեք չէր զանգատվել, բայց ավելի ու ավելի հյուծվել էր և շուտով վախճանվել: Խեղին արարած, քանի՛ անգամ եմ մտել նրա փոքրիկ սենյակը, վերցրել հնացած ալբոմն ու կարդացել գրածները, երբ նրա նկարները պղտորել են սիրտս, և սկսել եմ բարկանալ հանգուցյալի վրա:

Ես սիրում էի նրանց ընտանիքի բոլոր անդամներին, մեռած թե կենդանի, և չի ուզում, որ մի անախորժություն պատահեր մեր միջև: Խեղին Էմմելինը բանաստեղծություններ էր գրել բոլոր մեռած մարդկանց մասին, և արդարացի չէր այն, որ այժմ, երբ նա այլևս չկար, ոչ որ նրա մասին չէր գրում: Փորձեցի մեկ-երկու ոտանավոր հորինել, բայց երևի դա իմ խելքի բանը չէր: Նրանք Էմմելինի սենյակը պահում էին կոկիկ ու լավ, և ամեն ինչ դասավորել էին ճիշտ այնպես, ինչպես նրա կենդանության օրերին: Ոչ որ այնտեղ չէր քնում: Պառակ լեղին ինքն էր հոգ տանում սենյակի մասին, թեև նեզրեր շատ կային. նա այնտեղ հաճախ կար էր անում և Աստվածաշունչը մեծ մասամբ այդ սենյակում էր կարդում:

Ես արդեն պատմել եմ հյուրասենյակի մասին: Այնտեղ պատուհաններից կախված էին գեղեցիկ վարագույրներ՝ սպիտակ, նկարազարդ: Նկարներում դյանկների պատերն ի վեր էր բարձրանում բաղեղը: Ոչ հեռու առջաներն իջնում էին զուր խմելու: Այնտեղ դրված էր մի հին, փոքրիկ դաշնամուր՝ վրան թիթեղյա սկավառակներ: Ինձ համար ոչ մի բան այնքան դուրեկան չէր, որքան դեռատի լեղիների երգը: Երգում էին «Վերջին կապը խզված է» երգը կամ նվազում «Պրագայի ճակատամարտը»: Բոլոր սենյակների պատերը ծեփված էին և հատակին մեծ մասամբ փոփած էին կապերտներ: Դրսի կողմից ամբողջ տունը սպիտակեցրած էր: Տունը երկու մասից էր կազմված: Դրանց միջև ընկած բաց տարածությունը վերևույթ ծածկված էր և հատակը լավ պատրաստած: Ցերեկվա կեսին

հաճախ այնտեղ էին ճաշում: Դա գով, հանգստավետ տեղ էր: Դրանից ավելի լավ տեղ չէր կարող լինել: Համեղ ճաշեր էին պատրաստում ու անշափ առատ մատուցում:

## Գլուխ տասնութերորդ

Գնդապետ Գրենջերֆորդը ջենտլմեն էր: Նա ոտքից-գլուխ ջենտլմեն էր, ինչպես և նրա ընտանիքը: Նա, ինչպես ասում են, ազնվագարմ անձնավորություն էր, և այդ հատկանիշը նոյնքան արժեք ունի մարդու համար, որքան ծիու: Վյորի Դուգլասն էր այդ ասում, և ոչ ոք չէր հերքում, որ նա մեր քաղաքի առաջին ազնվականներից էր: Հայրս էլ նոյն բանն ասում էր իր մասին, թեև իր էությամբ քոստ կատու էլ չէր լինի: Գնդապետ Գրենջերֆորդը շատ բարձրահասակ էր, նիհար, ուներ թուխ, բայց գունատ դեմք, որի ոչ մի մասում կարմրության հետք չկար: Ամեն առավոտ մաքուր սափրում էր իր ամբողջ բարայիկ դեմքը: Չափազանց նուրբ շրթունքներ ուներ, մեծ քիչ՝ նեղ անցքերով, խիտ հոնքեր, չափազանց սև աչքեր, այնքան խորը թաղված, որ կարծես մարդկանց նայում էին քարանձավի խորքից: Ճակատը լայն էր, մազերը՝ ալեխատն, ուղիղ և կախված ուսերին: Ուներ երկար, բարակ ձեռքեր, հագնում էր մաքուր վերնաշապիկ և ոտքից-գլուխ՝ քաթանե կոստյում, այնքան ապիտակ, որ նայելիս մարդու աչքերը ցավում էին: Կիրակի օրերը հագնում էր կապույտ ֆրակ՝ արույրե կոճակներով: Կրում էր բալատրենու փայտից պատրաստված, արծաթյա գլխիկով գավազան: Թեթև սողիկության ոչ մի նշան, նույնիսկ ամենանշյան չափով: Երբեք բարձրաձայն չէր խոսում: Բարի էր այնքան, որ հնարավոր չէ ասել: Դա կարելի էր անմիջապես զգալ, և մարդիկ վստահություն էին տածում նրա նկատմամբ: Երբեմն ժապում էր, և հաճելի էր տեսնել նրա ժափտը, բայց երբ ուղղում էր մարմինը, ինչպես ազատության դրոշանող և կայծակն սկսում էր փայլատակել նրա հոնքերի տակից, մարդիկ կցանկանային նախ մազցել ծառը, հետո պարզել, թե բանն ինչ է: Երբեք ստիպված չէր լինում որևէ մեկին ասելու, թե պետք է պատշաճ վարը ունենալ, որովհետև նրա ներկայությամբ բոլորն էլ իրենց լավ էին պահում: Բայց և նրա ներկայությունը ցանկալի էր բոլորի համար: Նա միշտ էլ կարծես արևի շող էր. լավ եղանակի տպավորություն էր թողնում: Երբ խոժուվում էր, կես րոպէ սարսափելի մթնում էր, և դա բավական էր, որպեսզի մեկ շաբաթ ամեն ինչ խաղաղ ընթանար:

Երբ առավոտյան նա ու ծեր լեղին ներքև էին իջնում, ամբողջ ընտանիքը աթոռներից վեր էր կենում, բարի լույս մաղթում և չէր նատում, մինչև նրանք նատեին: Ապա մժոմն ու Բորբ մոտնենում էին կողքի դարակին, որտեղ շրամանն էր դրված լինում, մի բաժակ դառն օդի էին պատրաստում, մատուցում նրան: Նա բաժակը բռնած այնքան էր սպասում, մինչև մժոմն ու Բորբ լցնեին իրենց և խոնարհվելով ասեին: «Զեր կենացը, տեր և տիկին»: Նրանք մի փոքր խոնարհվում էին, շնորհակալություն հայտնում և ապա խմում: Բորբ ու մժոմը մեկակական գդալ ջուր էին լցնում իրենց բաժակների մեջ, մի քիչ վիսկի կամ խնձորոյի շաքարի վրա, տախս ինձ ու Բարին, մենք էլ մեր կողմից խմում էինք ծերերի կենացը:

Անդրանիկ որդին Բորբ էր, մժոմը նրանից փոքր էր: Երկուսն էլ բարձրահասակ, գեղեցիկ տղամարդիկ էին, լայնաթիկունք, թխադեմ, երկար, սև մազերով և սև աչքերով: Նրանք ոտից-գլուխ հագնում էին սպիտակ քաթան, ինչպես ծեր ջենտլմենը, գլխներին դնում լայնեզր գլխարկներ:

Կար և միս Շառլոտը՝ քսանիհգամյա բարձրահասակ, հպարտ, վեհատեսիլ մի աղջիկ, բայց անչափ բարի, երբ չէին վրդովում նրան: Երբ հուզվում էր, այնպիսի տեսք էր ստանում, որ մարդկանց թառամեցնում էր, ինչպես հայրը: Գեղեցիկ էր:

Նոյնը կարելի էր ասել և նրա քոյլը միս Սոֆիայի մասին, միայն որոշ տարրերությամբ: Սա մեղմ էր և քաղցրաբարո, ինչպես աղավնի: Ընդամենը քսան տարեկան էր:

Ահա բոլորը, ինչ մնացել էր այդ ընտանիքից: Բայց նրանք ավելի շատ են եղել. երեք որդի սպանվել էին, իսկ Էմմելինը մերժվել:

Ծերունի ջենտլմենն ուներ բազմաթիվ ազարակներ և ավելի քան հարյուր նեզր: Ծրջակայքից, տասը, տասնինզ մղոն հեռավորությունից, մարդիկ, ծիեր հեծած՝ խմբերով այցելում էին այս տունը և մնում հինգ-վեց օր, ցերեկը ուտում, խմում, գրոսում զետի վրա, անտառում խնջույքներ սարքում, խաղում, իսկ երեկոյան տանը պարահանդեսներ կազմակերպում: Վյդ մարդիկ մեծ մասամբ ընտանիքի ազգականներն էին լինում: Տղամարդիկ հետները բերում էին իրենց հրացանները: Կարելի է ասել, բոլորն էլ վայելու, գեղեցիկ մարդիկ էին:

Նրանց շրջակայքում կար ազնվական մի այլ տոհմ — հինգ-վեց ընտանիք — մեծ մասամբ Ծեփերդսոն ազգանունով: Նրանք նույնքան բարձրաստիճան, ազնվագարմ, հարուստ ու պատվարժան էին, որքան Գրենցերֆորդների տոհմը: Ծեփերդստոնները և Գրենցերֆորդները ցամաք էին դուրս գալիս նոյն նավակայանում, որը մեր տնից երկու մղոն վերև էր: Եվ երբ ես երբեմն այնտեղ էի գնում յուրայինների հետ, տեսնում էի Ծեփերդստոններին՝ իրենց սքանչելի ծիերը հեծած:

Մի օր Բաքն ու ես գնացինք անտառ որսի: Հանկարծ լսեցինք ձիու դովյուն: Ուզում էինք կտրել-անցնել ճանապարհը, երբ Բաքն ասաց.

— Շո՛ւտ, փախի՞ր անտառ:

Թաքնվեցինք անտառում: Ես զաղտազողի նայում էի սաղարթների արանքից: Շուտով ճանապարհին երևաց փառահետ մի երիտասարդ, զինվորականի տեսքով: Զիով պանում էր, սանձը թույլ թողած: Նա հրացանը կապել էր թամբազնությունից: Ես նրան մինչ այդ տեսել էի: Դա Հարնի Ծեփերդսոնն էր: Շուտով լսեցի Բաքի հրացանի ձայնը, որ նա կրակեց ականջիս տակ, և Հարնիի զիսարկը զիսից վայր ընկավ: Հարնին ձեռքը զցեց հրացանին, և ձին ուղիղ քշեց այն կողմը, ուր մենք թաքնվել էինք: Բայց մենք այնտեղ չսպասեցինք: Վազելով հեռացանք անտառով: Անտառը խիտ չէր, և ես ուսերիս վրայով ես էի նայում՝ զննակից խոլյու տալու համար: Երկու անգամ տեսա Հարնիին՝ հրացանը Բաքին ուղղած: Ապա նա շուռ եկավ դեպի իր եկած ճանապարհը, իմ կարծիքով, զիսարկը վերցնելու, բայց ես նրան տեսնել չէի կարող: Մենք այլևս կանգ չառանք, մինչև հասանք տուն: Ծերունի ջենտլմենի աչքերը մի պահ ցոլացին, երևի ուրախությունից, ապա նա վերականգնեց դեմքի խաղաղ արտահայտությունն ու մի տեսակ մեղմ եղանակով ասաց.

— Ես չեմ սիրում, երբ մարդիկ թաքնվում են մացարի հետևում ու կրակում, ինչո՞ւ դուրս չեկար ճանապարհի վրա, տղա:

— Ծեփերդստոնները այդպես չեն անում, հայր: Նրանք միշտ օգտվում են հարմար դիրքից:

Միսս Շառլոտը, ինչպես թագուհի, գլուխը բարձրացրեց, երբ Բաքը ոունգերը լայնացրած, զայրույթը աչքերում էր այդ դեպքը: Երկու երիտասարդներն էլ մոայլվել էին, բայց ոչինչ չասացին: Միսս Սոֆիան գունատվել էր, բայց նրա դեմքը պայծառացավ, երբ իմացավ, որ Հարնին չի վնասվել:

Այնուհետև, երբ կարողացա Բաքին դուրս քերել ծառի տակ, մսուրի մոտ, և մենք մենակ էինք, հարցրի.

- Իսկապե՞ս ուզում էիր նրան սպանել, Բաք:
- Երդվում եմ, որ այս:
- Իսկ ի՞նչ է արել նա քեզ:
- Նա՞: Ինձ երբեք ոչինչ չի արել:
- Լավ, ուրեմն, ինչո՞ւ էիր ուզում սպանել:
- Հենց այնպես, միայն տոհմական վրեժից դրդված:
- Տոհմական վրեժն ի՞նչ բան է:
- Վա՞հ, ո՞րտեղ ես մեծացել: Զգիտե՞ս, թե ինչ է տոհմական վրեժ:
- Ես ոչինչ չեմ լսել այդ մասին, պատմիր. ի՞նչ բան է դա:
- Լավ, — ասաց Բաքը, — տոհմական վրեժն սկսվում է այսպես: Մեկը կրվում է մի ուրիշի հետ և սպանում նրան, սպանվողի եղբայրը սպանում է սպանողին, ապա մյուս եղբայրները կամ երկու կողմն էլ զայխ են իրար դեմ: Այնուհետև մեջտեղ են զայխ հորեղբոր որդիները, քեռորդիները, ժամանակի ընթացքում բոլորն սպանվում են, և տոհմական վրեժն ավարտվում է: Բայց դա դանդաղ է կատարվում և երկար տևում:
- Իսկ ձեր այդ թշնամնքը վաղո՞ւց է սկսվել, Բաք:
- Է՛հ, կարծում եմ: Պեսոք է որ սկսված լինի երեսուն տարի առաջ կամ մոտավորապես այդքան: Ինչո՞ր վեճ է առաջանում մի բանի շուրջ, ապա դատ՝ հարցը լուծելու համար: Տանու տվողը սպանում է շահողներից մեկին, և բնական է, որ այդպես էլ պիտի լիներ, ով ասեք այդպես կվարվեր, իհարկե:
- Վեճը ինչի՞ համար է եղել, Բաք, հողի՞:
- Կարծում եմ. հաստատ չգիտեմ:
- Լավ, ո՞ր կողմն է առաջինը կատարել սպանությունը, Գրենցերֆորդների՞ց, թե՛ Շեփերդսոններից մեկը:
- Է՛հ, ի՞նչ իմանամ: Դա շատ վաղուց է եղել:
- Ոչ ոք չգիտե՞:
- Կարծում եմ, հարյու գիտե, ինչպես և մեծերից մի քանիսը, բայց նրանք չգիտեն, թե ամենից առաջ ինչպես է սկսվել վեճը:
- Ծա՞տ մարդիկ են սպանվել, Բաք:

— Այս, միշտ մեկին թաղում են: Բայց միշտ չէ, որ սպանվում են: Հորս մարմնի մեջ մի քանի գնդակ կա. նա դրան ուշադրություն չի դարձնում, չի մտահոգվում: Բորբ գնդակի մի քանի հարված է ստացել, թումբ նույնպես մեկ-երկու անգամ վիրավորվել է:

— Այս տարի որևէ մեկը սպանվե՞լ է, Բար:

— Այս, մեկը մեզնից, մեկն է նրանցից: Մոտ երեք ամիս առաջ իմ հորեղբորորդի Բաղը՝ տասնչորս տարեկան մի տղա, ձիով անցնում էր անտառով, գետի մուտ ափը: Անզեն է լինում, մի քան, որ մեղադրելի հիմարություն է: Ամայի տեղում իր հետևից լսում է ձիու դոփյուն, ապա տեսնում է ծերուկ, ճաղատ Շեփերդստնին իր հետևից արշավելիս՝ հրացանը ձեռքին, սպիտակ մազերը քամուն տված: Փոխանակ փախչելու, թաքնվելու թվերի հետևելը, մտածում է, որ ծերուկը երբեք չի հասնի իրեն, և նրանք այդպես պանում են հինգ թե վեց մղոն: Ծերունին անընդհատ մոտենում է, մինչև վերջապես Բաղը տեսնելով, որ ճար չկա, կանգ է առնում ու դեմքը դարձնում ծերունուն, որպեսզի գնդակը դիմացից զա: Եվ ծերուկը ծին քշում է մոտ ու գնդակահարում նրան: Բայց նա հաջողությունը վայելելու շատ ժամանակ չունեցավ. մի շաբաթ չանցած մերոնք նրա հաշիվը մաքրեցին:

— Իմ կարծիքով այդ ծերուկը վախկոտն է եղել, Բար:

— Իսկ իմ կարծիքով ոչ: Այդ չի երևում: Շեփերդստների մեջ վախկոտ չկա, ոչ մեկը: Գրենջերֆորդների մեջ է չկա: Հենց այդ ծերունին մի անգամ կես ժամ պատվով կռվել է երեք Գրենջերդֆորդների դեմ և հաղթող դուրս եկել: Նրանք բոլորը ձիերով են եղել: Նա իջել է ձիուց ու նատել փայտի կույտի հետևում, ձին պահելով առջևում, գնդակներից պաշտպանվելու համար: Բայց Գրենջերֆորդները մնացել են իրենց ձիերի վրա, ինքն է՝ նրանց վրա: Նա և իր ձին տուն են հասել արնաշաղախ վիճակում, կաղալով, բայց Գրենջերֆորդներին ուրիշներն են տուն բերել, մեկը մեռած, իսկ երկրորդն է մեռել է հաջորդ օրը: Ոչ, սրբ: Եթե մեկը վախկոտներ է որոնում, ապա գուր տեղը թող ժամանակ չկորցնի Շեփերդստների մոտ, որովհետև նրանք վախկոտներ չեն ծնում:

Հաջորդ կիրակի բոլորս գնացինք եկեղեցի, երեք մղոն հեռավորության վրա: Բոլորը ձի էին հեծնել: Տղամարդիկ իրենց հետ վերցրել էին հրացաններ, Բաքը նույնպես: Նրանք հրացանները պահում էին ծնկների միջև կամ հենում կողքի պատին, որպեսզի պատրաստ լինեն:

Նույնը արել էին և Շեփերդստները: Քարոզը շատ սովորական էր, ամբողջովին եղբայրական սիրո և նման ձանձրախ քաների մասին: Բայց բոլորն ասում էին, թե լավ քարոզ է և նրանք տուն գնալիս շատ քան ունեին ասելու հավատքի, բարի գործերի, ամենքին հավասարապես տրվող աստծո շնորհի, նախախնամության մասին և չգիտես էլ ինչ: Այնպես որ ինձ թվում էր, թե դա իմ կյարի ամենաայլանդակ կիրակին է:

Ճաշից մեկ ժամ հետո բոլորը մրափում էին, ոմանք իրենց աթոռների վրա, ոմանք սենյակներում: Շատ էր ձանձրախ: Բաքն ու շունը տարածվել էին կանաչ խոտի վրա, արևի տակ ու խորը քնել: Ես գնացի մեր սենյակը, որ մի քիչ քնեմ: Տեսա անուշիկ միսս Սոֆիային մեր սենյակի կողքին, իր դռան շեմքին կանգնած: Նա ինձ տարավ իր սենյակը, կամացուկ փակեց դուռն ու հարցրեց, թե ես սիրո՞ւմ եմ իրեն: Ես ասացի՛ այն, և ապա հարցրեց, թե կարո՞՞ն եմ իր համար մի քան անել և այդ մասին ոչ որի չասել: Ասացի, որ կարող եմ: Այնուհետև ասաց, որ ինքը կտակարանը մոռացել է եկեղեցում իր նստարանի վրա, երկու գրքերի կողքին: Խնդրեց, որ սուսուփուս գնամ բերեմ և ոչ որի չասեմ: Խոստացա գնալ: Լուր դուրս թռա տնից ու վագեցի եկեղեցի: Եկեղեցում ոչ ոք չկար, բացի

մեկ-երկու խողից, որովհետև դուռը կողաքքը չուներ, իսկ խոզերը ամունը սիրում են նույրը տախտակե հատակ, որովհետև այնտեղ զով է լինում: Եթե նկատել եք, շատ մարդիկ եկեղեցի են գնում միայն ըստ անհրաժեշտության, բայց խոզերի գնալն ուրիշ է:

Ես ինքս ինձ ասացի, որ այստեղ մի բան կա: Բնական չէ, որ մի աղջիկ այսքան անհանգստանա Կտակարանի համար: Ուստի Կտակարանը թափ տվեցի և միջից մի թուղթ ընկավ: Վրան մատիտով գրված էր. «Ժամը երկուսն անց կեսին»: Ես երկար փնտրեցի, բայց ուրիշ ոչինչ չգտա, բայց քանի որ դրանից ոչինչ չկարողացա հասկանալ, թուղթը նորից դրեցի գրքի մեջ: Եթի հասա տուն և բարձրացա վերևի հարկը, միս Սոֆիան, դեռևս կանգնած էր դռան շեմքին և ինձ էր սպասում: Նա ինձ ներս քաշեց ու դուռը փակեց: Ապա թերթեց կտակարանը, թուղթը գտավ, կարդաց: «Դեմքն անմիջապես պայծառացավ: Ժամանակ չտալով մտածեու, գրկեց ինձ ու սեղմեց իր կրծքին, ասելով, որ ես աշխարհի ամենալավ տղան եմ, շառագունեց, աչքերը փայլեցին և նա զարմանալիորեն գեղեցկացավ: Ես մի տեսակ ապշել էի: Եթի շունչս տեղը եկավ, հարցրի, թե ինչ թուղթ էր այդ: Նա հարցրեց. մի՞թե չես կարդացել: Ասացի որ ոչ, կարդում եմ միայն տպագիր տառեր: Այնուհետև ասաց, որ այդ թուղթը իրենից ոչ մի բան չի ներկայացնում, միայն կարդացած էջը չկորցնելու համար է: Այժմ ես կարող եմ գնալ խաղաղու:

Գնացի գետափ, շարունակ մտածելով կատարվածի մասին: Շուտով նկատեցի, որ իմ նեզը հետևում է ինձ: Եթի այնքան էինք հեռացել, որ այլս տունը չէր երևում, նա մի վայրկյան նայեց ետ, իր շուրջը և ապա, վագելով ինձ մոտ, ասաց.

— Միստր Զորջ, եթե զաք ինձ հետ մորուտը, ես ձեզ ցույց կտամ ջրային Մոքքասինների<sup>101</sup> մի ամրող վտառ:

Իմ կարծիքով, դա տարօրինակ առաջարկություն էր: Նույն բանը նա ասել էր նաև երեկ: Պետք է իմանար, որ ոչ բոլոր մարդիկ կարող են հետաքրքրվել մոքքասիններով, վազվել դրանց հետևից: Բայց հետաքրքրի էր իմանալ, թե ինչ նրա նպատակը: Ուստի ասացի.

— Շատ լավ, առաջ անցիր:

Ես հետևեցի նրան մոտ կես մղոն: Նա մտավ ճահիճը, անցավ ևս կես մղոն՝ մինչև կոճերը ջրի մեջ: Մենք հասանք մի կղզյակ, որը հարթ, չոր տեղ էր, ծածկված խիտ աճած ծառերով, թփերով ու բաղերով: Նա այստեղ ասաց.

— Դուք անցեք առաջ, ընդամենք մի քանի քայլ է, միստր Զորջ, հենց այստեղ են մոքքասինները լինում, ես այդտեղ եմ հանդիպել և հիմա այնքան էլ չեմ ուզում տեսնել:

Շուր եկավ, հեռացավ և անմիջապես անհետացավ ծառերի հետևում: Ես առաջ մղվեցի և դուրս եկա ննջասենյակի մեծության մի քաց տեղ, բոլոր կողմերից շրջապատված բաղերով: Այդտեղ գտա մի քնած մարդու, և ի՞նչ դա իմ Զիմն էր:

Արթնացրի: Կարծում էի, թե նա երբ ինձ նորից տեսնի, շատ կզարմանա, բայց այդպես չեղավ: Նա ուրախությունից գրեթե արտասվեց, բայց զարմացած չէր: Նա պատմեց, թե այն գիշերը լողալով հետևել է ինձ և ամեն անզամ լսել իմ կանչը, բայց չի պատասխանել. չի ուզել, որ բռնեն ու նորից վաճառեն ստրկության:

— Ես մի փոքր վնասվել էի, — ասաց նա, — և արագ լող տալ չէի կարող, դրա համար էլ բավական ետ ընկա: Եթի դու ափ դուրս եկար, հույս ունեի, թե կհասնեմ քեզ առանց բղավելու, բայց երբ տեսա այդ տունը, լողալը դանդաղեցրի: Արդեն շատ հեռու էի և չէի

կարող լսել, թե ինչ են ասում քեզ. վախենում էի շներից: Բայց երբ ամեն ինչ խաղաղվեց, հասկացա, որ այդ տանն ես: Եվ մտա անտառ, սպասեցի լուսանալուն: Վաղ առավոտյան մի քանի նեզք տեսա, որոնք դաշտ էին գնում աշխատելու: Նրանք ինձ քերեցին այստեղ, ուր շները չեն կարող իմ հետքը գտնել, որովհետև շրջապատված եմ ջրով: Նրանք ամեն գիշեր ինձ ուտելու բան էին քերում և պատմում, թե ինչպես ես դու ապրում:

— Ինչո՞ւ իմ Զերին ավելի շուտ չասացիր, որ ինձ այստեղ քերի, Զիմ:

— Դե, միտք չուներ քեզ անհանգստացնել, Հեք և հույս է չունեի, թե մենք կարող ենք մի քան անել, բայց այժմ ամեն ինչ կարգին է: Երբ հնարավոր է եղել, ես գնել եմ ամաններ, տապակ և այլ բաներ, իսկ գիշերը լաստն եմ նորոգել, երբ...

— Ի՞նչ լաստ, Զիմ:

— Մեր հին լաստը:

— Մի՞թե մեր լաստը ջարդուփշուր չեղավ:

— Ոչ: Ճիշտ է, բավական քանդվել էր, հատկապես օղակը: Բայց վնասը շատ մեծ չէր: Միայն մեր իրերն էին ջուրն ընկել, համարյա բոլորը: Եթե շատ խորը չսուզվեինք, հեռու չլողայինք, գիշերն այդքան մութ չիներ, մենք էլ վախեցած չինեինք, այդ աստիճան դրումզլուի չինեինք, ինչպես ասում են, կտեսնեինք լաստը: Բայց ոչինչ, արդեն լրիվ կարգի է քերված և նույնքան լավ է, որքան նոր լաստը, բավական էլ նոր իրեր եմ հավաքել կորցրածի փոխարեն:

— Բայց ինչպես նորից ձեռք զցեցիր լաստը, Զիմ, լողալի՞ս բռնեցիր:

— Ինչպես կարող էի բռնել, երբ ես անտառում էի: Ոչ, այստեղից մի փոքր հեռու դեմ էր առել ջրասույզ մի ծառի, ինչոր նեգրեր գտել էին ու թաքցրել ուռենիների մի խորշիկով, ուր թափվում է գետակը: Հետո այդ նեգրերը լաստի համար այնպիսի աղմուկ բարձրացրին, որ ծայնն ինձ հասավ: Ես վերջ տվի նրանց վեճին, ասելով, որ դա նրանցից ոչ մեկին չի պատկանում. դա քոնն ու իմն է և հարցրի, թե իրենք ուզո՞ւմ են մի սպիտակ շենտղմենի սեփականությունը զավթել, ընկնել փորձանքի մեջ: Ես նրանցից ամեն մեկին տասը ցենտ տվեցի, և նրանք անշափ գոհ մնացին: Ուզում էին, որ ուրիշ լաստեր է այդպես զան իրենց կողմերը, իրենց հարստացնեն: Այդ նեգրերը շատ բարի էին իմ հաղեպ, և ինչոր ուզում էի, կարիք չէի ունենում երկրորդ անգամ ասելու, որդիս: Այդ Զեքը լավ նեգր է և բավական խելացի:

— Այո, ճիշտ է: Նա երբեք ինձ չի ասել, որ դու այստեղ ես: Նա ինձ ասաց, որ զամ այստեղ, և ինքը ինձ ցուց կտա ջրային մոքքասիններ: Եթե մի բան պատահի, նա մեղք չունի, հասկանո՞ւմ ես:

— Չեմ ուզում հաջորդ օրվա մասին խոսել, ուզում եմ կարճ կապել: Արթնացա, երբ լուսը բացվել էր, և ուզում էի շուր զալ մյուս կողքիս վրա ու նորից քնել, երբ զգացի, թե որքան խաղաղ է տունը: Թվում էր, թե ոչ ոք չի շարժվում: Դա արտասովոր բան էր: Այնուհետև նկատեցի, որ Բաքը վեր կացավ ու դուրս գնաց: Ես էլ զարմացած՝ վեր կացա ու գնացի ներքև: Ոչ ոք չկար: Ամեն ինչ նույնբան խաղաղ էր, որքան մուկը իր բնում: Դուրսը նույնպես խաղաղ էր: Սկսեցի մտածել, թե դա ինչ է նշանակում: Ներքնում փայտի կույտի մոտ հանդիպեցի իմ Զեքին ու հարցրի.

— Ի՞նչ է պատահել:

Նա թե՝

— Զգիտն՝ք, միստր Զորշ:

— Ոչ, չգիտեմ, — պատասխանեցի ես:

— Միսս Սոֆիան փախել է, իսկապես փախել է: Գիշերն է գնացել, թե ո՞ր ժամին, ոչ ոք չգիտե: Փախել է, որ ամուսնանա երիտասարդ Հարնի Շեփերդսոնի հետ: Գոնե այդպես են մտածում բոլորը: Ընտանիքի անդամներն այդ բանը հայտնաբերեցին մոտ կես ժամ առաջ, գուցե մի քիչ ավելի շուրտ: Ժամանակ չկար կորցնելու: Այնպես շտապ վազեցին դեպի հրացաները և ձիերը, որ նման բան ոչ ոք չէր տեսել: Կանայք գնացին ազգականներին արթնացնելու, իսկ ծերունի միստր Սաուլն ու որդիները վերցրին հրացանները և պացան դեպի գետը տանող ճանապարհը, որպեսզի բռնեն այդ երիտասարդ Շեփերդսոնին ու սպանեն: Այլապես նա կարող է միսս Սոֆիայի հետ գետն անցնել: Աղմուկը շատ մեծ կլինի:

— Բաքը գնաց առանց ինձ արթնացնելո՞ւ:

— Այո, չարթնացրեց: Նրանք չեն ուզում ձեզ այդ գործին խառնել: Միստր Բաքը լցրեց հրացանը և ասաց, որ ինքը տրաքի է, Շեփերդսոններից մեկի հաշիվը կփակի: Կարծում եմ, որ նրանց թիվը այնտեղ մեծ է: Եթե առիթ լինի, Բաքը մեկին կսպանի:

Ես կարողացածիս չափ արագ քայլեցի դեպի գետը: Շուտով լսեցի հրացանային հեռավոր կրակոց: Երբ երևաց անտառանյութի պահեստը և փայտի դեզը, որտեղ կանգ են առնում շոգենավերը, սկսեցի շարժվել ծառերի ու թփերի տակով, մինչև հասա մի լավ տեղ: Տեսա մի կաղամախի: Մազլցելով բարձրացա, թաքնվեցի ճյուղերի մեջ ու սկսեցի դիտել:

Այնքան հեռու էի, որ գնդակն ինձ չէր հասնի: Կար փայտի չորս ոտնաշափ բարձրությամբ մի կույտ, ծառից թիզ առաջ, և սկզբում ուզում էի դրա հետևում թաքնվել, բայց գուցե իմ բախտից էր, որ այդպես չարեցի:

Փայտի պահեստի առաջ, բաց տարածության վրա, ձիերը հեծած շրջում էին չորս-հինգ մարդ, հայինյում, զողոզում և աշխատում բռնել երկու ջահել տղաներին, որոնք նավակայանի դիմաց շարված փայտերի հետևում էին: Չէին կարողանում: Հենց որ այդ ձիավորներից մեկնումեկը երևում էր գետափին, կրակում էին նրա վրա: Երկու տղաները մեզք-մեզքի տված՝ կուչ էին եկել փայտի հետևուը և երկու կողմերի վրա է կարող էին հսկել:

Շուտով մարդիկ այս ու այն կողմ նետվելուց ու բդավելուց դադարեցին: Նրանք ձիերը քշեցին փայտի պահեստի կողմը: Տղաներից մեկը վեր կացավ, փայտի շարվածքի վրայից նշան բռնեց և վայր գցեց ձիավորներից մեկին: Մյուսները ցած թռան ձիերից, վերցրին վիրավորին ու տարան դեափ պահեստը: Այդ ժամանակ երկու տղաները փախան: Մինչև իմ ծառը, ճանապարհի կեսը, եկել էին, երբ նրանց նկատեցին: Տեսնելով տղաներին, բոլորը թռան իրենց ձիերի վրա և սկսեցին հետապնդել: Գրեթե հասնում էին տղաներին, բայց ի՞նչ օգուտ. տղաները լավ էին վագում: Նրանք հասան փայտի դեպին, որը իմ ծառի դիմացն էր: Թաքնվեցին դրա հետևում, չնայած առավելություն ունեին նրանց նկատմամբ: Այդ տղաներից մեկը Բարն էր, մյուսը՝ Ալիմը, մոտ տասնինը տարեկան մի տղա:

Ձիավորները որոշ ժամանակ շրջեցին այս ու այն կողմ և ապա քշեցին ձիերը, գնացին: Երբ նրանք այլևս չէին երևում, ես ձայն տվեցի Բարին և պատմեցի այդ մասին: Նա սկզբում, երբ լսեց իմ ձայնը, որ գալիս էր ծառի վրայից, չգիտեր ինչ անել, և չափազանց զարմացել էր: Նա ասաց ինձ, որ ուշադիր նայեմ և հայտնեմ իրեն, երբ այդ մարդիկ նորից երևան: Իհարկե, նրանք որոշ սատանություն մտածում էին և երկար ժամանակով չէին գնացել: Լավ կլիներ, որ հեռացած լինեի ծառից, բայց չիջա: Բարն սկսեց լաց լինել ու գոռալ և ասելով, որ ինքն ու իր հորեղբոր որդի Զոնը (վերջինս մյուս երիտասարդն էր) այդ օրվա համար դեռ կհասուցեն, ասաց, որ իր հայրը և երկու եղբայրներն սպանվել են, իսկ թշնամիների կողմից սպանվել են ընդամենը երկու-երեք հոգի, որ Շեփերդստնները նրանց համար դարան են պատրաստել: Նա ասաց, որ հայրը և եղբայրները պետք է սպասեին ազգականների գալուն: Շեփերդստնները շատ ուժեղ էին և մենակ չէր կարելի դուրս գալ նրանց դեմ: Ես հարցրի, թե ի՞նչ եղան երիտասարդ Հարնին և միսս Սոֆիան: Ասաց, որ նրանք գետն անցել են և ապահով են: Ես ուրախ էի դրա համար: Բայց որքա՞ն զայրացած էր Բարը, որ այն օրը անտառում չէր հաջողվել Հարնին սպանել. ես նման բան երբեք չի լսել:

Հանկարծ բո՛ւմ, բո՛ւմ, լսվեց երեք թե չորս կրակոց: Շեփերդստններն առանց ձիերի դուրս էին սողոսկել անտարից և թիկունքից մոտեցել տղաներին: Տղաները նետվեցին գետը՝ երկուսն էլ վիրավորված: Մինչ սրանք օրորվելով իջնում էին հոսանքն ի վար, այդ մարդիկ վագեցին գետափի: Կրակում ու բղավում էին. «Սպանեցե՛ք դրանց, սպանեցե՛ք դրանց»: Դա այնպես վատ ազդեց ինձ վրա, որ թիզ էր մնում ծառից ցած գլորվեի:

Մտադիր չեմ պատմելու այն ամենը, ինչ տեղի ունեցավ: Եթե այդպիսի բան անեմ, նորից հիվանդանալու չափ կզարինութեմ: Լավ կլիներ, որ այդ գիշեր ես բոլորովին գետափ չզայի և չտեսնեի այդ բաները: Մինչև այժմ աչքերիս առջևից չեն հեռանում այդ տեսարանները: Քանի՛ անգամ եմ դրանք տեսել երազում:

Ես ծառի վրա այնքան մնացի, մինչև մթնեց. վախենում էի իջնել: Երբեմն լսում էի հեռավոր անտառից եկող կրակոցներ և երկու անգամ տեսա մարդկանց փոքր խմբեր, որոնք հրացաններն ուսներին, ձիերը քարատրով քշելով անցան փայտի պահեստի մոտով: Եզրակացրի, որ արյունահեղությունը դեռ շարունակվում է: Հոգեալես անշափ ընկճված էի և որոշեցի այլևս չանցնել այդ տան մոտով: Զգում էի, որ որոշ չափով մեղավոր էի այդ գործում: Հավատացած էի, որ այն թղթի կտորի նպատակն էր, որ միս Սոֆիան ժամը երկուսն անց կեսին մի տեղ հանդիպի Հարնիկն և փախչի նրա հետ: Մտածում էի, որ ես պարտավոր էի հորը հայտնել այդ թղթի, ինչպես նաև աղջկա տարօրինակ վարմունքի մասին: Այդ դեպքում գուցե միս Սոֆիային փակեին մի սենյակում, և այս ահավոր հրարանցումը երբեք տեղի չէր ունենա:

Ես ցած իջա ծառից և զգույշ քայլեցի գետափով: Շուտով գտա երկու դիակ: Մեծ դժվարությամբ նրանց քաշեցի գետափ: Շածկեցի նրանց դեմքերը և ինչքան կարող էի, արագ հեռացա: Բարի դեմքը ծածկելիս, նույնիսկ մի փոքր լաց եղա. նա իմ նկատմամբ շատ բարի էր:

Խսավարը թանձրացավ: Ես չգնացի տան մոտերքը. անտառով շրջանցեցի այն և շարժվեցի դեպի ճահիճը: Զիմը իր կղզում չէր: Վրագ քայլեցի դեպի խորշը, խճճվելով ուրենիների մեջ, շտապում էի բարձրանալ լաստը և հեռանալ այդ ահավոր տեղից: Լաստը չկար: Այս, ինչպես վախեցա: Մի րոպե շունչս կտրվեց: Զայն տվի: Ինձնից քանիհենզ ոտնաշափ հեռու լսվեց պատասխանը.

— Աստված իմ, այդ դո՞ւ ես, անուշիկս: Մի՛ աղմկիր:

Դա Զիմի ձայնն էր, մինչ այդ ոչ մի բան այդքան դուրեկան չէր հնչել ականջիս: Ափով քիչ վազեցի և բարձրացա լաստը: Զիմը գրկեց ինձ ու սեղմեց կրծքին: Այնքան ուրախացավ, երբ ինձ տեսավ: Նա ասաց.

— Տերն օրինի քեզ, որդի: Ես արդեն նորից մտածում էի, թե դու մեռած ես: Զերն այստեղ էր: Նա ասաց, որ իր կարծիքով դու սպանված պիտի լինես, որովհետև այլևս չես վերադարձել տուն: Ես հենց իհմա պատրաստվում էի լաստը տանել խորշիկով ներքև և հեռանալ այստեղից, եթե Զերը վերադառնար և որոշակիորեն ասեր, որ դու մեռած ես: Աստված իմ, որքան ուրախ եմ, որ նորից հանդիպեցինք, անուշիկս:

Ես ասացի.

— Շատ լավ: Այդ բոլորը լավ է: Նրանք էլ ինձ չեն գտնի և կկարծեն, թե սպանված եմ կամ գետը քշել-տարել է: Որոշ հիմք կա, որ այդպես մտածեն: Ժամանակ մի՛ կորցնի, Զիմ, և որքան կարող ես, գետի հոսանքով լաստն արագ առաջ տար:

Ես ինձ հանգիստ զգացի միայն այն ժամանակ, երբ լաստը երկու մղոն հեռացավ և արդեն Միսսիսիպի մեջտեղում էր: Կախեցինք մեր ազդանշանային լապտերը և կարող էինք ասել, թե նորից ազատ ու ապահով ենք: Երեկվանից բերանս բան չէի դրել: Զիմը տվեց եզիպտացորենի բիթներ, անսեր կաթ, խոզի միս, կաղամք և կանաչեն: Աշխարհում դրանից լավ բան չկա, մանավանդ երբ լավ է եփած: Մինչ ես ընթրում էի, մենք զրուցում էինք, հաճելի ժամանակ անցկացնում: Անշափ ուրախ էի, որ ազատվեցի այդ տոհմակովից, ինչպես և Զիմը, որ վերջապես հեռացավ ճահճից: Գտնում էինք, որ վերջին հաշվով լաստից ավելի լավ տուն չկա: Ուրիշ տեղերն այնպես ճնշող ու խեղդող էին մեզ

համար: Բայց այդպես չէ լաստը: Լաստի վրա դուք կարող եք ծեզ բոլորովին ազատ, հանգիստ ու անհոգ զգալ:

## Գլուխ տասնիներորդ

Անցավ երկու-երեք օր ու զիշեր: Կարող եմ ասել, որ այդ օրերն ու զիշերներն անցան լողալով՝ խաղաղ, հանդարտ ու հաճելի: Ահա թե ինչպես էինք անցկացնում ժամանակը: Այստեղ գետը սարսափելի մեծ էր: Որոշ տեղերում լայնությունը հասնում էր մեկսկես մղոնի: Գիշերներն առաջ էինք շարժվում, իսկ ցերեկները կանգ առնում ու թաքնվում: Հենց որ զիշերը մոտենում էր իր վախճանին, մենք դադարեցնում էինք նավարկելը, կապում լաստը (գրեթե միշտ կանգնած ջրերում, առափնյա ցցուն մի կետից), ապա կտրում էինք կաղամախու, ուռենու ճյուղեր ու լաստը թաքցնում դրանց տակ: Այնուհետև ջուրն էինք զցում ձկնորսական կարթերը, մտնում գետը, լողանում թարմանալու ու զովանալու համար: Ապա նատում էինք ավագու հատակին, որտեղ ջրի խորությունը ծնկից վերև էր լինում, և դիտում, թե ինչպես է բացվում օրը: Ոչ մի տեղից ոչ մի ձայն չէր լսվում. կատարյալ լոռություն, կարծես ամբողջ աշխարհը քնած էր: Երբեմն միայն գորտերն էին կոլպում: Հեռու, ջրի երեսին նայելիս, ամենից առաջ երևում էր մի տեսակ աղոտ զիծ: Դա գետի մյուս ափի անտառն էր: Ուրիշ ոչինչ: Ապա երկնքում երևում էր դժգույն մի տարածություն, որը հետզիետև մեծանում էր, ծավալվում չորս կողմը: Հեռվում մեղմանում էր գետը և այլևս այնպես սև չէր երևում, ինչպես զիշերը. ավելի գորշ գույն էր ստանում: Կարելի էր տեսել մութ, սև բծեր, որ գետի ընթացքով անընդհատ շարժվում էին առաջ, դեպի հեռուները. առևտրական մեծ տափանավեր կամ նման բաներ ու երկար սև երիզներ՝ լաստեր: Երբեմն կարելի էր լսել թիակների ճոխնչ կամ խառնափնթոր ձայներ: Այնքան խաղաղ էր և ձայնը այնքան հեռվից էր զայխ: Ջրի երեսին երևում էր մի երիզ, և դրանից մարդիկ եզրակացնում են, որ այդտեղ արագ հոսանքի մեջ կա ինչ-որ ցցվածք. վրան բեկվում է հոսանքը և երիզին այդպիսի տեսք տալիս: Ապա կտեսնեք ջրից գալարաձև բարձրացող մշուշ: Արևելքը շառագունում է, կարմրում է գետը, և դուք հեռվում անտառի եզրին, գետի մյուս ափին նշմարում եք փայտաշեն մի խրճիթ, որը հավանորեն փայտի պահեստի պահակների կացարանն է: Ապա սկսում է մի մեղմաշունչ զեխյուռ, որ անտառի ու ծաղիկների բուրմունքով օծված՝ հովհարում է մարդկանց, այնքան անուշ: Երբեմն այդպես չի լինում, որովհետև տեղ-տեղ թափած նեխող ձկներ և նման բաները տարածում են գարշահոտություն: Ահա, օրը լրիվ լուսանում է, և ամեն ինչ ժադում է արևի տակ, երգող թռչունները սուրում են ամենուրեք:

Այժմ արդեն փոքրիկ ծովիր չի նկատվում: Կարթերից հանում ենք մի քանի ծուկ և պատրաստում տաք նախաճաշ: Դիտում ենք գետի ամայի տարածությունը, ծուլանում ու ծովությունից նիրիում: Շուտով բացում ենք մեր աշքերը և նայում, թե այդ ինչ է, որ արթնացրեց մեզ. գուցե մի շոգենավ է, որ հևալով բարձրանում է գետն ի վեր, բայց այնքան հեռու է մեր ափից, որ չես կարող ասել. անիվը կողքին է, թե՛ հետնամասում:

Այնուհետև ժամերով ոչինչ չես տեսնում կամ լսում, բացի ջրային միապաղաղ ամայությունից: Հանկարծ հեռվում երևում է մի լաստ, որ սահում-անցնում է ջրի վրայով: Գուցե այնտեղ մի մարդ փայտ է կտրում, որովհետև լաստի վրա մեծ մասամբ այդ են անում: Կարելի է տեսնել կացնի փայլիղոցը, որ իշնում է ներքեւ, թեև ոչինչ չես լսում:

Կարելի է տեսնել կացինը վեր բարձրանալիս, մարդու գլխից վեր, և ապա լսել «թըխկ»: Որքան ժամանակ է անցնում, մինչև ձայնը զալիս է ջրի վրայով:

Այսպես էինք մենք անցկացնում օրերը, ծուլորեն շուր գալով կողքից կողք, ունկնդրելով անդորրությանը:

Մի անգամ թանձր մառախուղը պատել էր մեզ, և լաստերն ու նավակները թիթեղներ էին ծեծում, որպեսզի շոգենավերը նրանց վրա չգան: Մի տափանավ թե լաստ այնքան մոտիկից անցավ, որ լսում էինք մարդկանց խոսակցությունը, հայիոյանքն ու ծիծաղը, այն է բավական պարզ: Բայց նրանց չէինք տեսնում: Դա սարսուի զգացմունք էր առաջացնում մեր մեջ. կարծես ոգիներն էին խոսում օդում:

Չիմն ասում էր, թե իր կարծիքով դրանք ոգիներ են: Բայց ես առարկեցի.

— Ոչ, ոգիները չեն ասի. «Գրողը տանի այս անհծված մառախուղը»:

Շուտով, երբ մթնում էր, մենք հեռանում էինք ափից: Լաստը բերում էինք գետի մեջտեղը, ազատ թռղնում, որ գնա, ուր տանում է գետի հոսանքը: Ապա լցնում էինք ծիսամորճերը, ոտքներս կախում ջրի մեջ և խոսում դեսից-դենից: Միշտ մերկ էինք, գիշեր թե ցերեկ, հենց որ մժեղները մեզ հանգիստ էին թռղնում: Բարի ծնողների տված շորերը շատ լավն էին և ազատ հազնել հնարավոր չեր: Բացի այդ ես այնքան էլ շորի սիրահար չէի:

Երբեմն այդ ամբողջ գետի վրա երկար ժամանակ միայն մենք էինք լինում: Դիմացը՝ ջրի այն կողմում, երևում էին թմբեր և կղզիներ, գուցեն մի կայծ, որը պետք է մի իրճիթի պատուհանի մոմք լիներ, երբեմն էլ ջրի վրա կարելի էր տեսնել մի քանի կայծ՝ լաստի կամ տափանավի վրա, գուցեն և լսվեր ջութակի նվազ կամ երգի ձայն՝ նույն լաստերից: Հաճելի է ապրել լաստի վրա: Մեր վերևում երկինքն ամբողջովին պսակավորված էր աստղերով, և մենք սովորաբար պառկում էինք մեջքներիս, ու նայում վեր, մտածերով. դրանք ստեղծված են, թե՞ իրենք իրենց են հայտնվել: Զիմը պնդում էր, թե ստեղծված են, իսկ ես ասում էի, թե իրենք իրենց են հայտնվել: Մտածում էի, թե որքան ժամանակ է պետք այդքանն ստեղծելու համար: Զիմն ասում էր, թե գուցեն լուսինն է ածել: Դա շատ բանական էր թվում ինձ: Չեի առարկում, որովհետև տեսել էի, թե ինչ մեծ թվով ձվեր է ածում գորտը: Այնպես որ այդ բացատրությունը համոզիչ էր: Մենք սովորաբար հետևում էինք վայր ընկնող աստղերին և նայում, թե ինչպես դրանք երկինքը երիզելով ցած են իշնում: Զիմի կարծիքով, դրանք փշացած ձվեր էին և բնից դուրս էին նետվում:

Ամեն գիշեր մեկ-երկու անգամ տեսնում էինք շոգենավեր, որ սահելով անցնում էին մթության մեջ: Երբեմն ծիսնելույզից դուրս էին թափվում անհամար կայծեր, որոնք անձրևի նման տեղում էին ջրի մեջ: Այդ տեսարանն անչափ գեղեցիկ էր: Այնուհետև նավը շուր էր զալիս մի անկյուն. լույսերը մեզ համար դադարում էին պսպաղալուց. փնչոցն այլևս չեր լսվում, և գետը նորից խաղաղվում էր: Նավի գնալուց բավական ժամանակ հետո առաջացած ալիքը հասնում էր մեզ և մի փոքր օրորում լաստը: Այնուհետև անորոշ ժամանակով այլևս ոչինչ չէինք լսում, բացի գորտերի կրկողցից: Չէինք կարող ասել, թե մեկ է՞ր նաև կզա:

Կեսզիշերից հետո առափնյա բնակիչները քնում էին, և երկու-երեք ժամ գետեղերը բոլորովին մթնում էր, իրճիթների պատուհաններից այլևս լույսեր չէին երևում: Այդ լույսերը մեր ժամացույցներն էին: Առաջին իսկ լույսի երևալը նշանակում էր, որ

արշալույսը մոտ է, և մենք որոնում էինք թաքնվելու հարմար տեղ ու անմիջապես կապում լաստը:

Մի օր լուսադեմին մի մակույկ գտա և ծանծաղուտով անցա ափ: Կղզուց այդ լայնությունը ընդամենը երկու հարյուր յարդ էր: Թիավարելով բարձրացա գետակն ի վեր, որի ափերին նոճիներ էին աճում: Ուզում էի տեսնել, թե հատապուղներ չկա՞ն: Երբ անցնում էի մի տեղով, ուր արահետը հասնում էր գետակի ծանծաղուտը և շարունակվում մյուս կողմի վրա, տեսա երկու մարդ, որ աճապարանքով, որքան ճանապարհի նեղությունը թույլ կտար, վազում էին արահետով: Մտածեցի, թե հաշիվս վերջացավ, որովհետև միշտ, երբ մեկը հետապնդում է մի ուրիշի, կարծում էի, թե հետապնդվողը ես կամ, գուցե, Զիմը: Ուզեցի շտապ հեռանալ, բայց նրանք արդեն շատ էին մոտեցել ինձ և կանչում, աղերսում էին փրկել իրենց կյանքը: Ասացին, որ իրենք ոչինչ չեն արել, և դրա համար են իրենց հալածում, նույնիսկ շներով: Նրանք ուզում էին ցատկել նավակի մեջ, բայց ես ասացի.

— Սպասեցե՛ք: Ես դեռ շան և ձիերի ձայն չեմ լսում. դուք ժամանակ ունեք ունեք գաղտագողի անցնել մացաների միջով և ափով մի քիչ բարձրանալ. հետո կարող եք մտնել ջուրը, հունով իջնել ինձ մոտ և բարձրանալ մակույկը. շները հոսուտելով կզան, կկորցնեն մեր հետքը:

Նրանք այդպես էլ արին: Շուտով, երբ արդեն մակույկում էին, ես շուր եկա դեպի կղզյակը, և մոտ հինգ կամ տասը րոպեից հետո մենք հեռվից լսեցինք շների հաչոց ու մարդկանց զոռոց: Լսում էինք, թե ինչպես էին գալիս դեպի գետակը, բայց չէինք տեսնում: Ծփում էր, թե նրանք մի պահ կամ էին առել և մոլորված՝ փախչողներին որոնում էին շրջակայրում: Մենք անընդհատ հեռանում էինք, և շուտով գրեթե չէինք լսում նրանց ձայները: Երբ անտառը մեկ մղոն մնաց մեր ետևում, և մենք արդեն հասնում էինք մեծ գետը, ամեն ինչ խաղաղ էր: Թիավարեցինք դեպի կղզին և ապահով թաքնվեցինք կաղամահիների մեջ:

Փախչողներից մեկը կլիներ յոթանասուն տարեկան կամ գուցե ավելի: Նա ուներ ճաղատ գլուխ և սպիտակած մորուր: Գլխին դրել էր հին, մաշված, անճոռնի մի զիարկ, իսկ հազին կար բրդյա ճարպոտած, հին, կապույտ շալվար, որի փողքերը դրված էին երկարաճիտ կոշիկների մեջ: Տնական տարատականեր... ոչ սիսալվում եմ, միայն մեկ տարատակալ ուներ: Ուներ բամբակե հին, երկարափեշ, կապույտ վերարկու՝ արույրե ողորկ կոճակներով: Վերարկուն զցել էր թևին: Երկուսն էլ ունեին մկնագույն կապերտից պատրաստած մեծ խուրչիններ: Դրանք լիքն էին: Մյուսը կլիներ մոտ երեսուն տարեկան: Հագուստը նույնքան սովորական էր:

Նախաճաշից հետո մենք բոլորս պառկեցինք հանգստանալու և սկսեցինք զրուցել: Մեր հայտնաբերած առաջին բանն այն էր, որ այս մարդիկ իրար չէին ճանաչում:

— Ինչի՞ց ծագեց ձեր այս անախորժությունը, — հարցրեց ճաղատը մյուս մարդուն:

— Դե, ես մի բան էի վաճառում, որ ատամներ էր մաքրում: Մաքրում էր, բայց էմալն է հետքը: Մի զիշեր ավել մնացի, քան պետք էր, և նոր էի ծլկել, երբ ձեզ հանդիպեցի բաղարի այս մասում: Դուք հայտնեցիք, թե գալիս են, և ինձ խնդրեցիք օգնել ձեզ, որ հեռանանք: Ես ասացի, թե նման անախորժության ինքս էլ եմ սպասում և կուզենայի ձեզ հետ փախչել: Ահա իմ ամբողջ պատմությունը: Իսկ ի՞նչ է պատահել ձեզ:

— Ես այստեղ մեկ շաբաթ քարոզում էի ժումկալություն և կանանց սիրելին էի, որովհետև հարբածներին բոլորովին չէի խնայում. ամեն երեկո ստանում էի հինգ-վեց դոլար, շնչից տասը ցենս: Երեխաներից ու նեզրերից փող չէի վերցնում: Գործը հետզհետեւ լավանում էր, երբ երեկ երեկոյան ինչ-որ մեկը չարամտորեն լուր տարածեց, թե ես ինքս ժամանակն անց եմ կացնում խմելով: Մի նեզր առավոտյան արթնացրեց ինձ, հայտնեց, որ մարդիկ ձիերով ու շներով հետզհետեւ հավաքվում են և շուտով այստեղ կլինեն: Ինձ տալու են կես ժամ ժամանակ, որպեսզի հեռանամ, ապա հետապնդելու են մինչև ուժասպառ անեն: Եվ եթե ինձ բռնեն, վրաս սև ձյութ կրսեն, փետուրներ կկպցնեն և ման կածեն ձողի վրա նստեցրած: Ես այլևս նախաճաշի չապասեցի: քաղցած չէ:

— Ծերուկ, — ասաց երիտասարդը, — ինձ թվում Է՛ մենք կարող ենք միացնել մեր ուժերը: Ի՞նչ կարծիքի եք:

— Դեմ չեմ: Ո՞րն է ձեր հիմնական զբաղմունքը:

— Արիեստով տպագրիչ եմ, պատահում է, որ զբաղվում եմ պատենտավոր դեղերի գործով, խաղում եմ բեմերում, ողբերգակ եմ, երբեմն զբաղվում եմ մեսմերականությամբ, զանգարանությամբ, երբ առիթ է լինում, տախս եմ երգի ու աշխարհագրության դասեր, երբեմն դասախոսություններ եմ կարդում, մի խոսքով, ինչ պատահի: Այնպես որ արած մի բան չէ: Իսկ դո՞ւք ինչ բնագավառի մարդ եք:

— Ժամանակին շատ եմ զբաղվել բժշկությամբ: Բուժում էի՝ ձեռքս քաղցկեղով, կաթվածով և նման հիվանդություններով տառապողների վրա դնելով: Կարող եմ բավական լավ բախտ գուշակել, եթե որևէ մեկից հարցումիործով իմանամ անհրաժեշտ փաստերը: Քարոզելը նույնպես իմ գործն է եղել. քարոզել եմ բացօթյա աղոթաժողովներում և զբաղվել միսիոներությամբ:

Մի պահ բոլորը լոեցին, ապա երիտասարդ մարդը հառաչեց.

— Ավանդ:

— Ինչո՞ւ եք հառաջում, — հարցուց ճաղատը:

— Ո՞ւմ մտքով կանցներ, թե այս օրը կընկնեմ, այնքան կնվաստանամ, որ կիշնեմ մինչև այս միջավայրը:

Եվ նա հին շորով սրբեց աչքի անկյունը:

— Ասացեք, խնդրեմ, մի՞թե այս միջավայրը ձեզ համար լավ չէ, — ասաց ճաղատը բավական հանդուզն և մեծամիտ եղանակով:

— Այո, լավ է. դրան էլ հազիվ եմ արժանի, որովհետև ո՞վ ինձ այսքան նվաստացրեց, երբ ես այնքան բարձր էի: Իհարկե, ինք: Ես ձեզ չեմ մեղադրում, ջենտլմեններ, ամենևին էլ ոչ ոչ որի չեմ մեղադրում: Տեղն է ինձ: Թող սառնասիրտ աշխարհն ինձ համար անի ամենավատ բանը: Ես միայն մի բան գիտեմ. ինչ-որ տեղ ինձ սպասում է իմ բաժին գերեզմանը: Աշխարհը սովորականի նման կարող է շարունակել իր ընթացքը և ինձնից խլել ամեն ինչ՝ իմ սիրելի մերձավորներին, ունեցվածքս, ամեն ինչ: Բայց այդ աշխարհը չի կարող ինձանից խլել իմ գերեզմանը: Մի օր ես կպահեմ այնտեղ և կմոռանամ այս ամենը, և իմ խորտակված խեղճ սիրտը հանգիստ կառնի:

Նա շարունակեց արտասվել:

— Ըստեք ձեր խորտակված խեղճ սիրտը, — ասաց ճաղատը, — ինչո՞ւ եք ձեր խորտակված խեղճ սրտի հառաջանքը մեր գլխին թափում: Մենք ոչինչ չենք արել:

— Ոչ, զիտեմ, որ ոչինչ չեք արել: Ես ձեզ չեմ մեղադրում, ջենտլմեններ: Ինքս եմ ինձ ցածրել, այո, ինքս եմ արել: Ուստի տեղն է, որ տառապեմ, միանգամայն տեղին: Ես չեմ զանգատվում:

— Ասում եք ցած եք իշել, բայց ինչի՞ց: Ինչի՞ց եք ցած իշել:

— Օ՛, դուք ինձ չեք հավատում... Աշխարհն ինձ երբեք չի հավատա... լավ. թողնենք այդ: Իմ ծննդյան խորհրդավորությունը...

— Ձեր ծննդյան խորհրդավորությունը: Ուզում եք ասել...

— Ջենտլմեններ, — խոսեց երիտասարդը շափազանց հանդիսավոր եղանակով, — ես ձեր առջև բաց կանեմ այդ խորհրդավորությունը. զգում եմ, որ կարող եմ վստահել ձեզ: Ես ծագումով դուքս եմ:

Զիմն աչքերը չոեց, երբ լսեց այդ խոսքերը: Խոստովանում եմ, նույն վիճակում էի և ես: Ճաղատն ասաց.

— Ոչ: Վյդպիսի բան չի կարող լինել:

— Այո: Իմ պապի հայրը՝ Բրիջուորթը դրսի անդրանիկ որդին, անցյալ դարի վերջերին փախել է մեր երկիրը՝ ազատության անարատ օղ շնչելու: Ամուսնացել է այստեղ և մեռել, թողնելով մեկ որդի: Մոտավորապես նույն ժամանակները մեռել է նրա հայրը: Հանգուցյալ դրսի երկրորդ որդին տիրացել է այդ տիտղոսին և կալվածներին, մոռացության տալով մանկանը՝ իսկական ժառանգին: Ես այդ մանկան ուղղակի թոռն եմ՝ Բրիջուորթը օրինական դուքսը: Եվ ահա ես, լրված, բարձր աստիճանից զրկված, մարդկանց կողմից հալածված, սառնասիրտ աշխարհի կողմից արհամարհված, բզկտված, տանջված, սրտաբեկ և իշած մինչև լաստի վրա ապաստանող ոճրագործ մարդկանց շարքը:

Զիմն անշափ խորաց նրան: Խործում էի և ես: Փորձեցինք միխթարել, բայց նա ասաց, որ դա անօգուտ է, որ ինքը շատ միխթարվել չի կարող: Ասաց, որ եթե մենք իրեն դուքս համարենք, դա ավելի լավ կլինի իր համար, քան որևէ այլ բան: Մենք հավաստիացրինք, որ կհամարենք, միայն թող ասի, թե ինչո՞վ է դա արտահայտվելու: Նա ասաց, որ մենք իր հետ խոսելիս պետք է խոնարհվենք, և ասենք «Ձերդ պայծառափայլություն» կամ «Տեր իմ» կամ «Ձերդ լորդություն», իսկ եթե նույնիսկ նրան պարզապես անվանենք «Բրիջուորթը», որը նրա ասելով տիտղոս է և ոչ անուն, չի վիրավորվի: Բացի այդ, ճաշելիս մեզանից մեկը պետք է սպասրկի և կատարի նրա ցանկությունը:

Դե, դժվար բան չէր, և մենք համաձայնեցինք: Ճաշի ժամանակ սկզբից մինչև վերջը Զիմը, կանգնած նրա կողքին, սպասարկում էր, ասելով. «Ձերդ պայծառափայլությունը չի՞ ցանկանա մի քիչ սրանից, նրանից» և այլն: Ո՞վ չէր նկատի, որ դա մեծ բավականություն է պատճառում նրան:

Բայց ծերունին շուտով լրեց: Ըստ երևույթին, նրա սրտով չէր այն հոգատարությունը, որով շրջապատել էինք դուքսին: Թվում էր, թե նրա մտքում ինչո՞ր բան կար: Իրոք, կեսօրից հետո նա ասաց.

— Այս կողմ նայեցեք, Բրիջուորթը: Ես շատ ցավում եմ ձեզ համար, բայց դուք միակ անձնավորությունը չէք, որ նման նեղությունների մեջ եք:

— Մի՞թե:

— Այո՛, մենակ դուք չեք, որ հանիրավի զահավիժել եք բարձր դիրքից:

— Ավանդ:

— Ոչ, դուք միակ անձնավորությունը չեք, որի ծագումը զաղտնիք ունի:

— Ծերունին նույնպես սկսեց հեկեկալ:

— Սպասեցեք: Ի՞նչ եք ասում:

— Բրիջուորթը, կարո՞ղ եմ վստահել ձեզ, — ասաց ծերունին, դեռ շարունակելով յուրահատուկ հեկեկանքը:

— Մինչև գերեզման: — Նա բռնեց ծերունու ձեռքը, սեղմեց և ասաց. — Ասացեք ձեր կյանքի զաղտնիքը:

— Բրիջուորթը, ես հանգուցյալ դոֆինն եմ: Հավատացեք, այս անգամ արդեն Զիմն ու ես չուցինք մեր աչքերը: Ապա դուքսն ասաց.

— Ո՞վ եք դուք:

— Այո, բարեկամներ, դա միանգամայն ճիշտ է: Ձեր աչքերը հենց այս պահին նայում են անհետացած խեղճ դոֆինին, Լյուդովիկոս Տասնյոթերորդին, Լյուդովիկոս Տասնվեցերորդի և Մարիա Անտուանետի<sup>ԱԱ</sup> որդուն:

— Դո՞ւք: Վյդ տարիքի՞ն: Ո՞չ: Գուցե ուզում եք ասել հանգուցյալ Կառլոս Մեծն եք.<sup>ԱԱ</sup> պետք է, որ դուք առնվազն վեց-յոթ հարյուր տարեկան լինեք:

— Զախորդությունից է, Բրիջուորթը, ձախորդությունից: Զախորդության հետևանք են այս սպիտակ մազերը և անժամանակ ճաղատությունը: Այո, շենտլմեններ, դուք ձեր առջև տեսնում եք Ֆրանսիայի թշվառ, թափառական, արտաքսված, ոտնակոխ արված, կապույտ քաթան հազած, տառապյալ թագավորին:

Նա այնպես էր աղաղակում, որ ես ու Զիմը չգիտեինք, թե ինչ անենք: Անշափ ցավում էինք և միաժամանակ ուրախ ու հպարտ էինք, որ նա մեզ հետ է: Սկսեցինք սփոփել նրան, ինչպես մինչ այդ սփոփել էինք դրսին: Բայց նա ասաց, որ դա անօգուտ է. նրան ոչինչ չի հանգստացնի, բացի մահից, որը վերջ կտա այդ բոլորին, թեև ասում էր, որ հաճախ ավելի հանգիստ ու ավելի լավ է զգում իրեն, երբ մարդիկ վարվում են իր հետ համաձայն իր իրավունքների և իշխում են մի ծնկի վրա, որպեսզի խոսեն իր հետ, միշտ իրեն կանչում են «Զերդ մեծություն» և ճաշի ժամանակ սկզբում սպասարկում են իրեն և իր ներկայությամբ չեն նատում, մինչև ինքը թույլ չտա: Զիմն ու ես սկսեցինք նրան անվանել «Զերդ մեծություն», նրա համար անել այս կամ այն ծառայությունը և այնքան կանգնած մնալ, մինչև ասեր, թե կարող ենք նստել: Վյդ բանը նրան շատ օգնեց, և նա իրեն զվարք ու սփոփած էր զգում: Բայց դուքսը նկատելիորեն թթվեց: Ըստ երևույթին, այնքան էլ գոհ չէր իրերի այս ընթացքից: Վյնուամենայնիվ, թագավորը բարեկամաբար էր վարվում նրա հետ, ասելով, թե դրսի պապի հոր և Բրիջուորթը մյուս բոլոր դուքսների մասին լավ կարծիք է ունեցել իր հայրը, նրան հաճախ թույլ տվել գալու իր պալատը, բայց դուքսը երկար ժամանակ փրփած մնաց մինչև թագավորն ասաց.

— Ըստ երևույթին, մենք երկար ժամանակ կմնանք այս լաստի վրա, Բրիջուորթը, ուստի ի՞նչ միտք ունի այդպես թթվել: Դրանից միայն անախորժություն կծագի: Ես հանցավոր

չեմ, որ դուքս չեմ ծնվել, ոչ ել դուք՝ որ թագավոր չեք ծնվել: Ուրեմն՝ ել ինչո՞ւ մտատանջվել: Լավագույն ձևով օգտվիր այն հնարավորություններից, որ ձեռք ես զցում. ահա՛ իմ նշանաբանը: Վաս չէ, որ մենք ընկել ենք այստեղ. առատ սնունդ և հանգիստ կյանք: Դե, տվեք ձեր ձեռքը, դուքս, և մենք բոլորս բարեկամներ կիհնենք:

Դուքսը մեկնեց իր ձեռքը: Այդ տեսներով Զիմն ու ես շատ ուրախացանք: Չքացավ ամբողջ անախորժությունը, և մենք մեզ լավ զգացինք, որովհետև չկա ավելի վաս բան, բան լաստի վրա գժտվելը: Լաստի վրա ամենացանկալի բանն այն է, որ բոլորն ել գոհ մնան, շիտակ ու բարի լինեն իրար նկատմամբ:

Երկար ժամանակ պետք չէր հասկանալու համար, որ այս ստախոսները ո՞չ թագավոր են, ո՞չ ել դուքս, այլ սոսկ ստոր խարերաներ ու խարդախներ: Բայց ես ոչինչ չասացի, ոչինչ ցույց չտվի, ամեն ինչ պահեցի իմ ներսում: Ամենալավն այդ է, որովհետև նման դեպքում մարդ խոյս տված կիհնի կրիվնեից ու գլխացավանքից: Եթե ուզում էին, որ մենք իրենց թագավոր ու դուքս անվանեինք, ապա ես դեմ չէի այնքան, որքան այդ կապահովեր մեր ընտանիքի խաղաղությունը: Այդ մասին միտք չուներ Զիմին հայտնել, և ես նրան ոչինչ չասացի: Եթե հորիցս բան չէի սովորել, ապա գոնե այդքանը գիտեի. մարդկանց հետ յոլա գնալու ամենալավ միջոցը այն է, որ թույլ տաս նրանց անել այն, ինչ իրենք են ուզում:

## Գլուխ բասներորդ

Նրանք մեզ բավական շատ հարցեր տվեցին. ուզում էին իմանալ, թե ինչու ենք այդպես թաքցնում լաստը և ցերեկները կանգ առնում, փոխանակ առաջ շարժվելու. հարցնում էին, թե Զիմը փախած ներգ չէ՞: Ես ասացի.

— Աստված իմ, կարո՞՞ն է փախած նեզրը դեպի հարավ գնալ:

Նրանք համաձայնեցին, որ չի կարող: Ես ստիպված էի որոշ հաշիվ տալ նրանց, ուստի ասացի.

— Իմ ազգականները ապրում էին Փայքի գավառում, Միսսուրիի նահանգում, որտեղ ես եմ ծնվել: Նրանք բոլորը մեռել են: Ողջ էին միայն հայրս, եղբայրս՝ Այրը և ես: Հայրս որոշեց թողնել ամեն ինչ և գնալ ապրել հորեղբայր Բենի հետ, որը մի փոքրիկ ազարակ ունի գետափին, Օղեանից քառասունչորս մղոն ներքեւ: Հայրս շատ աղքատ էր, պարտքեր ուներ, և երբ նա բոլորի հետ հաշիվը փակեց, նրան մնաց տասնվեց դոլար, մեկ էլ մեր այս նեզր Զիմը: Դա բավական չէր, որ ճանապարհորդեինք հազար չորս հարյուր մղոն, թեկուզեւ նավի տախտակամածի տոմս առնեինք: Ինչ որ է, մի անգամ, երբ գետը վարարել էր, հորս բախտը մի քիչ բանեց. գետում բռնեց այս լաստամասը, և մենք որոշեցինք դրանով իշնել հարավ՝ Նոր Օղեան: Հորս երջանկությունը երկար չտևեց: Մի գիշեր ինչ-որ շոգենավ անցավ լաստի առաջամասի անկյան վրայով: Մենք բոլորս ընկանք ջուրը և սուզվեցինք նավի անիվներից էլ ներքեւ: Զիմն ու ես ողջ-առողջ դուռս եկանք ջրի երեսը, բայց հայրս հարրած էր, եղբայրս էլ հազիվ չորս տարեկան լիներ: Նրանք այլևս ջրի երեսին չերևացին: Ինչ որ է, հաջորդ մեկ-երկու օրը մենք բավականին նեղվեցինք. մարդիկ մակույկներով մոտենում էին մեզ և փորձում Զիմին խել ինձնից, ասելով, թե իրենք հավատացած են, որ նա փախած նեզր է: Այդ պատճառով է այժմ ցերեկով այլս չենք շարունակում ճանապարհը: Գիշերը մարդիկ մեզ նեղություն չեն տալիս:

Դուքսն ասաց.

— Ինձ թույլ տվեք, և ես մի միջոց կգտնեմ ցերեկը ճանապարհորդելու, եթե ցանկանաք: Ես այս հարցի մասին լավ կմտածեմ և մի հարմար ծրագիր կկազմեմ: Այսօր թող սովորականի պես լինի, որովհետև մենք, իհարկե, չենք ուզենա ցերեկով ներքևի քաղաքի մոտով անցնել. դա կարող է վատ վերջանալ:

Իրիկնադեմին երկինքը մռայլվեց, զգացվում էր, որ անձը է զայու: Երկնակամարում հուրիբաց կայծակը, տերևներն սկսեցին դողդողալ: Լավ քան չէր սպասվում, և դա դժվար չէր նկատել: Դուքսը և թագավորը շարժվեցին դեպի լաստի վրայի հյուղակը, տեսնելու, թե ինչ են նման մեր անկողինները: Իմ անկողինը քաղկացած էր ծղոտով լցրած մի ներքնակից և ավելի լավ էր, քան Զիմինը, որը եզիպտացորենի կեղևով էր լցրած: Կեղևով լցրած ներքնակի մեջ միշտ լինում են զիմիկներ. դրանք ցավեցնում են մարդու կողերը, և երբ շուռումուռ ես զախս, չորացած կեղևները այնպիսի ճոճոց են հանում, կարծես չոր տերևների կույտի վրա լինես: Այնպես են խշխշում, որ արթնացնում են քնած մարդուն: Ինչ որ է, դուքսը որոշեց վերցնել իմ անկողինը: Բայց թագավորը թույլ չտվեց: Նա ասաց.

— Ինձ թվում է, թե աստիճանի տարբերությունը պետք է հասկանալի լիներ ձեզ, որ եզիպտացորենի կեղևով լցրած ներքնակը հարմար չէր լինի ինձ: Թող ձերդ պայծառափայլությունը վերցնի կեղևով ներքնակը:

Նորից Զիմն ու ես մի րոպե քրտնեցինք. վախենում էինք, թե նրանց միջև էի խոռվություն կծագի: Շատ ուրախացանք, երբ դուքսն ասաց.

— Իմ ճակատագիրն է միշտ լինել ճնշողի երկաթե կրնկի տակ, թաղվել ճահճի մեջ: Դժբախտությունն արդեն կոտրել է իմ երբեմնի հապատ հոգին. ես զիջում եմ: Ենթարկվում եմ. դա է իմ ճակատագիրը: Եվ դա է կարող եմ տանել:

Հենց որ մթնեց, ճանապարհ ընկանք: Թագավորն ասաց, որ պետք է հնարավորին չափ գետի մեջտեղով գնալ և ոչ մի լույս չվառել, մինչև քաղաքի քավականաշափ հեռանանք: Շուտով երևաց լույսերի մի փոքրիկ փունջ. դա քաղաք էր: Մենք հաջողությամբ կես մղոն անցանք դրա առջևով: Երբ արդեն քառորդ մղոն հեռացել էինք, բարձրացրինք մեր ազդանշանային լապտերը: Մոտ ժամը տասին սկսեց անձրևել: Չամին փշում էր, երկինքը որոտում, կայծակը լուսավորում էր ամեն ինչ: Թագավորը մեզ երկուսի պատվիրեց կանգնել և դիտել շրջապատը մինչև եղանակը լավանա: Ապա նա և դուքսը սողոսկեցին հյուղակը, պառկեցին քնելու: Ժամը տասներկուսից հետո ես էի հերթապահելու, բայց չէի ուզում քնել մինչև իմ ժամանակը գար, նոյնիսկ եթե անկողին է ունենայի, որովհետև շաբաթվա ոչ բոլոր օրերին է ատիթ լինում տեսնելու այսպիսի փոթորիկ: Աստված իմ, ինչպես էր մոնչում քամին: Եվ ամեն վայրկյան այնպիսի շլացուցիչ լույս էր բռնկվում, որ կես մղոնի վրա լուսավորում էր ալիքների սալիսակ կատարները: Կարելի էր տեսնել կղզիներ, որոնք անձրևի միջից թվում էին փոշոտված: Ծառերը քամուց բախվում էին իրար: Լսվում էր դդրյուն. բռ' ում, բռ' ում, բա' մ, բռ' ում: Եվ որոտը գոռալով, մոնշալով հեռանում էր: Այնուհետև, ճերքելով երկինքը, շողում էր փայլակը, և լավում էր ուժեղ հարված: Երբեմն քիչ էր մնում ալիքներն ինձ քշեին, տանեին լաստի վրայից: Հազիս շոր շունեի և ոչ մի քանի ուշադրություն չէի դարձնում: Նավարկության համար վնասակար որևէ շրասույզ ծառից կամ ցցվածքից չէինք վախենում: Կայծակը շարունակ մեր շրջապատն այնպես էր լուսավորում, որ մենք շուտ էինք նկատում դրանք և խույս տալու համար լաստի գլուխը շուրջումուռ էինք տալիս:

Իմ հերթափոխությունը ժամը տասներկուսից հետո էր, ինչպես ասացի, բայց արդեն քունս գալիս էր: Զիմն ասաց, որ զիշերվա առաջին կեսն ինքը կհերթապահի, և ես կարող եմ քննել: Այդ տեսակետից նա շատ դիմացկուն էր: Ես մտա հյուղակը, բայց թագավորն ու դուքսն իրենց ոսքերն այնպես անճռռնի էին տարածել, որ ինձ համար տեղ չէր մնացել: Պառկեցի հյուղակի առջև: Անձրևին ուշադրություն չէի դարձնում, որովհետև տաք էր, և ալիքներն այժմ արդեն այնքան շատ չէին բարձրանում: Ժամը երկուսին նորից սկսեց ալեկոծությունը: Զիմն ուզում էր ինձ արթնացնել, բայց փոխել էր մտքը: Նրա կարծիքով ալիքները դեռ այնքան էլ բարձր չէին, որ վնաս տային: Սակայն սխալվեց, որովհետև հանկարծ բարձրացավ մի ահազին ալիք և ինձ ցած գլորեց: Զիմը ծիծաղից մեռնում էր: Նա իմ տեսած նեգրերից ամենածծաղկուտն էր:

Ես անցա պահակության, և Զիմը պառկեց ու սկսեց խոմփացնել: Շուտով դադարեց փոթորիկը, և ամեն ինչ խաղաղվեց: Հենց որ երևաց առափնյա խրճիթներից մեկի լույսը, ես արթնացրի Զիմին, և մենք լաստը թաքցրինք՝ ցերեկն անցկացնելու համար:

Նախաճաշից հետո թագավորը դուրս բերեց իին, կեղտոտված խաղաթդեր և դրսի հետ սկսեց պոկեր խաղալ, խաղը՝ իինք ցենս: Շուտով ծանձրացան դրանից և ասացին, թե «պայքարի ծրագիր են կազմելու», ինչպես արտահայտվում էին իրենք: Դուքսը բացեց իր կապերտե տոպրակը, դուրս բերեց տպագրված ծանուցագիր և բարձրաձայն կարդաց: Մի ծանուցագրում աված էր. «Փարիզի հռչակավոր դրկտոր Արման դը Մոնտարլանը դասախոսելու է գիտության և գանգարանության մասին, այսինչ, այսինչ տեղում, այսինչ օրը, տոմսը տասը ցենտ, իսկ քանի հինգ ցենտով կորոշ մարդկանց նկարագիրն ու ունակությունները»: Դուքսն ասում էր, որ այդ դրկտորն ինքն է: Մի այլ ծանուցագրում նա «Շեքսպիրյան համաշխարհային ուղերգակ էր, Լոնդոնի Դրուրի Լեյն թատրոնի Գարրիկ կրտսերը»: Մյուս ծանուցագրերում նա ուներ այլ անուններ և կատարել էր զարմանալի բաներ, ինչպես օրինակ, «գուշակող գավազանով» գտել էր ջուր ու ոսկի, ի չիք դարձրել կախարդական անեծքները և այլն: Շուտով նա ասաց.

— Բայց բեմական մուսան ինձ ավելի է մոտ: Դուք երբեմ քայլե՞լ եք բեմում, ձերդ մեծություն:

— Ոչ, — ասաց թագավորը:

— Այդ դեպքում, ձերդ գահընկեց մեծություն, երեք օր չանցած, հենց որ հասնենք մի լավ քաղաք, դահլիճ կվարձենք և կկատարենք «Ուշարդ III»-ի սուսերամարտը, ինչպես և «Ոսմեն և Չուլիետ»-ի պատշգամբի տեսարանը: Սա ձեզ դո՞ւր է զայիս:

— Ես միանգամայն համաձայն եմ որևէ բանի, որ եկամտաքեր է, դուրս, բայց պետք է իմանաք, որ ես դերասանական խաղերից ոչ մի բան չեմ հասկանում, ոչ էլ շատ եմ տեսել նման բաներ: Ես շատ փոքր էի, երբ հայրս սովորություն ուներ դրանց հրավիրելու պալատ: Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ եք ինձ սովորեցնել:

— Շատ հեշտ:

— Լավ, ես արդեն դառնում եմ անհամբեր. ուզում եմ մի բանով զբաղվել: Հենց հիմա սկսենք:

Դուքսը նրան պատմեց, թե ով է եղել Ոսմենն և ով՝ Չուլիետը, ապա ասաց, որ սովորաբար ինքը խաղացել է Ոսմենի դերը, ուրեմն՝ թագավորը կարող էր լինել Չուլիետ:

— Բայց եթե Զուլիկետն այդքան երիտասարդ աղջիկ է, դուքս, ապա իմ մերկացած գլուխը և սպիտակ մորուքը արդյոք չափազանց տարօրինակ չե՞ն երևա:

— Ո՛չ, դրա համար մի անհանգստացեք, զյուղական տիսմարներն այդ մասին չեն ել մտածի. դուք համապատասխան կոստյում կիագնեք, և ամեն ինչ այլ կլինի: Զուլիկետը պատշգամբում է և անկողին մտնելուց առաջ վայելում է լուսնի շողերը: Նա հագել է գիշերանց և գլխին դրել փոթփոթած գիշերագդակ: Ահա այդ դերի զգեստները:

Դուքսը դուրս բերեց վարագույրի համար օգտագործվող շթից կարած երկու-երեք կոստյում, իր ասելով, Ռիշարդ III-ի և նրա հակառակորդի միջնադարյան բամբակե մի երկար, սպիտակ գիշերաշապիկ և դրան համապատասխան փոթոթված գիշերագդակ: Թագավորը զոհ էր: Դուքսը դուրս բերեց իր գիրքը և ամենափառավոր, հանդիսավոր եղանակով կարդաց նրանց դերերը, միաժամանակ լաստի վրա ոստոստելով և խաղաղով դերերը, որպեսզի ցույց տար, թե ինչպես է պետք կատարել: Ապա գիրքը տվեց թագավորին և ասաց, որ իր բաժինն անզիր անի:

Գետի ոլորանից մոտ երեք մղոն ներքև կար շատ փոքրիկ մի քաղաք, և դուքսը ճաշից հետո ասաց, թե ինքը մտածել, ծրագրել է, թե ինչպես են ցերեկները շարունակելու ճանապարհը, առանց Զիմին վտանգի ենթարկելու: Նա որոշել էր անձամբ գնալ քաղաքը և կարգավորել այդ գործը: Թագավորն ասաց, որ ինքն է գնալու և տեսնելու, թե հարմար բան չկա՞ անելու: Մեր սուրճը վերջացել էր, և Զիմն ասաց, որ լավ է ես ել գնամ նրանց հետ և թիւ սուրճ բերեմ:

Երբ հասանք քաղաքը, դրսում ոչ որ չէր շարժվում: Փողոցները դատարկ էին, ամենուրեք լիակատար խաղաղություն և մեռելային լուրջուն էր տիրում, ինչպես կիրակի օրերը: Մենք գտանք մի հիվանդ նեզրի, որը տան ետևի բակում պառկել էր արևի տակ: Նա ասաց, որ բոլոր բնակիչները, բացի շատ փոքրերից, հիվանդերից ու շատ ծերերից, գնացել են երկու մղոնի վրա գտնվող անտառը՝ կրոնական բացօթյա քարոզի: Թագավորը, իմանալով տեղի մասին, ասաց, որ ուզում է գնալ և մասնակցել այդ քարոզին: Ասեց, որ կաշխատի մի բան դուրս բերել այնտեղից: Ինձ նույնական թույլ տվեց գնալ իր հետ:

Դուքսն ասաց, որ իր նպատակը տպագրական մի հիմնարկություն գտնելն է: Մենք այդ հիմնարկությունը գտանք: Դա մի փոքրիկ տեղ էր, հյուսնի արհեստանոցի վերնահարկում: Հյուսները և տպագրիչները բոլորը գնացել էին ժողովի: Դոները փակ չէին: Կեղտոտ խցում ամեն ինչ թափթփված էր, պատերին ամենուրեք երևում էին թանարի հետքեր, հայտագրեր, որոնց վրա նկարված էին ձիեր և փախած նեզրեր: Դուքսը հանեց իր բաճկոնը և ասաց, որ իրեն ուրիշ բան պետք չէ: Ես և թագավորը դուրս եկանք ժողովի գնալու:

Մենք այնտեղ հասանք մոտ կես ժամ հետո, քրտնքի մեջ կորած, որովհետև սարսափելի շոգ օր էր: Այնտեղ հավաքվել էին ամբողջ շրջանից, հազար հոգուց ոչ պակաս: Շատերը եկել էին քսան մղոն հեռավորությունից: Անտառը լցվել էր սայլերով ու լծկաններով, որ կապված էին ամեն տեղ և սայլի տաշտից ուսում էին իրենց կերն ու պոշները շարժելով ճանճեր քշում: Այնտեղ կային վրանաձև ծածկեր: Գետնին ամրացրել էին այուներ և վերևու ծածկել ճյուղերով, ուր մարդիկ վաճառում էին լիմոնադ, թխվածքներ, ձմերուկ, խակ եղիպտացորեն ու այլ կանաչեղեն:

Քարոզը տեղի էր ունենում նման ծածկերի տակ, միայն թե դրանք ավելի մեծ էին և լցված մարդկային բազմությամբ: Նստարանները պատրաստել էին կոճդերի կողքերից

հանած տախտակներից, որոնց կլոր կողմերի վրա փորել ու որպես ոտքեր փայտեր էին ամրացրել: Նստարանները հենարաններ չունեին: Քարոզիչների համար ծածկի մի ծայրում պատրաստել էին բարձր ամբիոններ: Կանայք գլխներին դրել էին ծղոտե զիարեկներ, մի քանիսը հազել էին բրդյա զգեստներ, մի քանիսը՝ չթե, երիտասարդներից ոմանք է՝ բամբակե սպիտակ շորեր: Երիտասարդ տղամարդկանցից մի քանիսը ոտարորիկ էին, իսկ երեխանների մի մասի հազին միայն քաթանե շապիկներ կային, ուրիշ ոչինչ: Տարեց կանանցից մի քանիսն է իրար թաքուն աչքով-ունքով էին անում:

Առաջին հյուղակում, ուր մենք մտանք, քարոզիչը շարական էր կարդում: Նա կարդաց երկու տող, և բոլորը երգեցին այն: Սքանչելի էր երգը. այնքան հուզիչ էր, և այնքան շատ էին երգողները: Քարոզիչը երկու տող էլ կարդաց, որպեսզի երգեն, և այդպես շարունակ: Մարդիկ ավելի ոգևորվեցին և երգեցին ավելի բարձր: Վերջում մի քանիսն սկսեցին ողբալ, մի քանիսն է՝ գոռզոռալ: Ապա քարոզիչն անցավ իր քարոզին և այն էլ շատ լրջորեն: Նա մերթ ճնճվում էր դեպի ամբիոնի մի կողմը, մերթ մյուս կողմը, հենվում էր ամբիոնի մեջտեղին, թևերն ու մարմինը անընդհատ շարժելով և բառերն իր ամբողջ կարողությամբ բարձրածայն արտասանելով: Երբեմն բարձր բռնում էր բացված Աստվածաշունչը և պտտեցնում մեկ մի կողմի, մեկ մյուս կողմի վրա ու գոռում. «Ահավասիկ պղնձյա օճն անապատում: Նայեցե՛ք նրան և ապարինվեցե՛ք»: Մարդիկ բարձրածայն գոռում էին «Փա՛ռք քեզ, տե՛ր: Ա-ա-մեն»: Եվ այդպես նա շարունակեց, իսկ մարդիկ հեծում էին, լաց լինում ու ասում «ամեն»:

— Եկե՛ք ապաշխարողների աթոռը, եկե՛ք, մեղքից սևացածներ (ամեն), եկեք, հիվանդներ ու տառապյալներ (ամեն), եկե՛ք կաղե՛ր, կույրե՛ր ու խեղանդամներ (ամեն), եկե՛ք, ծանրաբեռնվածներ ու կարիքավորներ՝ ամոյթի մեջ թաղված (ա-ա-ամեն): Թող զան բոլոր նրանք, որ հոգնել, արատավորվել ու տառապում են: Եկե՛ք, հոգեպե՞ս ընկճվածներ, եկեք զրջացող սրտով, եկեք ցնցոտիներով, կեղսոտված, հանցավոր: Մաքրող ջուրը ազատ հոսում է, արքայության դուռը բաց է: Ո՞հ, նե՛րս մտեք և հանգստացե՛ք (ա-ա-ամեն, փա՛ռք քեզ, տե՛ր, փա՛ռք, ալելո՛ւիա):

Եվ այսպես շարունակ: Լացի ու աղաղակի պատճառով այլևս հնարավոր չէր հասկանալ քարոզիչ ասածները: Մարդիկ խմբերով տեղներից վեր էին կենում ու արցունքներ հեղեղելով, ամբողջ ուժով շարժվում դեպի սգավորների նստարանները: Եվ երբ սգավորները խառնվեցին առաջին նստարանների շուրջը, բոլորն սկսեցին երգել, աղաղակել, իրենց զցել ծղոտի վրա: Կարծես խելագարված ու ցնորված լինեին:

Դեռ զիփի չէի ընկել, թե ինչ է դա, երբ թագավորը նույնականացած ապաշխարողներին և բոլորից բարձր աղաղակեց: Այսուհետև նա բարձրացավ քեմ: Քարոզիչը խնդրեց նրան խոսել ժողովրդի հետ, և նա խոսեց: Նա ասաց ժողովրդին, որ ինքը երեսուն տարի ծովահեն է եղել՝ Հնդկական օվկիանոսում: Իր ընկերների շարքերը զգալիորեն նոսրացել էին անցյալ գարնանը, ճակատամարտում: Ինքը վերադարձել է տուն նոր մարդիկ հավաքելու, բայց, փառք աստծո, անցյալ գիշեր իրեն կողոպտեցին մի շոգենավի վրա և ափ նեստեցին առանց մի ցենս անգամ գրպանում թողնելու: Ինքը դրա համար ուրախ է: Դա իր հետ պատահած ամենաօրինյալ բանն է, որովհետև այժմ փոխված մարդ է և իր կյանքում առաջին անգամ իրեն երջանիկ է զգում: Եվ որքան էլ ինքը աղքատ լինի, անմիջապես զնալու է՝ Հնդկական օվկիանոս և իր կյանքի մնացած մասը նվիրելու է ծովահեններին ճշմարիտ ուղղու վրա քերելու նպատակին, որովհետև ինքն այդ բանն ավելի լավ կանի, քան որևէ մեկ ուրիշը, այնքան, որքան ծանոթ է այդ օվկիանոսի բոլոր ծովահենային խմբերին:

Թեև առանց դրամի երկար ժամանակ է պետք այնտեղ հասնելու, բայց մի կերպ կհասնի և ամեն անգամ, եթք համոզի մի ծովահենի, կասի նրան. «Ինձանից շնորհակալ մի՛ լինիր, ինձ պատիվ մի՛ արա. այդ ամենը պատկանում է Փոքրիկ բացօթյա ժողովարանի մարդկանց՝ մարդկային ցեղի իսկական եղբայրներին ու բարերարներին, այնտեղի սիրեկի քարոզչին՝ ամեն մի ծովահենի հավատարիմ բարեկամին»:

Արցունքները ողողեցին նրա այտերը, արտասվեցին նաև լսողները: Այնուհետև մեկը բարձրաձայն գոչեց.

— Նրա համար հանգանակություն կազմակերպենք, հանգանակություն:

Հինգ-վեց մարդ առաջ նետվեցին այդ նպատակի համար, բայց մեկը կանչեց.

— Ըստ նա ինքը մոտենա մարդկանց՝ գլխարկը բռնած:

Բոլորը համաձայնեցին այդ առաջարկությանը, որոնց թվում և քարոզիչը:

Թագավորը գլխարկը բռնած՝ անցավ ամբոխի միջով, աչքերը սրբելով, օրինելով ու գովարանելով ժողովրդին և շնորհակալություն հայտնելով, որ այդքան բարի էին հեռավոր ծովերում թափառող ծովահենների նկատմամբ: Գեղեցիկ աղջիկները, արցունքներն աչքերից գլորելով, շուտ-շուտ վեր էին կենում տեղներից և խնդրում թագավորին, որ թույլ տա համբուրեն իրեն, որպեսզի հիշի իրենց: Իսկ թագավորը թույլ էր տալիս: Աղջիկներից մի քանիսը ողջագուրվեցին ու համբուրեցին նրան հինգ-վեց անգամ: Նրան խնդրեցին մեկ շաբաթ մնալ իրենց մոտ, և ամեն որ ուզում էր, որ իր տանը մնա, ասելով, որ դա իրենց համար պատիվ է: Բայց նա ասաց. քանի որ դա բացօթյա ժողովարանի վերջին օրն է, ուստի իր մնալը օգուտ չունի, բացի այդ, ինքը չի համբերում. ուզում է անմիջապես Հնդկական օվկիանոսը գնալ, որ գործի անցնի հօգուտ ծովահենների:

Եթք վերադասնք լաստը, և նա հաշվեց դրամը, պարզվեց, որ հավաքել է ութսունյոթ դոլար և յոթանասունինգ ցենտ: Բացի այդ, անտառով անցնելիս, սայի տակից թոցրել էր վիսկիով լիքը երեք գալոնանոց<sup>[13]</sup> մի աման: Թագավորն ասաց, որ եթե այդ բոլորը միասին վերցնենք, ապա դա ավելի շատ կինի, քան նա երբեք ձեռք է բերել միսիոներական աշխատանքով: Ասաց, որ խոսելն իմաստ չունի. հեթանոսները ծովահենների հետ չեն կարող համեմատվել բացօթյա ժողովարաններում գործ տեսնելու մեջ:

Նախքան թագավորի գալը դուքսը կարծում էր, թե ինքը բավական գործ է տեսել, բայց նրա գալուց հետո իր կարծիքը փոխեց: «Դուքսը տպարանում շարել ու տպել էր երկու փոքրիկ գործ՝ ազարակատերերի համար՝ ձիու վաճառքի ծանուցագրեր, և դա համար ստացել էր չորս դոլար: Վերցրել էր տասը դոլարի ռեկամային գործ՝ լրագրի համար, և ասել, որ դա կանի չորս դոլարով, եթե վճարը կանխիկ լինի, և պատվիրատունները համաձայնել էին: Ձերքի բաժանորդագրությունը տարեկան երկու դոլար էր, իսկ նա երեք բաժանորդագրություն ընդունել էր կեսական դոլարով, պայմանով, որ կանխիկ վճարեն: Բաժանորդներն առաջարկել էին սովորականի նման վճարել փայտով ու սոխով, բայց դուքսը ասել էր, որ տպարանը նոր է գնել, գինը կարելվոյն չափ իջեցրել է և այժմ ուզում է միայն կանխիկ դրամ: Նա շարել էր և մի բանաստեղծություն, որ ինքն էր հորինել՝ անուշ ու թախծալի: Բանաստեղծությունը կոչվում էր. «Այս, սա՛ոն աշխարհ, ճզմի՛ այս հիվանդ, խորտակված սիրտը»: Եվ նա շարել, պատրաստ պահել էր թերթում տպելու համար, և դա համար վճար չեր ուզում: Ինչոր է, նա ձեռք էր բերել ինն ու կես դոլար և ասում էր, որ ամբողջ օրը քրտինք է թափել:

Նա մեզ ցույց տվեց նաև մի այլ փոքրիկ գործ, որ տպել էր առանց վճարի, որովհետև մեզ համար էր: Նկարված էր փախած մի նեզը, փայտի ծայրին անցկացրած մի կապոց զցած ուսին: Տակը գրված էր «200 դոլար վարձատրություն»: Այդ կատարել էր Զիմի համար և մանրամասնորեն նկարագրել նրան: Գրված էր, որ անցյալ ձմեռ նա փախել է Սենտ-Ժարժ տնկարաններից, Նոր Օռլեանից քառասուն մղոն ներքև, և հավանորեն ուղղություն է վերցրել դեպի հյուսիս: Ով բռնի և վերադարձնի, կստանա խոստացված վարձատրությունն ու ճանապարհածախը:

— Այժմ, — ասաց դուքսը, — այս գիշերից հետո մենք ցերեկները նավարկել, եթե ուզենանք: Հենց որ տեսնենք մեկը զայս է, կարող ենք կապել Զիմի ձեռքերն ու ոտքերը, զցել հյուրակը, ցույց տալ այս հայտարարությունն ու ասել, թե բռնել ենք գետով բարձրանալս և միջոցներ չունեալու պատճառով շոգենավով գնալ չենք կարող, ուստի մեր ծանոթներից ապարիկ վերցրել ենք այս լաստը և գնում ենք վարձատրություն ստանալու: Ավելի հարմար կլիներ ձեռնաշղթաներ ու ոսնակապանք տեսնեին Զիմի վրա, բայց դա մեր պատմությանը հարմար չէր. չէ՞ որ մենք ասում ենք, թե աղքատ ենք, իսկ դա գոհարեղենի տպավորություն կթողներ: Ամենահարմարը պարան էր: Պեսք է պահպանել միօրինակությունը, ինչպես ասում են բեմի մարդիկ:

Մենք բոլոր ասացինք, որ դուքսը շատ խելոք է մտածել, և այևս վտանգ չի կարող սպառնալ ցերեկային ճանապարհորդությանը: Այդ գիշերը որոշեցինք հեռանալ, ազատվել այն աղմուկից, որ, մեր կարծիքով, դրսի տպարանային գործունեությունը կարող էր առաջ բերել այդ փոքրիկ քաղաքում: Այնուհետև կարող էինք ազատ, գոռալով շարժվել առաջ, երբ ուզենայինք:

Մենք լուր կուչ եկանք մի տեղ և չերևացինք մինչև ժամը տասը: Ապա լողացինք առաջ, քաղաքից քավական հեռու: Լաստի վրա լապտեր չկախեցինք, մինչև լիովին դուրս եկանք քաղաքի տեսողության դաշտից:

Երբ ժամը չորսին Զիմն արթնացրեց ինձ, որ իրեն փոխարինեմ, ասաց.

— Հեք, քո կարծիքով, այս ճանապարհորդության ընթացքում էի՞ թագավորների կհանդիպենք:

— Ոչ, հազիվ թե, — պատասխանեցի ես:

— Լավ, ուրեմն շատ լավ է: Մեկ-երկուսը քավական են: Մեր այս թագավորը սարսափելի հարթել է, դուքսն էլ պակասը չէ:

Պարզվեց, որ Զիմը փորձել է թագավորին ֆրանսերեն խոսեցնել, որպեսզի լսի, թե ինչի նման է այդ լեզուն, բայց թագավորն ասել է, թե այնքան երկար է մնացել այս երկրում և այնպիսի նեղությունների մեջ է ընկել, որ մոռացել է:

## Գլուխ քսանմեկերորդ

Արեգակն արդեն բարձրացել էր հորիզոնն ի վեր, բայց մենք շարունակում էինք մեր ընթացքը և լաստը չէինք կապում: Թագավորն ու դուքսը շուտով վեր կացան, թթված ու բորբոսնած, բայց երբ ջուրը թռան ու լողացան, քավական զգաստացան: Նախաճաշից

հետո թագավորը նստեց լաստի եզրին, հանեց կոշիկները, վեր քաշեց շալվարը և ոտքերը կախեց ջրի մեջ հանգստանալու: Ապա վատեց ծխամորճն ու սկսեց անգիր անել իր դերը «Ռոմեն և Զուլիետ»-ից: Երբ բավական սերտեց, դրսի հետ սկսեց փորձել: Դուքսը ստիպված էր նորից ու նորից բացատրել, թե ինչպես է արտասանվելու ամեն մի բառը, սովորեցնում էր հառաջել, ձեռքը սրտի վրա դնել: Ծատ շանցած ասաց, որ թագավորն արդեն բավական յավ է կատարում:

— Միայն թե, — ասաց նա, — չպետք է այդպես բառաչեք «Ռոմեն», ինչպես ցուլը: Պետք է մեղմ ասեք, աղջկա տկար, նվազուն ձայնով, այ, այսպես. «Ռո-ռ-մեն. չ» որ Զուլիետը սիրելի, անուշիկ աղջիկ է, դեռ երեխա, և Եշի պես չի զռա:

Այնուհետև նրանք դուրս քաշեցինք երկար սրերը, որ դուքսն էր պատրաստել կահնու տախտակից, և սկսեցին սուսերամարտի վարժություններ անել Դուքսն իրեն անվանեց Ռիչարդ III: Սքանչելի էր նայել, թե ինչպես են նրանք ցատկուտում լաստի վրա: Բայց շուտով թագավորը սայթաքեց և ընկավ ջուրը: Նրանք դադար առան ու խոսեցին ամեն տեսակ արկածներից, որ անցյալում ունեցել էին այդ նույն գետի վրա:

Ծաշից հետո դուքսն ասաց.

— Լավ, Կապետ,<sup>144</sup> մենք սա կրաքննենք առաջին կարգի ներկայացում. ուստի կարծում եմ, որ պետք է եղածի վրա մի բան է ավելացնենք: Այնպես անենք, որ ամեն կողմից «քիս» կանչեն:

— Իսկ ինչ է նշանակում «քիս», Բրիջուորթը:

Դուքսը բացատրեց, ապա ասաց.

— Ես խոստանում եմ այնպես անել, որ «քիս» կանչեն շոտլանդական պարը կամ նավաստո՛ եղջերափողով պարը կատարելիս, իսկ դուք... Լավ, պետք է մտածել... ահա, զուա... Դուք կարող եք կատարել Համլետի մենախոսությունը:

— Համլետի ի՞նչը:

— Համլետի մենախոսությունը, ամենահոչակավո տեղը Շեքսպիրի գործերում: Օ՛, գերազանց բան է, գերազանց: Միշտ հմայում է մարդկանց: Այս գրքում չկա, ունեցած միայն մեկ հատ է, բայց կարող եմ հիշողությամբ վերականգնել: Մի բովեւ լաստի վրա բայլեմ ետ ու առաջ, տեսնեմ կարո՞ղ եմ վերականգնել հիշողության նկուղում:

Նա սկսեց քայլել ետ ու առաջ, երբեմն մտածելով ու սարսափելի խոժոռելով դեմքը: Բարձրացնում էր հոնքերը, ձեռքը սեղմում ճակատին ու երերալով ետ դառնում, հեծեծում, հառաջում, ապա մի կաթիլ արցունք գորում աչքերից: Սքանչելի էր նրան նայելը: Շուտով վերիիշեց և ասաց մեզ, որ ուշադիր լսենք: Զափազանց վեհ կեցվածք ընդունեց, մի ոտքն առաջ պարզած, ձեռքերը վեր տարածած, գլուխը ետ պահած, նայելով երկնքին: Այնուհետև սկսեց գոռալ, զառանցել, ատամները կրճացնել, ապա, իր ամբողջ արտասանության ընթացքում, կաղկանձել, շուտումուռ զալ, կուրծքը ուռեցնել: Մի խոսքով՝ գերազանցեց իմ երբեմն տեսած դերասաններին: Ահա նրա ելույթը, որ ես հեշտությամբ անգիր արեցի, երբ նա դա սովորեցնում էր թագավորին.

Լինել, թե չինել, այդ է մերկ դաշույնը,  
 Որ այսափ երկար տևել է տալիս թշվառությանը,  
 Թե ոչ, ո՞վ կուզեր, մինչև Բիրմանի անտառը հասներ Դունսինյան,  
 Եթե երկյուղը ինչոր մի բանի մահվանից հետո,  
 Մակրեթը հիմա քունն սպանում է, խեղճ անմեղ քունը,  
 Մեծ բնության երկրորդ ընթացքը:  
 Եվ ստիպում է մեզ տանել գոռ բախտի պարսպաքրերը և սլաքները,  
 Քան թե սավառնել դեպի նոր ցավեր, որոնց անգետ ենք.  
 Ահա, ինչոր մեզ խորհել պետք է տա, այս նկարում է:  
 Չարկիր, Դունկանին արթնացնելու չափ: Մի, երանի՛ թե կարողանայիր:  
 Թե ոչ ո՞վ արդյոր կուզեր հանդուրժել  
 Վյնքան նախատինքներին ու մտրակներին,  
 Հարստահարիչի անիրավության,  
 Մեծամիտ մարդու արհամարհանքին,  
 Օրենքի բոլոր ձգձգումներին:  
 Մերեւային կեսզիշերին, երբ գերեզմանոցն է հորանջում  
 Հանդիսավոր սև զգեստներ հազած:  
 Բայց այդ չհայտնագործված երկիրը, որի ծննդից  
 Ոչ մի ճանապարհորդ ետ չի դարձել դեռ,  
 Արտաշնչում է վարակ աշխարհի վրա,  
 Եվ հեց այս կերպով վճռականության բնածին գույնը  
 Ախտաժետվում է խորհրդածության գունաթափ ցոլքից:  
 Եվ բոլոր ամպերը, որ իջնում են մեր տանիքների վրա,  
 Եվ շատ ձեռնարկներ, մեծ ու կարևոր,  
 Շեղվում են այսպես իրենց հոսանքից  
 Եվ գործ կոչվելու անարժան: Դանունում:  
 Մի վահճան է դաշտուն դանունում: Ծառականից:  
 Բայց կա՛ց, ո՞վ է դա, այս, սիրուն օֆելիան:  
 Ծանր մարմարե ծնոտները քն միշտ փակված պահիր,  
 Մտի՛ր կուսանց, զնա՛, մնաս բարով:[\[15\]](#)

Ծերունուն դուր եկավ մենախոսությունը, և շուտով նա այնպես սերտեց, որ կարող էր անզիր ասել: Կարծես հենց դա արտասանելու համար էր ծնված: Երբ նա վարժվեց ու իրեն ազատ զգաց, սքանչելի էր նայել, թե արտասանությամբ տարվելով՝ ինչպես էր գոռում, ինքն իրեն բզկտում, մոնչում:

Առաջին հարմար առիթով դուքսը պատրաստեց տպագիր աֆիշներ: Վյուհետև երկու-երեք օր շարունակեցինք մեր նավարկությունը. լաստն անսովոր կերպով աշխույժ տեղ էր դարձել, որովհետև այնտեղ ուրիշ ոչինչ չկար, բացի անվերջանալի սուսերամարտից ու դերասանական փորձերից (ինչպես այն անվանում էր դուքսը): Մի առավոտ, երբ բավական իշել էինք Արքանզափ նահանգի ափերով, նկատեցինք մի շատ փոքրիկ քաղաք մեծ ոլորանի վրա: Քաղաքից երեք քառորդ մղոն վեր լաստը կապեցինք գետաբերանում, որը երկու կողմից նոճիներով փակված էր, ինչպես թունել, և բոլորս, բացի Զիմից, մակույկով իջանք ներքև տեսնելու, թե այդտեղ հնարավորություն կա՞ներկայացում տալու:

Մենք շատ բախտավոր էինք. այդ օրը ճաշից հետո մի կրկես էր ելույթ ունենալու, և զյուղական ժողովուրդն ամեն տեսակի հին, ճռճռան սայլերով ու ձիերով արդեն հոսում էր քաղաք։ Կրկեսը մինչև երեկո գնալու էր այդտեղից, և մեր ներկայացումը շատ լավ հետանկար ուներ։ Դուքսը վարձեց դատարանի դահլիճը, իսկ մենք սկսեցինք պատերին փակցնել աֆիշները։ Աֆիշը գրված էր այսպես։

Շեքսափիրի վերածնունդը

Զարմանալի տեսարաններ

Միայն մեկ ներկայացում

### **Մասնակցությամբ համաշխարհային ողբերգակներ**

Դևիդ Գարրիկ Կրտսերի (Լոնդոնի Դրուրի

Լեյն թատրոնից)

և Էդմունդ Քին Ավագի (Արքայական թատրոն) Ուայթեփիլ, Փուդդինգ Լեյն,  
Փիքադիլի, Լոնդոն և Եվրոպայի

արքայական թատրոնների շեքսափիրյան անզուզական ներկայացումից ցուցադրվում է

Պատշգամբի տեսարանը

### **«Ռոմեո և Ջուլիետ-ից»**

**Ռոմեո . . . . միստր Գարրիկ**

**Ջուլիետ . . . . միստր Քին**

Մասնակցությամբ ողջ խմբի։

Նոր կոստյումներ, նոր դեկորացիաներ, նոր ձևավորումներ։

նաև

Սարսուցուցիչ, հմուտ, արյունոտւշ

Սուսերամարտը

### **Ռիչարդ III-ից»**

**Ռիչարդ . . . . միստր Գարրիկ**

**Ռիչմոնդ . . . . միստր Քին**

ինչպես և

(Հատուկ պահանջի դեպքում)

### **Համլետի անմահ մենախոսությունը**

### **Իռշակավոր Քինի կատարամամբ**

(Փարիզում հաջորդաբար կատարվել է 300 անգամ),

միայն մեկ ներկայացում

(Եվրոպայում հրամայաբար ներկայացումների գնալու պատճառով)

Տոմսի գինը 25 ցենտ, երեխաների և ծառաների համար 10 ցենտ:

Դուրս եկանք քաղաք թափառելու: Խանութները և տները հին ու խարխուլ էին. փայտե շորացած շենքեր, որ երբեք չէին ներկվել: Դրանք կառուցված էին ցցերի վրա, գետնից երեք-չորս ոտնաշափ բարձր, որպեսզի ջուրը ներս չցվեր, երբ գետը վարարեր: Տները շրջապատված էին փորքիկ պարտեզներով, բայց հազիվ թե գժախտուից ու արևածաղկից բացի, որևէ բան այնտեղ աճեր: Այս ու այն կողմ երևում էին աղբի, մոխրի կույտեր, հին կոշիկներ, ջարդված շշեր, ցնցոտիներ, թիթեյա մաշված, ժանգոտած ամաններ: Յանկապատերը պատրաստված էին տարբեր տախտակներից, որ անկանոն իրար էին մեխել տարբեր ժամանակներում: Կային և դարպասներ, որոնք ընդհանրապես մեկական ծխնի ունեին, այն է կաշվե փոկից: Յանկապատերից մի քանիսը սպիտակեցրած էին անցյալում, տարբեր ժամանակներում: Դուրսն ասում էր, որ հավանորեն դրանք Կողումբոսի օրերում են շինել: Պարտեզներում երևում էին խոզեր, որոնց այնտեղից դուրս էին քշում:

Բոլոր խանութները շարված էին մեկ փողոցի երկարությամբ: Նրանց դիմաց կային սպիտակ փոքրիկ վրաններ: Եկվոր գյուղացիներն այդ վրանիկների այուներից կապում էին իրենց ձիերը: Վրանիկների տակ շարված էին մանածեղենի դատարկ արկղեր: Պարապ մարդիկ ամբողջ օրը թառում էին դրանց վրա և «Քարլո» Փիրմայի արտադրած գրավանի դանակներով տաշում դրանք, ծխախոտ ծամում, բերանները լայն բացած հորանջում, ձգվում: Կատարյալ անպետք մարդիկ: Նրանք ընդհանրապես դնում էին ծղոտե դեղին գլխարկներ, գրեթե հովանոցի մեծության, բայց բամկոն կամ բամկոնակ չէին հազնում: Նրանք իրար կանչում էին Բիլ, Բաք, Հենք, Ջո, Էնդի, խոսում էին ծովորեն ու բառերը ծամմելով, առաս օգտագործելով հայոցանքներ: Յուրաքանչյուր այսն հենված էր մի ժամավաճառ, ձեռքերը գրեթե միշտ շալվարի գրավանները դրած, եթե հաշվի շառնենք այն դեպքերը, երբ դուրս էին հանում գլուխները քորելու կամ մեկին ծամելու ծխախոտ տալու: Շարունակ կարելի էր լսել միևնույն բանը.

- Ինձ փոխարինաբար ծամելու ծխախոտ տուր, Հենք:
- Չեմ կարող, ընդամենը մի ծամելիք է մնացել: Բիլից ուզիր:

Գուցե Բիլը տա, գուցեև ստի և ասի, թե չկա: Այդ ժամավաճառների մի մասը ոչ մի ցենտ դրամ չունի, ոչ է սեփական ծխախոտ. ծամելու ամբողջ ծխախոտը սրանից նրանից են ուզում: Այսպես են սկսում.

— Ուզում եմ փոխարինաբար քիչ ծխախոտ տաս, Ջեկ: Հենց նոր իմ վերջին ծխախոտը Բեն Թոմփոսոնին տվեցի:

Դա գրեթե միշտ սուտ է: Նրանք կարող են խարել միայն անծանոթ մարդկանց, բայց Ջեկն անծանոթ չէ և պատասխանում է.

— Վերջին ծխախոտը նրան տվեցիր, ասում ես: Բայց դու չես տվել, քրոջդ կատվի տատիկն է տվել: Դու վերադարձրու այն ծխախոտը, որ հաճախ վերցրել ես ինձնից, Լեյֆ Բարներ, որից հետո ես փոխ կտամ թեզ մեկ-երկու տոննա ծխախոտ, ստացական է չեմ վերցնի:

- Մի մասը վերադարձրել եմ, չէ:

— Այս, վերադարձրել ես. վեց ծամելիք: Բայց դու վերցրել ես խանութից գնված ծխախոտ և վերադարձրել ես նեզրի գինի պես սև ծխախոտ: Խանութի ծխախոտը տափակ, խցանման սև բան է, բայց այս մարդկանց մեծ մասը ծամում են փաթաթած բնական տերևներ: Եթե փոխարինաբար տալիս են մի ծամելիք, սովորաբար դանակով չեն կտրում, այլ խցանը դնում են ատամների տակ, կտրում, ձեռքով քաշում, մինչև երկու կես են անում: Երբեմն փոխ տվողը ողբայի տեսք է ստանում, երբ վերադանում են տվածի կեսը և հեգնական եղանակով ասում:

— Խցանը քեզ, ինչ որ վերցրիր ծամելու համար, այն տուր:

Բոլոր փողոցները և նրբանցքները ցեխի մեջ կորած էին: Ցեխից բացի ոչինչ չկար. ձյութի պես սև ցեխ, տեղ-տեղ մեկ ոտնաշափ խորությամբ, իսկ ընդհանրապես երկու կամ երեք ոտնաշափ: Ամենուրեք թափառում ու խոնչում էին խոզերը: Երևում էր ցեխաթաթախ մի մայր խոզ իր խոչկորների հետ: Մայր խոզը ծովորեն շարժվում էր փողոցով և թափալվում հենց ճանապարհին: Մարդիկ ստիպված շրջանցում էին: Խոզը փոփում էր գետին ու փակում աչքերը, շարժում ականջները, երբ խոզուկները կաթ էին ծծում և այնպես երջանիկ տեսք էր ընդունում, կարծես դրա համար վճարում էին:

Շուտով կլսեիք մի ժամավաճառի գոռողը. նա շանը քսի էր տալիս խոզի վրա: Սա վեր էր կենում ու հեռանում, սարսափելի ճղճղարով, ամեն ականջի մոտ մեկ-երկու շուն, երեք-չորս դյուժին է հետևից: Այդ ժամանակ կարելի էր տեսնել, թե ինչպես ժամավաճառները վեր էին կենում, դիտում տեսարանն ու ծիծառում: Երևում էր, որ այդ աղմուկը մեծ բավականություն էր պատճառում նրանց: Հետո նորից նստում էին տեղները, մինչև սկսվում էր շների զգվածոցը: Ոչինչ չէր կարող նրանց այնպես հետաքրքրել և ուրախացնել, ինչպես շների կրիվը: Դրան գերազանցում էր միայն այն, որ նրանք թափառող շան վրա բևեկնախնեց էին քսում ու կրակ տալիս կամ թիթեղյա մի դույլ կապում պոչից ու բաց թողնում: Շունը վազում էր մինչև ուժասպառ վայր ընկներ:

Գետափին մի բանի տներ ցցվել էին թմրի վրա և թերվել առաջ, պատրաստ փուլ գալու գետի մեջ: Մարդիկ այլս չէին բնակվում դրանց մեջ: Տներից մի բանիս անկյունների տակը դատարկվել, նկուղ էր դարձել և տան անկյունը կախվել էր օդում: Դրանց մեջ դեռ մարդիկ կային, բայց վտանգավոր է այնտեղ մնալ, որովհետև մի օր գետը կարող էր տան չափ մի հողաշերտ քշել տանել և խորոշ առաջացնել: Երբեմն քառորդ մղոն լայնությամբ հողաշերտի տակը սկսում է դատարկվել, մինչև մի ամառ ամբողջ շերտը նստում է: Այսպիսի քաղաքը պետք է միշտ նահանջի, որովհետև գետը միշտ կրծում է նրա եզրը:

Որքան ժամը տասներկուուր մոտենում էր, այնքան փողոցներում մեծանում էր սայլերի ու ձիերի թիվը, որոնք ավելի ու ավելի մեծ հոսանքով գալիս էին քաղաք: Շատ ընտանիքներ գյուղերից ճաշը բերում էին իրենց հետ և ուտում սայլերի վրա: Վիսկի է բավական առատ էին խմում, և ես տեսա երեք կրիվ: Շուտով մեկը կանչեց.

— Տեսեք ծերուկ Բոզսին: Ամիսը մեկ միշտ գալիս է գյուղից՝ հարբելու: Ահա, տղերք, զալիս է:

Բոլոր ժամավաճառների դեմքերն ուրախությունից փայլեցին: Մտրովս անցավ, որ երևի այս մարդկանց սովորությունն է Բոզսի հետ կատակել: Նրանցից մեկն ասաց.

— Հետաքրքրիր է, թե այս անգամ ո՞ւմ է ջարդելու: Եթե ջարդեր բոլոր նրանց, որոնց ուզել է ջարդել վերջին քսան տարում, այժմ մեծ համբավ ձեռք բերած կլիներ:

Մի ուրիշն ասաց.

— Ես կուգենայի, որ ծերուկ Բոզսն սպառնար ինձ: Այդ դեպքում ես կիմանայի, որ հազար տարի չեմ մեռնի:

Բոզսը զախս էր ձին սրբնթաց քշելով, հնդկացու նման կրնչալով ու գոռալով և բարձրաձայն կանչելով.

— Բաց արեք ճանապարհը, հե՛յ: Ես պատերազմի ճամփին եմ, դագաղի գինը շուտով կրարձրանա:

Նա հարբած էր և օրորվում էր թամբի վրա: Տարիքը հիսունից անց էր: Ուներ շափազանց կարմիր այտեր: Բոլորը բղավում, ծիծաղում էին նրա վրա ու անվայել խոսքեր ասում: Նա պատասխանելով հայինյանքներին, ասում էր, որ ինքը նրանց էլ կհանդիպի և ցույց կտա իրենց ճանապարհը, բայց այժմ սպասել չի կարող. բայց է եկել ծերունի գնդապետ Շերբուրնին սպանելու, և իր նշանաբանն է. «Նախ մեծ գործ, ապա մանրուր»:

Նա, տեսնելով ինձ, ձին մոտ քաշեց ու ասաց.

— Որտեղից ես եկել, տղաս: Պատրա՞ստ ես մահվան, թե՞ ոչ:

Ապա շարունակեց իր ճանապարհը: Ես վախեցա, բայց մի մարդ ասաց.

— Նրա մտքում վաս բան չկա. միշտ այդպես է, երբ հարբած է: Արքանզասի ամենաուրախ ծեր հիմարն է. ոչ ոքի չի վնասի՝ հարբած, թե զգաստ:

Բոզսը ձին քշեց քաղաքի ամենամեծ խանութիւ առաջ և գլուխը խոնարհեց, որպեսզի կարողանա տեսնել վրան վարագույրի տակը և կանչեց.

— Շերբո՞ւրն, դո՞ւրս արի: Դուրս արի շափվելու այն մարդու հետ, որին շորթել ես: Դու շուն ես, և ես եկել եմ քո հետևից, եկել եմ քեզ հետ հաշիվս փակելու:

Եվ նա այդպես շարունակեց Շերբուրնի գլխին թափել ամեն յուտանք, ինչ այդ րոպեին բերանն էր զախս: Ամբողջ փողոցը լցվել էր մարդկանցով, որոնք լսում, ծիծաղում ու զրգում էին նրան: Շուտով խանութիւ դուրս եկավ հպարտ կեցվածքով մի մարդ, մոտ հիսունինգ տարեկան, այդ քաղաքում ամենալավ հազնված անձնավորությունը: Ամբոխը երկու կողմից հետ քաշվեց, ճանապարհ բացեց: Նա հումկու, հանգիստ ձայնով և դանդաղ ասաց.

— Զանձրացել եմ այս ամենից, բայց կիամբերեմ մինչև ժամը մեկը: Մինչև ժամը մեկը, լավ լսիր: Դրանից հետո եթե դու թեկուզ մի անզամ բերանդ բացես իմ դեմ, ապա հեռու չես գնա. որտեղ էլ լինես, կգտնեմ քեզ:

Նա շուր եկավ ու մտավ խանութ: Ժողովուրդը մեկից զգաստացավ: Ոչ ոք չէր շարժվում, ոչ ոք այլս չէր ծիծաղում: Բոզսն ձին քշեց հեռացավ, փողոցի երկարությամբ ամբողջ ուժով բարձրաձայն անարգելով Շերբուրնին: Շուտով ետ դարձավ ու կանգնեց խանութի առաջ, շարունակելով հայինյել: Մարդիկ հավաքվեցին նրա շուրջը և փորձեցին լրեցնել, բայց նա ոչ ոքի չսեց: Ասացին, որ տասնիննական բոպե հետո ժամը մեկը կինի, և նա պետք է տուն գնա, անմիջապես: Բայց ոչինչ դուրս չեկավ: Նա ամբողջ ուժով շարունակեց հայինյել, գիշարկը շարտեց ցեխի մեջ ու ձին քշեց վրայով: Շուտով հեռացավ, կատաղած իշնելով փողոցով, ալեխառն մազերը ցրված: Ամեն ոք, որ հնարավորություն էր ունենում մոտենալ նրան, ամեն կերպ աշխատում էր համոզել, վայր բերել ձիուց ու փակել մի տեղ,

մինչև զգաստանար, բայց անօգուտ: Նա նորից բարձրացավ փողոցով ու մեկ էլ հայից Շերբուրնին: Շուտով մեկն ասաց.

— Գնացեք սրա դստերը բերեք, շուտ, դստերը երբեմն լսում է: Եթե կա մեկը, որ կարող է համոզել սրան, դա դրւստքն է:

Մեկը վագելով գնաց աղջկան բերելու: Ես մի փոքր քայլեցի փողոցն ի վար ու կանգ առա: Մոտավորապես իխնակ կամ տասը րոպե հետո նորից երևաց Բոզը, բայց արդեն ձիու վրա չէր: Երերալով կտրեց անցավ փողոցը և եկավ իմ կողմը, գլուխը բաց, երկու կողքերին մեկական ծանոթ մարդ, որոնք բռնած նրա թևերից շտապեցնում էին: Նա լուր էր, բայց երևում էր, որ անհանգիստ էր: Ոչ ոքի չէր հենվել, ինքն էր իրեն առաջ մղում: Մեկը բղավեց.

— Բո՞քս:

Ես նայեցի այդ կողմը տեսնելու, թե ով է կանչում: Դա նույն գնդապետ Շերբուրնն էր: Նա կանգնել էր փողոցում, կատարելապես խաղաղ, աջ ձեռքին մի ատրճանակ, բայց նշան չէր բռնել. փողն ուղղել էր վեր, դեպի երկինք: Նույն վայրկյանին տեսա մի աղջիկ, որը վագելով գալիս էր: Նրա հետ զայխ էին երկու տղամարդ: Բոզսն ու կողքից քայլող մարդիկ շուր եկան տեսնելու, թե ով է կանչում: Երբ տեսան ատրճանակը, մի կողմ քաշվեցին: Ատրճանակի փողը դանդաղ և առանց դողդողալու իջավ, հորիզոնական դիրք ընդունեց, այնպես որ երկու փողերն էլ պատրաստ էին կրակելու: Բոզը ձեռքերը վեր բարձրացրած կանչեց.

— Օ՛, աստված իմ, մի՛ կրակեք:

— Բո՞ւմ, — թնդաց առաջին կրակոցը, և Բոզը երերալով ետ քաշվեց, ճանկերով կառչեց օդից: — Բո՞ւմ, — լսեց երկրորդ կրակոցը, և Բոզը մեջքի վրա ընկավ գետին, ծանր ու անշարժ, թևերը տարածած: Աղջիկը ճշալով ու վագելով նետվեց հոր վրա, աղաղակերով ու աղերսելով.

— Սպանե՛ց, սպանե՛ց հորս:

Ամբոխը հավաքվեց դիակի շուրջը: Մեկը մյուսի ուսին հենվելով ու իրար հրիրելով, վզերն առաջ էին ձգում, փորձելով տեսնել ընկած մարդուն: Օդակի ներսում եղած մարդիկ կանչում էին.

— Ե՛տ քաշվեք, ե՛տ քաշվեք: Թողեք օդ շնչի, թողեք օդ շնչի:

Գնդապետ Շերբուրնը ատրճանակը շպրտեց գետին և շուր գալով կրնկի վրա, հեռացավ:

Բոզսին տարան մի փորրիկ դեղատուն: Մարդիկ առաջվա նման խոնվում էին նրա շուրջը: Ամբողջ քաղաքը հետևում էր նրանց: Ես վագեցի և մի լավ տեղ գրավեցի պատուհանի մոտ, որտեղից տեսնում էի Բոզսին: Տաս մոտ էի: Սպանվածին պառկեցրին հատակին, գլխի տակ դրեցին մի մեծ Աստվածաշունչ, մի հատ է բաց արին ու դրեցին կրծքին, բայց ամենից առաջ պատռեցին շապիկը, և ես տեսա, թե ո՞ր տեղին է դիպել գնդակներից մեկը: Նա մոտ տասն անգամ երկար հառաչեց: Շունչ քաշելիս Աստվածաշունչը բարձրանում էր, արտաշնչելիս նորից իջնում: Այնուհետև խաղաղ պառկեց. անշնչացավ: Դուստրը հոր վրա ընկած՝ լաց էր լինում ու ճշում: Նրան ետ

քաշեցին ու մի կողմ տարան: Աղջիկը կիխներ մոտ տասնվեց տարեկան, անչափ դուրեկան ու հեզ դեմքով, բայց սարսափելի գունատ ու ահարեկված:

Շուտով այստեղ հավաքվեց ամբողջ քաղաքը: Իրար իրելով, սեղմելով, փորձում էին հասնել պատուհանին և նայել ներս, բայց այնտեղի մարդիկ չեն ուզում իրենց տեղը զիջել: Ետևում կանգնածներն ամբողջ ժամանակ կրկնում էին միևնույն քառերը. «Դուք, բարեկամներ, բավական նայեցիք: Ո՞չ ճիշտ է, ո՞չ էլ լավ բան ամբողջ ժամանակ այդտեղ մնալ և ոչ ոքի հնարավորություն չտալ նայելու: Մյուսներն էլ նույնքան իրավունք ունեն տեսնելու, որքան դուք»:

Մարդիկ իրար սկսեցին վիրավորական խոսքեր ասել, և ես դուրս թռա, մտածելով, թե կարող է անախործ բան տեղի ունենալ: Փողոցները լցվել էին, և բոլորը հուզված էին: Ամեն ոք, ով ականատես էր եղել կրակոցին, պատմում էր, թե դա ինչպես կատարվեց, և ամենուրեք, որտեղ ականատեսներից մեկը պատմում էր, նրան շրջապատում էր ամբոխը, և մարդիկ, վզները երկարացրած, լուս էին: Երկար մազերով մի բարձրահասակ ու վտիտ մարդ, խողովականման, սպիտակ մորթե մեծ գդակը ետ տված, կեռագլուխ գավազանով ցույց էր տախա, թե որտեղ էր կանգնած Բոզսը և որտեղ՝ Շերբուրնը: Մարդիկ, հետևելով նրա շարժումներին, փոխում էին իրենց տեղը, դիտում նրա արած ամեն մի նշանը և շարժում գրուխները: Դրանով ուզում էին ասել, թե հասկանում են նրա բացատրությունը, ապա մի փոքր խոնարհվում էին, ձեռքերը հենում կոռքերին և դիտում նրա գավազանի ցույց տված տեղերը: Այնուհետև նա կանգնեց ուղիղ ու պիրկ, որտեղ կանգնած էր Շերբուրնը, խոժողոված ու գիշարկի եզրը աչքերին քաշած՝ բղավեց «Բ'զ», գավազանը դանդաղ իջեցրեց, բռնեց այն, գոռաց «քր' մ», երերալով ետ շարժվեց, նորից գոռաց «քր' մ» և ընկապ մեջքի վրա: Նրանք, որոնք տեսել էին այդ դեպքը, ասում էին, թե նա պատմեց ճիշտ այնպես, ինչպես պատահել էր: Տասը մարդ դուրս քաշեցին խմիչքի շշերը և հյուրասիրեցին նրան:

Շուտով մեկը բղավեց, թե պետք է Շերբուրնին լինի դատաստանի ենթարկել: Զանցավ մեկ բոպե, երբ բոլորն սկսեցին նոյն բանն ասել, կատաղած ու գոռալով հեռացան, իրենց զգեստներից պոկելով բոլոր կապերը, որոնցով կախելու էին Շերբուրնին:

## Գլուխ բասներկուերորդ

Մարդիկ խառնիխուռն շարժվեցին դեպի Շերբուրնի տունը, աղաղակելով ու մոլեգնելով, ինչպես հնդիկները, և ճանապարհին ամեն ոք կամ պետք է հեռանար նրանց առջևից, կամ էլ ոտքի տակ ընկներ, բլիթ դատնար: Սարսափելի տեսարան էր: Երեխաները ճշալով գնում էին առջևից, ջանալով դուրս գալ ճանապարհից: Ամեն մի պատուհանի առջև երևում էին կանանց բազմաթիվ գրուխներ, ամեն ծառի վրա բարձրացել էին մի քանի նեզք տղա, ցանկապատերի ետևից նայում էին ջափահաս նեզքեր ու նեզքուիխներ, և հենց ոք ամբոխը մոտենում էր, նրանք ետ էին քաշվում, ոք ձեռք չհասներ իրենց: Բազմաթիվ կանայք ու աղջիկներ լաց էին լինում, խոսում անզուսպ հուզմունքով, մեռնելու չափ վախեցած:

Բազմությունը հավաքվեց Շերբուրնի տան ցանկապատի առջև: Մարդիկ որքան կարող էին, սեղմվում էին իրար, և աղմուկն այնքան մեծ էր, ոք ոչ ոք չէր կարող իր ասածը լսել: Բակը փոքր էր, բան ոտնաշափից ոչ ավելի: Ինչ-ոք մեկը գոռում էր.

— Քանդեցե՛ք զանկապատը, քանդեցե՛ք զանկապատը:

Սկսվեց քանդելու, խորտակելու, փուլ տալու աղմուկը: Շուտով պատը գետնին հավասարվեց, և մարդկային առաջին պատնեշը ալիքի նման խուժեց ներս:

Հենց այդ պահին Շերբուրնը դուրս եկավ իր փոքրիկ նախագավթի տանիքը, երկփողանի հրացանը ձեռքին, և լիովին հանգիստ ու լրջախոհ կանգ առավ, առանց մի բառ արտասանելու: Ժխորը դադարեց և մարդկային ալիքը մի փոքր ընկրկեց:

Շերբուրնը ոչ մի բառ չասաց. միայն կանգնած նայում էր: Լուլթյունն ահավոր էր, քստմնելի ու ճնշող: Շերբուրնը հայացքով չափեց բոլորին: Որտեղ նրա հայացքը կանգ էր առնում, մարդիկ վախվիւելով աշխատում էին նայել մի այլ ուղղությամբ, բայց չեն կարողանում և խեղճացած նայում էին գետնին: Շուտով Շերբուրնը քմծիծաղ տվեց, իհարկե, ոչ հաճելի, այլ այնպես, որ մարդ կարծես ավազոտ հաց է ուտում: Ապա ցածրածայն և արհամարհանքով ասաց.

«Պատկերացրու, որ սրանք կարող են որևէ մեկին լինչի դատաստանի ենթարկել. զվարճակի’ միտք է: Պատկերացրու, որ այս մարդիկ այնքան լեղի ունեն, որ մարդկանց լինչի դատաստանի են ենթարկում: Դուք քաջ եք միայն այս տեղերով անցնող, փողոց շալտված, խեղճ, անօգնական կանանց մրոտելու, խոշտանգելու համար: Մի՞թե դա ձեզ հիմք է տալիս մտածելու, թե դուք այնքան արիություն ունեք, որ կարող եք **տղամարդու** վրա ձեռք բարձրացնել: Ձեզ նման տասը հազար հոգու ձեռքն ընկած մարդը կարող է ապահով զգալ իրեն այնքան ժամանակ, քանի դեռ լույս է, դուք էլ նրա թիկունքում չեք: Մի՞թե ես ձեզ չեմ ճանաչում: Ձեզ լավ գիտեմ: Ծնվել և մեծացել եմ Հարավում, ապրել Հյուսիսում: Այնպես որ միջին մարդուն ճանաչում եմ ամենուրեք: Միջին մարդը վախկոտի մեկն է: Հյուսիսում նա ում ասես թույլ կտա իրեն ոտնակոխ անել, եթե այդ մարդն այդպես է ուզում, ապա տուն զնում ու աղոյթում հանուն խոնարի ոգու, որպեսի դիմանա այդ անարգանքին: Հարավում մի մարդ մեն-մենակ, օրը ցերեկով կանգնեցրել է լեփ-լեցուն փոխադրակառքը և կողոպտել: Ձեր լրագրերը ձեզ այնքան քաջ են անվանել, որ դուք կարծում եք, թե ուրիշներից քաջ եք, մինչդեռ նույնքան քաջ եք, որքան ուրիշները, ոչ ավելի: Ինչո՞ւ ձեր դատավորները մարդասպաններին կախաղանի չեն դատապարտում: Որովհետև վախենում են, թե դատապարտյալի բարեկամները մութ գիշերով թիկունքից կսպանեն իրենց: Ահա, նրանց արածն այդ է, ուրիշ ոչինչ:

Նրանք միշտ ազատ են արձակում մարդասպանին: Այնուհետև մի իսկական տղամարդ գիշերը զնում է, թիկունքում ունենալով դիմակավորված հարյուր վախկոտ մարդ, և լինչի դատաստանի է ենթարկում սրիկային: Ձեր սխալն այն է, որ ձեզ հետ ոչ մի իսկական տղամարդ չեք բերել, մյուս սխալը, որ գիշերվա մթնով չեք եկել և դիմակ չունեք: Ձեզ հետ բերել եք մի կիսամարդ՝ Բաք Հարբնեսին: Ահա, այնտեղ կանգնած է: Եվ եթե ձեր մեջ չիներ նրա նման մեկը, որը ձեզ շարժման մեջ դներ, դուք այդ հարցը կփակեիք միայն աղմկելով:

Դուք չեք ցանկացել զայ: Միջին մարդը չի սիրում խոռվություն ու վտանգ: Բայց եթե մի կես մարդ, ինչպես Բաք Հարբնեսն է, կանչի. «Լինչի դատաստանի’ ենթարկել, լինչի’ դատաստանի ենթարկել», դուք կվախենաք ետ կանգնել, կվախենաք, թե պարզվի այն, ինչ կա իրականում. կպարզվի ձեր վախկոտությունը: Եվ այդ է պատճառը, որ այսպիսի ոռնոց եք բարձրացրել, կախվում եք այդ կիսամարդու բանկոնակի փեշից, զայրացած գալիս եք, երդվում, թե մեծ սխրագործություններ եք կատարելու: Աշխարհում ամենառողբայի բանն

ամբոխն է: Բանակն էլ ամբոխն է: Զինվորները չեն կովում իրենց ներքին արիությամբ. այդ արիությունը նրանք ստանում են իրենց մեծ քանակից և սպաներից: Բայց ամբոխը առանց ղեկավարի ողորմելի բան է և ավելի վատ: Այժմ մնում է, որ պոչներդ քաշեք, գնաք տուն ու սողաք ձեր բները: Եթե իրոք պետք է տեղի ունենա լինչի դատաստան, ապա այդ պետք է տեղի ունենա մթության մեջ, Հարավի ձևով. դիմակներ են պետք, ինչպես և մի տղամարդ: Այժմ գնացեք և ձեզ հետ տարեք այս կես-մարդուն:

Այս ասելով նա առաջ մեկնեց երկփողանի հրացանը և լարեց հրահանը: Ամբոխը մեկից ընկրկեց, և մարդիկ ցրվեցին: Ի վերջո գնաց և Բաք Հարբնեսը՝ կատարելապես նվաստացած: Ես կարող էի մնալ, եթե ուզենայի, բայց չուզեցի:

Ես գնացի կրկես և քարշ եկա դոների ետևում, մինչև եկավ պահակը: Թաքնվեցի վրանի տակ: Ինձ մոտ կար քսան դոլարանոց մի ոսկի: Ուրիշ փող է կար, բայց մտածում էի, թե ավելի լավ է դա պահեմ: Ի՞նչ իմանայի, թե ե՞րբ պետք կզա, այն է այստեղ, տնից այնքան հեռու և օտար մարդկանց մեջ: Նման դեպքերում պետք է շատ զգույշ լինել: Ես դեմ չեմ կրկեսի համար դրամ ծախսելուն, եթե ուրիշ հնար չիներ, բայց իզուր վատնելն էլ միտք չուներ:

Դա, իսկապես, սքանչելի կրկես էր: Տեսարանը փառավոր էր, երբ ձիեր հեծած, զույգ-զույգ ներս եկան բոլորը՝ պարոններ և լեդիներ: Տղամարդիկ հազել էին միայն փոխաններ ու շապիկներ, առանց կոշիկների ու կոշկախթանների, ձեռքները կողքներին կանթած, հանգիստ ու վայելուչ: Պետք է որ քսան հոգուց պակաս չինեին: Բոլոր լեդիները հաճելի տեսք ունեին և շատ գեղեցիկ էին, կարծես իսկական թագուհիներ լինեին: Նրանք այնպիսի զգեստներ էին հագել, որ միլիոնավոր դոլարներ կարժենային: Դրանց վրա շողում էին բազմաթիվ աղամանդներ: Հոյակապ տեսարան էր: Ես դեռ այդքան գեղեցիկ բան չէի տեսել: Մեկ առ մեկ նրանք վեր կացան, կանգնեցին և սկսեցին մեղմ, ալեճն, շնորհալի շարժումներով պտտվել օղակի շուրջը: Տղամարդիկ բարձրահասակ էին, իսրությունը գործում էին զիստերի շուրջը, ինչպես վարդի թերթիկներ, և կանայք նման էին անչափ գեղեցիկ հովանոցների:

Սկսեցին ավելի արագ շարժվել: Բոլորը պարում էին, նախ մեկ ոտքը օդի մեջ պարզած, ապա մյուսը: Զիերն ավելի ու ավելի թերվում էին մի կողմի վրա: Կրկեսապետը կենտրոնում ձողի շուրջը պտտում էր մտրակը քրկացնելով ու բղավելով «հի՛, հի՛», իսկ ծաղրածուն նրա թիկունքում կանգնած չէր խնայում իր կատակները: Շուտով բոլորը բաց թողեցին սանձերը, լեդիներն իրենց մատները զիստերի վրա իջեցրին, ջնտմնենները թևերը դրին կրծքներին, ձիերը ծունկի եկան, հեծյալները մեկը մյուսի ետևից ցած թռան և հանդիսականներին գլուխ տվին իմ տեսած ամենաշնորհալի ձևով: Այնուհետև նրանք հեռացան բեմից, իսկ հանդիսականները խելահեղ ծափահարեցին:

Ամբողջ ներկայացման ընթացքում նրանք կատարեցին ամենազարմանալի բաներ, և ամբողջ ժամանակ ծաղրածուն այնպես կատարեց իր դերը, որ մարդիկ ծիծաղից թուլացան: Կրկեսապետի բերանից դեռ խոսքը դուրս չեկած, ծաղրածուն անմիջապես պատասխանում էր ամենածիծաղաշարժ բառերով, որ երբևէ արտասանել է մարդը: Թե նա ինչպես կարող էր այդքան բան մտածել, այն էլ այդքան արագ ու այդքան դիպուկ, մինչև այժմ չեմ կարողանում հասկանալ: Ես մի տարում էլ չէի կարող այդքանը մտածել: Շուտով հարբած մի մարդ փորձեց դուրս գալ կրկես: Ասում էր, թե ուզում է ձիավարել, որ

ինքը նույնքան հաջող կարող է ձի հեծած պտույտներ կատարել, որքան դրանցից որևէ մեկը: Հանդիսականներն առարկեցին և փորձեցին ետ պահել նրան, բայց նա ոչ որի լսել չեր ուզում: Ամբողջ ներկայացումը կանգ առավ: Մարդիկ սկսեցին բղավել նրա վրա, ծաղրել: Հարբածն սկսեց գոռզորալ ու բզկտել ինքն իրեն: Հանդիսականները հուզվեցին, և շատերը, վեր կենալով շարժվեցին ներքև, դեպի թեմը, գոռալով. «Զարկե՛ք, ցա՛ծ զցեք, դե՛ն շպրտեք դրան»: Կանանցից մեկ-երկուսն սկսեցին ճշալ: Կրկեսապետը մի փոքր խոսեց և ասաց, որ ինքը հույս ունի, թե ոչ մի անախործ բան չի պատահի, եթե այդ մարդը խոսք կտա, որ այլևս անհամություն չի անի, ինքը թույլ կտա նրան ձի հեծնել, եթե կարծում է, որ կկարողանա ձիու վրա մնալ: Բոլորը ծիծաղեցին և ասացին՝ շատ լավ: Հարբածը մեջտեղ եկավ: Հենց որ նա հեծավ, ձին սկսեց վեր թռչել, ցատկուել, ծառս լինել: Կրկեսի երկու աշխատակից կախվեցին սանձից. աշխատում էին ձին հանգիստ պահել, իսկ հարբածը կախվել էր ձիու բաշից: Ամեն անգամ վեր թռչելիս հարբածի ոտները ճոճվում էին օդում: Հանդիսականները կանգնած գոռում ու ծիծաղում էին, մինչև արցունքներն սկսեցին հոսել նրանց աջքերից: Վերջապես, չնայած կրկեսի մարդկանց ջանքերին, ձին դուրս պրծավ ու սկսեց վազել կրկեսի շուրջը, հարբածն էլ վզից կախված, նախ մի ոտն էր իջեցնում, հասնում գետնին մի կողմի վրա, ապա մյուս ոտը՝ մյուս կողմի վրա: Մարդիկ ծիծաղից զժվել էին: Սակայն ինձ համար ծիծաղելու բան չկար. տեսնելով այն վտանգը, որ սպասում էր այդ մարդուն, դողում էի: Շուտով նա համառ պայքարից հետո կանոնավոր կերպով հեծավ ձին, բռնեց սանձը և սկսեց պտույտներ տալ այս ու այն կողմի վրա: Հաջորդ րոպեին վեր ցատկեց, բաց թռից սանձը և կանգնեց թամբի վրա, իսկ ձին սրարշավ շարունակեց իր պտույտները, կարծես հրդեհ լիներ: Այսպես նա, կանգնած թամբի վրա, հանգիստ ու ազատ շարունակեց ձիավարելը, կարծես թե կյանքում երբեք չեր հարբել: Ապա սկսեց վրայից պոկել հազուստներն ու շարտել ներքև: Նա այնպես արագ էր շպրտում մեկը մյուսի ետևից, որ կարծես հազուստները օդում իրար էին կաշում: Նա ցած շպրտեց տասնյոթ կտոր: Եվ ահա նա՝ բարեկազմ ու գեղեցիկ, հազնված ձեր երբեւ իմացած ամենաշքել և ամենաազդեցիկ ձևով: Հորդորելու համար թեթևակի մտրակեց ձին և վերջապես ցատկեց ներքև, գուլիս տվեց ու պարելով հեռացավ վարագույրի ետևը: Բոլորը հաճույքից ու զարմանքից բղավում էին:

Կրկեսապետը զգաց, թե ինքը ինչպիսի անհարմար վիճակի մեջ է ընկել: Կարծում եմ, որ նա ձեր երբեւ տեսած կրկեսապետերից ամենատղորմելին էր: Հարցն այն է, որ այդ «հարբածը» կրկեսի մարդկանցից մեկն էր. նա այդ կատակը ինքն էր հնարել, ոչ որի ոյնչ չեր ասել: Ես ինձ հիմար վիճակի մեջ էի զգում, բայց չի ցանկանա այդ կրկեսապետի տեղը լինել թեկուզ հազար դրաբ տային ինձ: Զգիտեմ, կարո՞ղ է լինել ավելի սքանչելի կրկես, բան այս, բայց դեռ ավելի լավը չեմ տեսել: Համենայն դեպս, ինձ համար դա շատ լավ էր, և ամեն անգամ որտեղ էլ արիթ լինի, անպայման կայցելեմ:

Այդ երեկո մենք էլ ներկայացում տվինք, բայց հավաքվել էին ընդամենը տասներկու մարդ: Հազիվ ծախսերը ծածկեցինք: Հանդիսականները անընդհատ ծիծաղում էին, և դուրսը դրանից կատաղել էր: Ներկայացումը չափարտված՝ բոլորը թռին, զնացին, բացի մի տղայից, որը քնած էր: Դուրսն ասաց, որ այս արքանզասի տիսմարները դեռ չեն կարող Շեքսպիրին հասկանալ, որ նրանց համար պետք է հասարակ կատակերգություններ ներկայացնել և նույնիսկ ավելի հասարակ բան: Ասաց, որ ինքը կարող է նրանց ոճին համապատասխան բան ստեղծել: Հաջորդ առավոտյան նա վերցրեց ապրանք փաթաթելու մի մեծ թուլք ու սև ներկ, գրեց մի բանի աֆիշ և փակցրեց պատերին գյուղի տարբեր մասերում: Աֆիշների վրա գրված էր.

Դատարանի սրահում  
Միայն մեկ ներկայացում

Համաշխարհային ողբերգակներ  
Դեվիդ Գարրիկ կրտսերը  
Եվ  
Էղմունդ Քին ավագը  
Լոնդոնի և Եվրոպական թատրոններից  
**Արքայական ընձուխտ**  
կամ  
**Արքայական կատարելությունը**  
սարսուցնող ողբերգության մեջ:  
Մուտքը 50 ցենտ:  
Ներքևում գրված էր.  
**Կանանց և երեխաների մուտքը**  
**արգելվում է:**  
— Ահա, — ասաց նա, — եթե այս վերջին տողը նրանց չգրավի, այդ կնշանակի, որ ես արքանզացիներին չեմ ճանաչում:

## **Գլուխ բաներերերորդ**

Ամբողջ օրը դուրսն ու թագավորը տաժանելի աշխատանք կատարեցին, պատրաստելով թեմը, վարագույրը և մոմերի մի շարք՝ թեմի հատակալույսի համար: Երեկոյան այնքան մարդ հավաքվեց, որ ոտք դնելու տեղ չկար: Երբ այլևս ոչ մի ազատ տեղ չկար, դուրսը պառույտ կատարեց հանդիսականների մեջ, ետևի դրոնվ բարձրացավ թեմ ու կանգնեց վարագույրի առաջ: Նա մի կարճ ճառ արտասանեց և գովեց ողբերգությունը: Ասաց, որ այդ ողբերգությունը մինչև այժմ եղածների մեջ ամենասարտեցուցիչն է: Ապա շարունակեց ավելի մանրամասնորեն խոսել ողբերգության ու Էղմունդ Քին Ավագի մասին, որը կատարելու էր գլխավոր դերը: Վերջապես, երբ կարողացան բորբոքել հանդիսականների հետաքրքրությունը, քաշեց վարագույրը: Հաջորդ րոպեին ներկայացավ թագավորը, չորեքթափ շարժվելով առաջ, բոլորովին մերկ: Ամբողջ մարմինը ներկված էր օղակներով երիզված և շերտավորված ամեն տեսակի գույներով: Նա նույնքան փառահեղ տեսք էր ստացել, որքան ծիածանը, քայլ մնացածի մասին չարժե խոսել: Դա վայրենություն էր, քայլ միաժամանակ չափազանց ծիծաղելի: Մարդիկ ծիծաղից պայթում էին: Եվ երբ թագավորը ցատկում էր ու ոստոստելով անցնում թեմի ետևը,

հանդիսականները գոռում էին, ծափահարում, անզուսպ քրջում, մինչև նա վերադառնում էր բեմ և կրկնում իր խաղը: Ապա ստիպում էին, որ նորից կրկնի: Եփած հավի ծիծաղն էլ կգար, եթե տեսներ այդ հիմար ծերուկի խեղկատակությունները:

Այնուհետև դուրսն իշեցրեց վարագույրը, գլուխը խոնարհեց հանդիսականների առջև և ասաց, որ մեծ ողբերգությունը կրկնվելու է միայն երկու երեկո, որովհետև Լոնդոնի հետ ունեցած պարտավորությունները թույլ չեն տալիս երկար մնալու, այնքան որքան Դրուրի Լեյն թատրոնի բոլոր տոմսերն արդեն վաճառված են: Նա նորից խոնարհվեց և ասաց, որ եթե իրեն հաջողվել է բավականություն պատճառել հանդիսականներին և եթե ներկայացումը ուսանելի է, ապա ինքը խորապես պարտավորված կմնա, եթե հանդիսականները այս մասին հայտնեն իրենց բարեկամներին, որպեսզի հաջորդ անգամ նրանք ևս գան տեսնելու:

Քսան հոգի մեկից բղավեցին.

— Ի՞նչ, մի՞թե վերջացավ: Վ'յդ էր բոլորը:

Դուքսը պատասխանեց, որ՝ այս: Ակսվեց մի աղմուկ: Բոլորը կանչում էին. «Խարե՛լ են մեզ»: Մարդիկ զայրացած վեր կացան, շարժվեցին դեպի բեմն ու դերասանները: Բայց հաճելի արտաքինով մի հաղթանդամ մարդ նստարանից վեր ցատկեց ու բղավեց.

— Սպասեցնք: Միայն մի խոսք, ջենտլմեններ:

Մարդիկ կանգ առան լսելու նրան:

— Մեզ խարել են, շատ վատ խարել են: Բայց ինչո՞ւ ամբողջ քաղաքում ծաղրի առարկա դառնանք, որ մինչև մեր կյանքի վերջը ծիծաղեն մեզ վրա: Ոչ, մեզ մնում է միայն այստեղից հանգիստ դուրս գալ, գովասանքով խոսել այս ներկայացման մասին և խարել քաղաքի մնացած մարդկանց: Վյդ դեպքում մենք բոլորս կլինենք նույն վիճակում: Ճիշտ չե՞մ ասում:

— Միանգամայն իրավացի եք, դատավոր, — բղավեցին բոլորը միաբերան:

— Վյդ դեպքում շատ լավ, խարվելու մասին ոչ մի խոսք: Գնացեք տուն և բոլորին խորհուրդ տվեք, որ գան տեսնեն ողբերգությունը:

Հաջորդ օրը քաղաքում խոսում էին միայն այդ փառավոր ներկայացման մասին: Երեկոյան սրահը նորից լեփ-լեցուն էր, և նորից նույն ձևով խարեցինք նաև այս մարդկանց: Երբ ես, թագավորն ու դուքսը վերադարձանք լաստ, ընթրեցինք և շուտով, մոտավորապես կեսպիշերին, նրանք Զիմին ու ինձ առաջարկեցին դուրս բերել լաստը գետի մեջտեղը, մոտ երկու մղոն իշնել ներքև, թաքցնել:

Երրորդ երեկոյան սրահը նույնքան լեփ-լեցուն էր: Այս անգամ նոր հանդիսատեսներ շկային, եկել էին նախորդ երկու երեկոյի մասնակիցները: Ես դրսի հետ կանգնել էի դրանը և նկատում էի, որ ներս մտնող ամեն մարդու գրավանն էլ ուռած է կամ քանդկոնակի տակ ինչ-որ բան է թաքցրած: Հասկանալի եր, որ դա օճանելիք չէր: Զզվելի հոտից զգում էի, որ պետք է նեխած ձու, կաղամք և նման որևէ այլ բան լիներ: Եթե ես կարողանում եմ տարբերել մոտակայքում սատկած կատվի հոտը, և իսկապես տարբերում եմ, պետք է ասեմ, որ սրա տարան այդպիսի վաթսունչորս նեխած բան: Մի րոպե մտա սրահ, բայց երկար մնալ չկարողացա, հոտն անտանելի էր: Երբ սրահում նոր մարդկանց համար այլևս տեղ չկար, դուքսը մեկին մի քառորդ դուքսանց տվեց և ասաց, որ մի րոպե իմ փոխարեն

կանգնի դռանը, իսկ ինքն սկսեց դեսուդեն շուր գալ, իբր թե ուզում է քեմ զնալ: Բայց հենց որ շուր եկանք մի մութ անկյուն, նա ասաց.

— Ծոտապի՞ր, շուտ հեռանանք: Վազի՞ր դեպի լաստը, այնպես արա, որ կարծես հետևից սատանա է ընկել:

— Ես այդպես է արեցի: Նույնպես վարվեց և նա: Մենք լաստը բարձրացանք միաժամանակ և մի երկու վայրկյան հետո արդեն լողում էինք դեպի գետի մեջտեղը: Ոչ ոք ոչ մի բառ չէր արտասանում: Մտածում էի, թե ինեղ թագավորն այժմ իր ճաշը կուտի հանդիսականների մոտ: Բայց ես սխալված էի, որովհետև նա դուրս սողաց լաստի հյուղակից և ասաց.

— Լա՛վ, դուքս, որքա՞ն հավաքեցիր այս անգամ:

Պարզվեց, որ նա այդ օրը քաղրում չէր էլ եղել:

Լաստի վրա ոչ մի լույս չկախեցինք, մինչև քաղաքից հեռացանք տասը մղոն: Ապա վառեցինք լապտերը և ընթրեցինք: Թագավորն ու դուքսը ծիծաղից թուլանում էին, երբ պատմում էին, թե ինչպես են ծառայել ժողովրդին: Դուքսն ասաց.

— Խա՛կ մարդիկ, տափա՛կ գլուխներ: Ես գիտեի, որ առաջին ներկայացման ժամանակ կլուն, որպեսզի քաղաքի մնացած մասն էլ մեր ուրկանն ընկներ և գիտեի, որ երրորդ երեկոյին նրանք կուգենային տեղը հանել, մտածելով, որ հերթն այժմ իրենցն է: Լավ, հերթը իրենցն է, բայց ես լավ գին կտայի իմանալու համար, թե դրանից որքան օգուտ ստացան: Կուգենայի տեսնել, թե այդ առիթը նրանք ինչպես են օգտագործում այժմ: Կարող են խնջույք սարքել, եթե ուզում են. իրենց հետ քերած մթերքներն առատ են:

Այս սրիկաները երեք ներկայացման դիմաց հավաքել էին չորս հարյուր վաթսունիինք դուլար: Մանք դրամի այդքան մեծ շեղ ես դեռ չէի տեսել:

Որոշ ժամանակից հետո, երբ նրանք քնել էին և խոնֆացնում էին, Զիմն ասաց.

— Քեզ համար զարմանալի չէ՞ թագավորի այս վարմունքը, Հեք:

— Ոչ, — պատասխանեցի ես, — զարմանալի չէ:

— Ինչո՞ւ, Հեք:

— Հենց նրա համար, որ դա նրանց էռությունն է: Կարծում եմ, որ նրանք բոլորն էլ իրար նման են:

— Բայց, Հեք, մեր այս թագավորները կատարյալ սրիկաներ են, կատարյալ սրիկաներ:

— Իմ ասածն էլ այդ է: Որքան ինձ հայտնի է, բոլոր թագավորներն էլ մեծ մասամբ սրիկաներ են:

— Մի՞թե:

— Մի անգամ կարդա նրանց մասին և կիմանաս: Վերցրու Հենրի Ութերորդին:<sup>[16]</sup> Նրան հակադրիր մեր կիրակնօրյա դպրոցի վերակացուին: Վերցրու Կառլոս Երկրորդին, Լյուդովիկոս Տասնչորսերորդին, Զեյմս Երկրորդին, Էդվարդ Երկրորդին, Ուիլարդ Երրորդին և քառասուն այլ թագավորների: Բացի դրանցից, իիշիր սարսունների յոթնապետությունները,<sup>[17]</sup> որոնք հին ժամանակներում սովորաբար կոտորում, կողոպտում էին ամենուրեք և կայեններ աճեցնում: Պետք է տեսնեիր Հենրի Ութերորդին

իր ծաղկուն տարիներին: Նա կատարյալ ծաղիկ էր: Ամեն օր նոր կին էր առնում և հաջորդ առավոտյան հրամայում գլխատել: Եվ նա այդ առում էր նույնքան հանգիստ ու անտարբեր, ինչպես եթե ուտելու ձու պահանջեր: «Ինձ բերեք Նել Գվինին» — ասում էր նա: Բերում էին: «Հաջորդ առավոտյան ասում էր. «Թոցրեք գլուխը»: Եվ գլխատում էին: «Բերեք Զեյն Շորին»: Զեյն Շորը զայիս էր: «Հաջորդ առավոտյան. «Թոցրեք գլուխը»: Եվ գլխատում էին: «Կանչեցեք գեղեցիկ Ռոզամունդին»: Գեղեցիկ Ռոզամունդը նրա կանչին ներկայանում էր: «Հաջորդ առավոտյան. «Թոցրեք գլուխը»: Եվ նա դրանցից յուրաքանչյուրին ստիպում էր ամեն գիշեր մի պատմություն պատմել: Նա այդ այնքան շարունակեց, մինչև հավաքեց հազար ու մի պատմություն, և այդ պատմությունները գետեղեց մի գրքի մեջ, որը կոչվում է «Դոմսդեյի գիրք»:<sup>181</sup> Լավ անուն է և ցոյց է տալիս այդ դեպքը: Դու թագավորներին չես ճանաչում, Զիմ, բայց ես ճանաչում եմ, և մեր այս ծեր անառակը պատմությունից իմ իմացածներիս մեջ ամենամաքուրներից է: Մի տես, թե այդ Հենրիի գլխում ինչպես միտք ծագեց մեր երկրին նեղություն տալ: Ինչպես սկսեց, որևէ բան հայտնե՞ց, նախազգուշացրե՞ց: Ոչ: Նա նավից հանկարծ թեյր ծովը թափեց Բոստոնի նավահանգստում, ապա տվեց անկախության դեկլարացիան և գրգռեց մարդկանց, որ կովի դուրս զան: Նրա գործելու եղանակը այդպիսին էր. ոչ որի հանգիստ չեր թողնում: Կասկածում էր իր հոր՝ Վելինգտոնի դքսի վրա և ի՞նչ արեց: «Հարցուվո՞ր արեց: Ոչ, նրան իւեղդեց գինետակարի մեջ, ինչպես կատվի: Ասենք թե մարդիկ անուշադիր էին, դրամ էին թողնում նրա մոտ: Ի՞նչ կաներ: Կզրպաներ: «Պայմանավորվում էր մի բան անել, որի համար վճարած կիխներ, բայց չես նստել կողքին հետևելու, որ պայմանը կատարվի: Ի՞նչ կաներ: Միշտ հակառակը կաներ: Ասենք, թե բերանը բացում էր. ի՞նչ էր լինում հետևանքը: Եթե անմիջապես չփակեր, ստերը դուրս կթափվեին: Իսկ եթե նա մեր թագավորի տեղը լիներ, ավելի լավ կկողոպտեր այս քաղաքը: Չեմ ասում, թե մերը զառ է, որովհետև թագավորը զառ լինել չի կարող, երբ մենք նայում ենք սառը փաստերին: Համենայն դեպս, հին խոյերի հետ համեմատած, սրանք ոչինչ են: Իմ ասածն այն է, որ թագավորը թագավոր է, և մենք ստիպված ենք տանել այդ: Ընդհանրապես նրանք բոլորն եւ անպետք մարդիկ են: Այդպես են դաստիարակված:

— Բայց այս մեկից սպիրտի հոտը ուժեղ է փչում, Հեք:

— Էհ, բոլորն եւ այդպես են, Զիմ: Ի՞նչ կարող ենք անել, եթե թագավորից հոտ է փչում: Պատմությունը դրա դեմ ոչ մի միջոց չի առաջարկում:

— Դուքսը որոշ կողմերով բավական մարդավարի է:

— Այո, դուքսը տարբերվում է, բայց ոչ շատ: Այս մեկը միջին տիպի է, թեև դուքս է: Երբ հարբած է, ոչ մի կարճատես չի կարող նրան թագավորից տարբերել:

— Լավ, Հեք, եւ դրանց մասին չխոսենք: Սրանց եւ հազիվ եմ տանում:

— Ես եւ եմ այդպես կարծում, Զիմ: Սրանք նստել են մեր ուսին, և մենք պետք է հիշենք, թե ովքեր են սրանք, և հաշվի առնենք այդ: Երբեմն ցանկանում եմ լսել այնպիսի մի երկրի մասին, որտեղ թագավորներ չկան:

Ի՞նչ միտք ուներ Զիմին ասել, թե սրանք իսկական թագավոր ու դուքս չեն: Դրանից լավ բան դուքս չեր զառ այդ, դրանք ոչնչով չեին տարբերվում իսկականներից:

Ես պառկեցի քնելու, և Զիմը շարթնացրեց ինձ, երբ հասավ իմ հերթը: Նա հաճախ էր այդպես վարվում: Լուսադեմին, երբ արթնացա, նա նստած էր իր տեղում, գլուխը կախած

Երկու ծնկների միջև: Ինքն իրեն հեծում ու ողբում էր: Ես նման պահերին ուշադրություն չեմ դարձնում, ոչ եւ երևում նրա աչքին. գիտեի, թե ինչն ինչո՞ւ է: Նա մտածում էր իր կնոց և երեխաների մասին, որոնք շատ հեռու էին: Բացի այդ, հայրենակարու էր. իր կյանքում երեք տնից չեր հեռացել: Ես հավատացած եմ, որ նա իր կնոցն ու երեխաներին այնքան էր սիրում, որքան սպիտակամորթը կարող է սիրել: Գուցե դա շատերին բնական չթվա, բայց, իմ կարծիքով, դա ճիշտ է: Հաճախ գիշերները նա հեծում ու ողբում էր այդպես, երբ կարծում էր, թե քնած եմ, և ասում էր. «Խե՛նճ, փոքրիկ Լիզարեթ, խե՛նճ, փոքրիկ Զոնի, ծա՛նը է. այլևս չեմ տեսնի ձեզ, չեմ տեսնի»: Չիմը շատ լավ նեզը էր:

Բայց այս անգամ ես մի կերպ սկսեցի խոսել նրա հետ իր կնոց ու երեխաների մասին: Նա ասաց.

— Այսօր սրտիս վրա մի բան է ծանրացել, քիչ առաջ ափից լսեցի ինչ-որ չրիկոցի ձայն: Դա ինձ հիշեցրեց փոքրիկ Լիզարեթի հետ կապված մի դեպք: Այն ժամանակ նա մոտ չորս տարեկան էր. վարակվել էր քութեշով և ծանր հիվանդ էր: Մի անգամ կանգնած էր իմ կողքին: Ես ասացի:

«Դուռը փակիր»:

Նա չկատարեց իմ խոսքը, կանգնեց կողքիս, նայեց ինձ ու ծիծառեց: Դա ինձ շատ զայրացրեց: Ես նորից ասացի և այս անգամ ավելի բարձր.

«Չե՛ս լսում, դուռը փակիր»:

Նա նոյն ձևով կանգնեց և ծիծառեց: Ես կատաղած գոռացի.

«Տե՛ս, թե հիմա ոնց կփակես»:

Այդ ասելով այնպիսի մի ապտակ հասցրի գլխին, որ փովեց հատակին: Հետո գնացի մյուս սենյակը և այնտեղ մնացի մոտ տասը բոպե: Երբ վերադարձա, դուռը դեռ առաջվա նման բաց էր, իսկ երեխան, կանգնած դռան մոտ, գլուխը կախած լաց էր լինում. արցունքները գործվում էին աչքերից: Ես զայրացա և քայլեցի երեխայի կողմը: Դուռը դեպի ներս էր բացվում, և այդ բոպեին ուժեղ փշեց քամին, և դուռը, թրընկ, ամբողջ թափով փակվեց երեխայի թիկունքի մոտ, իսկ նա տեղից շարժվեց: Ես այնպես թուլացա, որ չեմ կարող ասել, թե ինչ զգացի: Կամաց մոտեցա: Ամբողջովին դողում էի, քայլում ոտքերիս մատների վրա: Դանդաղ ու լուր բաց արեցի դուռը, գլուխս ներս մտցրի և ամբողջ ուժով գոռացի: Նա նոյնիսկ տեղից շարժվեց: Այս, Հեք, ես սկսեցի բարձրաձայն աղաղակել և նրան առա իմ զիրկն ու ասացի. «Օ՛, իմ խե՛նճ փոքրիկ երեխա: Ամենակարո՛ղ տեր, ների՛ր ծեր Զիմին, որովհետև նա ինքը երբեք չի ների իրեն, քանի դեռ կենդանի է»: Քութեշից հետո երեխան խլացել էր, Հեք, բոլորովին խլացել, իսկ ես ինչպես դաժան վարվեցի նրա հետ:

## Գլուխ բասնչորսերորդ

Հաջորդ օրը իրիկնադեմին, մենք կանգ առանք գետի մեջտեղում ուռենիներով ծածկված մի կղզյակի մոտ: Վյստեղ, գետի մյուս կողմում է գյուղ կար, և դուքսն ու թագավորն սկսեցին այդ գյուղերը կողոպտելու ծրագրեր մշակել: Չիմը դրսին ու թագավորին ասաց,

թե հուսով է, որ դա մի քանի ժամից ավելի չի տևի, որովհետև իր համար շատ ծանր ու ձանձրալի է ամբողջ օրը պարանով կապկապած պառկել հյուղակում: Ինչպես գիտեք, երբ նրան մենակ էինք թողնում լաստի վրա, ստիպված էինք լինում կապկաել, որովհետև եթե մեկը պատահարար գար լաստը և գտներ նրան արձակ ու մենակ, չեր հավատա, որ նա փախած ու բռնված նեզը է: Ուստի դուքսն ասաց, որ, իրոք, դժվար է ամբողջ օրը կապված մնալ, և որ ինքը մի քան կմտածի՝ այդ միջոցին այլևս չդիմելու համար:

Դուքսն արտասովոր ընդունակ մարդ էր և շուտով գտավ ելքը: Նա Զիմին հազցրեց Լիր Արքայի տարազը՝ վարագույրի շթից պատրաստած երկար մի շրջազգեստ, ձիու մազից պատրաստած սպիտակ պարիկ և բեղեր: Ապա վերցրեց թատերական զրիմ և դեմքը, ձեռքերը, ականջը, վիզը ներկեց անկենդան, տաղտուկ, կապույտ գույնով: Նա արդեն նման էր ինն օր առաջ խեղդված դիակի: Ես երբեք դրանից ավելի ահուելի, ավելի բարբարոս քան չէի տեսել: Դուքսը վերցրեց մի տախտակ և գրեց.

«Կատաղած արար, քայց ոչ ոքի չի վնասի, եթե չմոտենան»:

Նա այդ տախտակը փակցրեց մի ձողի վրա, և ձողը կանգնեցրեց հյուղակի առաջ, շորս-հինգ ոտնաշափ բարձր: Զիմը զոհ էր դրանից. ասում էր, որ այդպես շատ ավելի լավ է, քան ամեն օր ամբողջ օրը կապկապած պառկել և ամեն մի ձայն լսելիս դռղալ: Դուքսն ասաց, որ նա իրեն ազատ ու հանգիստ զգա, և եթե որևէ մեկն իր գործերին խառնվի, դուրս թռչի հյուղակից, կոպիտ շարժումներ անի, մեկ-երկու անգամ զազանի նման գոռա: Այդ դեպքում, նրա կարծիքով, մարդիկ կփախչեն և հանգիստ կթռղնեն Զիմին: Այդ խորհուրդը բավական խելացի էր, քայց ամեն մարդ չէր սպասի, մինչև նա գոռար: Զիմը ոչ միայն մեռած մարդու տեսք ուներ, այլև դրանից ավելի վատ էր:

Այս սրիկաներն ուզում էին նորից փորձել իրենց բախտը. դա շատ փող կրերեր: Քայց մտածում էին, թե դա կարող է ապահով չինել, որովհետև նախորդ իսրաելության լուրը կարող էր այդտեղ հասած լինել: Նրանք չին կարողանում այնպիսի մի ծրագիր կազմել, որը միանգամայն հարմար լիներ: Ուստի դուքսը վերջապես ասաց, թե ինքը մեկ-երկու ժամ կպառկի ու գործի կրնի իր ուղեղը՝ տեսնելու, չի՞ կարող մի հարմար առաջակություն անել Արքանգասի այս գյուղի համար: Իսկ թագավորն ասաց, որ ինքը դուրս կգա մյուս գյուղն առանց ծրագրի: Քավական է ապավինել նախախնամությանը, որպեսզի առաջնորդի շահավետ ճանապարհով: Նրա նախախնամությունը, իմ կարծիքով, սատանան էր: Վերջին իջևանում բոլորս գնել էինք նոր հազուստներ: Թագավորը հազար իր նոր շորերը և ասաց, որ նոյնն անեմ և ես: Իհարկե, կատարեցի նրա կարգադրությունը: Թագավորն ամբողջությամբ սև էր հագել և շատ պատկառելի տեսք ուներ: Մինչ այդ ես չգիտեի, որ հազուստը կարող է մարդուն այդքան փոխել: Առաջ նա նման էր երբսէ գոյություն ունեցած ամենաստոր, ամենահասարակ, ծերացած մի անառակի: Քայց այժմ նա, երբ հանում էր իր նոր, սպիտակ լայնեզր գլխարկը, խոնարհվում ու ժպտում էր, այնպիսի վեհ, ազնիվ ու բարեպաշտ տեսք էր ստանում, որ կարծես ինքը ծերուկ նոյն էր, որ նոր էր դուրս եկել տապանից: Զիմը մաքրեց նավակը, իսկ ես պատրաստեցի թիակը: Երևում էր մի շոգենավ, որը կանգնած էր այդ գյուղից երեք մղոն վեր, ափի մոտ: Արդեն երկու ժամ էր, որ դա այնտեղ էր և բեռ էր վերցնում: Թագավորն ասաց.

— Քանի որ այսպես եմ հագնված, ապա ավելի լավ է, որ ես եկած լինեմ Սեն-Լուիից կամ մի այլ տեղից: Շտապիր դեպի շոգենավը, Հեքլը երի, դրանով կգնանք գյուղ:

Կարիք չկար ինձ երկրորդ անգամ հրամայելու, որ շոգենավ նստեմ. ես ափ հասա զյուղից կես մղոն վերև և ապա թիավարեցի խաղաղ ջրի զառիթափ ափի երկայնքով: Շուտով մենք հանդիպեցինք կոճղի վրա նստած անմեղ տեսքով զյուղական մի երիտասարդի: Սա սրբում էր դեմքի քրտինքը, որովհետև օրը շատ շոգ էր: Նրա կողքին դրված էին կապերտից պատրաստած երկու մեծ խուրջին:

— Նավակը դարձրու դեպի ափ, — ասաց թագավորը: Ես կատարեցի նրա հրամանը: — Ո՞ւր եք գնում, երիտասարդ:

— Շոգենավ. ուզում եմ Օոլեան գնալ:

— Բարձրացեք նավակը, — ասաց թագավորը, — մի րոպե սպասեցեք. իմ ծառան կօգնի ձեզ վերցնելու խուրջինները: Դուրս թռիր և օգնիր ջենտլմենին, Աղողփուս (վերջին խոսքը, իհարկե, ինձ էր ուղղված):

Ես օգնեցի, և մենք երեքով նորից ճանապարհ ընկանք: Երիտասարդն անշափ շնորհակալ էր. ասում էր, թե այսպիսի շոգ եղանակին խուրջիններ կրելը ծանր գործ է: Նա հարցրեց թագավորին, թե ուր է գնում: Թագավորն ասաց, որ գետով իջել է ներքև և այս առավոտ դուրս է եկել մյուս զյուղը, իսկ այժմ մի քանի մղոն բարձրանում է վեր, իր հին ծանոթին՝ մի ազարակատիրոջ, տեսակցության է գնում: Երիտասարդն ասաց.

— Երբ առաջին անգամ տեսա ձեզ, մտքումս ասացի, որ սա, անկասկած, միստր Վիլքսն է, և մի փոքր ուշացել է, բայց այնուհետև ասացի՝ ոչ, կարծում եմ, նա չէ. նա չպետք է գետն ի վեր թիավարեր: Դուք նա չեք, այնպես չէ:

— Ոչ, իմ ազգանունը Բլոջիթ է, Ալեքսանդր Բլոջիթ, կարծում եմ, որ պետք է ասել արժանապատիվ Ալեքսանդր Բլոջիթ, այնքան որքան ես տիրոջ խեղճ ծառաներից մեկն եմ: Բայց և այնպես ես նույնքան կարող եմ ցավել միստր Վիլքսի համար, որը ժամանակին չի կարողացել ժամանել, եթե նա այդ ուշացումից որևէ չափով տուժում է: Հուսով եմ, որ չի տուժի:

— Չե, նա դրանից ոչինչ չի կորցնի. կտակածը լրիվ կստանա, միայն թե չկարողացավ եղբորը՝ Պիտերին, մեռնելուց առաջ տեսնել: Դրան է նա գուցե կարևորություն չի տա, ո՞վ զիտե: Բայց եղբայրը աշխարհում ամեն ինչ կտար, միայն թե մեռնելուց առաջ նրան տեսներ: Վերջին երեք շաբաթը ուրիշ ոչ մի քանի մասին չեր խոսում: Տղայության տարիներից հետո նրան չի տեսել, իսկ մյուս եղբորը՝ Վիլքսին, երբեք չի տեսել: Դա խուլուհամը եղբայրն է: Վերջինս երեսուն-երեսունհինգից ավելի չի լինի: Այստեղ միայն Պիտերն ու Ջորջն են եկել: Ջորջը ամուսնացած եղբայրն էր: Նա ու իր կինը անցյալ տարի մեռան: Մնացել են Հարվին ու Վիլքսը, նրանք էլ, ինչպես ասացի, ժամանակին չեն եկել:

— Որևէ մեկը նրանց լուր տվե՞լ էր:

— Այո, մեկ կամ երկու ամիս առաջ, երբ Պիտերը նոր էր հիվանդացել: Նա ասում էր, թե այնպես է զգում իրեն, որ այս անգամ լավանալու հույս չունի: Պետք է իմանաք, որ նա բավական ծեր էր, իսկ Ջորջի աղջիկները շատ փոքր էին և չէին կարող նրան զբաղեցնել, բացի Մերի Ջեյնից շիկահեր աղջկանից: Ջորջի ու նրա կնոց մահից հետո Պիտերը շատ էր նեղվում մենակությունից և, ըստ երևույթին, այնքան է ապրելու մասին չեր մտածում: Անշափ ուզում էր տեսնել Հարվիին, ինչպես և Վիլքսին: Դե նա այն մարդկանցից էր, որոնց համար անտանելի է կտակ գրելը: Նա թողել է մի նամակ՝ Հարվիի համար: Այստեղ գրել է, թե ուր է թաքցրել դրամը և ցանկություն է հայտնել, որ իր մնացած ունեցվածքը

բաժանելիս Զորջի աղջիկները ոչ մի բանի կարիք չունենան, բանի որ Զորջը նրանց ոչինչ չեր թողել: Եվ դա միակ նամակն է, որ կարողացել են գրել տալ:

— Ձեր կարծիքով, ինչո՞ւ Հարվին չի զայխ: Որտե՞ղ է ապրում:

— Օ՛, նա ապրում է Անգլիայում, Շեֆֆիլդում. այնտեղ քարոզում է: Նա այս երկրում երբևէ չի եղել: Այնքան էլ շատ ժամանակ չի ունեցել զայխ: Գուցե և նամակը տեղ չի հասել:

— Յավալի է, շատ ցավալի, եթե չի ապրել այնքան, որ տեսներ իր եղրորդ, խե՞նճ մարդ: Ասում եք, որ Օղեան եք զնում, այ՞ո՞:

— Այո, բայց դա իմ ճանապարհորդության մի մասն է: Հաջորդ չորեքշաբթի զնում եմ Ոլո՞դե՞-Ժանեյրո, որտեղ ապրում է հորեղբայր:

— Երկար ճանապարհորդություն է, բայց հաճելի կլինի: Երանի՛ ես էլ զնայի: Ամենամեծ աղջիկը Մերի Ջե՞նն է: Սյո՞ւսը քանի տարեկան է:

— Մերի Ջեյնը տասնինը տարեկան է, Սյուլզանը՝ տասնինգ, և Զուաննան՝ մոտ տասնչորս. վերջինս այն աղջիկն է, որ իրեն բարի գործի է նվիրել և նապաստակի շրջունքներ ունի:

— Խե՞նճ արարածներ, այդպես մենակ են մնում այս սառն, անսիրտ աշխարհում:

— Է՛հ, կարող էին ավելի վատ վիճակի մեջ ընկնել: Ծերունի Պիտերը բարեկամներ ունի, և նրանք չեն թողնի, որ աղջիկները տուժեն: Պիտերի մտերիմներն էին Հոքսոնը՝ մկրտչական քարոզիչը, սարկավագ Լոթ Հովին, Բեն Ռուքերը, Էբներ Շոքլֆորդը, օրենսգետ Լեվի Բելը, դոկտոր Ռոբինսոնն ու իրենց կանայք, ինչպես նաև այրի Բարթիլին և բազմաթիվ այլ մարդիկ: Պիտերը սրանց մտերիմն էր և նամակներ գրելիս հիշում էր նրանց. այնպես որ Հարվին կիմանա որտեղ բարեկամներ որոնել, երբ զա այստեղ:

Այնուհետև ծերուկը շարունակեց հարցեր տալ, մինչև կատարելապես դատարկեց այդ երիտասարդին: Կործանվեմ, եթե նա չհարցրեց այդ օրինյալ ավանի յուրաքանչյուր բնակչի մասին և ամեն ինչ իմացավ Վիլբուրի վերաբերյալ: Նա իմացավ, որ Պիտերը կաշեգործ է եղել, Զորջը՝ հյուսն, Հարվին՝ բողոքական աղանդի քարոզիչ և այլն: Ապա նա ասաց.

— Ինչո՞ւ էիք ուզում մինչև շոգենավ ոտքով զնալ:

— Որովհետև դա Օղեանի մեծ նավ է, և վախենում էի, թե այստեղ կանգ չի առնի: Երբ նավը խորն է նատած, կանգ չի առնի ողջունելու համար: Ցինցինաթիից եկողները կանգ են առնում, բայց սա Մեն-Լուիից է զայխ:

— Ինչո՞վ էր Վիլբուր հարուստ:

— Օ՛, շատ բանով: Նա ուներ տներ, կալվածներ և կարծում են, որ թողել է երեք-չորս հազար դոլար կանխիկ դրամ՝ թաքրած ինչ-որ տեղ:

— Ե՞րբ մեռավ, ասացի՞ք:

— Այդպիսի բան չեմ ասել, բայց երեկ երեկոյան մեռավ:

— Հավանորեն թաղումը տեղի կունենա վաղը, այ՞ո՞:

— Այո, մոտավորապես կեսօրին:

— Օ՛, սարսափելի տխուր բան է, բայց մենք բոլորս վաղ թե ուշ գնացողներ ենք: Ուստի մեզ մնում է պատրաստ սպասել դրան. այդ դեպքում հանգիստ կննջենք:

— Այո, սըր, ամենալավն այդ է: Մայրս միշտ այդ էր ասում:

Երբ սկսեցինք թիավարել, բեռնումն ավարտված էր և նավը շուտով ճանապարհ ընկավ: Թագավորը ոչինչ չասաց նավ բարձրանալու մասին, ուստի վերջին հաշվով ինձ չհաջողվեց բարձրանալ այնտեղ: Երբ նավը հեռացավ, թագավորն ինձ ստիպեց թիավարել ևս մեկ մղոն դեպի ափի ամայի մի կետ, ապա, ցամաք դուրս գալով ասաց.

— Այժմ շտապ ետ գնա և դրսին քեր այստեղ, ինչպես և կապերտից պատրաստած նոր խուրջինները: Իսկ եթե նա գնացել է մյուս ափը, գտիր և քեր: Ասա, որ լավ հագնվի: Դե՛հ, թիավարիր, շո՛ւտ արա:

Ես հասկացա, թե ինչ մտադրություն ունի, բայց, իհարկե, ոչինչ չասացի: Երբ դրսի հետ վերադարձա, նավակը թաքցրինք, նրանք նատեցին մի կոճղի, և թագավորը մանրամասնորեն պատմեց այն ամենը, ինչ երիտասարդն է ասել, մինչև վերջին բառը: Պատմելու ամբողջ ընթացքում նա աշխատում էր խոսել ինչպես անգիտացի, և չնայած իր անշնորհքությանը, բավական հաջող էր կատարում դերը: Ես չեմ կարող նմանեցնել, ուստի և չեմ փորձում դա վերաբարել: Բայց նա իրոք բավական լավ կատարեց այդ դերը:

— Ի՞նչ կասեք խուլուհամրի մասին, Բրիջուորթը, — ասաց նա վերջում:

Դուքսն ասաց, որ այդ հարցը թողնի իրեն, ինքը բեմում կատարել է խուլուհամրի դեր: Սպասեցին շոգենավի:

Կեսօրից հետո եկան երկու փոքրիկ շոգենավ, բայց դրանք գետի վերին հոսանքից չեն: Վերջապես եկավ մի մեծ նավ, և թագավորն ու դուքսը ողջունելով կանգնեցրին այն: Նավը մակույկ ուղարկեց, և մենք բարձրացանք տախտակամածը: Նավը զալիս էր Ցինցինաթիֆից: Երբ իմացան, որ մենք ուզում են միայն չորս կամ հինգ մղոն գնալ, իխստ զայրացան ու սկսեցին մեզ հայինել. ասացին, որ մեզ ափ դուրս չեն քերի: Թագավորը հանգիստ էր և ասաց.

— Եթե այս շենտլմեններից յուրաքանչյուրն ամեն մեկ մղոնի համար վճարի մեկ դոլար, որպեսզի թույլ տրվի բարձրանալ նավը և մակույկով դուրս քերվեն ափ, այդ դեպքում համաձայն եք:

Մարդիկ մեղմացան, ասացին, որ այդպես համաձայն են, և երբ հասանք գյուղի դեմ, նրանք մեզ մակույկով ափ դուրս քերին: Տեսնելով մոտեցող մակույկը, մի քանի հոգի թափվեցին գետափ: Երբ թագավորն ասաց. «Այս շենտլմեններից ո՞վ կարող է ասել, թե որտեղ է ապրում միստր Պիտեր Վիլքսը», նրանք նայեցին իրար ու խոնարհեցին գլուխները: Կարծես ուզում էին ասել. «Ի՞նչ ասենք ձեզ»: Նրանցից մեկը մեղմ ու քննուշ ձայնով ասաց.

— Յավում եմ, սըր, բայց մենք միայն կարող ենք ասել, թե որտեղ էր ապրում մինչև երեկո:

Հանկարծ, մի ակնթարթում, ողջ-առողջ ծերունին նվազեց, ընկավ կողքի մարդու վրա, ծնոտը հենելով նրա ուսին, արցունքներ թափելով նրա թիկունքն ի վար.

— Ավա՛ղ, ավա՛ղ, մեր խեղճ եղբայրը... չկա, և մենք երբեք չկարողացանք նրան տեսնել, օ՛հ, որքան ծանր է, որքան ծանր:

Ապա լազուկոծով շուր եկավ և մատներով բազմաթիվ ապուշ նշաններ արեց դքսին: Վերջինս ցած զցեց կապերտե խուրջինը և աղաղակեց: Անհծվեմ, եթե երբեմ տեսածս խարդախ մարդկանցից այդ երկուսն ամենախարդախները չեն:

Մարդիկ հավաքվեցին նրանց շուրջը, բաժանելով նրանց վիշտը, և ասացին ամեն տեսակի բարի, միխթարական խոսքեր, խուրջինները վերցրին, բարձրացրին բլուրն ի վեր, թույլ տվեցին, որ հենվեն իրենց, արտասվեն: Թագավորին ամեն ինչ պատմեցին եղբոր վերջին բռպեների մասին, իսկ թագավորը մատների շարժումով նոյնը հաղորդեց դքսին, և երկուսն էլ մորմորեցին մեռած կաշեգործի համար, կարծես կորցրել էին տասներկու առաջապներին: Ազնիվ խոսք, թող նեզր լինեմ, եթե մինչ այդ երբեմ նման բան տեսել եմ: Դա բավական էր, որպեսզի մարդ ամոթահար խորշեր մարդկային ցեղից:

## Գլուխ բասնիհնգերորդ

Երկու բռպեում լուրը տարածվեց ամբողջ ավանում, և կարելի էր տեսնել, թե ինչպես մարդիկ բոլոր կողմերից շնչակտուր վագում էին դեպի մեզ: Մի քանիսը սերթուկները հագնում էին ճանապարհին: Շուտով մեզ շրջապատեց մի ամբողջ բազմություն: Ոտնաձայները զինվորական երթ էին հիշեցնում: Պատուհաններն ու բակերը լիքն էին մարդկանցով. ամեն բռպե մեկը, ցանկապատին կանգնած, ասում էր.

— Այդ նրա՞նք են:

Եվ մի ուրիշը, քայլելով ամբոխի հետ, գլուխը ետ դարձնելով պատասխանում էր.

— Կարող եմ գրագ գալ, որ նրանք են:

Երբ հասանք տուն, տան դիմացի փողոցը լցված էր մարդկանցով, և երեք աղջիկները կանգնած էին դռան առջև: Մերի Զեյնը շիկահեր էր, բայց դա նշանակություն չուներ. կատարյալ գեղեցկուիի էր: Նրա դեմքն ու աչքերը փայլում էին, ինչպես լուսապսակ: Այնքան էր ուրախացել, որ հորեղբայրը եկել է: Թագավորը տարածեց իր բազուկները, և Մերի Զեյնը նետվեց նրա գիրկը, իսկ նապաստակի շրթունքներով աղջիկը վագեց դեպի դուրսը: Ահա թե ինչպիսին էր նրանց ցնծությունը: Մարդկանց մեծ մասը, համենայն դեպս բոլոր կանայք, ուրախությունից արտավում էին. չէ՞ որ վերջապես տեսան այդ հանդիպումը, արժանացան այդ նվիրական պահին:

Թագավորը կամաց կամթեց դքսին (ես նկատեցի այդ), նայեց շուրջն ու տեսավ անկյունում երկու աթոռների վրա դրված դագաղը: Նա և դուրսը, յուրաքանչյուրը մեկ ձեռքը մյուսի ուսին դնելով, մյուս ձեռքով արցունքները սրբելով, դանդաղ ու հանդիսավոր քայլեցին դեպի անկյունը: Մարդիկ ետ էին քաշվում, որ նրանց տեղ տան: Դադարեց ամեն աղմուկ ու խոսակցություն, մարդիկ ասում էին «սը՞ս»: Բոլոր տղամարդիկ հանեցին գիւարկները, խոնարհեցին գլուխները: Այնախի լուրջուն տիրեց, որ եթե գնդասեղ գետին ընկներ, ձայնը կլսվեր: Թագավորն ու դուրսը, մոտենալով դիակին, կռացան ու նայեցին դագաղին, հետո այնպիսի աղաղակ բարձրացրին, որ կարելի էր լսել նոր Օղեանում: Ապա յուրաքանչյուրն իր բազուկներով գրկեց մյուսի պարանոցը և ծնունդը հենեցին մեկը մյուսի ուսին: Երեք-չորս բռպե արցունքներ հնսեցին նրանց աչքերից: Ես երբեք չէի տեսել, որ տղամարդն այդքան առատ արտասուր թափի: Նոյն ձևով արտասվեցին և մյուսները:

Սենյակում այնպիսի խոնավություն էր զգացվում, որի նմանը երբեք չէի տեսել: Նրանցից մեկը դագաղի մի կողմն անցավ, մեկն է՝ մյուս կողմը: Ծունք իշան, ճակատները հենեցին դագաղին և սկսեցին աղոթքներ մրմնջալ, որ միայն իրենք էին լսում: Նրանց այդ ողբք այնպես ազդեց ամրոխի վրա, որ հազիվ թե նման բան տեսած լինեք: Բոլորը վայր ընկան ու սկսեցին հեկեկալ, այդ թվում և խեղճ աղջիկները: Գրեթե բոլոր կանայք մոտեցան աղջիկներին և, առանց մի խոսք ասելու, հանդիսավոր տիխությամբ համբուրեցին ճակատները, ձեռքները դրեցին նրանց գլուխներին ու նայեցին վեր, դեպի երկինք: Արցունքները գլուխեցին նրանց աչքերից: Ապա փողձկացին ու հեռացան, հեկեկալով ու աչքերը սրբելով, տեղը զիշելով մյուսներին, որպեսզի սրանք է ցույց տան իրենց: Ես երբեք այդքան զգվեկի բան չէի տեսել:

Ծուտով թագավորը վեր կացավ, մի փոքր առաջ եկավ և, հավաքելով ուժերը, դանդաղ սկսեց հիմարներին հրապուրող արտասվալից մի ճառ, թե ինչպես իր և իր խեղճ եղբոր համար վշտախ փորձություն է հանգույցյալի կորուստը, և որ չորս հազար մղոն երկարածիկ ճանապարհորդությունից հետո չեն կարողացել հանգույցյալին կենդանի տեսնել: Բայց դա այնպիսի մի փորձություն է, որը մեզ համար քաղցրացվում, սփոփովում ու սրբազնություն է այս թանկագին համակրանքով ու սուրբ արցունքներով. ուստի նա իր և եղբոր կողմից ի սրտե շնորհակալություն է հայտնում, թեև խոսքով շնորհակալություն հայտնել չեն կարող. բառերը շատ անզոր ու սառն են: Եվ շարունակեց ասել նման դատարկ ու կեղտոտ բաներ, մինչև ուղղակի զգվեցրեց: Հետո է ծոր տվեց կեղծ բարեպաշտական մի «ամեն» ու հեծկլտաց, իբր թե լացի նոպայից սիրտը ճարում է:

Հենց որ նա ճառն ավարտեց, ամբոխի միջից մեկն սկսեց մի օրիներգ, և բոլորն իրենց ամբողջ կարողությամբ ձայնակցեցին: Դա այնպես ջերմացրեց մարդկանց, որ կարծես եկեղեցուց նոր դուրս եկած լինեին: Երաժշտությունը լավ բան է: Այդ բոլորից հետո ինձ թվում էր, թե այդ չափազանց սիրալիք դատարկաբանությունները երբեք թարմացնող նշանակություն չունեցան և այնպես անկեղծ ու լավ տպավորություն չթողեցին:

Թագավորը նորից գործի դրեց իր ծնոտը, ասելով, թե ինչպես ինքը և իր եղբոր աղջիկներն ուրախ կլինեն, եթե այս ընտանիքի մերձավոր բարեկամներից մի քանիսը այս երեկո իրենց հետ ընթրեն և օգնեն կարգի բերելու հանգույցյալի աճյունը: Ասաց, որ եթե այստեղ պառկած իր խեղճ եղբայրը կարողանար խոսել, ինքը կիմանար, թե ում անունը կտա: Կան անուններ, որ շատ սիրելի էին նրան և որոնց մասին հաճախ հիշատակում էր իր նամակներում: Նույն անունները կտա և ինքը, այն է՝ արժանապատիվ միստը Հորսոնը, սարկավագ Լոթ Հովին, միստը Բեն Ռուքերը, Աբներ Շեքփորդը, Լեվի Բիլը, դոկտոր Ոռինսոնը և այրի Բարթելին:

Արժանապատիվ Հորսոնը և դոկտոր Ոռինսոնն այդ ժամանակ ավանի մյուս ծայրում միասին որս էին անում. դոկտորը մեկին մյուս աշխարհին էր ուղարկում, իսկ քարոզիչը ճանապարհ էր ցույց տալիս: Օրենսգետ Բիլը գործով գնացել էր Լուիսվիլ: Մնացածներն այնտեղ էին: Բոլորը եկան թագավորի ձեռքը սեղմեցին, շնորհակալություն հայտնեցին ու խոսեցին հետը: Սեղմեցին Դրսի ձեռքը, բայց ոչինչ չասացին, միայն ժպտացին և գլուխները շարժեցին, ինչպես փայտի ծողեր, մինչ դուրսը ձեռքերով ամեն տեսակի նշաններ արեց և ամբողջ ժամանակ կրկնում էր «զո՞ւ-զո՞ւ-զո՞ւ», ինչպես երեխա, որը չի կարող խոսել:

Այսպես թագավորը շարունակեց բառաչել և կարողացավ հարցեր տալով բավական բան իմանալ ավանում ամեն որի և ամեն շան մասին, յուրաքանչյուրի մասին հարցնով, անձամբ անունը տալով, հիշատակում էր ամեն տեսակի մանրութներ, որ երբևէ տեղի էին ունեցել ավանում, Զորջի կամ Պիտերի ընտանիքում, և միշտ հասկացնում էր, որ այդ բաները Պիտերն է իրեն զրել, բայց դա, իհարկե, սուտ էր: Նա այս օրինյալ լուրերն ամբողջովին կորզել էր այն բթամիտ երիատասարդից, որին մենք նավակով տարել էինք շոգենավը:

Մերի Զեյնը դուրս բերեց հոր թողած նամակը, և թագավորը բարձրաձայն կարդաց ու լաց եղավ: Ըստ նամակի, նա բնակարանը և երեք հազար դոլարը (ոսկով) թողնում էր աղջկներին. կաշեգործարանը (որը լավ եկամուտ էր բերում) մի քանի տների ու կավաճների հետ՝ յոթ հազար դոլար արժողությամբ, գումարած երեք հազար դոլար (ոսկով) կանխիկ դրամը թողնում էր Հարվիին ու Վիլյամին: Նամակում գրված էր նաև, թե մառանում որտեղ է թաքցրած վեց հազար դոլար կանխիկ դրամը: Այս երկու խարդախները հայտարարեցին, թե ուզում են գնալ դրամը բերել այստեղ և ամեն ինչ արդար կերպով բաժանել, ինչպես ասված է կտակում: Ինձ պատվիրեցին վերցնել մոմն ու հետևել իրենց: Մենք մառանի դուռը փակեցինք մեր ետևից, և երբ նրանք գտան ոսկու տոպրակն ու դրամը շադ տվին հատակին, զմայլելի տեսարան բացվեց. ամբողջովին դեղին ոսկի: Ինչպես էին փայլում թագավորի աչքերը: Նա հարվածեց դրսի ուսին և ասաց.

— Օ՛, սքանչելի է, չէ՞: Այ ճարպկություն: Ինչո՞ւ Բիլի, մի՞թե «Ընձուղտից» ավելի մաքուր չէ: Ի՞նչ կասեր:

Դուքսը համաձայնեց: Նրանք ճանկում էին ոսկեդրամը, տեղավորում մատների արանքում և թողնում, որ զնզոցով ընկնի հատակին: Թագավորն ասաց.

— Ի՞նչ միտք ունի այդպես խոսել, երբ գործը այնտեղ է հասել, երբ մենք եղբայրներ ենք հարուստ և մեռած մի մարդու, ներկայացուցիչները՝ կենդանի ժառանգների: Ահա թե ինչ է նշանակում միշտ հավատալ նախախնամությանը: Վերջին հաշվով դա ամենալավ բանն է: Ես այս բոլորը փորձել եմ, և դրանից լավ միշոց չկա:

Ով էլ լիներ նրանց տեղը, զոհ կմնար ոսկու այդ կույտից և վստահորեն կընդուներ այն: Բայց ոչ, այս մարդիկ պետք է հաշվեին: Եվ հաշվեցին. պակասում էր չորս հարյուր տասնիհնգ դոլար: Թագավորն ասաց.

— Անեծք: Որտե՞ղ կարող է պահած լինել չորս հարյուր տասնիհնգ դոլարը:

Որոշ ժամանակ նրանք անհանգստացած էին այդ առթիվ: Ամեն տեղ որոնեցին պակաս դրամը: Վյուհետու դուքսն ասաց.

— Է՛հ, հիվանդ մարդ է եղել և հավանորեն սխալվել է, կարծում եմ, որ այդքանն է: Ամենալավն այն կլինի, որ այդպես էլ մնա և ոչինչ չխոսենք այդ մասին: Առանց դրա է հոժար ենք:

— Դատարկ բան է, իհարկե, առանց դրա էլ կարող ենք յոլա գնալ, այդ մասին չեմ մտածում, հաշվի մասին եմ մտածում: Գիտեք, որ այստեղ մենք գործը մաքուր ենք անելու, ճիշտ: Պետք է այս դրամը տանենք վեր և հաշվենք բոլորի ներկայությամբ. այդ դեպքում կասկածելի ոչինչ չի մնա: Բայց երբ հանգուցյալը գրել է, թե վեց հազար դոլար կա, ապա մենք չենք ուզում...

— Սպասեցե՞ք, — ասաց դուքսը, — եկեք այս պակասը լրացնենք, — և նա սկսեց գրանից դուրս բերել դեղին ոսկիներ:

— Չարմանափորեն լավ միտք է, դուքս: Դուք ձեր ուսերի վրա կրում եք չափազանց խելացի գործիս, — ասաց թագավորը, — անհծվեմ, թե իին «Ընձուղտը» նորից չի օգնում մեզ, — և ինքն էլ գրանից դուրս բերեց դեղին ոսկիներ ու ավելացրեց կույտի վրա:

Այդ բանը գրեթե դատարկեց նրա գրանները, բայց դրա փոխարեն վեց հազարը լրացվել եր:

— Լսեցեք, ես այլ կարծիք ունեմ: Գնանք վերև, հաշվենք դրամը և տանք աղջիկներին, — ասաց դուքսը:

— Աստված իմ, դուքս, թույլ տվեք զրկախառնվել ձեզ հետ: Դա ամենաապշեցուցիչ առաջարկությունն է, որ երբեմ կատարվել է մարդու կողմից: Ձեր ուսերի վրա է մարդկային ամենազարմանալի գլուխը, որ ես երբեմ տեսել եմ: Դա ամենալավն է. ոչ մի սիալ չկա: Այժմ, եթե ուզում են, թող երևան բերեն իրենց կասկածները: Այս փաստը ամեն ինչ կփարատի:

Երբ բարձրացանք վեր, բոլորը հավաքվեցին սեղանի շուրջը: Թագավորը հաշվեց դրամը և այունակների ձևով շարեց սեղանի վրա: Ստացվեց քսան զեղեցիկ, փոքրիկ սյունակ: Ամեն ոք անհազ աչքերով նայում էր դրանց ու լիզում շրջունքները: Այնուհետև թագավորն ու դուքսը հավաքեցին ուկին, նորից լցրին տոպրակը: Ես տեսնում էի, թե ինչպես թագավորը ուռչում էր մի նոր ճառ ասելու ցանկությունից: Նա ասաց.

— Բարեկամներ, իմ խեղճ եղբայրը, որ պառկած է դագաղում, վշտի այս հովտում մեծահոգություն է ցուցաբերել մնացածների նկատմամբ: Նա մեծահոգի է եղել այս խեղճ փոքրիկ գառնուկների հանդեպ, որոնց սիրել ու ապաստանել է, և որոնք չեն ունեցել ոչ հայր, ոչ մայր: Այս, և մենք, որ ճանաչում էինք նրան, գիտենք. նա պեկի առատաձեռն կիներ նրանց նկատմամբ, եթե չկախենար, որ դրանով նեղացրած կիներ իր սիրեկի Վիշամին ու ինձ: Ճիշտ չէ: Այդ առթիվ ես մազաշափ անգամ կասկած չունեմ: Դե՛հ, ուրեմն, այժմ ինչպիսի՞ եղբայրներ պիտի լինենք մենք, որ նման պարագայում նրա ցանկություններին հակառակ զնանք: Եվ ինչպիսի՞ եղբայրներ պիտի լինենք, որ կողոպտենք, այս, կողոպտենք այս խեղճ, անուշիկ գառնուկներին, որոնց նա այնքան սիրում էր: Եթե ես ճանաչում եմ Վիշամին, և կարծում եմ, որ ճանաչում եմ, նա... Լավ, իինա կհարցնեմ նրան:

Նա շուր եկավ և ձեռքի շարժումներով սկսեց ինչոր բան հասկացնել: Դուքսը նայում էր ապուշ հայացրով: Հանկարծ թվաց, թե հասկացավ եղբոր ասածները և ցնծությամբ նետվեց դեպի թագավորը՝ ամբողջ ուժով կրկնելով «գո՛ւ-զո՛ւ» և տասնհինգ անգամ ողջագուրեց, մինչև ազատ թողեց նրան: Թագավորն ասաց.

— Ես այդպես ել գիտեի: Կարծում եմ, որ նրա այս վարմունքը բոլորին կհամոզի, թե նա ինչպես է մոտենում այս հարցին: Ահա, Մերի Զեյն, Սյուլաննա, Չուաննա, Վերցրեք այս դրամը, վերցրեք բոլորը: Դա նվերն է այն մարդու, որ պառկած է այնտեղ, դագաղում սառած, բայց ցնծությամբ լի:

Մերի Զեյնը վագեց դեպի թագավորը, Սյուլաննան ու Նապաստակաշուրջը վագեցին դեպի դուքսը, և դրան հաջորդեց այնպիսի մի ողջագուրանք, համբյուրների այնպիսի տեղատարափ, որպիսին ես մինչ այդ չէի տեսել: Մարդիկ արտասպալից աչքերով խոնվել են, և շատերը մոտեցան, սեղմեցին այս խարդախ մարդկանց ձեռքերը, անընդհատ կրկնելով.

— Օ՛, սիրելի՛, բարի՛ հոգիներ, որքան սքանչելի է: Ինչպես կարողացաք այդպես վարվել:

Այնուհետև բոլորը նորից սկսեցին խոսել հանգուցյալի մասին, թե նա որքան բարի էր, ինչպիսի կորուստ է նրա մահը և նման բաներ: Որոշ ժամանակից հետո դրսից ներս խցկվեց բարձրահասակ մի մարդ, երկաթանման ծնոտով, և կանգնեց մեջտեղը, ունկնդրելով ու նայելով շրջապատին, առանց որևէ բան ասելու: Նրան ոչ ոք չդիմեց: Թագավորը խոսում էր, և բոլորը զբաղված էին ճառն ունկնդրելով: Թե ինչից սկսեց թագավորը, չեմ հիշում: Շարունակության մեջ ասաց.

— ... նրանք հանգուցյալի ամենամտերիմ ընկերներն էին: Ահա թե ինչու այս երեկո նրանք հրավիրված են այստեղ: Իսկ վաղն ուզում ենք, որ բոլորը զան, ամեն ոք, որովհետև նա հարգում էր բոլորին, սիրում էր բոլորին, ուստի մենք ցանկանում ենք, որ նրա հոգեհանգստյան խնջույքին բոլորը զան:

Եվ շարունակեց շաղակրատել: Նրան դուր էր զալիս իրեն ունկնդրելը: Վյնքան հաճախ հիշատակեց «հոգեհանգստյան խնջույք» բառերը, մինչև դուքսը այլևս չկարողացավ համբերել և թղթի մի փոքրիկ կտորի վրա գրեց. «Հոգեհանգստյան հացկերույթ, ծերուկ հիմար», ծալեց թուղթն ու շարունակելով իր «զո՞ւ-զո՞ւ», մարդկանց գլուխների վրայով այն հասցրեց թագավորին: Թագավորը կարդաց, դրեց իր գրպանն ու ասաց.

— Խե՞նձ Վիլյամ, որքան ել վշտացած՝ սիրտը միշտ ցավում է ուրիշների համար: Ինձ խնդրում է բոլորին գրել, որ զան հուղարկավորությանը, ուզում է, որ բոլորը սիրալիր ընդունելություն գտնեն: Բայց նա անհանգստանալու կարիք չունի: Ես արդեն մտադիր եմ հրավիրել բոլորին:

Նա նորից սկսեց իր ոստայնը հյուսել կատարելապես խաղաղ և հաճախ նորից խճճվեց իր «հոգեհանգստյան խնջույքների» մեջ: Եվ երբ երրորդ անգամ կրկնեց այդ, ասաց.

— Ես հոգեհանգստյան խնջույք եմ ասում, ոչ թե նրա համար, որ դա է ընդունված ձևը: Հոգեհանգստյան հացկերույթն ավելի հասարակ բառ է: Ես այդպես եմ ասում նրա համար, որ սա ճիշտ դարձվածք է: Վյժմ Անգլիայում «հացկերույթ» բառն այլևս չեն օգտագործում: Անգլիայում այժմ ասում են խնջույք: Հոգեհանգստյան խնջույքն ավելի լավ է, որովհետև դա ավելի ճիշտ է: Դրա իմաստը զալիս է հունական orgo բառից, որ նշանակում է «դրւու», «բաց», «հեռու»: Իսկ երրայերեն jesusum նշանակում է «տնկել», «ծածկել», այսինքն՝ թաղել: Այսպիսով, ինչպես տեսնում եք, հոգեհանգստյան խնջույքը բաց է, որտեղ կարող են բոլորը ներկա լինել:

Նա երբեք այդքան գարշելի չէր թվացել ինձ: Ինչ որ է, խոժոռ ծնոտով մարդը ուղղակի ծիծաղեց նրա երեսին: Բոլորը ցնցվեցին, ասելով.

— Ինչո՞ւ այդպես, դոկտոր:

Իսկ Էքներ Շեքփորդն ասաց.

— Ի՞նչ է պատահել ձեզ, Ռոբինսոն, մի՞թե չեք լսել: Սա Հարվի Վիլքսն է:

Թագավորը անձկալի մի ժայռ արձակեց, տարածեց թևը և ասաց.

— Սա իմ խեղճ եղբոր սիրելի, բարի ընկերն է, բժիշկը: Ես...

— Զեռքերդ հետո՞ւ, — ասաց բժիշկը, — դուր խոսում եք այնպես, կարծես անգիացի լինեք, այո: Բայց դա նմանվելու իմ երբեւ լսած ամենաանհաջող փորձն է: Ինչպե՞ս չէ, Պիտեր Վիլքսի եղբայրն եք: Դուք խարդախ սրիկա եք, ուրիշ ոչինչ:

Ինչպիսի՞ հուզմունք առաջացրեց դա մարդկանց մեջ: Բոլորը հավաքվեցին բժշկի շուրջը և աշխատում էին հորդորել, փորձում էին բացատրել, որ նա է, ասում էին, թե ինչպես Հարվին քառասուն օրինակով ու ձևերով ցույց է տվել, որ ինքը Հարվին է, որ նա բոլորին էլ ճանաչում է անուններով, նույնիսկ զիտե շների անունները: Նորից ու նորից նրանք խնդրեցին բժշկին չվիրավորել Հարվիի, ինչպես և խեղճ աղջիկների զգացմունքները: Բայց այդ բոլորն իզուր էր: Նա շարունակեց իր հարձակումը և ասաց, որ անծանոթն անգիացի է ձևանում, և եթե մեկն այդքան անշնորհք ձևով է նմանեցնում իր արտասանությունը, ապա

այդպիսի մարդը խարդախ ու ստախոս է: Խեղճ աղջիկները կախվել էին թագավորից ու լաց էին լինում: Բժիշկը դարձավ աղջիկների կողմն ու ասաց.

— Ես ձեր հոր բարեկամն էի, ձեր բարեկամն եմ և զգուշացնում եմ ձեզ որպես բարեկամ և ազնիվ մարդ, որն ուզում է պաշտպանել ձեզ և հեռու պահել չարիքից ու նեղությունից: Զգուշացնում եմ ձեզ հեռու մնալ այդ սրիկայից և ոչ մի գործ չունենալ նրա հետ, հեռու այդ տիսմար թափառաշրջիկից, որը անհեթեթություններ է դուրս տալիս հունարեն ու երայերեն բառերով, ինչպես ինքն է դրանք անվանում: Այս մարդը ամենացանցառ խարերաներից է, այստեղ է եկել բազմաթիվ դատարկ անուններով ու փաստերով, որ հավաքել է ինչ-որ տեղից, և դուք նրա ասածներն ընդունում եք որպես ապացույց: Իսկ այստեղի մեր իիմար բարեկամները օգնում են, որ դուք ինքներդ ձեզ խարեք, այն ժամանակ, երբ նրանք պարտավոր էին ավելի լավ իմանալ այս բանը: Մերի Զեյն Վիլքս, դուք ինձ ճանաչում եք որպես ձեր բարեկամի, ձեր անշահախնդիր բարեկամի: Այժմ լսեցեք. այս ողորմելի սրիկային դուրս արեք այստեղից, խնդրում եմ: Կանե՞ք:

Մերի Զեյնն ամբողջ մարմնով ուղղվեց: Որքա՞ն գեղեցիկ էր: Նա ասաց.

— Իմ պատասխանն այս է: — Եվ նա վերցրեց դրամի տոպրակը, դրեց թագավորի ձեռքն ու ասաց, — վերցրեք այս վեց հազար դոլարը և իմ ու իմ քրոջ անունով շրջանառության մեջ դրեք, ինչ ձևով որ ուզում եք, և մեզ ոչ մի ստացական մի տվեք:

Նա գրկեց թագավորին: Մյուս կողմից նույն բանն արին Սյուզաննան և Նապաստակաշուրթը: Բոլորը ծափահարեցին և ոտքերով դոփեցին հատակը: Կատարյալ փոթորիկ բարձրացավ: Իսկ թագավորը բարձրացրեց գլուխը և հպարտորեն ժպտաց: Բժիշկն ասաց.

— Լավ, ես լվանում եմ ձեռքերս, բայց նորից զգուշացնում եմ, որ կզա ժամանակը, երբ դուք, ամեն անզամ իիշելով այս օրը, հիվանդ կզգաք ձեզ:

— Լավ, բժիշկ, — ասաց թագավորը, բարի ժպիտով ծաղրելով նրան, — այդ դեպքում կաշխատենք մեկին ուղարկել որ ձեզ կանչի:

— Բոլորը ծիծառեցին ու ասացին, որ հարվածը ճիշտ նպատակին հասավ:

## Գլուխ բասնվեցերորդ

Երբ բոլորը գնացին, թագավորը Մերի Զեյնին հարցրեց, թե ազատ սենյակներ ունե՞ն: Մերի Զեյնը պատասխանեց, որ մի ազատ սենյակ կա, որ հարմար է հորեղբայր Վիլյամի համար, հորեղբայր Հարվիին էլ կհատկացնի իր սենյակը, որը թիշ ավելի ընդարձակ է, իսկ ինքը կզնա քույրերի սենյակը և կընի ծալովի մահճակալի վրա: Զեղնահարկում, ասաց նա, կա մի փոքր խուց, որտեղ դրված է հարդով լցված ներքնակ: Թագավորն ասաց, որ դա է հարմար է իր սպասավորի համար (սպասավորը, իհարկե, ես էի):

Մերի Զեյնը մեզ առաջնորդեց դեպի վերնահարկ և նրանց ցույց տվեց իրենց սենյակները, որոնք թեև անշուր, բայց հաճելի էին: Նա ասաց, որ ինքն այնտեղից կտանի իր շորերը և շատ այլ բաներ, եթե նրանք հորեղբայր Հարվիին նեղություն տան: Բայց վերջինս ասաց, որ չեն խանգարի: Շորերը կախված էին պատից և ծածկված չեն

վարագույրով, որն իջնում էր մինչև հատակը: Անկյունում դրված էր մազոտ կաշվով պատած մի սնդուկ, իսկ մյուսում կիթառի մի պատյան: Ամենուրեք երևում էին զանազան փոքրիկ խաղալիքներ ու մանր-մունք բաներ, որոնցով աղջիկները սիրում են զարդարել իրենց սենյակները: Թագավորն ասաց, որ սենյակն այդպես ավելի դուրեկան է, ավելի հաճելի, և կարիք չկա իրերը տեղից շարժել: Դրսի սենյակը թեև բավական փոքր էր, բայց լավն էր: Իմ տեղը նույնպես վատը չէր:

Այդ երեկոն նրանք մեզ ընթրիքի էին հրավիրել, և բոլոր տղամարդիկ ու կանայք ներկա էին: Ես կանգնել էի թագավորի ու դքսի աթոռների ետևում և սպասարկում էի նրանց, իսկ մնացածներին ծառայում էին նեգրերը: Սեղանի զիփին, Սյուզաննայի հետ, նստած էր Մերի Ջեյնը: Նա անրնդիատ ասում էր, որ թխվածքն անհաջող է, պահածոն բանի պետք չէ, տապակած հավերը չոր են և նման բաներ, մի խոսքով՝ այն, ինչ սովորաբար ասում են կանայք, երբ ուզում են հաճոյախոսություններ լսել: Մինչդեռ բոլորը գիտեն, որ ամեն ինչ լավագույն ձևով էր պատրաստած, և ասում էին. «Ինչպես եք կարողանում թխվածքն այսպես կարմրացնել: Որտեղից եք ձեռք բերել թթու դրած այս հիանալի վարունգները»: Եվ շարունակվեց կեղծ փաղաքշական գրույցը, ինչպես դա սովորաբար լինում է ընթրիքի ժամանակ:

Երբ ընթրիքը վերջացավ, ես Նապաստակաշուրջի հետ գնացի խոհանոց ընթրելու, իսկ մյուսներն օգնում էին սեղանները մաքրող նեգրերին: Նապաստակաշուրջն սկսեց հարցուփորձ անել Անգլիայի մասին: Մտածեցի, որ բանս բուրդ է: Նա ասաց.

— Դու երբսէ տեսե՞լ ես թագավորին:

— Որի՞ն, Վիլիելմ Չորրորդի՞ն:<sup>129</sup> Իհարկե, նա մեր եկեղեցին է գալիս:

Ես զիտեի, որ նա մեռել է, բայց այդ մասին ոչինչ չասացի: Երբ աղջիկն իմացավ, որ թագավորը մեր եկեղեցին է գալիս, հարցրեց.

— Մի՞շտ:

— Այս, միշտ: Նրա նստարանը մեր նստարանի դիմաց է, ամբիոնի մյուս կողմում:

— Իսկ ես մինչ այդ կարծում էի, թե նա Լոնդոնում է ապրում:

— Այս, իհարկե, էլ որտե՞ղ պիտի ապրեր:

— Բայց չէ՞ որ դուք Շեֆֆիլդում եք բնակվում:

Ես զգացի, որ կոճի եմ դեմ առել: Ստիպված եղա ձևացնել, թե իբրև հավի ոսկորը խեղդում է ինձ, որպեսզի ժամանակ ունենայի մտածելու, թե ինչպես դուրս գամ ծուղակից: Ապա ասացի:

— Ուզում եմ ասել, թե երբ Շեֆֆիլդ է գալիս, միշտ մեր եկեղեցին է հաճախում: Դա ամռանն է լինում, երբ գալիս է այնտեղ՝ ծովային լոգանք ընդունելու:

— Է՞հ, ինչե՞ր ես ասում: Չէ՞ որ Շեֆֆիլդը ծովափնյա քաղաք չէ:

— Իսկ ո՞վ է ասում, թե ծովափնյա է:

— Դու չասացի՞ն:

— Ոչ, բոլորովին:

- Ասացիր:
- Չեմ ասել:
- Ասացիր:
- Ես երբեք այդպիսի բան չեմ ասել:
- Հապա ի՞նչ ասացիր:
- Ասացի, որ գալիս է ծովային լոգանք ընդունելու, ահա թե ինչ ասացի:
- Լավ, իսկ ինչպես է նա ծովային բաղանիք ընդունում, երբ բաղաքը ծովափին չէ:
- Ինձ նայիր, — ասացի ես, — դու տեսած կա՞ս կոնզրեսաջուր:<sup>[20]</sup>
- Այս:
- Իսկ այդ ջուրը ձեռք բերելու համար Կոնզրե՞ս եք գնում:
- Ոչ:
- Դեհ, ոչ է Վիլհելմ Շորրորդն է ծովափ գնում՝ ծովային լոգանք ընդունելու:
- Հապա ինչպե՞ս:
- Այնպես, ինչպես այստեղ մարդիկ կոնզրեսաջուր են ճարում. տակառներով են բերում: Շեֆֆիլդի պալատում պատրաստել են կաթսաներ: Թագավորն ուզում է, որ ջուրը տաք լինի: Ծովափին հնարավոր չէ մեծ քանակությամբ ջուր տաքացնել, հարմարություններ չկան:
- Այս, իմաստ հասկացա: Դու այդ կարող եիր սկզբում ասել, և մենք զուր ժամանակ չէինք վատնի:
- Երբ նա այդ ասաց, ես ինձ զգացի այնպես, կարծես դուրս եկա անանցանելի անտառից: Արդեն հանգիստ էի և ուրախ:
- Հետո աղջիկը շարունակեց.
- Դո՞ւ է ես եկեղեցի գնում:
- Այս, — պատասխանեցի ես:
- Որտե՞ղ ես նստում:
- Մեր նստարանին:
- Ո՞ւմ նստարանին:
- Մեր, ձեր հորեղբայր Հարվիի նստարանին:
- Նրա նստարանին: Իսկ նրա ինչի՞ն է պետք նստարան:
- Նստելու համար: Իսկ քո կարծիքո՞վ:
- Ոչինչ: Կարծում էի, թե նա քարոզական ամբիոնի առջև կլինի:
- Գրողը տանի: Մոռացել էի, որ այդ մարդը քարոզիչ է: Նորից դեմ առա կոճղի: Նորից ձևացրի, թե հավի ոսկոր է մնացել կոկորդումս. մտածելու ժամանակ էր պետք: Ապա ասացի.

— Ե՞հ, կարծում ես, թե եկեղեցում միայն մեկ քարոզի՛չ կա:

— Ինչո՞ւ, ավելին լինելու կարիք չկա:

— Ինչպե՞ս թե: Հապա միայն թագավորի՛ համար քարոզ կարդան: Ես քեզ նման աղջիկ դեռ չեմ տեսել: Տասնյոթ քարոզչից պակաս չեն լինում:

— Տասնյոթ: Աստված իմ: Ես երբեք չի ուզենա այդքան երկար նստել, նույնիսկ եթե զրկվեի երկնային արքայությունից: Մի շաբաթ է պետք, որ բոլորին լսես:

— Պահ: Հո բոլորը նույն օրը չե՞ն խոսում. միայն մեկը:

— Լավ, իսկ մյուսներն ի՞նչ են անում:

— Առանձնապես ոչինչ: Ծովորեն դես-դեն են պատվում: Դրամատուփն են ման ածում և նման բաներ: Բայց հիմնականում ոչինչ չեն անում:

— Ուրեմն՝ ի ինչի՞ համար են:

— Ե՞հ, ձևի համար, չգիտե՞ս:

— Ես այդպիսի հիմար բան գիտենալ չեմ ուզում: Ինչպե՞ս են ծառաների հետ վարվում: Ավելի լավ չե՞ն վարվում, քան մենք՝ նեզրերի հետ:

— Ոչ: Ծառան այնտեղ մարդահաշիվ չէ: Ավելի վաստ են վարվում, քան շների հետ:

— Տոնական օրեր չե՞ն տալիս, ինչպես մենք ենք տալիս՝ ծնունդ, Նոր տարի, հույսի շորսը:

— Ե՞հ, այնպես ես խոսում, որ լսողը կկարծի, թե դու երբեք Անգլիայում չես եղել: Նրանք, Նապաստակա... Չուննա, ամբողջ տարին, սկզբից մինչև վերջ, ոչ մի տոն օր չեն տեսնում, երբեք կրկես չեն գնում, ոչ թատրոն, ոչ էլ նեզրերի ծեռնածուական խաղերի են գնում, ոչ մի տեղ:

— Եկեղեցի՞ էլ չեն գնում:

— Ոչ:

— Բայց դու միշտ գնացել ես:

Նորից շփոթվեցի: Մոռացել էի, որ ես ծերունու ծառան եմ: Բայց իսկույն զիսի ընկա, բացատրեցի, թե ինչպես սպասավորը սովորական ծառայից տարբերվում է, և որ ես պարտավոր էի Եկեղեցի գնալ, անկախ այն բանից՝ ուզո՞ւմ էի, թե՛ ոչ և, որպես օրենք, նստել ընտանիքի հետ: Բայց իմ բացատրությունն այնքան էլ հաջող չէր. երբ վերջացրի, նկատեցի, որ նա դրանից գոհ չէ: Նա ասաց.

— Ասա «ազնիվ խոսք», որ դու ինձ մոտ ստեր չես դուրս տվել:

— Ազնիվ խոսք, — ասացի ես:

— Ոչ մի սո՞ւտ:

— Ոչ մի, ասածիս մեջ սուտ չկա, — պատասխանեցի ես:

— Չեղորդ այս գորի վրա դիր և ապա ասա:

Ես տեսա, որ դա բառարան էր, ուստի ձեռքս դրեցի վրան ու կրկնեցի: Այժմ նա փոքր-ինչ ավելի զոհ էր և ասաց.

— Լավ, հիմա պատմածիդ մի մասին հավատում եմ: Բայց ամբողջովին երբեք չեմ հավատա:

— Իսկ ինչի՞ն չեմ հավատա, Չո, — Սյուլգաննայի հետ ներս մտնելով ասաց Մերի Զեյնը, — ճիշտ չէ, ոչ էլ վայելուց, երբ դու այս ձևով ես խոսում մի օտարական տղայի հետ, որն այնքան հեռու է իր հարազատներից: Չեզ դուր կզա՞ր, որ քեզ հետ այսպես վարվեին:

— Դու միշտ այդպես ես, Մերի, միշտ վագում ես օգնելու մեկին, որին ոչ չի վիրավորել: Ես ոչինչ չեմ արել: Իմ կարծիքով, նա մի քանի ամհավատակի բան պատմեց, ես էլ ասացի, որ ամեն ինչի չեմ հավատա: Ահա ամբողջը, ուրիշ ոչինչ չեմ ասի: Կարծում եմ, որ նման չնչին դիտողությունից չի նեղանա, այնպես չէ:

— Ինձ համար նշանակություն չունի՝ մեծ բան է, թե փոքր. նա մեր տանը օտարական է, և քո կողմից լավ բան չէ այդպես խոսել: Եթե դու նրա տեղը լինեիր, ամոթահար կզգայիր թեզ: Ուստի ոչինչ չպետք է ասել մեկին, որը դրանից կամաչի:

— Է՛հ, Մերի, նա ասաց...

— Նշանակություն չունի, թե ինչ ասաց: Բանն այդ չէ: Դու պետք է բարի լինես նրա նկատմամբ և չասես այնպիսի խոսքեր, որ նա հիշի, թե իր երկրում, իր ժողովրդի մեջ չէ:

Մտքումս ասացի. «Եվ ես թույլ եմ տալիս, որ այս աղջկան կողոպսի այդ ծեր սողունը»: Այնուհետև Մերի Զեյնը փոխեց խոսելու եղանակը և շարունակեց իր համելի, քաղցր զրույցը, բայց երբ վերջացրեց, խեղճ Նապաստակաշուրթին ասելու բան չթողեց: Եվ սա սկսեց հեկեկալ:

— Լավ, — ասացին մյուս աղջիկները, — միայն ներողություն խնդրիր, ուրիշ ոչինչ:

Նա ներողություն խնդրեց և այն էլ ինչ շնորհալի ձևով: Վյոքան գեղեցիկ արտասանեց բառերը, որ լսողի խելքը կզնար: Եվ ցանկություն զգացի հազար ու մի սուտ ասել, միայն թե նա դարձյալ ներողություն խնդրեր:

Մտքումս ասացի. «Ահա մեկ ուրիշն էլ, որին ես թույլ եմ տալիս կողոպտելու»: Երբ նա վերջացրեց, բոլորը իրենց այնպես էին պահում, որ ես ինձ զգամ իմ տանը, իմ բարեկամների մեջ: Ես ինձ զգացի այնպես նվաստացած, այնքան ստոր, որ մտքումս որոշեցի այդ դրամը թաքցնել նրանց հանձնելու համար, այլապես կմեռնեմ:

Ես բաժանվեցի նրանցից, ասելով, որ քնելու ժամանակ է: Երբ մենակ մնացի, նորից սկսեցի մտածել այդ մասին: Ինքս ինձ ասացի, թե արդյո՞ք պետք է առանձին գնալ բժշկի մոտ և մերկացնել խարդախ մարդկանց: Ոչ, դա հարմար չէ: Բժիշկը կարող է ասել, թե որտեղից է իմացել, որից հետո թագվորն ու դուրսը ճաշս կեփեն: Զգնա՞մ Մերի Զեյնի մոտ և ամեն ինչ պատմեմ: Ոչ, այդ անհմաստ է. նրա դեմքի արտահայտությունից թագավորն ու դուրսը, անկասկած, կիասկանան ամեն ինչ: Դրամը նրանց մոտ է, և անմիջապես կծկեն: Եթե Մերին օգնություն կանչելու կարիք ունենա, ինձ էլ գործի մեջ կիսառնեն, նախքան հարցը կապրզի: Ոչ, միայն մի լավ միջոց է մնում. ես պետք է մի կերպ գողանամ այդ դրամը և այնպես անեմ, որ չկասկածեն: Այդ խարդախներն այստեղ լավ գործ են գտել և դուրս չեն գա մինչև այս ընտանիքն ու ավանը լրիվ չկողոպտեն, այնպես որ հարմար առիթի համար ինձ շատ ժամանակ կա: Ես պետք է գողանամ այդ դրամը, թաքցնեմ: Երբ

գետով բավական հեռացած կլինեմ, նամակ կգրեմ և Մերի Զեյնին կհայտնեմ, թե դրամը որտեղ է թաքրած: Բայց ավելի լավ է այս գիշեր գողանամ, եթե կարողանամ, որովհետև բժիշկը գուցե այնպես ձեռ քաշած չլինի նրանց հետապնդելուց, ինչպես ցույց է տալիս: Կարող է վախեցնել, և նրանք կփախչեն ու դրամը կտանեն:

Վճռեցի գնալ, խուզարկել նրանց սենյակները: Չնայած վերևի սրահը մութն էր, ես գտա դրսի սենյակը և սկսեցի ձեռքերով շոշափել շրջապատը: Բայց մտաքերեցի, որ ամենայն հավանականությամբ թագավորը, իրենից բացի, ոչ որի չի կստահի դրամը: Ուստի գնացի նրա սենյակը և այնտեղ սկսեցի շոշափելով որոնել: Բայց տեսնում էի, որ առանց մոմի բան դուրս չի գա, իսկ մոմ վառել, իհարկե, չէի համարձակվում: Ուստի մտադրությունս փոխեցի. կիետևեմ, թե ինչ են անում, ինչ են խոսում: Այդ ժամանակ լսեցի ոտնաձայն և պատրաստվում էի թաքնվել մահճակալի տակ, բայց մահճակալը այնտեղ չէր դրված, ուր, իմ կարծիքով, պիտի լիներ: Ես շոշափեցի վարագույրը, որով ծածկված էին Մերի Զեյնի շրջազգեստները: Արագ անցա վարագույրի ետևը, սեղմվեցի շրջազգեստների մեջ և անշարժ կանգնեցի:

Նրանք ներս մտան ու փակեցին դուռը: Դքսի առաջին գործը եղավ կրանալ ու նայել մահճակալի տակ: Ես շատ ուրախ էի, որ մահճակալը չէի գտել, երբ ուզեցի թաքնվել այնտեղ: Նրանք նատեցին, և թագավորն ասաց.

— Դե՛հ, ի՞նչ եք ասում, կարճ կապենք. մեզ համար ավելի լավ է իշնել ներքև և ողբալ, քան այստեղ լինել և առիթ տալ նոր խոսակցությունների:

— Այս թե ինչ, Կապետ, ես շատ եմ անհանգստանում: Այդ բժիշկը մտքից չի հեռանում: Ուզում եմ ձեր ծրագիրն իմանալ: Ես, իհարկե, ունեմ իմ կարծիքը և մտածում եմ, որ առողջ կարծիք է:

— Ո՞րն է ձեր տեսակետը, դուքս:

— Այն, որ մեր ձեռք բերածով ծլկենք այստեղից մինչև առավոտյան ժամը երեքը և գետով արագ իշնենք, հատկապես նկատի ունենալով, որ դրամը շատ հեշտ ձեռք բերինք. նրանք մեզ վերադարձրին ամբողջը, կարելի է ասել շպրտեցին մեր գիւներին, այն ժամանակ, երբ մենք մտադիր էինք ետ ստանալ գողանալով: Ես կողմնակից եմ հաշիվը փակելուն և այստեղից ծլկելուն:

Դքսի այս խոսքերը բավական վատ հնչեցին ականջիս: Մոտ մեկ-երկու ժամ առաջ դրությունը փոքր-ինչ այլ էր, բայց այժմ ինձ վատ էի զգում. դուքսն ինձ հուսախար արեց: Թագավորը գոռաց ու ասաց.

— Ի՞նչ, և չվաճառել սեփականության մնացած մա՞սը, հա՞: Այստեղից հեռանալ ապուշների պես և թողնել ութ կամ ինը հազար դրամի արժողության սեփականությունը, ինչպես և վաճառման ենթակա սքանչելի բաները, որպեսզի շահադիտական նպատակների նյութ դառնան:

Դուքսը շարունակեց քրթմնջալ: Ասաց, որ ուկու պարկը բավական է և ավելի խորանալու կարիք չկա. չի ցանկանում այս որբերին կողոպտել մինչև վերջին ունեցվածքը:

— Ինքե՛ր եք ասում, դուքս, — ասաց թագավորը, — մենք նրանց ոչնչից չենք գրկի, բացի այս դրամից: Տուժողները կլինեն նրանք, որոնք կգնեն այդ ունեցվածքը: Երբ պարզվի, որ դա մերը չէ, և դա կիմացվի, հենց մենք այստեղից ծլկենք, վաճառքը չեն վավերացնի, ամեն

ինչ կվերադարձնեն տերերին: Զեր այս որբերը ետ կստանան իրենց տունը և դա նրանց բավական է. նրանք երիտասարդ են, տոկուն, և հեշտությամբ կարող են ձեռք բերել իրենց ապրուստը: Նրանք նեղության մեջ չեն ընկնի: Մի բոպե պատկերացրեք. հազարավոր մարդիկ կան աշխարհում, որոնք շատ ավելի վատ վիճակում են: Մարդ աստծո, այս աղջիկները տրտնջալու ոչինչ չեն ունենա:

Թագավորն իր ճառով այնպես նեղը զցեց դրսին, որ սա, ի վերջո, տեղի տվեց և համաձայնեց, միաժամանակ ավելացնելով, որ, իր կարծիքով, պարսավելի հիմարություն է մնալ այստեղ, և բժշկի սպառնալիքն է միշտ կախված կինի իրենց գլխին: Բայց թագավորն ասաց.

— Անիծվի այդ բժիշկը: Ի՞նչ կարող է անել: Մի՛թե ավանի բոլոր հիմարները մեր կողմը չեն: Խսկ հիմարներն ամեն քաղաքում էլ մեծամասնություն են կազմում:

Նրանք նորից պատրաստվեցին իշնելու ներքև: Դուքսն ասաց.

— Իմ կարծիքով, դրամը լավ տեղ չի թաքցված:

Այդ լսելով՝ ականջներս սրեցի: Արդեն թվում էր, թե գործին օգնող ոչ մի խոսակցություն չեմ լսի: Թագավորն ասաց.

— Ինչո՞ւ:

— Որովհետև Մերի Զեյնն այսուհետև սգո շորեր կհազնի: Նա սենյակները մաքրող նեզրին կկարգադրի մյուս զգեստները հավաքել սնդուկի մեջ և մի կողմ դնել, խսկ ի՞նչ եք կարծում, կարո՞ղ է նեզրը դրամի կողընել ու մի բան չվերցնել:

— Գլուխս նորից լավ է գործում, դուքս, — ասաց թագավորը և խարիսափելով անցավ վարագույրի ետևը, ինձանից երկու-երեք ոտնաշափ հեռու: Ես ամուր կպել էի պատին և անշարժ կանգնել էի: Դողդողալով ինքս ինձ հարցնում էի, թե ի՞նչ կասեն այս մարդիկ, եթի ինձ այստեղ բռնեն: Մտածում էի, թե այդ դեպքում ի՞նչ պատասխան տամ, որ ամենից հարմար լինի: Բայց նախքան ժամանակ ունեցա որևէ բան մտածելու, թագավորը վերցրեց տոպրակը և խցեց ծղոտե բարձի մեջ, որ դրված էր փետուլներով լցրած ներքնակի տակ: Տոպրակը մեկ-երկու ոտնաշափ բարձի մեջ ներս տանելուց հետո թագավորն ասաց, թե այժմ ամեն ինչ կարգին է, որովհետև նեզրը միայն փետուրե ներքնակին է ձեռք տալիս և հազիվ թե տարին մեկ-երկու անգամ շուր տա ծղոտե բարձերը, այնպես որ այժմ գողանալու վտանգ չկա:

Բայց ես լավ գիտեի, որ նա սիսակում է: Տոպրակը դուրս բերեցի, եթի նրանք սանդուղքը կիսով չափ է չեն իջել: Խսրիսափելով շոապեցի ձեղնահարկ, իմ սենյակը, և դրամը թաքցրի այնտեղ, մինչև առիթ լինի ավելի հարմար տեղ ընտրել: Մտածեցի, թե ավելի լավ է տնից դուրս մի տեղ թաքցնել, որովհետև եթի նրանք շոշափելով իմանան, որ տոպրակն իր տեղում չէ, տունը տակնուղը կանեն: Ես այդ լավ գիտեի: Այսուհետև ես շորերով պարկեցի մահճակալին: Քնել չեի կարող, եթե նույնիսկ ցանկանայի: Քափ ու քրտինք մտած՝ ուզում էի վերջացնել այդ գործը: Շուտով լսեցի, որ թագավորն ու դուքսը բարձրանում են վեր: Անկողինը դեն զցեցի, ծնոտս աստիճանների գլխին դեմ արած պարկեցի և սպասեցի: Ուզում էի տեսնել, թե ինչ է լինելու: Բայց ոչինչ չպատահեց:

Ես այդպես սպասեցի մինչև իրիկնային աղմուկը դադարեց, խսկ առավոտյան աղմուկը դեռ չեր սկսվել: Սանդուղքով ցած իջած:

## **Գլուխ բանյոթերորդ**

Ես սողալով հասա նրանց դռների մոտ և ականջ դրի: Խօնմփում էին: Ոտքերի մատների վրա շարժվելով՝ բարեհաջող իջա ներքնահարկը: Ոչ մի տեղ ձայն չկար: Ճաշարանի դռան մի ճեղքից գաղտազողի նայեցի սրահը և տեսա, որ դիակի մոտ նստած բոլոր մարդիկ խոր քնել են իրենց աթոռների վրա: Հյուրասենյակի դուռը բաց էր. ներսում դրված էր դիակը: Երկու սենյակներում էլ վառփում էին մեկական մոմ: Ես մտա հյուրասենյակը. ոչ ոք չկար այնտեղ, բացի Պիտերի աճյունից: Շարժվեցի առաջ, բայց մուտքի դուռը փակ էր, և բանալին էլ վրան չէր: Այդ պահին լսեցի ոտնաձայն: Ինչոք մեկն իմ թիկունքում վերևսից ներքեւ էր իշխում: Վազեցի հյուրասենյակը և արագ նայեցի շուրջու: Միակ տեղը, ուր կարելի էր ուկու տոպրակը թաքցնել, դագան էր: Կափարիչը մոտ մեկ ոտնաշափ ցած էին քաշել, որպեսզի մարդիկ տեսնեին հանգուցյալի դեմքը: Երևում էին զիսին փոած թաց շորը և պատաճը: Տոպրակը կախեցի կափարիչի տակ, այնտեղ, ուր ձեռքերն էին ծալված: Դրանց դիակելիս մարմինս փշաքաղվեց. այնպես սառն էին: Փախա, այնտեղից ու թաքնվեցի դռան ետևում:

Եկողը Մերի Զեյնն էր: Նա կամացուկ մոտեցավ դագաղին և ծնկի իջած՝ նայեց: Ապա թաշկինակը բռնեց աչքերին և լաց եղավ: Ես չէի լսում ձայնը. միայն թիկունքն էի տեսնում: Դուրս ծլեցի և ճաշասենյակով անցնելիս մտածեցի, թե արդյո՞ք դիակի մոտ նստածներից ոչ մեկն ինձ չտեսավ: Դոան ճեղքից նայեցի ներս: Ամեն ինչ խաղաղ էր: Նրանք տեղից չէին շարժվել:

Ես անկողին մտա ընկած տրամադրությամբ: Պատճառն այդ ձևով խաղացած իմ դերն էր, այն էլ այդքան չարչարվելուց ու այդպիսի վտանգի ենթարկվելուց հետո: Ինքս ինձ ասում էի. եթե տոպրակը մնար այնտեղ, ուր դրել էի, շատ լավ կլիներ, որովհետև երբ մենք գետով հարյուր կամ երկու հարյուր մոռն իջնենք ներքեւ, կարող եմ գրել Մերի Զեյնին: Նա կարող է քանդել զերեզմանը և վերցնել դրամը: Բայց այդպես չի պատահի. դրամը կգտնեն դագաղի կափարիչն ամրացնելիս: Այդ դեպքում տոպրակը նորից կընկնի թագավորի ձեռքը, և երկար ժամանակ կպահանջվի, մինչև նա թույլ կտա, որ որևէ մեկը դա թոցնի իրենից: Իհարկե, ես նորից ուզում էի ցած իջնել, դրամը դուրս բերել, բայց չէի համարձակվում: Ըովէ առ բոպէ առավոտը մոտենում էր: Շուտով պահապաններից մի քանիսը կսկսեին շարժվել, և ես, վեց հազար դրամը ձեռքիս, կարող էի բռնվել, այն դեպքում, երբ ոչ ոք ինձ չէր վարձել, որ հոգ տանեմ դրամի մասին:

Առավոտյան, երբ իջա ներքեւ, հյուրասենյակի դուռը փակ էր: Պահապանները գնացել էին: Ոչ ոք չկար, բացի ընտանիքի անդամներից, այրի Բարթիից և մեր խմբից: Ես նայում է նրանց դեմքերին տեսնելու, թե որևէ բան պատահել է, բայց ոչինչ չկուհեցի:

Օրվա կեսին եկավ թաղման բյուրոյի պետը իր մարդկանցով: Նրանք դագաղը դրեցին սենյակի կենտրոնում, երկու աթոռի վրա, իսկ մեր աթոռները շարեցին սրահում, հարևաններից էլ բերեցին աթոռներ, մինչև սրահում և ճաշասենյակում այլևս ազատ տեղ չմնաց: Ես նկատեցի, որ դագաղի կափարիչը նախկին դիրքում է, բայց մարդկանց ներկայությունը թույլ չէր տալիս, որ գնայի, նայեի դրա տակը:

Բազմությունը հավաքվեց: Խարերաներն ու աղջիկները նստեցին առաջին շարքում, դագաղի զիսավերևուց: Կես ժամ մարդիկ շարքով, դանդաղաքայլ անցան դագաղի մոտով, մի րոպէ նայելով հանգուցյախ դեմքին: Մի քանիսի աչքերից արցունքներ էին գլորվում: Ամեն ինչ խաղաղ էր ու հանդիսավոր, միայն աջիկներն ու խարերաներն էին աչքերը ծածկել թաշկինակներով և գուխները խոնարհած՝ երբեմն հեկեկում էին: Ոչ մի ձայն չէր լսվում, բայց ոտքերի քստքստոցից և խնչոցներից, քանի որ մարդիկ միշտ ավելի շատ են րիթ սրբում հուղարկավորությունների ժամանակ, քան որևէ այլ տեղում, բայց եկեղեցուց:

Երբ տունը լցված էր մարդկանցով, թաղման տնօրենը սև ձեռնոցներ հազած, մեղմաբարոն և քաղաքավարի պտտվեց դագաղի շուրջը, վերջին անգամ հետևելով, որ ամեն ինչ կարգին լինի: Նա նույնքան անաղմուկ էր քայլում, որքան կատուն: Երբեք չէր խոտում: Մարդկանց տեղափորելը, ուշացածներին մի կերպ ներս խցկելը, ճանապարհ բաց անելը, ամեն ինչ կատարում էր զիսի շարժումներով ու ձեռքի նշաններով: Ապա նա զրավեց իր տեղը պատի մոտ: Ես իմ կյանքում այդքան սուսումնուս, աննշմար, հաճոյացող մարդ չէի տեսել: Նա նույնքան անժպիս էր, որքան խոզի ապիստած ազդը:

Նրանք ծանոթներից բերել էին փշացած մի երգեհոնիկ, և երբ ամեն ինչ պատրաստ էր, մի երիտասարդ կին նստեց ու նվազեց: Ճոնչոցն ու նվճոցն անպակաս էին: Բոլորը միացան նվազին ու երգեցին: Իմ կարծիքով միայն Պիտերն էր, որ հանգիստ էր: Ապա արժանապատիվ Հորսոնը դանդաղ ու հանդիսավոր կերպով գործի անցավ և խոսեց: Նա դեռ նոր էր սկսել, երբ ներքնահարկից լսվեց սարսափելի, անլուր մի վայնասուն: Դա միայն մի շուն էր, բայց կարծես մի ամբողջ ոհմակ լիներ: Հաշոցը չէր դադարում: Քահանան ստիպված եղավ լոել և սպասել դագաղի կողքին: Ոչինչ հճարավոր չէր լսել, մարդ նույնիսկ իր մտքի թեկն էր կորցնում: Չափազանց անհարմար վիճակ էր, և ոչ որ չգիտեր՝ ինչ անել: Շուտով մարդիկ տեսան, որ թաղումը կազմակերպող երկարաբունք մարդը ձեռքով ինչ-որ բան է հասկացնում քահանային: Կարծես ուզում էր ասել. «Մի անհանգստացեք, հույսներդ դրեք ինձ վրա»: Նա պատի տակով շարժվեց դեպի դուրս կրանալով այնքան, որ մարդկանց զիսավերևսից միայն ուսերն էին երևում: Մինչ նա գնում էր, շան հաշոցն ավելի ու ավելի կատաղի էր դաշնում: Վերջապես անցնելով սենյակի երկու պատերի տակով, դուրս եկավ և իջավ նկուտ: Քիչ անց լսեցինք ուժեղ հարվածի ձայն, և շունը խլացուցիչ կաղկանձից հետո հանդարտվեց: Նորից տիրեց մեռելային լուլթյուն: Քահանան վերսկսեց իր հանդիսավոր ճառը: Մեկ-երկու րոպէ հետո վերադարձավ թաղման տնօրենը, նորից ուսերը սահեցնելով պատերի երկայնքով: Եվ նա, կուչ եկած, այդպես սահեց սենյակի երեք կողմով ու կանգ առավ և, ձեռքերը ձագարած պահելով բերանի դեմք, վիզը մարդկանց զիսավերևսով երկարացնելով դեպի քահանան, խռպոտ շշնջունով ասաց. «Շունը առնետ էր բռնել»: Ապա նա նորից խոնարհվեց ու նորից պատի տակով գնաց իր տեղը: Կարելի էր նկատել, որ այդ լուրը մեծ զոհունակություն պատճառեց մարդկանց, որովհետև ընականորեն նրանք ուզում էին եղածն իմանալ: Նման փոքրիկ մի բան իմանալը ծախս չի պահանջում, բայց հենց այդ փոքրիկ բաներն են, որ զրավում են հասարակության ուշադրությունը և համակրանք ստեղծում:

Այդ ավանում թաղման տնօրենից ավելի ժողովրդական մարդ չկար:

Դամբանական ճառը շատ լավ էր, բայց Պիտոնի<sup>[21]</sup> չափ երկար էր ու ձանձրալի: Ժագավորը չհամբերելով՝ ելույթ ունեցավ և դուրս տվեց իր սովորական անհեթությունները: Վերջապես ծիսակատարությունն ավարտվեց, և թաղման տնօրենն իր պտուտակիչով մի պտույտ կատարեց դագաղի շուրջը: Քրտինքը պատել էր ինձ. Ես

լարված ուշադրությամբ նայում էի: Բայց նա բոլորովին չխառնեց դագաղը, միայն կափարիչը տնտղեց ու պտուտակներով ամրացրեց: Այժմ ինձ մի այլ բան էր անհանգստացնում. զգիտեի, դրամը դագաղո՞ւմ է, թե՞ ոչ: Ենթադրենք, ասացի մտքում, թե մեկը տոպարակն այնտեղից վերցրել է, այժմ ինչպես որոշեմ, գրե՞ն Սերի Ջենին, թե՞ ոչ: Ասենք, թե նա նորից բացում է գերեզմանը և ոչինչ չի գտնում, այդ դեպքում ի՞նչ կմտածի իմ մասին: Գրողը տանի, ասացի ինքս ինձ, այդ դեպքում կիետապնդեն ինձ և կրանտարկեն: Ավելի լավ է՝ ձայնս կտրեմ և այդ հարցը թողնեմ մուլթ. իբր թե ոչինչ չգիտեմ: Այժմ իրերի դրությունը սարսափելիորեն խառն է: Փորձեցի լավացնել այն, բայց հազար անգամ ավելի վատացրի, և լավն այն կլիներ, որ բոլորովին չխառնվեի: Գործը ամբողջովին տանու էր տրված:

Պիտերին թաղեցին, և մենք վերադարձանք տուն: Ես շարունակեցի նայել նրանց դեմքերին, բայց իզուր, հանգստանալ չեի կարող, դեմքերն ինձ ոչինչ չեն ասում:

Երեկոյան թագավորն այցելեց բոլորին, բոլորի սիրտը շահեց, ձևացավ իսկական բարեկամ: Միաժամանակ հասկացրեց, որ Անգլիայում իր միաբանությունը կանհանգստանա, ուստի ինքը պետք է շտապի վերջացնել ունեցվածքի ժառանգության հարցը և վերադառնա Անգլիա: Նա շատ էր ցավում, որ այդպես շտապում է: Ցավում էին և բոլորը: Ուզում էին, որ կարողանար ավելի երկար մնալ, բայց տեսնում էին, որ դա հնարավոր չէ: Նա հայտարարեց, թե, իհարկե, ինքն ու Վիլյամն աղջիկներին կտանեն իրենց հետ: Այդ բանը բոլորին դուր եկավ, որովհետև այդ դեպքում աղջիկները լավ տեղավորված կլինեին և կապրեին հարազատների մոտ: Այս բանը շատ հաճելի էր նաև աղջիկների համար: Այնպես էին ուրախացել, որ մոռացել էին, թե իրենք աշխարհում երբևէ վիշտ են ունեցել: Նրանք թագավորին ասացին, որ հնարավորության չափ շուտ վաճառի ամեն ինչ, իսկ իրենք կպատրաստվեն ճանապարհ ընկնելու: Խեղճ արարածներն այնպես ուրախ ու երջանիկ էին զգում իրենց, որ սիրտս ցավում էր, տեսնելով, թե նրանք որքան խարված են ու կողոպտված: Բայց միջամտելու ու ընդիանուր խաղը փոխելու ոչ մի ապահով միջոց չեի տեսնում:

Անիծվեմ ես, եթե թագավորը թաղումից հետո չհայտարարեց տունը, նեգրերին ու ամբողջ գույքը հրապարակային աճուրդում վաճառելու մասին, որը տեղի էր ունենալու երկու օր հետո, բայց անհատապես է որևէ մեկը կարող էր զնել, եթե ցանկանար:

Թաղման հաջորդ օրը մոտավորապես կեսօրին աղջիկների ուրախությունն ստացավ առաջին հարվածը: Եկան նեգրերի առևտրով գրադադար երկու հոգի, և թագավորը լավ գնով վաճառեց նեգրերին, երեք օրում վճարվող չեկի պայմանով, ինչպես սահմանված էր: Եվ այդ մարդիկ գնացին, երկու նեգր տղաներին իրենց հետ տանելով գետն ի վեր՝ Մեմֆիս, իսկ նրանց մորք՝ ներքև՝ Նոր Օռլեան: Ես մտածում էի, որ խեղճ աղջիկների և նրանց նեգրերի սիրտը վշտից կտոր-կտոր կլինի: Նրանք վերջին անգամ գրկահատնվելով՝ լաց էին լինում, արտահայտելով այնպիսի կսկիծ, որ ես նայելիս շատ հուզվեցի: Աղջիկներն ասում էին, որ իրենց մտքով երբեք չի անցել, թե այդ ընտանիքը կտեսնեն այդպես բաժանված ու վաճառված քաղաքից դուրս: Ես երբեք չեմ կարող իմ հիշողությունից դուրս հանել այդ տեսարանը: Խեղճ, թշվառ աղջիկները և նեգրերն իրար պարանոցից կախված՝ արտասկում էին: Ես չեի կարողանա տանել այդ բանը և կմատնեի այդ մարդկանց, եթե շիմանայի, որ վաճառքն ապօրինի, և նեգրերը մեկ-երկու շաբաթում կվերադառնան իրենց տեղը: Այդ վաճառքը մեծապես հուզեց նաև ավանի բնակիչներին, և շատերը վճռականորեն բողոքեցին, ասելով, որ խայտառակություն է մորն ու երեխաներին իրարից

այդպես բաժանելը: Դա որոշ չափով վնասեց մեր խարդախներին, բայց ծերուկ հիմարը ջանում էր շահավետ գնով վաճառել, հաշվի չառնելով ոչ մի բան, որը կարող էր դուքսն ասել կամ անել: Պեսք է ասել, որ դուքսը շատ անհանգիստ էր:

Հաջորդ օրն աճուրդն սկսվելու էր: Առավոտյան, երբ լույսը բացվեց, թագավորն ու դուքսը եկան ձեղնահարկը և արթնացրին ինձ. Նրանց նայվածքից ես հասկացա, որ տհաճ բան կա: Թագավորն ասաց.

— Երեկ չէ մյուս օրը երեկոյան եղե՛լ ես իմ սենյակում:

— Ոչ, ձերդ մեծություն (ես միշտ այդպես էի ասում նրան, երբ, մերոնցից բացի, ոչ ոք չէր լինում մեզ մոտ):

— Երեկ ցերեկը կամ այս գիշե՞ր էլ չես եղել:

— Ոչ, ձերդ մեծություն:

— Ազնիվ եղիր, սուտ չասես:

— Ազնիվ խոսք, ձերդ մեծություն: Ճիշտ եմ ասում: Ես ձեր սենյակի մոտ չեմ եկել սկսած այն ժամանակից, երբ միսս Մերի Ջենը ձեզ և դրսին տարավ վեր և ցույց տվեց սենյակը:

Դուքսն ասաց.

— Ոչ ոքի չե՞ս տեսել այնտեղ մտնելիս:

— Ոչ, ձերդ պայծառափայլություն, որքան հիշում եմ, չեմ տեսել, հավատացած եմ:

— Հապա լա՛վ մտածիր:

Ես մի պահ մտածեցի՝ տեսնելու, թե ինչ ընտրություն կարելի է անել, ապա ասացի.

— Մի անգամ տեսել եմ նեզքերին այնտեղ մտնելիս:

Նրանք երկուսն էլ մի փոքր շարժվեցին տեղում, այնպիսի տեսք ստանալով, կարծես երբեք չէին սպասում նման բան, միաժամանակ ցույց տալով, թե դա անսպասելի չէ: Ապա դուքսն ասաց.

— Ինչպե՞ս, բոլորը միասի՞ն:

— Ոչ, ո՛չ բոլորը միասին... այսինքն՝ չեմ կարծում, թե երբեք տեսել եմ բոլորին միանգամից այնտեղից դուքս գալիս, միայն մի անգամ...

— Հապա՛, հապա՛: Այդ ե՞րբ էր:

— Դա հուղարկավորության օրն էր, առավոտյան: Այնքան էլ վաղ չէր, ես երկար էի քնել: Աստիճաններով ներքև էի իջնում և տեսա նրանց:

— Լավ, շարունակիր, շարունակիր: Ի՞նչ էին անում, ինչպե՞ս էին իրենց պահում:

— Ոչինչ չէին անում: Առանձին ձևացումներ, որքան հիշում եմ, չտեսա: Նրանք ոտքերի մատների վրա քայլելով հեռացան: Այնպես որ ես բավական պարզ տեսա, որ նրանք, ըստ երևույթին, զնացել էին կարգի բերելու ձերդ մեծության սենյակը կամ նման մի բան անելու, ենթադրելով, որ դուք վեր եք կացել: Բայց գտնելով, որ դուք դեռ քնած եք, առանց ձեզ արթնացնելու դուքս են եկել, թեև արդեն չէին արթնացրել ձեզ:

— Այ քեզ փորձանք, — ասաց թագավորը, և նրանք երկուսն էլ բավական վաստ, տիսմարացած տեսք ունեին: Մի դոպե նրանք կանգնած՝ մտածում ու գլուխներն էին քորում: Ապա դուքսը պողոթեկաց մի տեսակ զայրացկութ ծիծաղով և ասաց.

— Այ թե հնարամիտ էին: Այդ նեզրերը ինչ հիանալի խաղացին իրենց դերը: Այնպես էին ձևացնում, թե շատ են ցավում, որ այստեղից գնում են և մենք էլ՝ ես, դուք, ամեն ոք, հավատացած էինք, թե իսկապես ցավում են: Այլևս չասեք, թե նեզրը չունի շինծու, կեղծ վիշտ ցույց տալու տաղանդ: Այն եղանակը, որով նրանք խաղացին այդ դերը, ում ասեք կիմարացներ: Իմ կարծիքով, դրանք հարստության աղբյուր են: Եթե ես ունենայի դրամագույն և թատրոն, ցուցադրելու համար պահից ավելի լավ բան չեմ ուզենա: Իսկ մենք վաճառեցինք չափազանց չնշին գնով և այդ չնշին գինն էլ չենք ստացել: Ասա, որտե՞ղ է այդ վճարի չեկը:

— Բանկում, ժամկետին է սպասում, որտեղ պիտի լինի:

— Լավ, այդ դեպքում լավ, փառք աստծո:

Ես մի տեսակ երկշոտությամբ հարցրի:

— Բա՞ն է պատահել:

Թագավորը խոյացավ ինձ վրա ու բղավեց.

— Չո գործը չէ, լեզուդ քեզ քաշիր և գործիդ կաց, եթե գործ ունես: Քանի դեռ այս ավանում ենք, չմոռանաս, լսո՞ւմ ես:

Ապա ասաց դրսին.

— Մենք պետք է կուլ տանք այդ և ոչինչ չասենք. լեզուներս պիտի ներս քաշենք, ուրիշ ոչինչ:

Սինչ նրանք իշխում էին աստիճաններով, դուքսը քրքջաց և ասաց.

— Շուապ վաճառք և չնշին օգուտ: Լավ գործ է, չէ՞:

Թագավորը խեթ-խեթ նայեց և ասաց.

— Ես աշխատում էի լավագույն ձևով գլուխ բերել գործը, եթք այդպես շտապում էի վաճառել դրանց: Եթե օգուտը չնշին եղավ, և կորուստն էլ մեծ, ապա դրանում դուք նույնքան մեղավոր եք, որքան ես:

— Լավ, եթե իմ խորհրդին հետևեիք, նեզրերը դեռ այստեղ կիմնեին, իսկ մենք՝ գնացած:

Թագավորը հայինեց, թեև այնպես չափավոր, որ իրեն չվնասեր, ապա նայեց շուրջն ու աչքերը չոեց վրաս: Նա ինձ խիստ հանդիմանեց, որ չեմ գնացել, հայտնել իրեն, թե նեզրերի եմ տեսել իր սենյակից դուրս գալիս և մատների վրա կամացուկ քայլեիս: Ասաց, որ ամեն հիմար էլ դրանից մի բան կհասկանար: Մի պտույտ գործեց ու սկսեց ինքն իրեն հայինել, ասելով, որ այդ ամբողջը արդյունք է այն բանի, որ ինքն ուշ է անկողին մտել, առավոտյան իր բնական հանգիստը չի առել և անիծվի ինքը, եթե մեկ էլ նման սխալ կրկնի: Նրանք հեռացան հայինելով, իսկ ես անչափ ուրախ էի, որ կարողացա մեղքը նեզրերի վրա բարդել, առանց նրանց որևէ վնաս տալու:

## Գլուխ բասնութերորդ

Շուտով վեր կենալու ժամանակը եկավ: Ես աստիճաններով իշա ներքևի հարկը: Երբ անցաւ առջիկների սենյակի մոտով, դուռը բաց էր, և ես տեսա Մերի Ջեյնին իր սնդուկի մոտ նստած, որը բաց էր, և նա իրեր էր դասավորում, պատրաստվելով մեկնել Անգլիա: Միայն թե այդ պահին նա ոչինչ չէր անում. ծնկներին ծալած մի զգեստ էր զցել և դեմքը ձեռքերի մեջ առած՝ լաց էր լինում: Ինձ սարսափելի վատ զգացի՝ տեսնելով նրան այդ վիճակում: Ով էլ իմ տեղը լիներ, կխղճահարվեր: Ես ներս մտա և ասացի.

— Միսս Մերի Ջեյն, դուք չեք կարող տանել, երբ մարդկանց տեսնում եք ձախորդության մեջ: Ես էլ միշտ այդպես եմ: Ասացեք, ի՞նչ է պատահել:

Եվ նա պատմեց: Նրա վիշտը նեզրերն էին: Ես այդպես էլ գիտեի: Ասաց, որ դեպի Անգլիա սպասվող ճանապարհորդության հաճույքը դրանով թունավորվեց, որ ինքը չփառե, թե ինչպես կարող է երջանիկ զգալ իրեն այնտեղ, երբ միշտ պիտի հիշի, որ նեզը մայր ու երեխաները այլսա իրար չեն տեսնելու: Եվ նա ավելի դառնորեն սկսեց արտասվել ու ձեռքերն իրար խփելով ասաց.

— Օ՛հ, աստված իմ, չէ՞ որ այլսա իրար չեն տեսնելու:

— Բայց կտեսնեն, ամենաուշը երկու շաբաթում, ես հաստատ գիտեմ, — ասացի ես:

Օրենքի ուժն իմ մտածելուց առաջ էր անցել: Դեռ չեի շարժվել տեղիցս, երբ նա թևը պարզեց իմ պարանոցի շուրջը և ասաց, որ այդ բառերը նորից, նորից կրկնեմ:

Զգացի, որ բերանիցս խոսք թոցրի և ասացի ավելին, քան կարելի էր: Ի՞նչ անեի: Խնդրեցի թույլ տալ մեկ րոպե մտածելու: Նա նստած էր՝ անհամբեր, հուզված, գեղեցիկ, բայց իմ ասածից մասսամբ երջանկացած, թեթևացած էր զգում իրեն այնպես, ինչպես ցավոտ ատամ քաշած մարդը: Ուստի ես սկսեցի մտքումն ծանրութեթև անել անելիքս: Ինքս ինձ դատում էի. եթե մեկը, նեղն ընկնելիս ճշմարտությունն է ասում, մեծ վտանգի է ենթարկում իրեն: Ես փորձառություն չունեի և այդ պահին հաստատ չեի կարող ասել, թե դա որքան վտանգավոր է: Բայց թվում էր, թե այդպես է: Սակայն այստեղ հանգամանքն այնպիսին էր, որ ավելի լավ էր ասել ճշմարտությունը: Դա ավելի քիչ էր վտանգավոր, քան սուսոր: Պեսը է հիշեի և ազատ ժամանակ քննարկեի այդ հարցը, որը տալօրինակ էր և կանոնների հակառակ: Նման քան երբեք չի տեսել: Վերջապես, ասացի ինքս ինձ, որ պետք է փորձեմ, այս անգամ պիտի վեր կենամ և ասեմ ճշմարտությունը, թեև դա չափազանց նման էր վառողի տակարի վրա նատելուն, երբ հետաքրքրությունից պայցեցնում են՝ տեսնելու, թե այն ուր է շարութում իրենց: Եվ ես ասացի.

— Միսս Մերի Ջեյն, դուք քաղաքից դուրս ունե՞ք մի տեղ, ուր կարողանաք գնալ և մնալ երեք-չորս օրով:

— Այո, միստր Լոթրոփի տունը: Իսկ ինչո՞ւ էր հարցնում:

— Առայժմ հետաքրքիր չէ, թե ինչու: Եթե ես ասեմ ձեզ, թե նեզրերն ինչպես են իրար տեսնելու... երկու շաբաթում... այս տան մեջ... և ապացուցեմ, թե որտեղից գիտեմ, այդ դեպքում դուք կգնա՞ք միստր Լոթրոփի մոտ և այնտեղ կմնա՞ք չորս օր:

— Չորս օր, — ասաց նա, — մի տարի կմնամ:

— Ծատ լավ, — ասացի ես, — ես ձեզանից ավելին չեմ ուզում, քան ձեր խոստումը, դա ինձ համար ավելին է, քան մի այլ մարդո՞ւ՝ Աստվածաշունչ համբուրելը:

— Նա ժպտաց ու շատ անուշ շիկնեց: Ես ասացի.

— Եթե թույլ կտաք, ես կծածկեմ դուռը և կկողպեմ:

Այնուհետև վերադարձա տեղս, նստեցի և ասացի.

— Զօքբաղեք, հանգիստ նստեք և ասածներս ընդունեք, ինչպես տղամարդ: Ես որոշել եմ ձեզ ճշմարտությունն ասել, իսկ դուք ձեզ պետք է այնդ պահեք, միսս Մերի, որովհետև լավ քան չեմ ասելու և լսեն է ծանր է: Բայց ուրիշ ճար չկա: Չեր այս հորեղբայրները ձեր հորեղբայները չեն, դրանք երկու խարդախ մարդիկ են, իսկական թափառաշրջիկներ: Ահա, ամենավատն ասացի, մնացածը հեշտ է տանելը:

Այդ լուրը, իհարկե, նրան ցնցեց, բայց ես այժմ գտնվում էի ծանծաղ ջրում և ուղղակի արշավեցի առաջ: Ամբողջ ժամանակ նրա աչքերը ավելի ու ավելի բոցավառվեցին: Պատմեցի ամեն մի պարսպելի մանրամասնություն, սկսած այն պահից, երբ առաջին անգամ հանդիպեցինք այդ երիտասարդ հիմարին, որը շոգենավով քարձրանալու էր վեր, և հասցրի մինչև այնտեղ, երբ աղջիկը տան շեմքին իրեն զցեց թագավորի գիրկը, և թագավորը նրան համբուրեց տասնվեց-տասնյոթ անգամ: Մերին վերջալույսի պես շառագունած վեր թռավ, գոչելով:

— Օ՛հ, այդ անասունը: Դե՛հ, չպետք է ոչ մի րոպե կորցնել, պետք է դրանց պատել կուպրով, փետուրների մեջ թափակել տալ ու զցել գետը:

Ես ասացի.

— Իհարկե: Բայց ե՞րբ եք ուզում այդ անել, նախքան Լոյթրովի տունը գնա՞լը, թե՞...

— Օ՛հ, ինչի՞ մասին եմ մտածում, — ասաց նա ու նստեց իր տեղը, — մի՛ լսեք իմ ասածները, խնդրում եմ, հաշվի մի՛ առեք: Չեք առնի, չե՞:

Նա իր թավշյա ձեռքը այնպես քնքշորեն դրեց իմ ձեռքին, որ ես մտքումս վճռեցի. կմեռնեմ, բայց նրա ասածից դուրս չեմ գա:

— Ես երեք չմտածեցի, թե այդպես կհուզվեմ, — ասաց նա, — այժմ շարունակեցեք, ես այլևս այդպես չեմ վարվի: Ասացեք ի՞նչ անեմ: Ինչ է որ ասեք, կկատարեմ:

— Լավ, ասացի ես, — այդ երկու խարդախներն այլանդակ գույզ են կազմում: Այնպես եղավ, որ ես ստիպված եմ նրանց հետ քիչ ավելի երկար ճանապարհորդել: Ուզեմ, թե չուզեմ: Թե ինչո՞ւ՝ ավելի լավ է այդ մասին ձեզ ոչինչ չասեմ: Եթե դուք այս ավանում նրանց մերկացնեք, ես կազատվեմ նրանց ճանկերից, և ամեն ինչ լավ կլինի ինձ համար: Բայց կա մի ուրիշը, որին չեք ճանաչում, և որը մեծ նեղությունների մեջ կընկնի: Մենք պետք է փրկենք նրան, այնպես չե՞: Ուրեմն՝ հասկանալի է, մենք չպետք է այստեղ նրանց մասին որևէ բան ասենք:

Այս խոսքերն ասելիս գլխումս մի լավ միտք ծագեց: Ես տեսնում էի, թե ինչպես կարող էի ինձ ու Զիմին ազատել այդ խարդախներից. նրանց այստեղ բանտարկել տալ և ապա հեռանալ: Բայց ես չեի ուզում լաստը ցերեկով գետն ի վար տանել. շարունակ հարձուվորձ կանեին: Նրա համար էլ վճռեցի սպասել մինչև մթնի: Ես ասացի.

— Միս Մերի Զեյն, ասեմ, թե ինչ ենք անելու, և դուք ստիպված չեք լինի այդքան երկար ժամանակ մնալ միստր Լոթրովի մոտ: Այդ վայրը այստեղից որքա՞ն է հեռու:

— Չորս մղոնից ոչ պակաս. գյուղական վայր է, ավանի ետևում:

— Ոչինչ, այնքան վատ չէ: Վյժմ զնացեք այնտեղ և հանգստացեք մինչև ժամը ինը կամ կամ ինն անց կես, ապա խնդրեցեք, որ ձեզ նորից բերեն այստեղ: Պատճառ կրօնեք, թե բան եք մոռացել: Եթե ժամը տասնմեկից առաջ լինեք այստեղ, պատուհանին մի մոմ դրեք, և եթե ես դրանից հետո չեկա, նշանակում է զնացել եմ և ապահով եմ: Այնուհետև դուքս կգաք, ում որ պետք է կհայտնեք նրանց խարդախության մասին, և այդ գաղաններին բանտարկել կտաք:

— Լավ, — ասաց նա, — այդպես կանեմ:

— Իսկ եթե պատահի, որ ես հեռացած չինեմ, և ինձ էլ նրանց հետ ձերբակալեն, դուք կկանգնե՞ք, կասե՞ք, որ ես ամեն ինչ նախօրոք հայտնել եմ ձեզ և կպաշտպանե՞ք ինձ ձեր ամբողջ կարողությամբ:

— Կպաշտպանեմ ձեզ, իհարկե, կպաշտպանեմ: Ոչ ոք ձեր մազին չի դիպչի, — ասաց նա, և ես տեսա, թե ինչպես այդ պահին նրա ոռւնզերը լայնացան, աչքերը փայլեցին:

— Եթե ես հեռացած լինեմ, նշանակում է այստեղ չեմ լինի, — ասացի ես, — և չեմ կարողանա ապացուցել, որ այս սրիկաները ձեր հորեղբայրները չեն, չեմ կարող ապացուցել, եթե նույնիսկ այստեղ լինեմ: Կարող եմ երդվել, որ դրանք խարդախ և թափառաշրջիկ մարդիկ են, ուրիշ ոչինչ: Իհարկե, դա էլ մի բան արժե: Բայց կան մարդիկ, որ կարող են այդ բանն ինձնից լավ ապացուցել, և դրանք այնպիսի մարդիկ են, որոնց վկայությունն այնպես շուտ կասկածի տակ չի առնվի, ինչպես իմը: Կասեմ, թե ինչպես գտնել նրանց: Տվեք ինձ մի մատիտ և թուլյթ: Ահա. «Արքայական ընձուլդտ, Բրիքսվիլ»: Պահեցեք այդ թուլյթը, չկորցնեք: Երբ դատարանը կուգենա այս երկուսի մասին որոշ բան հայտնաբերել, թող լուր ուղարկի Բրիքսվիլ և ասի, որ ձերբակալել են այն մարդկանց, որոնք խաղացել են «Արքայական ընձուլդտը», և խնդրի մի բանի վկա ուղարկել: Այդ դեպքում ամբողջ քաղաքը, միս Մերի, մեկ ակնթարթում կթափվի այստեղ: Նրանք կգան սուկալի կատաղած:

Իմ խելքով, այժմ ամեն ինչ ճիշտ էինք որոշել: Ուստի ասացի.

— Թողեք աճուրդը շարունակվի և դրա համար մի՛ անհանգստացեք: Ոչ ոք պարտավոր չէ զնած բանի համար վճարել, մինչև աճուրդից մեկ օր չանցնի, նկատի ունենալով հայտարարության կարճատևությունը: Այդ խարերաներն էլ այստեղից չեն հեռանա, մինչև դրամը չստանան: Իսկ մենք գործն այնպես ենք կարգադրել, որ այդ վաճառքը օրինական համարվել չի կարող: Նրանք դրամ չեն ստանա: Կատացվի այնպես, ինչպես նեզրերի հետ էր. վաճառքն օրինական չէ, և նեզրերը շուտով ետ կգան: Նրանք չեն կարող նեզրերի դիմաց վճար ստանալ: Նրանք ամենադժվար կացության մեջ են ընկել, միս Մերի:

— Լավ, հիմա ես կիշնեմ ներքև նախաճաշելու և ապա ուղիղ կմեկնեմ միստր Լոթրովի տունը:

— Ոչ, այդ ճիշտ չի լինի, միս Մերի Զեյն, — ասացի ես, — դա ճիշտ չէ: Նախաճաշից առաջ զնացեք:

— Ինչո՞ւ:

— Զեր կարծիքով ես ի՞նչ նկատի ունեի, երբ խորհուրդ տվեցի գնալ, միսս Մերի:

— Երբեք այդ մասին չեմ մտածել, ոչ էլ մտածում եմ: Չգիտեմ: Ասացեք, ինչո՞ւ:

— Գնալու պատճառն այն է, որ դուք այս խարեւաների նման աներես չեք: Ես չգիտեմ այնպիսի մի գիրք, որ ձեր դեմքի չափ պարզ լինի: Մեկնումեկը ձեր մտածածը կկարդա ձեր դեմքին, ինչպես խոշոր տառերով տպված մի գիրք: Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ եք գնալ, հանգիստ կանգնել ձեր «հորեղբայրների» առջև, երբ նրանք կզան, բարի լույս կմայթեն ու կհամբուրեն ձեզ, և երբեք չեք...

— Հասկանալի է, հասկանալի, բավական է: Այո, նախաճաշից առաջ պետք է գնալ, ուրախությամբ: Քույրերիս թողնե՞ն նրանց մոտ:

— Այո. նրանց մասին մի՛ մտածեք: Նրանք դեռ որոշ ժամանակ պետք է համբերեն: Եթե քոյորդ գնաք, նրանք կարող են կասկածել: Չեմ ուզում, որ դուք տեսնեք նրանց, ոչ էլ ձեր քոյրերին, ոչ էլ այս ավանում որևէ մեկին, որովհետև եթե այստեղի մի հարևան հարցնի, թե ձեր «հորեղբայրների» առողջությունն այս առավոտ ինչպես է, ձեր դեմքը որոշ բան կմատնի: Ո՛չ, միսս Մերի Շեյն, դուք անմիջապես գնացեք: Ես ամեն ինչ այստեղ ձեր քոյրերի հետ կկարգավորեմ: Միսս Սյուլաննային կասեմ, որ ձեր սերն ու հարզանքը հայտնի նրանց և ասի, որ դուք մի քանի ժամով գնացել եք մի փոքր հանգստանալու, թարմանալու կամ մի բարեկամի տեսնելու և կվերադառնաք երեկոյան կամ վաղ առավոտյան:

— Գնալ բարեկամի տեսնելը շատ լավ է, բայց չեմ ուզում իմ սերն ու հարզանքը հայտնել նրանց:

— Լավ, թող այդպես լինի:

— Բայց քրոջն այդպես ասելը վաստ չէր. դրանից վնաս չեր զա: Դա մի փոքրիկ բան էր, առանց նեղության: Եվ իենց փոքրիկ բաներն են, որ ամենից ավելի են մարդկանց ճանապարհը հարթում: Մերի Շեյնը դրանով հանգիստ կլիներ, և ասելն էլ ոչ մի նեղություն չեր պատճառի: Ապա ասացի.

— Եվս մի բան, դրամի սոսպրակը:

— Ի՞հ, դա նրանց ձեռքում է, որքան տխմար էի, որ հանձնեցի նրանց:

— Ո՛չ, դուք սխալվում եք: Տոպրակը նրանց մոտ չէ:

— Ինչպե՞ս, ո՞վ է վերցրել:

— Լավ կլիներ, որ իմանայի ում մոտ է, բայց չգիտեմ: Ինձ մոտ էր, որովհետև ես այն գողացա, գողացա, որպեսզի ձեզ հանձնեմ: Գիտեմ, թե որտեղ թաքցրի, բայց վախենում եմ, թե այնտեղ չէ: Անչափ տխուր եմ դրա համար, միսս Մերի Շեյն: Ինձ համար ավելի ցավալի բան չէր կարող լինել: Բայց ես ինչ կարողացել եմ, արել եմ, ազնիվ խոսք: Քիչ էր մնում, որ բռնվեի և ստիպված եղա թաքցնել առաջին հանդիպած տեղում, միայն թե այնքան էլ հարմար տեղ չէր:

— Օ՛հ, բավական է մեղադրեք ինքներդ ձեզ, դա շատ վաստ բան է, ես թույլ չեմ տա: Ի՞նչ կարող էիք անել. դա ձեր հանցանքը չէ: Որտև ո՞վ թաքցրիք:

Ես չեմ ուզում նորոգել նրա վիշտը, չեմ կարող քերան բաց անել ասելու այն, ինչ ստիպելու էր նրան տեսնելու դիակը դազաղում՝ դրամի տոպրակը փորին դրած: Մի բոլեն լուսուց հետ ասացի:

— Չեմ ուզում ասել, թե որտեղ դրեցի, միսս Մերի Ջեյն, եթե թույլ կտաք: Բայց կգրեմ մի կտոր թղթի վրա, և դուք կարող եք կարդալ ճանապարհին, երբ կզնաք միստր Լոթրովի մոտ, իհարկե, եթե ուզում եք: Այդպես հնարավո՞ր է:

— Այո, կարեի է:

Ես գրեցի. «Դրել եմ դազաղի մեջ: Պարկը դազաղի մեջ էր, երբ դուք գիշերն լաց էիք լինում դիակի վրա: Ես դռան հետևում էի և անշափ ցավում էի ձեզ համար, միսս Մերի Ջեյն»:

Աչքերս թրջվեցին, երբ հիշեցի նրա լացը՝ ուշ գիշերին, մենակ, դազաղի մոտ նստած: Իսկ այդ սատանաները նոյն հարկի տակ հանգիստ քնած էին և պատրաստվում էին նրան կողոպտել: Երբ ծալեցի թուղթը և տվեցի, տեսա, որ աչքերը լցվում են արցունքի կաթիլներով: Նա թոթվեց իմ ձեռքն ու ասաց.

— Ցտեսություն: Ամեն ինչ կանեմ այնպես, ինչպես ասել եք: Եթե ձեզ այլևս չտեսնեմ, երբեք չեմ մոռանա, միշտ կմտածեմ ձեր մասին և կաղոթեմ ձեզ համար:

— Եվ գնաց:

Աղոթել ինձ համար: Կարծում եմ, եթե նա ինձ ճանաչեր, այնպիսի մի բան կվերցներ գլխովս տալու համար, ինչքան ուժը պատեր: Բայց միևնույն է, նա կաղոթեր ինձ համար: Նա այնպիսի աննկուն ոգի ուներ, որ կարող էր աղոթել Հուդայի համար, եթե նման միտք ունենար: Մերին նահանջել չգիտեր: Ինչ ուզում եք ասեք, բայց, իմ կարծիքով, նա իր մեջ ավելի շատ քաջություն, համարձակություն ուներ, քան իմ տեսած աղջկներից որևէ մեկը: Իմ կարծիքով, նա ոտքից գոլոխ քաջություն էր: Գուցե ասած շողոքորթություն թվա, բայց դա այդպես չէ: Իսկ եթե խոսքը գեղեցկության ու բարության վերաբերի, նա բոլորից բարձր կիմնի: Այն օրից Մերիին այլևս չեմ տեսել, բայց նրա մասին մտածել եմ, շատ ու շատ անզամ, միլիոն անզամ, իիշել նրա խոսքերը, թե կաղոթի ինձ համար: Եվ եթե երբևէ մտածեի, թե իմ աղոթքը նրան որևէ չափով օգուտ կտա, անիծվեմ, եթե չաղոթեի:

Մերի Ջեյնը երևի բակի դրնից էր գնացել, որովհետև ոչ ոք չէր տեսել նրան: Երբ տեսա Սյուզաննային և Նապաստակաշուրթին, հարցրի.

— Ի՞նչ է այն մարդու անունը, որին դուք երբեմն տեսակցության եք գնում. ապրում է գետի մյուս կողմում:

Նրանք ասացին.

— Ծանոթները շատ են, բայց գլխավորապես Փրոքթորների մոտ ենք գնում:

— Այո, հենց այդ է, — ասացի ես, — մոռացել էի: Լավ, միսս Մերի Ջեյնն ասաց ինձ, որ հայտնեմ ձեզ, թե ինքը շտապ գնում է այնտեղ. նրանցից մեկը հիվանդ է:

— Ո՞ր մեկը:

— Զգիտեմ, մոռացա անունը, բայց կարծում եմ դա...

— Աստված իմ, դեռ անցյալ շաբաթ նա շատ լավ էր: Շա՞տ վատ է:

— Վա՞տ: Միսս Մերի Ջեյնն ասում էր, որ ամբողջ գիշեր նստած են եղել նրա կողքին: Կարծել են, թե հազիվ գիշերը կլուսացնի:

— Մի տես, Է՛: Իսկ ի՞նչ է պատահել:

Ես չեմ կարող իսկույն որևէ հարմար հիվանդություն հնարել, ուստի ասացի.

— Խոզուկով:

— Խոզուկով քո տատիկն է հիվանդ: Խոզուկով հիվանդի կողքին ամբողջ գիշերը չեն նստի:

— Չե՞ն նստի, ասում եք: Այդ տեսակի խոզուկի դեպքում նստում են: Այս խոզուկները տարբեր են: Միսս Մերի Ջեյնն ասում էր, որ դա նոր տեսակի է:

— Ինչո՞վ է նոր:

— Այլ բարդություններ է տալիս:

— Ի՞նչ այլ բարդություններ:

— Քութեշ, կապույտ հազ, կարմիր քամի, թորախտ, դեղնախտ, ուղեղի բորբոքում և չփառեմ էլ ինչ:

— Աստված իմ: Եվ նրանք դա անվանում են խոզուկ:

— Միսս Մերի Ջեյնն այդպես ասաց:

— Իսկ ինչո՞ւ են անվանում խոզուկ:

— Որովհետև խոզուկը հենց այդ է: Դրանից է սկսվում:

— Անիմաստ բան ես ասում: Մեկը կարող է սկզբում ոտքի մատը կոճղի դիպցնել, այնուհետև թույն ընդունել, ջրիորն ընկնել, վիզը ջարդել ու դեղը դուրս թափել, և եթե մի ուրիշը հարցնի, թե ինչից մեռավ այդ մարդը, մի տիմար պիտի ասի, թե մատը կոճղին դիպցրեց: Դրանում իմաստ կա՞: Այստեղ էլ իմաստ չկա: Վարակիչ է դա:

— Վարակի՞չ է: Ի՞նչ եք ասում: Նման է տափանի: Մուլթ ժամանակը մոտենում էր, դիպցում մեր մատին, հետո է՛լ մյուս մատներին, այնպես չէ՞: Եվ չեք արձնի մատից, մինչև ամբողջ տափանը ձեզ հետ քաշեք-տանեք: Դե՛հ, խոզուկը, կարելի է ասել, տափանից ավելի վատ է. մի անգամ որ բռնվեցիք, ազատվել չկա:

— Սարսափելի է, — ասաց Նապաստակաշուրթը, — զնամ հորեղբայր Հարվիի մոտ և...

— Իհարկե, — ասացի ես, — ձեր տեղը լինեի, ոչ մի րոպե չեի կորցնի:

— Իսկ ինչո՞ւ:

— Մի րոպե լսեցեք և հուսով եմ, որ կհասկանաք: Ձեր հորեղբայրները պարտավոր են հնարավորին չափ շուտ վերադառնալ Անզիա: Բայց ի՞նչ եք կարծում, նրանք այնքան ստոր կլինե՞ն, որ իրենք մենքնեն, իսկ ձեզ թողնեն, որ ամբողջ ճանապարհը մենակ գնաք: Հասկանալի է, որ կսպասեն ձեզ: Բացի այդ, ձեր հորեղբայր Հարվին քարոզիչ է, այնպես չէ՞: Ե՛հ, արյոք քարոզիչը կիսարի՝ շղթենավի գործավարին, կիսարի՝, որպեսզի նրանք թույլ տան միսս Մերի Ջեյնին նավ բարձրանալ: Իհարկե, դուք գիտեք, որ չի խարի: Ուրեմն ի՞նչ կանի: Պարզ է, որ կասի. «Շատ ցավալի է, բայց եկեղեցական գործերը պետք է հնարավորության չափ յոլա զնան առանց ինձ, քանի որ եղբորս դուստրը վարակվել է

բազմակի, ահավոր հիվանդությամբ՝ խոզուկով: Ուստի իմ հարկադրյալ պարտականությունն է նատել այստեղ և սպասել երեք ամիս, որպեսզի պարզվի, նա վարակվե՞լ է, թե՞ ոչ: Եթե գտնում եք, որ պետք է ձեր հորեղբայր Հարվիին հայտնել, ապա ոչ մի բանի ուշադրություն մի դարձրեք:

— Այ քեզ բան: Ուրեմն՝ մենք այստեղ ենք մնալու և զժի նման շրջելու ենք այս ու այն կողմ, երբ բոլորս կարող էինք շատ լավ ժամանակ անցկացնել Անգլիայում, և սպասելու ենք, որպեսզի պարզենք, թե Մերի Ջեյնը վարակվե՞լ է: Ի՞նչ դատարկ բաներ ես ասում:

— Լավ, համենայն դեպս գուցել հարևաններից մի քանիսին ասեք:

— Չէ՛ մի: Դու բնածին ապուշությամբ բոլորին կհաղթես: Մի՛թ չես հասկանում, որ նրանք իսկույն ամեն տեղ կտարածեն լուրը: Մնում է միայն մի բան. ոչ ոքի ոչինչ չասել:

— Լավ, գուցել դուք իրավացի եք: Այո, կարծում եմ, որ իրավացի եք:

— Բայց թվում է, մենք պարտավոր ենք որևէ կերպ հորեղբայր Հարվիին ասել, որ նա կարճ ժամանակով տեղ է գնացել, որպեսզի հորեղբայրը չանհանգստանա:

— Այո, միսս Մերի Ջեյնն ուզում եք, որ հայտնեք: Գնախս ասաց. «Ասացեք, որ հորեղբայրներ Հարվիին և Վիշամին հաղորդեն իմ սերն ու համբույրները և ասեն, որ ես շտապ գնում եմ զետի մյուս կողմը տեսնելու միստր... միստր...», ի՞նչ էր այդ հարուստ ընտանիքի ազգանունը, մոռացա: Ջեր հորեղբայր Պիտերը սովորաբար շատ է հարգելիս եղել նրանց, այն ընտանիքը, որը...

— Երևի Ավիթորիների մասին է խոսքը, չէ՞:

— Այո, այդ էր... Այնպիսի ազգանուններ ունեն, որ մարդ չի կարողանում հիշել: Այո, այդ հայտնեք հորեղբայրներին, թե շտապ գնացել է Ավիթորիների մոտ: Խնդրելու է, որ անպայման զան աճուրդի և տունք գնեն. հորեղբայր Պիտերն ավելի շուտ կուզենար նրանք գնեին, քան մեկ ուրիշը: Եվ նա նրանցից պոկ չի զա, մինչև խոսք շտան, թե կզան: Այնուհետև, եթե շատ հոգնած չինի, իսկույն կվերադառնա: Իսկ եթե հոգնի, կվերադառնա ամենաուշը հաջորդ առավոտյան: Միսս Մերի Ջեյնն ասաց, որ Փրոքթորների մասին ոչինչ չասեք, միայն Ավիթորիների մասին ասեք, որը միանգամայն ճիշտ կինի, որովհետև նրանց մոտ էլ կգնա՝ տունք գնելու կապակցությամբ: Ես այդ գիտեմ. ինձ ասել է:

— Շատ լավ, — ասացին նրանք և վագեցին հորեղբայրների մոտ՝ նրանց հաղորդելու միսս Մերի Ջեյնի սերն ու համբույրները, ինչպես նաև մյուս մանրամասնությունները:

Այժմ ամեն ինչ լավ էր: Աղջիկները ոչինչ չին ասի, որովհետև ուզում էին Անգլիա գնալ: Թագավորը և դուքսը նույնպես ուրախ էին նրա բացակայության համար: Ավելի լավ էր, որ նա աճուրդի գործով զբաղվեր, քան թե մնար տանը, դոկտոր Ռոբինսոնի աջի առաջ: Ես ինձ շատ լավ էի զգում: Իմ կարծիքով, դերս բավական ճարպկորեն կատարեցի: Հազիվ թե թում Սոյերը դրանց ավելի հարմար ելք գտներ: Իհարկե, նա գործն ավելի կրարդացներ, բայց ես չէի կարող այդքան հմտություն ցուցաբերել: Դե, այդ բանում վարժված չէի:

Աճուրդի գործը նրանք սկսեցին ավանի հրապարակում, իրիկնադեմին, և դա տևեց շատ երկար: Ծերուկը պտտվում էր հայտարարողի շուրջը և երեմն Աստվածաշնչից կեղծ բարեպաշտական խոսքեր մեջ բերում, իսկ դուքսը՝ «զն՛ ւ-զն՛ ւ» էր անում որպես հարգանքի արտահայտություն և մարդկանց սիրաշահում:

Շուտով աճուրդը վերջացավ, ամեն ինչ վաճառվեց, ամեն ինչ, բայցի գերեզմանոցի փոքրիկ տեղամասից: Նրանք աշխատեցին այդ էլ վաճառել: Ես երբեք չեմ տեսել այնպիսի մի ընձուղտ, ինչպիսին թագավորն էր, որն ուզում էր ամեն ինչ կու տալ: Մինչ նրանք զրադաշտ էին այս գործով, ափին մոտեցավ մի շոգենավ և երկու բռպեռում գետափից գոռոցով, կանչով, ծիծաղով դեպի ավանն էր վագում ամբոխը:

— Ահա ձեր հակառակորդները, ահա Պիտեր Վիլքսի ժառանգների մի նոր զույգ: Վճարեցեք դրամը, վճուցեք, այս զույգերից ո՞ր մեկն է ավելի դուր զալիս ձեզ:

## Գլուխ բասնիներորդ

Ամբոխն իր հետ թերում էր չափազանց դուրեկան արտաքինով մի ծեր շենտլմենի, ինչպես և նույնքան համակրելի մի երիտասարդի: Երիտասարդի աջ թևը կապված էր վզից: Աստված իմ, ինչպես էին մարդիկ անընդհատ գոչում ու ծիծաղում: Բայց ես ոչ մի ծիծաղելի բան չեմ տեսնում և կարծում էի, թե թագավորն ու դուրսը, տեսնելով այդ, որոշ չափով կձգվեն, կգունատվեն: Բայց ոչ, նրանք բոլորովին էլ չգունատվեցին: Դուրսը ցույց էլ չտվեց, թե ինչ-որ բան է տեղի ունենում: Նա շարունակում էր շրջել «զո՞ւ-զո՞ւ» անելով՝ երջանիկ ու զոհ, նման այն խնոցուն, որի մեջ գլուխում են կաթն ու կարագը: Ինչ վերաբերում է թագավորին, նա ապշած ու թախծախից նայում, նայում էր, այս նորեկներին, կարծես նրա սիրտը մղկտում էր, որ աշխարհում կարող են ինել այդ աստիճանի խարդախ ու սրիկա մարդիկ: Նա այդ դերը սքանչելի էր կատարում: Ավանի անվանի մարդկանցից շատերը հավաքվել էին նրա շուրջը՝ հասկացնել տալու, որ իրենք իր կողմն են: Նորեկ ծերունի շենտլմենը կատարելապես ապշել, առեղծվածային վիճակի մեջ էր ընկել: Շուտով նա սկսեց խոսել, և ես անմիջապես նկատեցի, որ նա բառերն արտասանում է ինչպես անգիտացի և ոչ թե թագավորի նման, թեև նմանեցնելու տեսակետից թագավորի արտասանությունն էլ վատ չէր: Ես չեմ կարող այստեղ տալ ծերունի շենտլմենի բառերը, ոչ էլ կարող եմ նմանեցնել: Նա դարձավ դեպի ամբոխը և խոսեց մոտավորապես այսպես:

— Սա ինձ համար միանգամայն անսպասելի էր, և ես ուղղակի ու անկեղծորեն խոստովանում եմ, որ շատ էլ պատրաստ չեմ դիմադրելու և պատասխանելու: Շանապարհին մեր զիմանը փորձանք եկավ: Եղբորս թևը կոտրվեց և մեր ճանապարհորդական ծանրոցները երեկ զիշեր սիսալմամբ ափ դուրս բերին այստեղից վերև, մի փոքրիկ քաղաքում: Ես Պիտեր Վիլքսի եղբայր Հարվին եմ, սա էլ նրա եղբայր Վիլքսն է, որը չի կարող լսել կամ խոսել, նույնիսկ չի կարող նշաններով բավականաչափ բան հասկացնել, որովհետև այժմ միայն մեկ ձեռքն է շարժվում: Մեկ-երկու օրից, երբ ծանրոցները կստանամ, կարող եմ ամեն ինչ ապացուցել: Բայց մինչև այդ ուրիշ ոչինչ չեմ ասի, կգնամ հյուրանոց և կսպասեմ:

Նա ու նոր խուլ ու համրդ հեռացան: Թագավորը նրանց հետևից քրքաց ու ծաղրեց.

— Ժեսն է կոտրվել: Հավանական է չէ՞: Շատ էլ հարմար է մի խարդախ մարդու համար, որը ստիպված է նշաններով խոսել, բայց չկիտե, թե ինչպես: Իրերը ճանապարհին կորել են: Հիանալի է, նույնիսկ բավական խորամանկ ձև է տվյալ պարագայում:

Եվ նա նորից ծիծաղեց, ծիծաղեցին և հավաքվածները, բայց երեք-չորս կամ վեց հոգուց: Վերջիններից մեկը բժիշկն էր, մյուսը՝ սրահայաց մի շենտլմեն՝ ուսին կապերտից

հին ձևի խուրջին զցած: Նա նոր էր դուրս եկել շոգենավից և ցածրաձայն խոսում էր բժշկի հետ, երբեմն էլ հայացքը ուղղում թագավորին: Գլուխները շարժվում էին ի հաստատումն միմյանց ասածի: Դա օրենսգետ Լեվի Բեկն էր, որ գետով բարձրացել էր Լուխսի: Երրորդը բարձրահասակ, չեղու դեմքով մի աժդահա մարդ էր, որը, զալով այնտեղ, լսեց ծերունի շենտղմենի ասածները սկզբից մինչև վերջ և այժմ լսում էր թագավորին: Երբ թագավորը վերջացրեց, այս մարդը վեր կացավ ու ասաց.

- Լսեցեք, եթե դուք Հարվի Վիլսն եք, ապա ասացեք, թե ե՞րբ եկաք այս ավանը:
- Հուղարկավորությունից մեկ օր առաջ, բարեկամ, — ասաց թագավորը:
- Օրվա ո՞ր ժամին:
- Երեկոյան, մայրամուտից մեկ-երկու ժամ առաջ:
- Ինչո՞վ եկաք:
- Եկա «Սյուլգեն Պոռուել» շոգենավով, Ցինցինատիից:
- Լավ, ուրեմն՝ ինչպե՞ս կարողացաք առավոտյան մակույկով լինել հրվանդանի մոտ:
- Ես առավոտյան հրվանդանի մոտ չեմ եղել:
- Ստում եք:

Մի քանիսը միջամտեցին ի պաշտպանություն թագավորի, և չեղուին խնդրեցին այդ ձևով չխոսել ծերունու և քարոզի հետ:

— Կորչի՛ սրա նման քարոզի՛ր: Սա խարեթա է, ստախոս: Այդ առավոտ նա նավակով ափ էր դուրս եկել հրվանդանի մոտ: Ես այնտեղ եմ ապրում, զիտեք, չ՞՛: Այն ժամանակ այնտեղ էի, երբ սա է այնտեղ էր: Ես տեսա նրան: Նա մակույկով այնտեղ եկավ թիմ Քոլինսի ու մի տղայի հետ:

- Բժիշկը վեր կացավ ու ասաց.
- Եթե այն տղային բերենք այստեղ, կճանաչե՞ք, Հայնս:
- Կարծում եմ, որ կճանաչեմ, բայց հաստատ չեմ կարող ասել: Այ, այն տղան է, այնտեղ կանգնած: Շատ հեշտ ճանաչեցի:

Նա մատով ցույց տվեց ինձ: Բժիշկն ասաց.

— Հարևաններ, ես չգիտեմ նոր եկող զույգն ել խարդախ է, թե ոչ, բայց եթե այս երկուսը խարդախ մարդիկ չեն, այդ դեպքում ես հիմար մարդ եմ, ուրիշ ասելիք չունեմ: Իմ կարծիքով մեր պարտականությունն է հետևել, որ սրանք չիենանան այստեղից, մինչև լրիվ պարզենք այս հարցը: Դե՛, արի, Հայնս, բոլորդ եկեք: Մենք այս մարդկանց տանելու ենք պանդոկը, որ երես առ երես հանդիպեն մյուս զույգի հետ, և ես կարծում եմ մենք իսկույն որոշ բան կպարզենք:

Ամբոխին շատ դուր եկավ այդ առաջարկը, թենի թագավորի կողմնակիցները, գուցե այնքան էլ զոհ չեին: Բոլորս ճանապարհ ընկանք դեպի պանդոկ: Իրիկնադեմ էր: Արեգակը մայր էր մտնում: Ինձ առաջնորդում էր բժիշկը՝ ձեռքս բռնած: Նա բավական բարեկամ էր իմ նկատմամբ, բայց երբեք ձեռքս բաց շթողեց:

Մեզ բոլորիս բերեցին պանդոկի մի մեծ սենյակ և վառեցին մի քանի մոմ: Վյստեղ բերին և նոր զույգին: Ամենից առաջ բժիշկն ասաց.

— Ես չեմ ուզում այս երկու մարդկանց նկատմամբ շատ խիստ լինել, բայց, իմ կարծիքով, սրանք խարեւաներ են և կարող են մեղսակիցներ էլ ունենալ, որոնց մասին ոչինչ չփառեն: Եթե կան մեղսակիցներ, ապա դրանք չեն փախչի, իրենց հետ տանելով Պիտեր Վիլսի թողած դրամը: Միանգամայն հնարավոր է: Եթե այս մարդիկ խարեւաներ չեն, ապա դեմ չեն լինի, որ դրամն էլ բերել տանք այստեղ և պահենք, մինչև նրանք ապացուցեն, որ խարեւաներ չեն: Ճիշտ չէ:

Բոլորը համաձայնեցին այս առաջարկությանը: Ինձ թվում էր, թե նրանք մեր խմբին բավական նեղ վիճակի մեջ գցեցին հենց սկզբից: Բայց թագավորը տիտուր նայեց նրանց ու ասաց.

— Չենտլմեններ, շատ կուգենայի, որ դրամն այնտեղ լիներ, որովհետև ես ցանկություն չունեմ որևէ բանով խոչնդուտ հանդիսանալ այս թշվար գործի ուղղամիտ, հրապարակային, բացեիրաց քննարկմանը, բայց, ավա՛ղ, դրամն այլևս չկա, կարող եք մեկին ուղարկել և ստուգել, եթեն ուզում եք:

— Ուրեմն՝ որտե՞ղ է:

— Ե՞հ, երբ եղբորս դուստրը դրամը հանձնեց ինձ պահելու իր համար, ես վերցրի ու թաքցրի այն իմ մահճակալի ծղոտե ներքնակի մեջ: Չէի ցանկանում մի քանի օրվա համար այստեղ բանկ դնել: Մահճակալը համարում էի ապահով տեղ, մենք էլ, նեզք ծառաներ չունենալով, ենթադրում էինք, թե նրանք նույնքան ազնիվ են, որքան Անգլիայում ունեցած մեր ծառաները: Բայց հենց հաջորդ առավոտյան նեզքերը գողացել էին դրամը, երբ ես ներքև իջա և վաճառեցի նրանց: Դեռ չփառեի, թե դրամը գողացված է: Այնպես որ նրանք հանգիստ հեռացան՝ իրենց հետ տանելով դրամը: Վյստեղ է իմ ծառան, որը կարող է այդ մասին ձեզ պատմել, շենտլմեններ:

Բժիշկը և մի քանի այլ մարդիկ ասացին. «Անհեթեթ բացատրություն»: Ես նկատեցի, որ հազիվ թեկուզ մի հոգի լիովին հավատաց նրան: Մեկը հարցրեց ինձ, թե տեսե՞լ եմ նեզքերին դրամը գողանակիս: Ես ասացի՝ ոչ, բայց տեսել եմ նրանց սենյակից դուրս սողոսկելիս ու շտապ հեռանալիս: Ասացի, որ այդ պահին մտքովս ոչ մի վատ քան չանցավ, միայն նկատեցի, որ նրանք վախենում են, կարծելով, թե արթնացրել են իմ պարոնին և շտապում են հեռանալ, քանի դեռ պարոնս նրանց չի բռնել: Նրանք ինձ այլևս հարցեր չտվեցին: Այնուհետև բժիշկը շրջվեց իմ կողմը, հարցնելով.

— Դո՞ւ էլ անգլիացի ես:

Ասացի՝ այո: Նա և մի քանիսը ծիծառեցին, ասելով.

— Սուտ է:

Այնուհետև նրանք շարունակեցին հետաքննությունը և մեզ նեղը լծեցին: Ժամերը հաջորդում էին իրար, բայց ոչ ոք ոչ մի քառ չասաց ընթրիքի մասին, ոչ էլ, ըստ երևոյթին, այդ մասին մտածող կար: Այդպես շարունակվեց ու շարունակվեց: Դա ամենախառնաշփոթ բանն էր, որ երբեմ մարդ տեսել է: Նրանք թագավորին ստիպեցին երկար-բարակ պատմել իր պատմությունը: Մյուս ծեր շենտլմենին ստիպեցին նույնն անել, և այստեղ բոլորը, բացի մի քանի նախապաշտպած հիմարներից, կարող էին տեսնել, թե

ինչպես նոր եկած ծեր ջենտլմենը ճշմարտությունն է ասում, իսկ մյուսը՝ թագավորը ստում: Շուտով պահանջեցին, որ ես վեր կենամ ու ասեմ, թե ինչ զիտեմ: Թագավորը աչքի պոչով խեթ-խեթ նայեց ինձ, և ես անելիքս հասկացա: Պատմելով Շեֆֆիլդից, թե ինչպես էինք ապրում այնտեղ, պատմեցի անգլիացի Վիլբրեթի մասին և այլն: Ես դեռ չեի խորացել իմ պատմության մեջ, երբ բժիշկը ծիծաղեց, իսկ իրավաբան Լեվի Բելը ասաց.

— Նստիր, տղաս, եթե ես քո տեղը լինեի, այդքան ջանք չեի թափի: Տեսնում եմ, որ դու ստեղու սովոր չես: Ասածներդ բանի նման չեն. վարժվել է պետք: Չո դերը բավական անճարակ ես կատարում:

Ինձ փաղաքշանք պետք չեր, բայց ուրախ էի, որ գոնե այդ ձևով հանգիստ թողեցին: Բժիշկն ինչ-որ բան էր ուզում ասել: Նա շուր եկավ ու հարցրեց.

— Եթե դուք հենց սկզբից քաղաքում լինեիք, Լեվի Բել...

Բայց թագավորը նրան ընդհատեց, պարզեց ձեռքն ու ասաց.

— Մի՞թե սա իմ մեռած խեղճ եղբոր հին բարեկամն է, որի մասին նա այնքան հաճախ գրում էր:

Օրենսգետն ու նա միմյանց ձեռք սեղմեցին: Օրենսգետը սիրալիր ժպտաց: Նրանք մի քանի խոսք փոխանակեցին, ապա առանձնացան ու քշիչացին: Վերջապես իրավաբանը բարձրաձայն ասաց.

— Դա հարցը կփակի: Ես ծեր չեկը կվերցնեմ ու ծեր եղբոր չեկի հետ կուղարկեմ ուր հարկն է: Այն ժամանակ կիմանան, որ ամեն ինչ կարգին է:

Թուղթ, գրիչ բերեցին, և թագավորը նստեց, գլուխը թեքեց մի կողքի, լեզուն ծամելով սկսեց մրոտել ինչ-որ բան: Ապա գրիչը տվեցին դրսին: Դուքսը սկզբից կարծես իրեն լավ չեր զգում, բայց վերցրեց գրիչն ու գրեց: Օրենսգետը շուր եկավ դեպի նոր եկած ջենտլմենը և ասաց.

— Այս իին նամակները Հարվի Վիլբրի գրածներն են, և ահա այս երկու մարդկանց ձեռագրերը: Ամեն մարդ կարող է ասել, որ Վիլբրի ստացված նամակները դրանք չեն գրել (թագավորը և դուքսը մերկացվածների հիմար տեսք ստացան, երբ հասկացան, որ օրենսգետը խարել է իրենց): Այս է ծեր ջենտլմենի ձեռագիրն է, և շատ հեշտությամբ կարելի է ասել, որ իին նամակները դրանք չեն գրել: Փաստն այն է, որ այս ճանկոտոցը չի էլ կարելի ձեռագիր համարել: Ահա մի քանի նամակ...

Նորեկ ջենտլմենն ասաց.

— Խնդրում եմ, թույլ տվեր բացատրել: Ոչ ոք չի կարող կարդալ իմ ձեռագիրը, բացի եղբորիցս, և նա արտագրում է իմ գրածը: Ձեր մոտի եղածը նրա ձեռագիրն է, ոչ թե իմը:

Բայց նա ձախ ձեռքով չի կարող գրել, — ասաց ծերունի ջենտլմենը, — եթե կարողանար ազ ձեռքն օգտագործել, ապա կտեսնեիք, որ նա է գրել և՛ իր, և՛ իմ նամակները: Մեր երկուսի նամակներին է նայեցեք, ինդրում եմ, և կտեսնեք, որ նույն ձեռագրով են գրված:

Օրենսգետը նայեց և ասաց.

— Կարծում եմ այդպես է: Եթե նույնիսկ այդպես չէ, ապա նմանությունը շատ մեծ է, առաջ դա չեի նկատել: Լավ, լավ, լավ: Ես մտածում էի, թե մենք խնդիրը լուծելու ճիշտ ճանապարհի վրա ենք գտնվում, բայց դա մասամբ թերի է: Համենայն դեպս մի քան

ապացուցված է. այս երկու ձեռագրերից ոչ մեկը այս Վիլսերի ձեռագրի նման չէ, — ասաց նա, զիստվ ցույց տալով թագավորին ու դրսին:

Այժմ ի՞նչ եք կարծում: Այդ ջորու գլուխ ծեր հիմարը տեղի կտա՞ր: Իհարկե, նա չեր հանձնվի: Նա ասաց, որ դա լավ փորձ չէ, որ իր եղբայր Վիլյամն աշխարհում առաջին կատակասերն է և հենց որ գրիշը թղթի վրա է դնում, կատակն սկսում է: Եվ նա տաքացավ ու այնքան փշեց, մինչև ինքն էլ հավատաց իր ասածներին: Բայց շուտով նորեկ շենտլմենն ընդհատեց նրան՝ ասելով.

— Ես մի բան իիշեցի: Այստեղ կա մեկը, որ օգնել է իմ խեղճ եղբ... օգնել է հանգուցյալ Պիտեր Վիլսի մարմինը կարգի բերելու՝ թաղման համար.

— Այո, — ասաց մեկը, — ես և Էք Թըրները: Եկուսս էլ այստեղ էինք:

Ծերունին դարձավ դեպի թագավորն ու ասաց.

— Գուցե այս շենտլմենն ասի, թե ինչ վիտվածք կար նրա կրծքին:

Թագավորն այստեղ ստիպված էր շատ արագ թափ տալ իրեն, մի բան հնարել, այլապես փուլ կգար, ինչպես գետափը, որի տակը գետակը փորել է: Այնպէս անսպասելի էր այս հարցը: Դա այնպիսի բան էր, որ ամեն մեկին կճզմեր իր ծանրության տակ: Այն էլ առանց նախազգուշացման. ի՞նչ իմանար, թե ինչ վիտվածք կար: Նա մի փոքր գունատվեց. եկը չեր գտնում: Բոլորը լուռ էին: Ամեն ոք, մի փոքր առաջ թերքած, նայում էր նրան: Ինձ թվաց, թե այժմ նա դեն կցցի խարերայության դիմակը. այն այլևս պետք չէր: Բայց դեն զցե՞ց: Հազիվ թե նրա մտքով այդպիսի բան անցներ: Նա այդպես չարեց: Երևի ուզում էր այնքան շարունակել, մինչև հոգնեցներ մարդկանց, շատերը թողնեին գնային, և ինքն ու դուքսը հնարավորություն ունենային փախչել: Նա նստած՝ լուռ լսեց, ապա ժպտալով ասաց.

— Հը՞մ, բավականին դժվար հարց է, չէ՞: Այո, սրբ, կարող եմ ասել, թե ինչ էր վիտվածք կրծքի վրա: Մի փոքրիկ, բարակ սլաք: Ահա թե ինչ, և եթե լավ չնայեք, չեք կարող տեսնել: Հիմա ի՞նչ կասեր, հը՞:

Ես երբեք չի տեսել, որ ծերունին այդքան անպատկառ լինի:

Նորեկ ծեր շենտլմենը ոգևորված դարձավ Էք Թըրների և նրա ընկերոց կողմը: Ծերունու աչքերը փայլեցին. կարծես այս անզամ թագավորին բռնեց: Նա ասաց.

— Ահա, դուք լսեցի՞ք, թե ինչ ասաց նա, չէ՞: Պիտեր Վիլսի կրծքին այդպիսի նշան եղե՞լ է:

Երկուսս էլ ասացին, որ այդպիսի նշան չեն տեսել:

— Լավ, — ասաց ծեր շենտլմենը, — ծեր տեսածը նրա կրծքի վրա աղոտ, փոքրիկ Պ, Բ. և Վ է եղել՝ անվան սկզբնատառեր, որ նա վիտել էր երիտասարդ ժամանակ: Տառերն իրարից բաժանվում են զծիկներով: Այսպես՝ Պ-Բ-Վ: — Եվ նա գրեց թղթի վրա: — Այժմ ասացեք, այդպիսի նշաններ տեսե՞լ եք:

Երկուսս էլ նորից ասացին.

— Ոչ, չենք տեսել: Մենք ոչ մի նշան չենք տեսել:

Ներկա գտնվողները հուզմունքից միարերան բղավեցին.

— Դրանք բոլորն էլ խարերաներ են: Դրանց պետք է խեղդել գետում, փակել վանդակում, — և բոլորը միանգամից սկսեցին կրնչալ, սկսվեց հարայ-հրոց, խառնաշփոթ աղաղակ: Բայց օրենսգետը բարձրացավ սեղանին ու բղավեց.

— Զենտլմեններ, ջենտլմեններ, լսեցեք, միայն մի խոսք, մի խոսք, եթե կրարեհաճեր: Դեռ մնում է մի միջոց. զնանք բացենք դիակը և ստուգենք:

Առաջարկությունը դուր եկավ նրանց:

— Ուռա՛, — բղավեցին բոլորը և անմիջապես ճանապարհ ընկան, բայց բժիշկն ու օրենսգետը ձայն տվին.

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք: Այս չորսին ու տղային էլ տարեք և բռնեցեք օձիքներից, որ չփախչեն:

— Կրոնենք, կրոնենք, — բոլորը բղավեցին, — և եթե նշաններ չգտնենք, ամբողջ խմբին լինչի դատաստանի կենթարկենք:

Խոստովանում եմ, ես սարսափելի վախեցա, բայց ի՞նչ արած. փախչելու հնար չկար: Նրանք բոլորիս բռնեցին և իրենց հետ քարշ տվին ուղիղ դեպի գերեզմանատուն, որը մեկնելու մղոն հետու էր, գետափին: Աղմուկն անշափ մեծ էր, և ամբողջ քաղաքը հետևում էր մեզ: Երեկոյան ժամը ինն էր:

Մինչ անցնում էինք տան մոտով, մտքումս ասացի, թե երանի՛ Մերի Զեյնին ուրիշ տեղ ուղարկած չի կանոն: Բավական էր, որ նա տեսներ, կվագեր, կզար, կփրկեր ինձ ու կմերկացներ այս խարդախներին:

Մենք գետի ճանապարհով խառնիխուրն իջանք ցած, ինչպես վայրի կատուներ: Երկինքն սկսեց մթնել, կայծակը փայլատակում էր, քամին սուրում էր տերևների միջով, և այդ բոլորը տեսարանն ավելի ահավոր էր դարձնում: Դա իմ գլխին եկած ամենասուկափ փորձանքն էր: Եվ ես մի տեսակ անզգայացել էի. ամեն ինչ կատարվում էր ոչ այնպես, ինչպես ես էի ծրագրել: Փոխանակ այնպես անելու, որ մի կողմ քաշված հաճույքով դիտեի այս ամբողջ կատակերգությունը, փոխանակ Մերի Զեյնին ապավինելու, որը վճռական պահին պետք է ինձ փրկեր ու ազատեր, այժմ հույսս դրել էի ինչ-որ վիտվածքի վրա: Իսկ եթե այդ նշանները չգտնեի՞ն...

Անտանեկի էր այդ մասին մտածելը, բայց և ուրիշ ոչ մի բան չէի կարողանում հիշել: Ավելի ու ավելի մթնեց և հարմար ժամանակ էր դուրս արձնելու, բայց Հայնսը՝ այդ հսկա, ամենի մարդը, բռնել էր իմ քազկից, իսկ այդպիսի աժդահա մարդու ձեռքից ո՞վ կարող էր ազատվել: Նա ինձ քարշ տալով տանում էր իր հետևից: Նա չափազանց հուզված էր, և ետ շմնալու համար ստիպված էի վագել:

Քազմությունը ներխուժեց գերեզմանատուն, ինչպես հեղեղ: Երբ հասանք գերեզմանին, պարզվեց, որ բահերը հարյուր անգամ ավելի շատ են, քան պետք էր հողը փորելու համար, բայց ոչ որի մտքով չի անցել, որ լապտեր բերի: Սակայն նրանք մի կերպ սկսեցին փորել կայծակի առաջացրած լույսի տակ և մեկին ուղարկեցին ամենամոտակա տունը, կես մղոն հետու, լապտեր բերելու:

Նրանք մոլեգնաբար փորեցին ու փորեցին: Սարսափելի մութ էր: Անձրև տեղաց: Զամին սուրալով անցնում էր մեր վրայով, կայծակն ավելի ու ավելի էր ուժեղանում, ճայթում էր որոտը: Բայց մարդիկ այնպես տարված էին գործով, որ բոլորովին

ուշադրություն չդարձրին: Երբ կայծակը փայլատակում էր, մի ակնթարթում այդ բազմամարդ ամբոխի մեջ կարելի էր տեսնել ամեն ինչ, ամեն դեմք, գերեզմանից բարձրացող հողով լիքը բահեր: Հաջորդ փայլանին խավարն ամեն ինչ թաքցնում էր մարդկանց տեսողությունից, և ոչինչ չէր երևում:

Վերջապես դուրս բերին դագաղն ու սկսեցին քանդել կափարիչի պտուտակները: Մարդիկ խոնվել էին, ամեն կերպ աշխատելով առաջ ընկնել և տեսնել այն, ինչ տեղի էր ունենում: Սարսափելի տեսարան էր, մի կողմից մթությունը, մյուս կողմից մարդկանց իրարանցումը: Հայնան, ինձ սարսափելի ցավ պատճառելով, քաշում էր իր ետևից: Նա այնպես հուզված էր և այնպես էր հևում, որ կարծեք թե մոռացել էր իր գոյությունը: Հանկարծ շրջապատը ողողվեց կայծակի սպիտակ, շացուցիչ լույսով, և մեկը գոռաց:

— Աստված վկա, ահա ուկով պարկը՝ նրա կրծքին դրած:

Հայնաք մի կրինչ արձակեց, ինչպես բոլորը, բաց թողեց բազուկս և առաջ նետվեց պարկը տեսնելու, իսկ ես դուրս թռա ամբոխի միջից ու մթության մեջ վազեցի դեպի ճանապարհը: Թե ինչպես, ինքս էլ չեմ հիշում:

Ճանապարհին ինձանից բացի ոչ որ չկար: Ես վազում էի ամբողջ ուժովս: Մեն-մենակ էի, եթե նկատի չունենանք թանձր խավարը, կայծակի փայլատակումը, անձրևի իշշոցը, քամու սուլոցը, որոտի ճայթյունը: Կարող եք վստահ լինել, որ ես լեղապատառ թռչում էի առաջ:

Երբ հասա քաղաք, այդ փոթորկալից ժամին դրսում ոչ որ չկար: Խուլ փողոց որոնելու կարիք չեղավ: Ամբողջ ուժերս հավաքելով վազեցի գիսավոր փողոցով: Երբ մոտեցա մեր տանը, աչքերս ուղղեցի այդ կողմը: Ոչ մի լոյս չկար: Տունը թաղված էր մթության մեջ: Ես ինձ զզացի հուսախար, մի տեսակ թափահով համակվեցի: Թե ինչո՞ւ չգիտեմ: Վերջապես, երբ արդեն անցնում էի տան մոտով, նկատեցի Մերի Ջեյնի պատուհանից երևացող լոյսը: Սիրու այնպես բարախեց, կարծես դուրս էր թռչում: Նոյն փայլանին տունը և ամեն ինչ մնաց իմ ետևում, մթության մեջ: Գիտեի, որ այլևս դրանք չեմ տեսնելու: Նա իմ տեսած ամենալավ, ամենաբարի հոգու տեր աղջիկն էր:

Երբ քաղաքից այնքան էի բարձրացել վեր, որ կարող էի տեսնել կողյակը, սկսեցի նավակ որոնել: Հենց որ կայծակի լոյսով նկատեցի մի նավակ, որը շղթայով կապված չէր ափին, ներս ցատկեցի և թիավարեցի: Պարզվեց, որ դա միայն պարանով էր կապած: Կողյակը բավական հեռու էր, գետի մեջտեղում, բայց ես ժամանակ չկորցրի, և երբ վերջապես հասա լաստին, այնպես էի ուժասպառ եղել, որ եթե հնարավոր լիներ, վայր կընկնեի շունչ առնելու: Բայց դրա ժամանակը չէր: Լաստը բարձրանալուն պես ձայն տվի:

— Շո՛ւտ, Ջի՛մ, դո՛ւրս արի և արձակի՛ր լաստը: Փա՛ռ աստծո, ազատվեցինք դրանցից:

Ջիմը դուրս թռավ հյուղակից ու թևերը պարզած, ընդառաջ վազեց: Ինչե՛ս ուրախացավ: Բայց երբ կայծակի լոյսի տակ մի պահ նայեցի նրան, պրտաճար եղաւ և ընկա գետը, որովհետև մոռացել էի, որ նա Լիր արքայի և ջրահեղծ արարի կերպարանը էր առել: Վախից լեղիս ճարեց: Ջիմն ինձ դուրս բերեց ջրից, ուզեց գրկել ու օրինել: Նա այնքան էր ուրախացել, որ ես վերադարձել էի, և մենք ազատվել էինք թագավորից ու դուրսից: Բայց ես ասացի.

— Հիմա չէ, Ջիմ, նախաճաշի ժամանակ, նախաճաշի ժամանակ: Այժմ արձակիր լաստը, որ լողա ներքև:

Մի երկու վայրկյան անց մենք իջնում էինք գետն ի վար: Որքա՞ն լավ էր, որ նորից ազատ էինք այս մեծ գետի վրա, մեր զիլի տերը, և մեզ նեղություն տվող չկար: Ես ուրախությունից սկսեցի ոստոստել, մի քանի անգամ վեր-վեր ցատկեցի, կրունկներս իրար զարկելիս մի ծայն լսեցի, ծանոթ ծայն: Շունչս պահեցի, ականջ դրեցի ու սպասեցի: Եվ երբ հաջորդ փայլատակումը լուսավորեց մեր դիմացի ջուրը, տեսանք, որ երկու հոգի են: Հենված թիակներին, մակույկը մղել էին առաջ: Դա թագավորն ու դուքսն էին:

Ես նվազած՝ անշարժ ընկա լաստի վրա և ինձ հազիվ զայտեցի, որ լաց չինեմ:

## Գլուխ երեսուներորդ

Երբ նրանք բարձրացան լաստի վրա, թագավորը նետվեց ինձ վրա և ցնցելով ուսերս ասաց.

— Փորձում էիր ծկել, հա՞, լակո՞ւ: Զանձրացա՞ր մեր ընկերակցությունի, հը՞:

Ես ասացի.

— Ոչ, ձերդ մեծություն, մենք չենք... Խնդրում եմ, թողե՛ք ինձ, ձերդ մեծություն:

— Ուրեմն՝ ասա՛, շո՛ւտ, ի՞նչ էր միտքդ, թե չէ հիմա աղիքներդ կթափեմ:

— Ազնիվ խոսք, ես կպատմեմ ամեն ինչ այնպես, ինչպես պատահել է, ձերդ մեծություն: Այն մարդը, որ բռնել էր ձեռքս, ինձ հետ շատ սիրավիր էր վարվում: Շարունակ ասում էր, որ ինքը ունեցել է մոտավորապես ինձ հասակակից տղա: Նա մեռել է անցյալ տարի, և այժմ ինքը ցավում է, երբ տեսնում է ինձ նման տղայի այսքան վտանգավոր դրության մեջ: Երբ մարդիկ ուսկին գտնելիս հանկարծակից եկան ու խումեցին դեպի դագաղը, նա բաց թողեց ինձ ու շշնչաց. «Դե՛, փախի՛ր, թե չէ քեզ անպայման կկախեն»: Ես կ դուրս թռա ու փախա: Ի՞նչ միտք ուներ իմ այնտեղ մնալը: Ես ոչինչ չէի կարող անել, և չէի ուզում կախվել այն ժամանակ, երբ կարող էի փախչել: Ոչ մի տեղ կանգ չառա, մինչև գտա մի մակույկ, և երբ տեղ հասա, Զիմին խնդրեցի, որ շտապի, թե չէ ինձ կրօնեն ու կկախեն: Ասացի, որ փախենում եմ, թե դուք և դուքսը այժմ կենդանի չեք: Ես դրա համար անչափ տիտր էի, նույնպես և Զիմը: Այժմ, երբ տեսա զայիս եք, շատ ուրախացա: Հարցրեք Զիմին, ճի՛շտ եմ ասում, թե՛՞ ոչ:

Զիմն իմ ասածը հաստատեց, բայց թագավորը նրան հրամայեց լոել ու ասաց.

— Օ՛, այո՛, ինչպե՞ս չէ, — և նորից սկսեց ցնցել ինձ: Ասաց, որ, իր կարծիքով, պետք է ինձ խեղիկ գետում: Բայց դուքսը ասաց.

— Հանգիստ թողեք տղային, ծե՛ր հիմար: Եթե դուք լինեիք նրա տեղը, այլ կե՛րա կվարվեիք: Երբ դուրս պրծաք, նրա մասին հարցրի՛ք: Գոնե ես այդպիսի բան չեմ հիշում:

Թագավորը բաց թողեց ինձ, հայինեց այդ քաղաքը և այնտեղի ամեն մի բնակչի: Բայց դուքսը ասաց.

— Ավելի լավ է ինքներդ ծեղ հայինեք: Դուք այս մարդն եք, որն ամենից շատ է արժանի դրան: Հենց սկզբից ոչ մի խելացի բան չարեցիք: Լավը միայն այն էր, որ երևակայական կապույտ պարի մասին խոսելիս ծեղ հանգիստ, սառը պահեցիք: Դա հոյակապ էր,

սքանչելի և դրա շնորհիվ մենք ազատվեցինք: Եթե դա չիներ, մեզ կրանտարկեին մինչև անգլիացիների կապոցներն ստացվելը, որից հետո մեզ կուղարկեին ուղիղ տուն: Այդ մասին կասկած լինել չէր կարող: Բայց ձեր հնարամտությունը նրանց տարավ գերեզմանատուն, իսկ ոսկին ավելի մեծ լավություն արեց: Որովհետև, եթե այդ գրգռված հիմարները մեզ բաց ջթողնեին ու չխուժեին ոսկու վրա, մենք այս գիշեր քնած կիխնեինք փողկապներով, որոնք ավելի դիմացկուն են, քան մեզ է պետք:

Նրանք մի պահ լոեցին. մտածում էին: Թագավորը մի տեսակ մտացրիվ ասաց.

— Հըմ, իսկ մենք կարծում էինք, թե նեզրերն են գողացել:

Այդ խոսքից վախեցած կուչ եկա:

— Այո, — ասաց դուքսը դանդաղ, հեգնաբար, — կարծում էինք:

Մոտ կես րոպէ լոելուց հետո թագավորը կմկնալով ասաց.

— Համենայն դեպս, ես այդպես էի կարծում:

Նոյն եղանակով դուքսն ասաց.

— Ընդհակառակը, ես էի այդպես կարծում:

Թագավորը մի տեսակ թթվեցրեց դեմքն ու ասաց.

— Էհ, դրանով ի՞նչ եք ուզում ասել:

Դուքսը բավական կտրուկ պատասխանեց.

— Եթե բանն այդտեղ է հասել, ապա զուցե թույլ կտաք հարցնել, թե դուք ի՞նչ էիք ուզում ասել:

— Բա՛հ, — բացականչեց թագավորը, չափազանց հեգնական եղանակով, — չգիտեմ... զուցե դուք քնած եք եղել և չեք իմացել, թե ինչ եք անում:

Դուքսը այստեղ կատաղեց.

— Բավական է հիմարություններ դուքս տաք: Ի՞նչ է, ինձ ապուշի տե՛ղ եք դրել: Չգիտե՞ք, որ ինձ հայտնի է, թե ով էր դրամը թաքցրել դագաղի մեջ:

— Այո, սրբ, զիտեմ, որ զիտեք, որովհետև ինքներդ եք արել:

— Սո՛ւս է, — դուքսը հարձակվեց թագավորի վրա:

Թագավորը գոռաց.

— Չեռքերդ հեռո՛ւ, թողե՛ք իմ կոկորդը: Խոսք ետ եմ վերցնում:

Դուքսն ասաց.

— Լավ, ամենից առաջ պետք է խոստվանեք, որ դո՛ք եք այդ դրամը դագաղի մեջ թաքցրել, նպատակ ունենալով այս մեկ-երկու օրը բաժանվել ինձանից, վերադառնալ, փորել, հանել այնտեղից և մենակ յուրացնել:

— Մի րոպէ սպասեք, դուքս, միայն մի հարց: Ինձ ազնվորեն պատասխանեցեք, թե դրամը դուք չե՞ք դրել այնտեղ: Ես էլ կհավատամ ձեզ և ետ կվերցնեմ իմ բոլոր ասածները:

— Ծե՛ր սրիկա, ես չեմ դրել և դուք զիտեք, որ չեմ դրել: Բավական չէ:

— Լավ, հավատում եմ ձեզ: Բայց մի հարցի էլ պատասխանեցեք, միայն թե չզայրանաք: Ձեր մտքո՞ւմ ել չեք մտածել ճանկել դրամը և թաքցնել:

Դուքսը մի պահ լրեց, ապա պատասխանեց.

— Լավ, ի՞նչ նշանակություն ունի, թե մտածել եմ, համենայն դեպս, չեմ թաքցրել: Բայց դուք ոչ միայն մտածել եք, այլև ի կատար եք ածել:

— Թող երբեք հանգիստ մահվան չարժանանամ, դուքս, եթե ես եմ արել, ազնիվ խոսք: Ձեմ ասում, թե չէի ուզում անել, քանի որ մտքովս անցել է, բայց դուք կամ մեկ ուրիշը այդ գործում ինձ կանխել եք:

— Սո՞ւս է: Դո՞ւք եք արել և պետք է խոստովանեք, որ արել եք, թե չե...

Թագավորն սկսեց շնչահեղական լինել: Ապա հառաջելով ասաց.

— Բավակա՞ն է... Խոստովանում եմ:

Ես շատ ուրախացա, երբ լսեցի այդ: Այժմ ինձ շատ ավելի թերևացած էի զգում, քան առաջ: Դուքսը հեռացրեց իր ձեռքերը նրա կոկորդից և ասաց.

— Եթե մեկ էլ ուրանաք այդ քանը, ձեզ գետում կխեղին: Ձեր այդ արարքից հետո այդտեղ նատելն ու երեխայի նման հեկեկան է քավական է: Դա ձեզ շատ է հարմար: Իսկ և իսկ զայլամ. ուզում է ամեն ինչ կուլ տալ: Իսկ ես միշտ վստահել եմ, իբրև հարազատ հորս: Պետք է ամաչեիք, երբ այնտեղ կանգնած լսում էիք, թե ինչպես են հանցանքը քարդում ինեղ նեզրերի վրա: Դուք ոչ մի արդարացնող խոսք չասացիք: Ինքս իմ աշքում ծիծաղելի եմ դառնում, երբ մտածում եմ, որ ես այնքան մեղմ գտնվեցի, որ հավատացի այդ հիմարությանը: Անհծվե՛ք դուք: Այժմ հասկանում եմ, թե ինչու այն երեկո դուք ուզում էիք դրամի պակասը լրացնել. ուզում էիք ինձանից կորզել այն դրամը, որ ձեռք էի բերել «ընձուղտից» և բոլորը մեկից հափշտակել:

Թագավորը երկշոտությամբ և դեռ քիթը վեր քաշելով ասաց.

— Դուքս, չէ՞ որ պակասը լրացնելու մասին դուք առաջարկեցիք, ոչ թե ես:

— Պապանձվե՛ք, այլևս չեմ ուզում ձեզ լսել, — ասաց դուքսը, — այժմ տեսնում եք, թե ինչ շահեցիք դրանից. նրանք իրենց ամբողջ դրամը ետ ստացան, ինչպես և մեր ամբողջ ունեցածը, քացի մեկ-երկու շեկելից:<sup>122</sup> Գնացե՛ք քնելու. այլևս չեմ ուզում, որ պակասը լրացնելուց խոսեք:

Թագավորը սողոսկեց հյուղակը և միխթարվելու համար վերցրեց խմիչքի շիշը: Դուքսն էլ շուտով իր շիշը վերցրեց և մոտ կես ժամ հետո նրանք մտերմացան այնպես, ինչպես դա հասուն է գողերին: Եվ որքան շատ խմեցին, այնքան ավելի սիրալիր դարձան իրաք նկատմամբ և իրաք գրկած խոնմփացրին: Նրանք երկուսն էլ լիովին հարբել էին, բայց, ինչպես նկատեցի, թագավորն այնքան չէր հարբել, որ մոռանար հիշեցնել, թե ինքն է թաքցրել դրամը: Այդ քանը հանգստացնում էր ինձ, և ես գոհ էի: Իհարկե, երբ նրանք խոնմփացնում էին, Զիմն ու ես երկար խոսեցինք, և ես ամեն ինչ պատմեցի նրան:

## Գլուխ երեսունմեկերորդ

Այնուհետև օրերով ոչ մի քաղաքում կանգ չառանք և անընդհատ շարժվեցինք գետն ի վար: Այժմ տաք հարավում էինք և տնից շատ հեռու: Հանդիպում էինք ծառերի, որոնց վրա ամել էր խսպանական մամուռը և ճյուղերից կախվել: Այդ մամուռինցերը նման էին երկար, ալեխառն մորուքների: Առաջին անգամն էր, որ տեսնում էի ծառի վրա աճած մամուռ: Դա անտարին տալիս էր վեհաշուր, տիտուր տեսք: Այժմ այս խարդախները մտածում էին, թե վտանգից հեռու են, և նորից սկսեցին իրենց գործը զյուղերում: Ամենից առաջ մի դասախոսություն կարդացին ժումկալության մասին, բայց դրանից այնքան քիչ բան ստացվեց, որ երկուսով նույնիսկ մի անգամ լավ խմել չէին կարող: Մի այլ զյուղում բաց արեցին պարի դպրոց, բայց նրանք ավելի լավ զիտեին պարել, քան կենգուրուն: Առաջին իսկ փորձից հետո հասարակությունը ներս խուժեց ու նրանց զյուղից դուրս վռնեց: Մի այլ անգամ փորձեցին հուետորական արվեստ ուսուցել, բայց նոր էին սկսել գոռզոռալ, երբ ունկնդիրները վեր կացան, մի լավ հայոցիցին ու պահանջեցին հեռանալ զյուղից: Թագավորն ու դուրսն սկսեցին գրադպել առաքելությամբ, մեսմերականությամբ, քժշկությամբ, բախտագուշակությամբ: Բայց բախտը նրանց կարծես չէր ժպտում: Ի վերջո նրանք, գրեթե լիովին ձախորդության մատնված, վայր ընկան լաստի վրա, որը լողալով իջնում էր ցած, և մտածում էին, մտածում: Ոչ մի բառ չէին արտասանում. մոայլ էին, հուսահատ:

Վերջապես նրանք դուրս եկան այդ մունց վիճակից: Հյուղակում պառկած, զյուիս գլխի տված, ցածրածայն ու գաղտնի, ժամերով մտերմաբար խորհրդակցում էին: Զիմն ու ես անհանգստացած էինք դրանց այդ խորհրդակցությունների պատճառով: Այդ բանը մեզ դուր չէր գալիս: Մեզ թվում էր, թե նրանք մտմտում են այնպիսի մի մերենայություն, որը մինչ այդ եղածներից ամենասատանայականն է: Մենք երկար-բարակ ծանրութերև արեցինք այդ հարցը և ի վերջո եկանք այն եզրակացության, որ նրանք ծրագրել են մեկի տունը կամ խանութը կողոպտել, կամ պատրաստվում են կենդ դրամ կտրել կամ նման մի բան: Շատ էինք ահարենկված և որոշեցինք այլևս նման գործերի շմանակցել, իսկ եթե որևէ նվազագույն առիթ ներկայանա, հաշիվներս փակել նրանց հետ, թողնել ու փախչել:

Մի անգամ, վաղ առավոտյան, մենք լաստը թաքցրինք Փայրսվիլ կոչվող ինչ-որ խուզ զյուղադարձից երկու մղոն ներքիւ: Թագավորը դուրս եկավ ափ, մեզ պատվիրելով, որ այդպես թաքնված սպասենք, մինչև ինքը գնա այդ քաղաքը, իմանա, թե «Արքայական ընձուղտի» պատմությունը այնտեղ չի հասել: («Երևի ուզում ես տուն կողոպտել, — ասացի ես մտքումս, — և երբ վերջացնես կողոպտելը, կվերադառնաս այստեղ ու կզարմանաս, թե ինչ եղանք մենք՝ ես, Զիմն ու լաստը»): Նա ասաց, որ եթե մինչև կեսօր չվերադառնա, դուրսը և ես կարող ենք մտածել, որ գործը հաջող է գնում և դուրս գանք ափ ու հետևենք իրեն:

Մենք մնացինք լաստի վրա: Դուրսը զայրույթից քրտնել էր և չափազանց թթված էր երևում: Նա ամեն ինչի համար հանդիմանում էր մեզ, կարծես մենք ոչ մի բան ճիշտ չէինք կատարում: Ամեն մի չնչին բանի մեջ թերություն էր տեսնում: Ինչ-որ մի բան, անկասկած, տեղի էր ունենում: Ես շատ ուրախ էի և լավ էի զգում ինձ, երբ կեսօրին թագավորը չվերադառնավ: Կարող էր դրությունը փոխվել, և գուցե դուրս զայինք այդ վիճակից: Դուրսն ու ես գնացինք քաղաք՝ թագավորին որոնելու: Շուտով նրան գտանք մի փոքրիկ, կետոտ գինետան ետևի սենյակում հարբած վիճակում: Մի բանի դատարկաշրջիկներ զվարճության համար զայրացնում էին նրան, իսկ նա իր ամբողջ ուժով հայոցիում, սպառնում էր: Այնպես էր հարբել, որ չէր կարող ոտքի վրա կանգնել և նրանց որևէ բան

անել: Դուքսը նրան ծեր հիմար անվանեց, թագավորն էլ պակաս չթողեց: Հենց որ բավական տարացան, ես դուրս ծլկեցի և եղնիկի պես զետափնյա ճանապարհով վազեցի ներքև, քանի որ դա նրանցից ազատվելու լավ առիթ էր: Ես մտածում էի, թե երկար ժամանակ կանցնի, մինչև նրանք տեսնեն մեզ, եթե երբեւ տեսնեն: Ես շնչակտուր հասա լաստին, և ուրախ-ուրախ ձայն տվի:

— Արձակի՞ր լաստը, Զիմ. այժմ ամեն ինչ լավ է:

Բայց ոչ մի պատասխան չլսեց, ոչ ոք դուրս չեկավ հյուղակից: Զիմը կորել էր: Բարձրաձայն բղավեցի, նորից ու նորից կանչեցի, վազեցի անտառ, գողգոռացի, բայց իզուր: Ծերունի Զիմը չկար: Նստեցի ու լաց եղա. չէի կարող ինձ զատել: Երկար նստել չկարողացա: Ծուսով դուրս եկա ճանապարհ, մտածելով, թե ինչ անեմ, որ լավ լինի: Վազեցի մի տղայի մոտ, որ գնում էր ճանապարհով և հարցրի, թե չի՞ տեսել օտար նեզրի: Նկարագրեցի Զիմի հազուստներն ու արտաքինը: Տղան ասաց.

— Տեսել եմ:

— Որտե՞ղ, — հարցրի ես:

— Սայլա Փելփսի ազարակում, այստեղից երկու մղոն ներքև: Նա փախած նեզք է, բռնեցին: Չինի՞ նրան եք որոնում:

— Իսկի էլ չէ: Ես մեկ-երկու ժամ առաջ անտառում անցա նրա առջևով, և նա ասաց, որ եթե բղավեմ, աղիքներս դուրս կթափի: Ասաց, որ նստեմ ու շարժվեմ տեղից: Այդպես է արեցի: Մինչև հիմա նստած էի, վախենում էի դուրս զալ անտարից:

— Լավ, — ասաց նա, — այլևս վախենալու կարիք չկա, որովհետև նրան արդեն բռնել են: Նա փախել է հարավից, ինչ-որ տեղից:

— Լավ է, որ բռնել են:

— Այո, կարծում եմ: Նրան բռնողին երկու հարյուր դոլարի պարզ են խոստացել: Դա ոնց որ ճանապարհին գտած փող լինի:

— Այո, և ես կկարողանայի ձեռք բերել այդ պարզեց, եթե բավական մեծ լինեի. առաջին անգամ ե՞ս տեսա նրան: Ո՞վ է բռնել:

— Մի ծեր մարդ, ինչ-որ եկվոր: Նա իր իրավունքը վաճառեց քառասուն դոլարով, որովհետև գետն ի վեր է բարձրանում և սպասել չի կարող: Դե՛հ մտածիր: Ազնիվ խոսք, եթե ես լինեի, կապասեի, թեկուզ յոթ տարի:

— Ես էլ կապասեի, — ասացի ես, — բայց գուցե նրա իրավունքը դրանից ավել չարժե, եթե նա այդքան էժան է այն վաճառել: Գուցե ինչ-որ թյուրիմացություն կա այդտեղ:

— Ոչ, գործը նույնքան հարթ և ուղիղ է, ինչպես թելլ: Ես ինքս եմ տեսել հայտագիրը: Ամեն ինչ այնտեղ նկարագրված է, յուրաքանչյուր կետ, ոնց որ նկարած լինեն այդ նեզրին: Ազակած է, թե ո՞ր պլանտացիայից է, փախել է Նոր Օղեանից ներքև գտնվող ինչ-որ տեղից: Ոչ, սըր, այդ առևտրի մեջ սիսալ չկա. կարող եմ գրագ զալ: Ասա, չե՞ս կարող ինձ քիչ ծամելու ծխախոտ տալ:

Ես ծխախոտ չունեի, և նա թողեց գնաց: Վերադարձա լաստը և նստեցի հյուղակում մտածելու: Բայց չկարողացա որևէ եզրակացության զալ: Այնքան մտածեցի, մինչև գլուխս սկսեց ցավել, բայց ստեղծված դրությունից դուրս զալու ոչ մի ելք չգտա: Այս երկար

ճանապարհորդությունից, այդ սրիկաների համար այդքան բան անելուց հետո ամեն ինչ զուր անցավ, ամեն ինչ ավերվեց, խորտակվեց, որովհետև այդ մարդիկ ընդունակ էին նման խաղաղու Զիմի գլխին և նորից նրան դարձնելու ստրուկ՝ ամբողջ կյանքում, այս օտարականների մոտ, այն էլ քառասուն կեղտու դրաբի համար:

Նոյնիսկ մտածեցի, որ Զիմի համար հազար անգամ ավելի լավ կլիներ ստրուկ մնալ նախկին տեղում, իր ընտանիքի հետ, եթե պետք է մնայ ստրուկ: Նպատակահարմար գտա մի նամակ գրել Թոմ Սոյերին, խնդրելով, որ հայտնի միսս Ուոթսոնին, թե որտեղ է Զիմը: Բայց շուտով հրաժարվեցի այդ մտքից, նկատի ունենալով երկու հանգամանք: Առաջինը. միսս Ուոթսոնը կկատադրեր, անզգամության ու ապերախտության համար չէր ների Զիմին, որն այդպես լրել էր իրեն, նորից գետով կուղարկեր ներքև և կվաճառեր: Երկրորդը, եթե այդպես չաներ էլ, միևնույն էր, բոլորն էլ կարհամարհեին ապերախտ նեզրին և անընդհատ այդ բանը զգացնել կտային, և նա իրեն կզգար նախատված ու նվաստացած: Բացի այդ, մտածում էի ես, ամենուրեք կիմացվեր, որ Հեք Ֆիննը օգնել է մի նեզրի, որ նա ազատություն ձեռք բերի: Եվ եթե ես այդ քաղաքից որևէ մեկին նորից տեսնեի, ամոթից պիտի խոնարհվեի և համբուրեի նրա կոշիկները: Միշտ այդպես է լինում. մարդիկ ստոր գործեր են կատարում և ապա չեն ցանկանում պատասխան տալ: Մտածում էի, քանի որ դեռ մարդ կարող է թարցնել իր վատ վարմունքը, դա անպատվություն չէ: Նոյնը վերաբերում էր և ինձ: Որքան ուսումնավրում էի այս հարցը, այնքան խիդան շարունակում էր նեղել ինձ, և նույնքան անզգամ, չար, ստոր էի զգում ինքս ինձ: Եվ, վերջապես, հանկարծ գլխումս միտք ծագեց, թե այստեղ պարզորոշ երևում է նախախնամության ձեռքը, որն ապտակում է ինձ և զգացնել տալիս, թե իմ ջարությունը ոչ մի բռպես ազատ չէ երկնքի հսկողությունից, և նախախնամությունը տեսնում է, որ ես մի խեղճ, ծեր կնոջից գողանում եմ նրա նեզրին, այն կնոջից, որն ինձ երբեք ոչ մի վնաս չի տվել: Եվ այժմ դրանով ցույց է տալիս, որ մեկը միշտ դիտարանից նայում ու թույլ չի տալիս, որ այսպիսի ողորմելի գործերը շարունակվեն: Ես այնպես վախեցա, որ ծնկներս թուլացան: Ինչ որ է, փորձեցի հնարավորին չափ մեղմել հանցանքս, ասելով, որ ինձ ոչ մի լավ բան չեն սովորեցրել, ուրեմն՝ այնքան էլ մեղավոր չեմ: Բայց միաժամանակ ներքին մի ձայն անընդհատ կրկնում էր. «Չէ» որ կար կիրակնօրյա դպրոց, և դու կարող էիր հաճախել, իսկ երբ հաճախեիր, նրանք քեզ կսփորեցնեին, որ եթե մի մարդ նեզրի հետ վարվի այնպես, ինչպես ես էլ վարվել, հավիտյան դժոխք կգնա»:

Այդ մասին մտածելիս դողում էի: Մտրումս վճռեցի աղոթել և տեսնել, թե չե՞մ կարող չինել այնպիսին, ինչպիսին եղել էի, այլ լինել լավ տղա: Ծունկի իջա: Բայց աղոթքի բառերը դուրս չին զալիս իմ բերանից: Իսկ ինչո՞ւ: Անօգուտ էր փորձել այն թարցնել թե՛ ասածուց, թե՛ ինձանից: Ես շատ լավ գիտեի, թե ինչու այդ բառերը դուրս չեն զալիս: «Պատճառն այն էր, որ ես իրավացի չէի, արդար չէի, կեղծ դեր էի կատարում, գտնում էի, որ պետք է հեռու մնալ հանցանքից, բայց իմ հոգու խորքում կառչել էի ամենամեծ հանցանքից: Զանք էի թափում, որ բերանիցս դուրս զային այդ բառերը, թե, իբր, ուզում եմ հետևել ճշմարտությանը, վարք ու բարքով լինել մաքուր, այդ նեզրի տիրոջը գրել, թե որտեղ է Զիմը: Բայց հոգուս խորքում գիտեի, որ դա սուտ է, և աստծուն հայտնի է այդ կեղծիքը: Հնարավոր չէ սուտ բանի համար աղոթել. ես այդ զգացի:

Խճճվեցի: Զգիտեի, թե ինչ անեմ: Վերջապես գլխումս միտք ծագեց: Ինքս ինձ ասացի. կգրեմ նամակը և ապա կտեսնեմ, թե կարո՞ղ եմ աղոթել: Այդ որոշման արդյունքն

ապշեցուցիչ էր. իսկույն ինձ այնպես թերև զգացի, փետուրից ավելի թերև, և ամեն ինչ դարձավ պարզ: Վերցրի թուղթը ու մատիտ, ուրախ ու հուզված նստեցի և գրեցի.

«Միսս Ուոլքսոն, ձեր փախած նեզը Զիմն այստեղ է, Փայքսվիլից երկու մղոն ներքև»: Նա միստր Ֆելփսի տանն է, և միստր Ֆելփսը նրան կվերադարձնի ձեզ, եթե նրան ուղարկեք ձեր խոստացած գումարը:

### Հեք Ֆինն»:

Ես մեկից ինձ լավ զգացի և հանցանքից ամբողջովին մաքրված: Կյանքումս առաջին անգման էր, որ ինձ այդպես թերևացած էի զգում: Գիտեի, որ այժմ կարող եմ աղոթել: Բայց անմիջապես չարեցի այդ բանը, թուղթը դրի առջևս և նստած՝ երկար մտածեցի: Մտածում էի, թե որքան լավ էր, որ այս բոլորն այսպես եղավ, և որքան մոտ էի կորչելուն ու դժոխք գնապուն: Այդպես շարունակեցի մտածել: Մտածում էի գետով կատարած մեր ամբողջ ճանապարհորդության մասին: Զիմը ոչ մի վայրկյան աչքիս առջևսից չեր հեռանում: Հիշում էի, թե ինչպես միասին սահում էինք գետի վրայով՝ երթեմն ցերեկը, երթեմն զիշերը, երթեմն լուսնի շողերի տակ, երթեմն փոթորկի մեջ, և ամբողջ ժամանակ խոսում էինք, երգում, ծիծառում: Ես երբեք չեի կարողանում հիշել այնպիսի մի պահ, որն ինձ տրամադրեր նրա դեմ: Ընդհակառակը: Ես նրան տեսնում էի իմ փոխարեն պահակ կանգնած, երբ իր հերթն անցած էր լինում: Նա չեր արթնացնում ինձ, որպեսզի ավելի երկար քննեմ: Հիշեցի նրա ուրախությունը, երբ ես, մշուշից դուրս եկած, հասա մեր լաստը. որքան ուրախացավ, երբ այն տոհմական ընդհարումից հետո ողջ-առողջ վերադարձա նրա մոտ՝ մորուտը: Հիշեցի նման բազմաթիվ պահեր: Նա ինձ միշտ «քաղցրիկս» էր կանցում, փաղաքում ինձ, ինձ համար անում այն ամենը, ինչ մտքով անցներ: Որքան բարի էր նա: Վերջապես հիշեցի այն օրը, երբ ես ազատեցի նրան, ասելով մարդկանց, թե լաստի վրա ծաղկով հիվանդացած մարդ կա, և որքան նա երախտապարտ զգաց իրեն և ասաց, որ աշխարհում ես իր ամենալավ բարեկամն եմ, իսկ այժմ միակ բարեկամը: Այս, մտածմունքների մեջ նայեցի շուրջս ու կողքիս տեսա այդ թուղթը:

Ես վերցրի այն ու պահեցի բոխս մեջ: Դողում էի, որովհետու պետք է վերջնականորեն ընտրեի երկու պայմաններից մեկը: Մի բոպե շունչս պահած մտորում էի, ապա ինքս ինձ ասացի:

— Լավ, դժոխք կգնամ, — պատուեցի նամակը:

Սարսափելի մտքեր, սարսափելի բառեր: Բայց այդ բառերն արդեն արտասանվել էին, և ես թողեցի, որ ասված էլ մնան: Այլևս չմտածեցի ինքս ինձ բարեփոխելու մասին: Այդ ամբողջ հարցը դուրս նետեցի իմ գլխից: Եվ ասացի, որ նորից կմեղանչեմ. դա եր իմ ճակատագիրը, բանի որ ինձ ոչ մի լավ բան չին ստվորեցրել: Ամենից առաջ կգնամ և, առանց ջանք ինայելու, Զիմին կգողանամ, կազատեմ ստրկությունից: Եթե ավելի վատ բան մտածեմ, այն էլ կանեմ, որովհետու ինձ համար միևնույն է կործանվելու եմ, ուրեմն և կարող եմ ամեն տեսակի խոզության դիմել:

Նստեցի մտածելու, թե ինչպես հասնեմ նպատակիս: Շատ միջոցներ հիշեցի և վերջապես կանգ առա դրանցից մեևի վրա, որն ինձ թվաց ամենից ավելի հարմար: Ես լավ աչքի անցկացրի փոքր-ինչ ներքեւում գտնվող անտառածածկ կղզու դիրքը, և հենց որ բավական մթնեց, լաստով ճանապարհ ընկա դեպի այդ կղզին, լաստը թաքցրի այնտեղ ու պառկեցի քնելու: Ամբողջ զիշերը քնեցի: Լույսը չբացված վեր կացա, նախաճաշեցի, հազարանություն նոր գնած հագուստներս, իին շորերս և մյուս իրերս հավաքեցի, մի կապոց

դարձրի, նավակ նատեցի և ուղևորվեցի դեպի ափը: Դուրս եկա այնպիսի մի տեղ, որը, իմ կարծիքով, Ֆելիփի ազարակից ներքև պիտի լիներ: Կապոց թաքցրի անտառում, նավակը լցրի ջրով, քարեր գցեցի մեջը և գետակի ափին կառուցված մի սղոցարանից քառորդ մղոն ներքևում սուզեցի ջրի տակ, այն հաշվով, որ ուզած ժամանակ կարողանամ հեշտությամբ գտնել ու դուրս բերել:

Ճանապարհով քարձրացա, և երբ անցա սղոցարանի մոտով, ճակատին նկատեցի «Ֆելիփի սղոցարան» ցուցանակը: Երբ հասա ազարակատներին, երկու-երեք հարյուր քայլ այդտեղից հեռու, նայեցի շուրջ: Թեև արդեն կատարյալ լույս էր, բայց ոչ ոքի չտեսա: Այդ մասին չէի էլ մտածում, որովհետև առայժմ ոչ ոքի չէի ուզում տեսնել: Ուզում էի միայն ծանոթանալ վայրին: Իմ հաշվով պետք է ազարակ գայի ոչ թե գետի կողմից, այլ գյուղաքաղաքից: Ուստի մի հայացք գցեցի շուրջ և շարունակեցի ճանապարհ ուղիղ դեպի քաղաք: Երբ տեղ հասա, մեծ զարմանքով տեսա, որ ինձ հանդիպած առաջին մարդը դուրսն է: Նա պատին փակցնում էր «Արքայական ընձուղու» աֆիշը, միայն երեք ներկայացում, ինչպես որ զրել էին առաջին անգամ: Այդ խարեթաները դեռ երես ունեին նման բաներ անելու: Ես ժամանակ չունեցա խույս տալու և ուղղակի կանգնեցի նրա առջև: Նա, կարծես զարմացած, նայեց ինձ ու ասաց. — Ohn': Որտեղից եկար: — Ապա մի տեսակ ուրախացած հարցրեց, — որտե՞՞ն է լաստը, լավ տեղ թաքցրե՞լ ես:

— Հենց ինքս էի ուզում այդ մասին հարցնել ձերդ պայծառակայլությանը:

Այդ լսելիս տրամադրությունը մասամբ ընկավ.

— Ի՞նչ նպատակով ես ինձ հարցնում, — ասաց նա:

— Դե՛հ, — ասացի ես, — երբ երեկ տեսա թագավորին այն գինետանը, ինքս ինձ ասացի, թ հնարավոր չէ նրան այդ վիճակում տուն տանել. Ժամեր են պետք, մինչև զգաստանա: Դուրս եկա մի փորք շրջելու քաղաքում և սպասելու: Մի մարդ մոտեցավ ինձ ու առաջարկեց տասը ցենս, որ օգնեմ իրեն, նավակը միասին տանենք գետի մյուս կողմը և այնտեղից բերենք մի ոչխար: Ես էլ գնացի: Բայց երբ ոչխարը քաշում էինք նավակի մեջ, մարդը պարանի ծայրը ինձ տվեց ու ինքը գնաց ետևից հրելու: Ոչխարն ինձնից ուժեղ էր. ձեռքից պոկվեց ու փախավ. վազեցինք ետևից. մեզ մոտ շուն չկար, և մենք ստիպված էինք հետապնդել այնքան ժամանակ, մինչև նա ուժասպառ կանգ առավ: Երբ բռնեցինք, արդեն մթնել էր: Ոչխարը բերեցինք քաղաք, և ես գնացի դեպի լաստը: Երբ տեղ հասանք, տեսա, որ լաստը չկա: Ինքս ինձ ասացի. «Այս մարդիկ նեղության մեջ են ընկել և ստիպված են եղել փախչել, իրենց հետ տանելով նեզրին: Աշխարհում իմ ունեցած միակ նեզրը դա էր, իսկ ես այժմ ընկել եմ օտար երկիր և ոչ մի սեփականություն, ոչինչ չունեմ, ոչ էլ ապրելու միջոց»: Նստեցի ու սկսեցի լաց լինել: Գիշերը քնեցի անտառում: Բայց ի՞նչ եղավ լաստը... Զիմը... խե՛նճ Զիմ...»

— Անիծվեմ, եթե գիտեմ, թե ինչ եղավ լաստը: Այդ ծեր հիմարը ինչ-որ բան էր վաճառել և քառասուն դոլար էր ձեռք բերել: Երբ մենք գտանք նրան գինետանը, թափառաշրջիկները բախտախարով նրանից կորզել էին ամբողջ դրամը, բացի այն գումարից, որ նա վճարել էր խմիչքի դիմաց: Եվ ուշ երեկոյան, երբ նրան տարա տուն, պարզվեց, որ լաստը չկա: Մենք ասացինք «Այդ փոքրիկ սրիկան գողացել է մեր լաստը և մեզ լքելով փախել»:

— Բայց մի՛թե ես կլրեի իմ նեզրին, ամբողջ աշխարհում իմ ունեցած միակ նեզրին, միակ սեփականությունը:

— Մենք այդ մասին երբեք չենք մտածել: Փաստն այն է, որ մենք վարժվել ենք նրան մեր նեգրը համարել: Այո, մերն էինք համարում: Աստծուն է հայտնի, թե որքան նեղություն կրեցինք նրա համար: Երբ տեսանք, որ լաստը չկա և մենք է կոտր ենք ընկել, մեզ ոչինչ չէր մնում, բացի մեկ անգամ է «Արքայական ընծուղտ» փորձելուց: Իսկ ես առավոտից ժրաշան աշխատում եմ և չորացել եմ, ինչպես վառողամանը: Ո՞ւր է տասը ցենտը: Տուր տեսնեմ:

Ինձ մոտ դրամ շատ կար: Տասը ցենտ տվեցի, բայց խնդրեցի, որ ուտելու բան առնի և մի քիչ է ինձ տա, քանի որ իմ ունեցած ամբողջ դրամն այդ էր, և ես է երեկվանից ոչինչ չեմ կերել: Նա ոչինչ չասաց: Դարձավ իմ կողմն ու ասաց.

— Ի՞նչ ես կարծում, այդ նեգրը մեզ չի՝ մատնի: Մենք նրան կմաշկենք, եթե նա այդպիսի բան անի:

— Ինչպես նա կարող է այդպիսի բան անել: Չէ՞ որ նա փախել է:

— Ոչ, այդ ծերուկ հիմարը վաճառել է նրան, ինձ ստացածից ոչինչ չի տվել և դրամն է բամուն է տվել:

— Վաճառե՞լ է, — ասացի ես և սկսեցի լաց լինել, — բայց չէ՞ որ նա իմ նեգրն էր, և դրամն էլ իմը... Որտե՞ղ է նա: Ես իմ նեգրին եմ ուզում:

— Լավ, այլևս դու քո նեգրին տեր չես դառնա, ամեն ինչ վերջացել է, այնպես որ լացուկոծիդիդ վերջ տուր: Ինձ նայիր, կարծում ես, թե կհամարձակվե՞ս մեզ մատնել: Անծծվեմ, եթե քեզ հավատում: Իսկ եթե մեզ մատնես...

Նա կանգ առավ: Ես երբեք չեի տեսել, որ դուքսն այդպես ահօնի հայացքով նայեր: Ես շարունակեցի թնգթանգալ և ասացի.

— Ես ոչ որի մատնել չեմ ուզում, ոչ էլ ժամանակ ունեմ մատնելու. Ես պետք է գնամ իմ նեգրին գտնեմ:

Երևում էր, որ ասածս դուր չեկավ, որովհետև նա կանգ առավ, մտածեց ու կնճռոտեց ճակատը: Աֆիշները թրթռում էին նրա թևերին: Վերջապես ասաց.

— Ես քեզ մի բան ասեմ: Մենք այստեղ մնալու ենք երեք օր: Եթե խոստանաս, որ չես մատնի մեզ և չես թողնի, որ քո նեգրը մատնի մեզ, ես կասեմ, թե որտեղ գտնես նրան:

Ես խոստացա շմատնել, և նա ասաց.

— Մի Փերմեր, որի անունն է Սայլաս Ֆ... — և նա կանգ առավ:

Ինչպես տեսնում եք, նա ճշմարտությունն ասաց, բայց երբ այդ ձևով կանգ առավ ու նորից մտածմունքի մեջ ընկավ, ենթադրեցի, թե զոշաց: Եվ, իսկապես, միտքը փոխեց: Նա ինձ չէր վստահում և ուզում էր, որ այդ երեք օրն այդտեղ չինեի: Շուտով թե.

— Նրան գնող մարդու անունն Աբրամ Ֆոստեր է, Աբրամ Զ. Ֆոստեր, և նա ապրում է այստեղից քառասուն մղոն հեռու գյուղական մի շրջանում, Լաֆայետ տանող ճանապարհի վրա:

— Լավ, — ասացի, — երեք օրում քայելով կհասնեմ, հենց այսօր կեսօրից հետո ճանապարհ կընկնեմ:

— Ոչ, մի՛ ուշացնի, հենց հիմա գնա, ժամանակ մի՛ կորցնի, ոչ էլ ճամփին սրա-նրա հետ շաղակրատիր: Լեզուդ քեզ քաշիր ու գնա, այդ դեպքում մեզանից քեզ ոչ մի վնաս չի հասնի, լսո՞ւմ ես:

Հենց իմ ուզածն է այդ էր, հենց դրա համար էի այդ դերը խաղում: Ես ուզում էի ազատ լինել, որպեսզի իմ ծրագրերին հետևեի:

— Դե՛ գնա, — ասաց նա, — կարող ես միստր Ֆոստերին ասել, ինչ ուզում ես: Գուցե կարողանաս համոզել, որ Զիմը քո նեզըն է: Որոշ հիմարներ փաստաթուղթ չեն պահանջում: Համենայն դեպս հարավում, ինչպես լսել եմ, այդպիսի մարդիկ կան: Եվ երբ դու նրան ասես, որ կեղծ են հայտարարությունն ու խոստացած պարզել, գուցե նա հավատա քեզ, մանավանդ երբ բացատրես, թե ինչ նպատակով են դրանք պատրաստվել: Այժմ ճանապարհ ընկիր և կարող ես նրան ասել, ինչ ցանկանում ես: Միայն թե լսիր. ճանապարհին լեզուդ քեզ պահիր:

Ես բաժանվեցի նրանից, ուղղություն վերցնելով դեպի այդ շրջանը: Ետ չէի նայում, չնայած զգում էի, որ նա հետևում է ինձ: Բայց չփառեի, որ կարող եմ նրան շատ շուտ հոգնեցնել: Առանց կանգ առնելու գնացի մի ամբողջ մղոն: Ապա անտառի միջով ետ դարձա դեպի Ֆելիսի ազարակը: Մտադիր էի իսկույն գործի անցնել, առանց դեսուդեն ընկնելու: Ուզում էի, որ Զիմը փակեր իմ բերանը, մինչև այս խարդախները հեռանային: Այլս դրանց հետ գործ ունենալու ցանկություն չունեի: Արդեն կշտացել էի և այժմ ուզում էի գլուխս ազատել դրանցից:

## Գլուխ երեսուներկուերորդ

Երբ հասա այդ կալվածքը, ամենուրեք խաղաղ էր, ինչպես կիրակի օրերը, շոգ ու արևոտ: Աշխատող մարդիկ գնացել էին դաշտ: Օղում նվազուն բզեզներն ու ճանճերը, և դա առաջացնում էր ամայության ու տիկության զգացում: Թվում էր, թե ամեն ինչ մեռած է: Իսկ եթե գեփյուղը մեղմ փշում էր, և տերևները դողդողում էին, մարդու համակում էր սուլալի մի զգացում. թվում էր, թե ոզիներն են շնչում, հոգիներն այն մարդկանց, ովքեր մեռել էին շատ տարիներ առաջ: Միշտ մտածում ես, թե քո մասին են խոսում: Ընդհանրապես դա մարդկանց մեջ մեռած լինելու ցանկություն է առաջացնում, որով և ամեն ինչ վերջանում է:

Ֆելիսի ազարակն այն փոքրիկ, աննշան պլանտացիաներից էր, որոնք բոլորն էլ նման են իրար: Երկու ակրանոց<sup>[23]</sup> բակը շրջափակված էր ձողերով: Ցանկապատն անցնելու համար սանդուղք էին պատրաստել փայտի կոճղերից. դրանք սղոցել էին տարբեր բարձրությամբ և շարել իրար կողքի այնպես, որ կարծես տարբեր երկարության տակառներ լինեին: Կանայք այդ սանդուղքն օգտագործում էին նաև ձի հեծնելիս: Ընդհարձակ բակում տեղ-տեղ երևում էին կծղած խոտեր, բայց մեծ մասամբ հողը մերկ էր ու հարթ, նման իին գիշարկի, որի մազմզուկը մաշվել թափվել է: Բակում երևում էր կրկնակի կոճղերից կառուցված մի մեծ տուն, որտեղ ապրում էին սպիտակամորթները: Գերանները հղկված էին, և արանքները լցված կավով կամ կրով: Երևում էր, որ այս կավե շերտերը շատ վաղուց էին սպիտակեցրել: Կլոր, չտաշած գերաններից պատրաստած խոհանոց, մեծ, լայն, կողքերը բաց, բայց վերևսից ծածկված միջանցքով միանում էր տանը: Խոհանոցի ետևում կոճղերից պատրաստել էին ապիտանոց: Կար երեք փոքրիկ խրճիթ՝ նեզրերի համար: Դրանք շարված էին իրար կողի ապիտանոցից այն կողմ: Ահա մի

փոքրիկ հյուղակ, բոլորովին առանձին՝ ցանկապատին կպած, իսկ մյուս կողմի վրա՝ մի քանի տուն: Հյուղակի կողքին կար մոխիր հավաքելու տեղ, ինչպես և օճառ եփելու կաթսա: Խոհանոցի դրան մոտ կար նստարան, կողքին մի ջրաման և մի ջրդում: Արևի տակ քնել էր մի որսաշուն: Կային և այլ շներ՝ այս ու այն կողմ քնած: Անկյունում կային ստվերախիտ երեք ծառ, ցանկապատի մոտ՝ հաղարջի թփուտներ, ցանկապատից դուրս՝ մի բանջարանոց և ձմերուկի մարդ: Այնուհետև սկսվում էր բամբակի դաշտը, իսկ դաշտից այն կողմ՝ անտառը:

Ես պտտվեցի պարսպի շուրջը և մոխրակույտի վրա բարձրանալով՝ իջա բակը: Շարժվեցի դեպի խոհանոցը: Մի քանի քայլ էի անցել, երբ լսեցի ճախարակի անվի բարձրացող ու իջնող խուլ, ողբաձայն մրմունջը: Այնքան տխուր էր այդ ձայնը, որ ես ցանկացա մեռնել:

Շարունակեցի շարժվել առաջ, առանց պատկերացնելու անելիքս, հույս դնելով միայն նախախնամության վրա: Աստծո օգնությամբ հարկ եղած դեպքում մի քան կանեմ: Մինչ այդ հաճախ էի նկատել, որ նախախնամությունը միշտ է օգնել է, երբ ինքս նրան չեմ հանգարել:

Ճանապարհի կեսն անցել էի, երբ մի շուն, ապա մի ուրիշը վրա տվին: Կանգ առա ու նայեցի նրանց՝ առանց տեղից շարժվելու: Մեկ է որ հաջեցին, քառորդ րոպե չանցած ես, շրջապատված շներով, նման էի անվակենտրոնի, իսկ դրանք կարծես անվաճաղեր լինեին: Տասնինից շնից կազմված օղակը շրջապատել էր ինձ, վզերն ու քշները դուրս պրծած՝ հաշում ու կաղկանձում էին: Գալիս էին և նորերը: Պետք էր տեսնել, թե ինչպես դրանք թռչում են ցանկապատերի վրայով, վրա տալիս անկյուններից ու բոլոր կողմերից:

Մի նեզր կին, գրտնակը ձեռքին, դուրս վազեց խոհանոցից, և բղավեց. «Կորե՛ք, Վա՛զր, Սփո՛թ, հեռացե՛ք, սր՛ը»: Նա նախ մեկին և ապա մյուսին գրտնակով խփեց: Ծները կաղկանձելով հեռացան, մնացածները հետևեցին նրանց: Հաջորդ վայրկյանին նրանց կեսը ետ եկավ և շրջապատեց ինձ: Պոչները շարժելով ուզում էին ինձ հետ բարեկամանալ: Շունը երբեք վնաս չի տա մարդուն:

Կնոջ ետևից եկան մի փոքրիկ նեզր աղջիկ և երկու փոքրիկ նեզր տղա, որոնց հազին քաթանե շապիկներից բացի, ոչինչ չկար: Նրանք մոր զգեստից կախված գաղտազողի նայում էին ինձ փոքրերին հասուլ ամաչկոտությամբ: Ահա դուրս վազեց նաև քառասունինգ-հիսուն տարեկան սպիտակամորթ մի կին՝ գլխաբաց և իլիկը ձեռքին: Մորն էին հետևում փոքրիկ, սպիտակ երեխաները: Նրանք էլ վարվեցին այնպես, ինչպես փոքրիկ նեզրերը: Այդ կինն այնպես էր ծիծաղում, որ հազիվ էր կարողանում ոտքի վրա կանգնել: Նա ասաց.

— Դո՞ւ ես, վերջապես եկա՞ր, հա՞:

Առանց երկար-բարակ մտածելու վրա բերեցի.

— Այո, տիկին:

Նա ինձ գրկեց ու ամուր սեղմեց իր կրծքին, ապա բռնեց ձեռքերս, երկար-երկար ցնցեց: Աչքերը լցվեցին արցունքներով, և տաք շիթերը գլորվեցին այտերն ի վար: Նա գրկելուց ու ցնցելուց չեր հազենում և անընդհատ ասում էր.

— Դու այնքան էլ մորդ նման չես, որքան ենթադրում էի, բայց դա ի՞նչ նշանակություն ունի: Որքան ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ: Սիրելիս, սիրելիս, քիչ է մնում ուտեմ քեզ: Երեխաներ, սա ձեր մորաքրոջ որդի Թոմն է, բարևեցեք:

Բայց երեխաները կախեցին գլուխները, մատները դրեցին բերանները և թաքնելվեցին նրա ետևում: Կինը շարունակեց.

— Լիզա, շտապի՛ր, տաք նախաճաշ քեր, շո՛ւտ: Նավում նախաճաշե՞լ ես:

Ասացի, որ նախաճաշել եմ: Նա ձեռքս բռնած ինձ տարավ տուն, երեխաները հետևեցին մեզ: Տանը նա ինձ նստեցրեց մեջտեղը ճեղքված ծղոտե մի աթոռի, երկու ձեռքերս բռնած՝ ասաց.

— Հիմա կարող եմ կուշտ նայել քեզ: Աստված իմ, քանի՛ տարի եմ երազել քեզ տեսնել, և վերջապես այդ օրը հասավ: Երկու օր է, նույնիսկ ավելի, որ սպասում էինք քեզ: Ինչո՞ւ ուշացար. նավը ծանծաղո՞ւտն ընկավ, ի՞նչ է:

— Այո, տիկին, նավը...

— Մի ասա, «այս տիկին», ասա մորաքրոյր Սալի... Որտե՞ղ նավը ծանծաղուտն ընկավ:

Զգիտեի, թե ինչ ասեմ. ի՞նչ իմանայի՝ նավը գետի հոսանքո՞վ պիտի բարձրանար, թե՞ ցած իջներ: Բայց ես բնազրով հաճախ էի առաջնորդվում, և բնազրս հուշեց, որ նավը պետք է Նոր Օղեանից գետն ի վեր եկած լինի: Դա էլ ինձ շատ չօգնեց. չգիտեի այդ ճանապարհի վրա եղած ծանծաղուտների անունները: Չգում էի, որ պետք է մի ծանծաղուտ հնարեմ կամ ասեմ, թե մոռացել եմ այդ տեղի անունը, ուր նավը նստեց, կամ... հանկարծ գլխումս մի միտք ծագեց, և ես շարունակեցի.

— Հարցը ծանծաղուտ ընկնելը չէ, դա մեզ շատ չուշացրեց: Շոգենավի մի գլանի գլուխը պայթեց:

— Ողորմա՞ծ տեր, մարդ վնասվե՞ց:

— Բարեբախտություն է, որովհետև երբեմն մարդիկ էլ են վնասվում: Երկու տարի առաջ ջրօրիներին, երբ հորեղբայր Սայլասը, Նոր Օղեանից զայիս էր «Լալի Ռուր» նավով, գլանի գլուխը պայթեց, և մի մարդ դարձավ հաշմանդամ: Երևի հետազայում մեռավ: Այդ մարդը բապտիստ էր: Հորեղբայրդ՝ Սայլասը, ծանոթ էր Բատոն-Ռուժում ապրող մի ընտանիքի, որը լավ էր ճանաչում այդ մարդու ազգականներին: Այո, լավ եմ հիշում. նա մեռավ: Սկսվեց մարմնի մասերի անզգայացում, և ստիպված եղան անդամահատել: Բայց դա չփրկեց նրան: Այո, անզգայացում... ամբողջ մարմինը կապտեց, և նա մեռավ փառավոր հարության հույսով: Ասում են, սարսափելի էր նայելը: Հորեղբայրդ ամեն օր գնում էր քաղաք՝ քեզ քերելու: Այսօր էլ է գնացել, մոտ մեկ ժամ առաջ: Հիմա ուր որ է կզա: «Պետք է որ ճանապարհին հանդիպեցի՞ք: Շերունի է...»

— Ոչ, ոչ որի չհանդիպեցի, մորաքրոյր Սալի: Նավն ափին մոտեցավ լուսաբացին: Ճամպրուկս թողեցի նավամատույցում և գնացի քաղաք շրջելու: Մի փոքր էլ դաշտերում զրունեցի, որ ժամանակ անցնի, և շատ կանուխ չզամ այստեղ: Այնպես որ այլ ճանապարհով եկա այստեղ:

— Իսկ ո՞ւմ մոտ թողեցիր ճամպրուկը:

— Ոչ որի:

- Ինչպե՞ս թե, տղաս, կգողանան:
- Որտեղ թարցրել եմ, այնտեղից չեն զողանա, — ասացի ես:
- Ինչպե՞ս այդքան վաղ նավի վրա նախաճաշեցիր:
- Քավական նուրբ հարց էր, բայց ես պատասխանեցի.
- Նավապետը տեսավ ինձ մի կողմ կանգնած և ասաց, որ լավ կլինի նախքան ափ դուրս գալը մի բան ուտեմ: Ինձ տարավ նավաստիների սենյակը՝ սպաների նախաճաշին և ինձ տվեց այն ամենը, ինչ ուզում էի:
- Ես այնքան էի հուզվել, որ չէի կարողանում կարգին լսել նրա ասածները: Ամբողջ ժամանակ ուշքս ու միտքս երեխաների կողմն էր: Ուզում էի նրանց մի կողմ տանել, որոշ գաղտնիքներ կորզել, իմանալ, թե ես ով եմ: Բայց դա հնարավոր չեղավ: Միսի Ֆելիքսը շարունակեց իր հարց ու պատասխանը: Շուտով նույնիսկ դոդ անցավ մարմնովս, երբ նա ասաց.
- Ամբողջ ժամանակ այսպես խոսում ենք, բայց դու ոչինչ չասացիր քրոջս կամ մյուսների մասին: Հիմա ես կրտեմ, իսկ դու պատմիր ձերոնց մասին: Ամեն ինչ պատմիր, բոլորի մասին, ամեն ինչ ասա, ինչպե՞ս են ձերոնք, ի՞նչ են անում, ի՞նչ ասացին, որ ինձ ասես. ամեն մի մանրամասնություն, որ կարող ես մտարերել:
- Տեսա, որ բռնվեցի, այն էլ ինչպե՞ս: Մինչև այժմ նախախնամությունն իմ կողմն էր, բայց այժմ խոր թաղվեցի տիղմի մեջ: Զգացի, որ այլևս միտք չուներ շարունակել. պետք է ձեռքերս վեր բարձրացնեի: Ինքս ինձ ասացի. ահա նորից պետք է սիրտ անեմ և ասեմ ճշմարտությունը: Բերանս բաց արի, որ խոսեմ, բայց նա հանկարծ բռնեց ինձ ու քշեց մահճակալի ետևը, ասելով.
- Ահա, գալիս է: Ցածրացիր, գլուխող չերևա. այ, այդպես լավ է. չես երևում: Զայն շանես, թե եկել ես: Նրա հետ խաղ եմ խաղալու: Երեխաներ, ոչինչ չասեք:
- Տեսա, որ դժվար կացության մեջ եմ ընկել: Բայց անհանգստանալն անօգուտ էր, ոչինչ չեր մնում անելու, բացի լուր սպասելուց և որոտ ու կայծակին պատրաստ լինելուց:
- Ես հազիվ նշմարեցի ծեր ջենտլենին, երբ նա ներս մտավ: Այնուհետև մահճակալը թույլ չեր տալիս տեսնել նրան: Միսի Ֆելիքսը ընդառաջ վազեց և հարցրեց.
- Եկա՞վ:
- Ոչ, — պատասխանեց ամուսինը:
- Աստված իմ, — բացականչեց միսի Ֆելիքսը, — ի՞նչ կարող է պատահած լինել:
- Չեմ կարող պատկերացնել, — ասաց ջենտլենը, — պետք է ասեմ, որ դա սարսափելի անհանգստացնում է ինձ:
- Անհանգստացնո՞ւմ, — ասաց կինը, — ես պատրաստ եմ խելազարվելու: Պետք է որ նա եկած լինի, երևի ճանապարհին չես նկատել: Հաստատ գիտեմ: Սիրտս ասում է, որ այդպես պետք է լինի:
- Ի՞նչ ես ասում, Սալլի, ես ճանապարհին չէի կարող չհանդիպել նրան, դու ին գիտես:

— Աստված իմ, աստված իմ, ի՞նչ կասի քույրս: Պետք է տղան եկած լիներ: Չես հանդիպել: Նա...

— Սիրտս մի՛ կոտրիր: Առանց այդ է սիրտս կոտրված է: Զգիտեմ, ինչ ասեմ: Ուղղակի շվարել եմ, խոստովանում եմ: Ոչ մի հույս չունեմ, թե կզա. չեր կարող պատահել, որ նա զար, և ես չհանդիպեի: Սարսափելի է, Սալի, սարսափելի. անպայման նավին մի բան է պատահել:

— Օ՛յ, Սայլաս, նայի՛ր այն կողմ, ճանապարհին, ինչոր մեկը գալիս է, չ՛: Ծերունին շարժվեց դեպի մահճակալի գլխավերևսի պատուհանը, և դա հնարավորություն տվեց միսիս Ֆելիփսին արագ կրանալ և ինձ դուրս քաշել: Ես դուրս եկա: Երբ միստը Ֆելիփսը շուր եկավ, կինը կանգնած շողողում ու ծիծաղում էր: Ես, շվարած ու քրտնքի մեջ կորած, կանգնել էի մի կողմ: Ծեր շենտլմենը, աշքերը հառած, հարցրեց.

— Ո՞վ է դա:

— Քո կարծիքով ո՞վ կարող է լինել:

— Զգիտեմ: Ո՞վ է:

— Թում Սոյերն է:

Ազնիվ խոսք, քիչ էր մնում ամոթից գետինը մտնեի: Բայց ժամանակ չեղավ հասկանալու, թե ի՞նչ պետք է անել: Ծերունին բռնեց իմ ձեռքն ու երկար թորթեց, և ամբողջ ժամանակ ինչպես էր պարում կինը, ծիծաղում ու լաց լինում: Վյուհետու ինչպես էին նրանք հարցեր տեղում գլխիս Սիրի, Մերիի ու մյուս ազգականների մասին:

Եթե նրանք ցնծության մեջ էին, ապա նրանց ուրախությունն իմ ուրախության հետ համեմատ ոչինչ էր: Կարծես նորից ծնվեցի: Վյոքան ուրախ էի, որ իմացա, թե ով եմ ես: Նրանք ինձ երկու ժամ շարչարեցին: Վերջապես, երբ իմ ծնոտն այնքան հոգնեց, որ հազիվ թե այլևս կարողանար շարժվել, ստիպված եղա այնքան բան պատմել մեր ընտանիքի, այսինքն՝ թում Սոյերի ընտանիքի մասին, որ կրավականացներ վեց այդպիսի ընտանիքի: Պատմեցի, թե ինչպես Սպիտակ գետի գետաբերանում մենք պայթեցրինք մի շոգեկաթսա, և կարգի բերելը մեզանից երեք օր խեց: Գործը շատ հարթ գնաց և շատ լավ տպավորություն թողեց, քանի որ նրանք այդ գործից ոչինչ չէին հասկանում, միայն զիտեին, որ կաթսան կարգի բերելու համար երեք օր է պահանջվում: Եթե ասեի, թե սողնակի գլուխը պայթեց, նույնպես նպատակիս հասած կլինեի:

— Այժմ ես ինձ մի կողմից շատ հանգիստ էի զգում, մյուս կողմից՝ շատ անհանգիստ: Հանգիստ ու դուրեկան էր լինել թում Սոյեր, և այդպես հանգիստ ու դուրեկան մնաց, մինչև լսեցի գետով իշնող շոգենավի հևոցը: Ինք ինձ ասացի. «Չլինի՛ հանկարծ թում Սոյերը դրանով զա, և հանկարծ մտնի այս սենյակը, և իմ անունը տա, նախքան ես կկարողանամ աշքով անել ու հասկացնել, որ լուռ մնա:

Ինչ որ է, ես չէի կարող այդպիսի բան թույլ տալ. դա բոլորովին ձեռնտու չեր, պետք է գնայի և ճանապարհին սպասեի նրան: Ասացի, որ մտադիր եմ գնալ քաղաք և բերել ճամպրուկս: Ծեր շենտլմենն ուզում էր ինձ հետ զալ, բայց ես ասացի, որ կարիք չկա, ինքս կարող եմ ձին քշել և չեմ ուզում նեղություն տալ:



1. ↑ Մովսես — ըստ ավանդության, իրեա ժողովրդի հնադարյան առաջնորդը, որին իբրև թե մանուկ հասակում գտել են եղեգնուտում:
2. ↑ o, 91 մ (անզիական երկարության չափ):
3. ↑ Երիքն — քաղաք Պաղեստինում: Գնալ Երիքն — ժողովրդական ասացվածք, որը նշանակում է հեռանալ, կորչել:
4. ↑ Հնովացի իշխան:
5. ↑ Աբոլիցիոնիստ — նեզրերի ստրկությունը վերացնելու կողմնակիցներ:
6. ↑ Աստվածաշնչի Սոլոմոն իմաստունը:
7. ↑ Լյուդովիկոս XVI-ը Ֆրանսիայի թագավորն էր, որին գլխատեցին XVIII դարի բուրժուական հեղափոխությունից հետո:
8. ↑ Դոլֆին — Հեքն ուզեցել է ասել «Դոֆին» այսինքն՝ թագաժառանգ:
9. ↑ Ֆրանսիացի սպա, որը մարտնչել է անկախության համար (ամերիկյան բանակի կամավոր):
10. ↑ Մոքքասինը թունավոր օձերի մի տեսակ է:
11. ↑ Ֆրանսիայի թագուհի: Սերում է Ավստրիայի արքունիքից: 18-րդ դարի բուրժուական հեղափոխության ժամանակ ապստամբած ժողովուրդը նրան մահապատճի ենթարկեց:
12. ↑ Ֆրանկների պետության թագավորը (768-814 թթ.):
13. ↑ Մեկ գալոնը հավասար է մոտ չորս լիտրի:
14. ↑ Ֆրանսիական թագավորների հին դինաստիայի ազգանունը:
15. ↑ Այստեղ դուքսը չի տախս Համեստի իսկական, լրիվ մենախոսությունը, այլ արտասանում է անիմաստ, իրար հետ չկապվող տողեր Շեքսպիրի դրամաների տարբեր տեղերից:
16. ↑ Հենրի II Ութերորդն Անգլիայի թագավորն էր տասնվեցերորդ դարում: Այստեղ Հեք Ֆիննը նրան վերաբերող զիրքը շփոթում է արարական «Հազար ու մի զիշերվա» հետ:
17. ↑ Սաքսոնների հիմնած յոթը թագավորությունները հինգերորդ դարից մինչև իններորդ դարը:
18. ↑ Դոմսդեյի զիրքը զրվել է Վիկենմ Աշխարհակալի ժամանակ. 1085-1086 թվերին: Այստեղ զրանցված են գլխավոր կալվածատերերի անունները, զբաղեցրած տարածությունը, անասունների գլխարանակը և այլն:
19. ↑ Վիկենմ Չորրորդ — Անգլիայի թագավոր (1830-1837):
20. ↑ Նյու-Յորքի մոտ Կոնգրես կոչվող աղբյուրի ջուրը, որն աղի է:
21. ↑ Եղեմի գետերից մեկը: Ծ. թ.:
22. ↑ Մետաղադրամ, որը, եթե ոսկի է, արժե հինգ դոլար, եթե արծաթ է՝ 60 ցենտ:

23. [↑](#) Հողային չափ, 4047 թ. մ.: